

Կ ԿՈՋՄՈՅԷՆ

ԿԻՐՈՎԼԱԿԱՆ







ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԽԱՐԱՆՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՏԻՆԱՇԱՐ

№ 1



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
институт истории

К.С. КОЗМОЯН

КИРОВАКАН

издательство АН Армянской ССР
ЕРЕВАН • 1960

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄԱՆՔՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կ.Ս.ԿՈՋՄՈՅԱՆ

9(47.925)

ԿՐՈՎԱԿԱՆ

A 5590




Հայկական ՍՍՌԻ ԳԱ Հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ • 1960

Տպագրվում է Հայկական ՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Այս մատենաշարով լույս են ընծայվել նույն հեղինակի «Երևանի Ֆ. Է. Չերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50 տարին», «Լենինական» և «Կիրովականի Այ. Մյասնիկյանի անվան բիմիական կոմբինատի 25 տարին» աշխատությունները:

«Կիրովական» աշխատության մեջ լուսաբանված են բազաբի պատմական անցյալը, Սովետական իշխանության տարիներին ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի, ինչպես նաև կուլտուրական շինարարության, աշխատանքի մոտերի նյութական բարեկեցության և բազաբաշինության ստպարեկում ձեռք բերված հաջողությունները:

Խմբագիր՝ Հ. Ն. ԱՂԱՏՅԱՆ



Ս. Մ. Կիրովի արձանը Կիրովապոլսում





Գ Լ ՈՒ Խ Ա Ռ Ա Զ Ի Ն

ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻՑ

Հայկական Սուլետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Կիրովական (նախկին Մեծ Ղարաքիլիսա) քաղաքը տեղավորված է լեռներով շրջապատված փոքր հարթավայրում՝ հարավից հյուսիս աննշան կորուսյամբ: Քաղաքի հարավային մասում բարձրանում է Փամբակի լեռնաշղթան՝ Մայմեխ գագաթով, որի լանջերը ծածկված են սաղարթավոր անտառներով, իսկ հյուսիսային մասում՝ Բազումի (Բզովգալի) լեռնաշղթան, որի վրա գտնվում է Պուշկինի լեռնանցքը: Այդ լեռնանցքով անցնում է Կիրովական—Ստեփանավան խճուղին: Քաղաքի հյուսիսային մասով անցնում է Քուռ գետի սիստեմին պատկանող Փամբակ գետը (Դեբեդի գլխավոր ճյուղերից մեկը), նրա մեջ թափվում է Տանձուտ գետը՝ քաղաքի ծայրամասում, իսկ վերջինիս մեջ՝ Վանաձոր գետակը, որն սկիզբ է առնում Մայմեխի լանջերից և համարյա թի անցնում է քաղաքի մեջտեղով:

Ղարաքիլիսայի հյուսիսային սարավանդները գրեթե բուսականությունից զուրկ են¹, իսկ հարավային կողմի լեռներն ան-

¹ Եվրոպական ճանապարհորդ Զեյմս Մորիերի (1812 թ.) և հաշատուր Արովյանի (1826 թ.) վկայությամբ այդ սարավանդները ծածկված են եղել խիտ անտառով, որից մեզ հասել է միայն երկաթուղային կայարանի գիմաց գտնվող Մենավոր ծառը:

տառապատ են, ուր կան կաղնու, հաճարենու, լորենու, բոխու, հացենու, թեղու և այլ բազմատեսակ ծառեր ու թփեր:

Ղարաքիլիսայի արևելյան կողմում գտնվում են Խնձորուտ (Վարդանիլ), Մեղրուտ (Յաղուբիլ), իսկ արևմուտքում՝ Ժգանով (Ղշլաղ) և Դարբաս գյուղերը:

Քաղաքի բարձրագիւր մասն է հանդիսանում «Դիմաց» թաղամասը. որը ավելի քան 50 մետրով բարձր է Երկաթուղային կայարանից:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Փամբակի հովիտը երկրաբանական ոչ վաղ անցյալում եղել է լիճ: Այդ բնդարձակ փակ լճային զոգավորության մեջ են լիսվել Փամբակ ու Տանձուտ գետերը: Մի ինչ-որ երկրաբանական հեղաշրջում պատռել է Բազումի լեռնաշղթան, և այստեղ առաջացած կիրճով (Գյուլա-Դագեն) լճի ջրերը ելք են ստացել դեպի հյուսիս: Դրա հետևանքով ավազանն ամբողջովին դատարկվել է և առաջացել Փամբակի հովիտը, որի միջով մերթ նեղացող, մերթ լայնացող հունով վազում է Գերեղի գլխավոր ճյուղերից մեկը¹: Այդ լճի գոյությունն ապացույցվում է Ղարաքիլիսայից ոչ հեռու՝ դեպի արևելք զնկած հողային նստվածքների առկայությամբ:

19-րդ դարի վերջերին Ղարաքիլիսան հարավից-հյուսիս ձգվում էր մեկուկես վերստ երկարությամբ, իսկ արևելքից-արևմուտք՝ երեք քառորդ վերստ լայնությամբ: Ղարաքիլիսայի բունած տարածությունը պարտեզներով կաղմում էր 120 դեսյատին²:

¹ Ղարաքիլիսան շրջապատող ամբողջ լեռնաշղթայի վրա իշխում է Մայմեխի հրաբխային սարը (3032 մետր բարձրությամբ), որի կոնաձև, խճուպատ գագաթից երևում են Սևանա լիճը և Մասիսը: Մայմեխի լանջերն ու ստորոտները ծածկված

¹ Ս. Մ. Լիսիցյան, ՀեՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Հայպետհրատ, Երևան, 1940, էջ 45:

² «Մուրճ» քաղաքական, հասարակական, գրական ամսագիր, 1893 թ. հոկտեմբեր, № 10, Թիֆլիս, էջ 1580:

ին հարուստ բուսականութեամբ՝ դաշար խոտերով և երփնե-
րանդ ծաղիկներով: Ղարաքիլիսայի կլիման բարեխառն է,
մեղմ, օդը՝ կազդուրիչ, տոթակեզ ամառներ ու ցրտաշունչ
ձմեռներ հազվադեպ են լինում: Նրա շրջակայքը, առավելա-
պես Վանաձորը, բնութեան հրաշալի վայրերից մեկն է:

Ղարաքիլիսայի գեղեցիկ բնութեամբ հիացած խաչատուր
Աբովյանը գրում է.

«Չորս կողմը ձգվում են չքնաղ հովիտներ՝ բազմատե-
սակ բարձր ծառերով ծածկված լեռներով: Հովիտներն ու
մարգագետինները փոխվում են այդտեղ գեղեցկագույն
փարթամութեամբ»¹:

«Սառնորակ աղբյուրներ, կարկաշատ գետակներ, կանա-
չազարդ ձորակներ, երփներանգ ծաղիկների անուշահոտ բուր-
մունքով լի հովիտներ, ստվերախիտ անտառ, հովասուն
մեղմիկ զեփյուռ, բազմազան թռչունների քաղցրահնչյուն
երգ,— այդ բոլորը կախարչում են մարդու սիրտն ու հոգին
և հիացում պատճառում հանդիպողին»²:

Բուսականութեամբ փարթամ այս դաշտերն ու հովիտները
և Նոռի-Փամբակի բնակլիմայական բարենպաստ պայման-
ները հնուց ի վեր լայն հնարավորություններ էին ընձևում
անասնապահության, հրկրագործության, այգեգործության և
տնտեսության այլ ճյուղերի զարգացման համար:

Սովետական Հայաստանի հնագետները հետազոտել են
Ղարաքիլիսայում գտնվող շափազանց հետաքրքրական մի
բնակավայր՝ «Քագավորանիստ»³ կոչվող բլուրը, որը պատ-
կանում է էնեոլիթյան ժամանակաշրջանին (3-րդ հազարա-

1 Խ. Աբովյան, Երկրի լիակատար ժողովածու, Հայկական ՍՍՏ
ՊԱ հրատարակչություն, Երևան, 1958, հատոր 8, էջ 58:

2 «Մուրճ» ամսագիր, 1893 թ., հոկտեմբեր, № 10, էջ 1580:

3 Գոյություն ունի մի ավանդություն, որ Բաղրատունի Աշոտ Ողորմածը
Սանահին գնալիս անցնում է Ղարաքիլիսայով և պիշերում դյուղի տրեկեցում
գանձող բլրակի վրա, այդ պատճառով բլուրը կոչվում է «Քագավորանիստ»:

մյակ մ. թ. ա.) և ընկած է բրոնզեդարյան ողջ մշակույթի հիմ-
բում¹: «Թագավորանիստ» բնակավայրը պատկանում է լեռ-
նային արևելյան բնակավայրերի թվին: Հնում այն ամրացված է
եղել մի քանի էլիպսաձև պարիսպներով, որոնց հետքերը
մինչև հիմա էլ պահպանվել են: Հետադոտական աշխատանք-
ների միջոցով այստեղ հայտնաբերվել են ընտանի կենդանի-
ների ոսկորներ, երկրադորժական քարե գործիքներ, մեծ քա-
նակությամբ խեցեղենի մնացորդներ և այլն, որոնց ուսում-
նասիրությունները հիմք են տալիս պնդելու, որ այդ բնակա-
վայրը շատ նման է Արաքսի, Հրազդանի (Շրեշ-բուր, Քյուլ-
թափա, Շենգավիթ) հովիտներում և այլուր ուսումնասիրված
բնակավայրերին²:

Խեցեղենի ուսումնասիրությունից պարզվում է, որ «Թա-
գավորանիստը» ծառայել է որպես բնակավայր շատ երկար
ժամանակ և գոյութուն է ունեցել վաղ բրոնզե դարաշրջա-
նում:

Էնեոլիթյան ժամանակաշրջանը նշանավորվում է նաև առա-
ջին մետաղե գործիքների հանդես գալով, որոնց արտադրու-
թյունը բարձր զարգացման է հասնում երրորդ հազարամյակի
վերջից մինչև երկրորդ հազարամյակի կեսերը (մ. թ. ա.),
այսինքն՝ այն ժամանակաշրջանը, երբ գոյութուն է ունեցել
«Թագավորանիստը»: Հնագիտության մեջ այդ շրջանն ըն-
դունված է անվանել հին և միջին բրոնզե ժամանակաշրջան:
Տոհմացեղային հասարակության պատմության մեջ դա մի
էտապ էր, երբ Երևան եկան հզոր ցեղային միություններ և
լայն կուլտուրական փոխհարաբերություններ սկսվեցին Առա-
ջավոր Ասիայի քաղաքակիրթ երկրների հետ:

¹ В. В. Пнотровский. Археология Закавказья, Ленин-
град, 1949, стр. 34.

² 1935, 1938—39—40 թվականներին Պարաբլիսայում կատարված
պեղումների մասին մանրամասնությունները տե՛ս Հուշարձանների պահպա-
նության բաժնի արխիվի № 362—363 գործերում Կ. Ղաֆազարյանի, Ն. Բույ-
բուրդյանի հաշվառությունները:

Նրկրորդ հազարամյակի բազմաթիվ հնագիտական հուշարձանների մեջ իր ուրույն տեղն ունի 1948 թվականին Ղարաքիլիսայում, Քիմշենի դպրոցի շինարարության ժամանակ, հայանարևելած մեծ կուրգանը, որը ուսումնասիրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Բ. Պիտրովսկու կողմից: Ղարաքիլիսայի այդ մեծ դամբարանը բռնում էր 30 քառակուսի մետր տարածություն: Դամբարանի շորս պատերի տակ դրված էին նկարազարդ խեցեղեն անոթներ, ինչպես նաև արծաթե շորս աման և մի ոսկե թաս՝ առյուծների փորագիր պատկերով: Դամբարանի կենարոնում գտնվել է փայտե դիակառքը (կատաֆալկը), զարդարված արծաթե թիթեղներով և բրոնզե մեխերով: Նրա վրա դրված են ցեղապետի աճյունը՝ դիակիրզումից հետո: Այստեղ գտնվել են նաև սերզոլիտից ու ոսկուց պատրաստված ուլունքներ, բրոնզե դաշույններ, կացիներ, նիզակներ և այլն:

Ղարաքիլիսայում և Լոոի-Փամբակում հայտնաբերված նյութական կուլտուրայի հուշարձանները չափազանց մեծ հետաքրքրություն են ներկայացնում շնորհիվ այն բանի, որ նրանցով նշանավորվում է մետաղամշակության և առհասարակ նյութական կուլտուրայի արտադրության ինքնուրույն զարգացման մի նոր, ավելի բարձր աստիճանը:

Ավելի ուշ շրջանի բազմաթիվ դամբարաններ են հայտնաբերվել Ղարաքիլիսայի «Դիմաց» թաղամասում, որոնք ուսումնասիրվել են 1935 և 1939 թվականներին: Ավելի ուշ՝ Շահումյանի անվան սովխոզի շրջակայքում և Հաջիդարայում (այժմ Լեոնապատ) հնագիտական պեղումներ է կատարել հնագետ Հ. Մարտիրոսյանը: Նշված պեղումները հարուստ նյութեր են բնձնում ուշ բրոնզե և վաղ երկաթե դարաշրջանի (13—6-րդ դդ. մ. թ. ա.) մշակույթի վերաբերյալ: «Դիմաց» թաղամասում հայտնաբերվել են քարարկղային տիպի դամբարաններ, որոնք ծառայել են կուրկտիվ ու անհատական

1 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Ленинград, 1949, стр. 47.

Քաղումների համար նրանց մեջ եղել են 5-ից մինչև 36 կա-
վեղեն անոթներ և մետաղե իրեր: Պատահականորեն բաց-
ված երկու դամբարաններում հայտնաբերվել են մեծ քանա-
կությամբ բրոնզե իրեր, որոնցից ուշադրության արժանի են
բրոնզե երկփանին, երկու ծայրերին թռչնածե գնդասեղը,
ուզմական սարբերը, հարուստ ձիասարքի առարկաները և
այլն:

Այս նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ
բրոնզե դարաշրջանում Լոսի-Փամբակի շրջանը կուլտուրական
լայն փոխհարաբերությունների մեջ է գտնվել Թրիալեթում,
Արևելյան Վրաստանում, Լեոնային Ղարաբաղում, Սևանի
ալվազանում, Արարատյան դաշտում ու Շիրակում բնակվող
ցեղերի հետ: Հավանական է, որ այդ փոխհարաբերու-
նիքը բարերար ազդեցություն են ունեցել ուշ բրոնզե դարա-
շրջանի նյութական արտադրության և հոգևոր կյանքի մակար-
դակի բարձրացման վրա:

Ղարաքիլիսայից ոչ այնքան հեռու գտնվող Հաջիղարա
գյուղի հնագիտական նյութերը վերաբերում են վաղ ուրար-
տական ժամանակաշրջանին (9—8. դարեր մ. թ. ա.) և բավա-
կանաչափ հստակ ձևով բնութագրում են տեղաբնակների նյու-
թական մշակույթի բարձր զարգացումը՝ ուրարտական կուլ-
տուրայի ազդեցության տակ, կապերը Ասորեստանի և Արևել-
քի քաղաքակիրթ այլ երկրների հետ, ինչպես նաև երկրագոր-
ծության ինտենսիվ զարգացման պրոցեսը Հայաստանում¹:

Հաջիղարա գյուղի դամբարանադաշտի ուսումնասիրու-
թյամբ ձևոք են բերված նաև 7—6-րդ դարերին (մ. թ. ա.)
պատկանող նյութեր: Առանձնապես ուշագրավ է այդ ժամա-
նակաշրջանի դամբարաններից մեկը, որը պատրաստված էր
հսկայական քարակղզի ձևով, լավ մշակված տուֆից և պա-
րունակում էր մի քանի պիակ: Կմախքների մաս գտնվում էին

¹ А. А. Мартыросян, Раскопки в Кировакане, некоторые
намятники раннеурартского периода. *Տե՛ս ՀՍՍՌ ԳԱ հաս. բաժան-
մունքի «Տեղեկագիր», 1956, № 9, էջ 61—64:*

զարգարանքի բազմաթիվ աուսրկանհր (Ֆիբուլաներ, գնդասեղներ, մատանիներ, ապարանջաններ, ուլունքներ՝ բրոնզից, բարից ու աստալից, բներ, նիզակներ, գաշույններ) ու աշխատանքի գործիքներ (դանակներ և սլն), բոլորը պատրաստված լավորակ երկաթից¹։

Ղարաքիլիսայում և նրա շրջակայքում կատարված հնագիտական ուսումնասիրությունները հարուստ նյութ են տալիս նախնադարյան համայնական հասարակության նյութական կուլտուրայի ու պատմության բազմապիսի հարցերը լուծելու համար։ Այդ հուշարձաններն ընդգրկում են երրորդ հազարամյակից մինչև առաջին հազարամյակի կեսերն ընկնող ժամանակաշրջանը և բնութագրում արհեստների, անասնապահության, երկրագործության և հողետր կուլտուրայի զարգացման հաջորդական էտապները՝ մոտավորապես երկու հազարամյակի ընթացքում։

Այսպիսով, Լուի-Փամբակում, մասնավորապես Ղարաքիլիսայում կատարված պեղումներն ու նրանց ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ շատ հին ժամանակներից սկսած Ղարաքիլիսան եղել է նախնադարի աչքի ընկնող բնակատեղիներից մեկը։ Հնագետները, ուսումնասիրության ենթարկելով Ղարաքիլիսայի շրջակայքը, պարզել են, որ Վանաձորում շատ հնում գոյություն է ունեցել երկու գյուղ՝ Վանաձորի և Պապանի անուններով։ Այդ գյուղերի տեղիտորիայում եղել են վանքեր (որոնց մնացորդները մինչև այժմ կան), և այդ պատճառով ձորն այն ժամանակ կոչվել է Վանքիձոր²։ Հետագա տարիներին ժողովրդի արտասանության մեջ հավանականորեն այն դարձել է Վանաձոր։

Ղարաքիլիսայի հիմնադրման ժամանակի և անվան մասին ժողովրդի մեջ ավանդություն չկա բայց հնագետները,

1 А. А. Мартиросян, Раскопки в Кировакане, некоторые памятники раннеурартского периода. *Տե՛ս ՆՄՄԻ ԳԱ հաս. բաժանմունքի «Տեղեկագիր», 1956, № 9, էջ 61—64:*

2 «Արևելյան մամուլ» ամսագիր, 1896 թ. 15 ապրիլի, № 8, Զմյուտնիա, տպարան Մամուրյան, էջ 236:

ուսումնասիրելով խաչքարերն ու գերեզմանները, ինչպես նաև ավերակները, մնացորդները, եկել են այն եզրակացութեան, որ Ղարաքիլիսան գոյութիւնն է ունեցել շատ հին ժամանակներից և իր անունն ստացել է բլրակի վրա ամբողջապես սև քարերից կառուցված փոքրաղիր եկեղեցուց: Այդ եկեղեցին, պարսկական արշավանքից առաջ, սաստիկ երկրաշարժից փլատակների կույտ էր դարձել¹:

1817 թվականի ապրիլի 22-ին Ղարաքիլիսա ժամանած Կովկասյան զորքերի զլխավոր հրամանատար և Կովկասի կառավարչապետ գեներալ Երմոլովի Պարսկաստան մեկնող զեօպանուխյան անդամները, Ղարաքիլիսայում տեսնելով այդ եկեղեցին, գրում են.

«Փամբակ գետը և նրա կամուրջը շուտով տեսնվում են. և հետվից Ղարաքիլիսե փոքրիկ ավանի եկեղեցին, շրջապատված լեռներով և բարձր հզևնու ծառերով, սա առնում է իր անունը կարս (սև) քլիսա (եկեղեցի) բաներից, եկեղեցին տակավին մնում է»²:

Մի ուրիշ դեպքանութեան անդամ ևս, լինելով Ղարաքիլիսայում և տեսնելով եկեղեցին, գրում է.

«Մի բարձունքի վրա գտնվում է մի հին հայ եկեղեցի, ուր կան մի քանի վանականներ»³:

Ինչպես տեսնում ենք, այդ սև քարերից կառուցված եկեղեցին, մինչև երկրաշարժից ավերվելը, տեսնողներ հղել են: Այդ են ապացուցում մեզ հասած վերոհիշյալ գրավոր տեղեկութիւնները: Գծրախտաբար, Ղարաքիլիսայի վաղ շրջանի մասին գրավոր տեղեկութիւններ չկան: Պահպանված գրավոր

¹ Խ. Արսվյան, հատոր 8, էջ 60:

² Աղբյուրներ՝ Հայաստանի և Անդրկովկասի պատմութեան «Ուղեգրութիւններ», հատոր 9., ժԹ՝ գարի առաջին բաժնամասի (1800—1820), երկվան, 1943, էջ 516:

³ Նույն տեղում, էջ 332:

տեղեկությունները վերաբերում են 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին: Գրավոր տեղեկություններ թողել են եվրոպական ճանապարհորդները: Նրանք նկարագրում են Ղարաքիլիսան, ինչպես նաև նրա շրջակա գյուղերի տները, որոնք շատ խղճուկ անաք ունեին թև՝ արտաքինով և թև՝ ներքին կահավորումով:

1812 թվականի մալիսիյն եվրոպական ճանապարհորդ Զեյմա Մարիերը, լինելով Ղարաքիլիսայում, գրում է, որ Ղարաքիլիսան գեանդված է մի խոր ձորում: Շրջակա բարձր բլուրները մինչև իրենց գագաթը ծածկված են անտառով: Փամբակ գետը, որ հոսում է Ղարաքիլիսայի կողքով, կենդանացնում է ամբողջ շրջակայքը¹: Այնուհետև շարունակում է նա.

«Ղարաքիլիսայի, ինչպես նաև երկրի այս մասի բոլոր գյուղերի տները ստորերկրյա են: Ղարաքիլիսան մի փոքրիկ գյուղ է, բացի ուսական բանակի կայան լինելուց, ուրիշ կարևորություն չունի: Տները շինված են փայտից, կաուրները ծածկված են հողով: Բոլոր տների հասակները հողից են»²:

Իսկ ճանապարհորդ Ռոբերտ Կեր Փորտլըրը նկարագրում է բնակարանների ներսը: Նա գրում է.

«Տների հատակը հող է՝ կարծրացրած, բայց կոպիտ կապերտներ են փռված կողքերում, որոնց վրա մարդիկ նստում են ու քնում: Ոչ սեղան կա և ոչ էլ աթոռ: Պատերի մեջ կան բացված փոքրիկ պահարաններ՝ ընտանիքի խղճուկ սեփականությունը պահելու համար: Կրակաբանի վերև շատ փոքրիկ մի խոռոչ կա, ուր դնում են ձեռքի լամպարը, որը միշտ վառված է: Այսբան գերեզմանանման են այդ բնակարանները: Մնացյալ մասը,

¹ Աղբյուրներ՝ Հայաստանի և Անգլոփոկասի պատմության «Ուղեգրություններ», հատոր 2, ԺԲ դարի առաջին քսանամյակ (1800—1820), Երևան, 1943, էջ 331—332:

² Նույն տեղում, էջ 332:

այսինքն՝ փոսը, հատկացված է խոզերի, ոչխարների, ձիերի և այլնի համար»¹։

1826 թվականի հուլիսին, պարսկական արշավանքի նախօրեին, Ղարաբիլիսա է գալիս հայ մեծ գրող ու լուսավորիչ Խ. Աբովյանը, որը նույնպես նկարագրում է Ղարաբիլիսան²։

«Ինքը՝ Ղարաբիլիսա բաղարը³, — գրում է Խ. Աբովյանը, — շուներ այդ ժամանակ ոչ մի աչքի ընկնող շենք, բացի ոռոսաց եկեղեցուց ու դավառապետի բնակարանից, երկուսն էլ կառուցված փայտից, եվրոպական ճաշակով և դեղնադորշ ներկած։ Քաղաքը բերդ և շրջապարիսպ չուներ։ Բնակիչների թիվը հասնում էր մոտավորապես 5—600-ի, մեծ մասամբ հայեր, գրանց հետ նաև մի քանի մշտաբնակ ուսաններ, գինեվորական ու քաղաքացիական պաշտոնյաներ և մի քանի հարյուր գինվոր։ Այստեղի բնիկ հայերը՝ բոլորն էլ շատ վաղուց Երևանից էին գաղթել և բնակություն հաստատել։ Դրա համար էլ սրանց աները, ինչպես և հազուստները, ոչնչով չէին տարբերվում նրանցից, ինչ որ այժմ էլ կարելի է տեսնել Երևանում։ Թեպետ այդ վայրը նպաստավոր դիրք ունի և չորս կողմից շրջապատված է գեղեցիկ անտառներով, բնակիչները պահպանել էին իրենց կառուցողական կերպի նախկին ճաշակը։ Փոքրիկ շուկան միակ վայրն էր, որտեղ կարելի էր տեսնել նրանց աշխույժ եռուզիւրը։ Սակավաթիվ առևտրական կրպակներին շարքով միանում էին այլ արհեստավորների և մյուս արտադրողների խանութները։ Մի խարխուլ, կես-քարաշեն, կես-փայտաշեն եկեղեցի ծառայում էր հայերին՝ եկեղեցական արարողու-

¹ «Ուղեգրություններ», հատոր 2., էջ 740—741։

² Խ. Աբովյանը պարսկական արշավանքի նախօրեին մեկնում է Թիֆլիս Այստեղից գալիս է Հաղպատի վանք։ 1826 թ. հուլիսի 12-ին մեծ զվուռովյամբ, մի քանի հայերի ուղեկցությամբ, գիշերը հասնում է Ղարաբիլիսա։

³ Խ. Աբովյանը Ղարաբիլիսան բաղար է անվանում, բայց այդ ժամանակ այն բաղար չէր համարվում։

թյան համար: Եկվորները և տեղացիները վատահուժյուն էին ձևոր բերել միմյանց նկատմամբ և ապրում էին իրար հետ գեղջկորեն ու խաղաղ և իբրև միակ պետի ճանաչում էին այդ նահանգի գնդապետ՝ ծագումով վրացի, Զավարիա Միրզային: Մի քանի բանջարանոցներով շրջապատված փոքրիկ գետակը տալիս էր քաղաքին հաճելի տեսք¹:

Ահա թե ինչպիսին է եղել Ղարաքիլիսան 19-րդ դարի առաջին քառորդին:

19-րդ դարի սկզբներին, Թուրքիայի ու Պարսկաստանի տիրապետութայան տարիներին, Հայաստանի արտադրողական ուժերը քայքայվում և դեպի անկում էին գնում: Տնտեսութայան գլխավոր ճյուղը՝ գյուղատնտեսությունը ծայրաստիճան հետամնաց վիճակում էր գտնվում: Երկրում չկար արդյունաբերություն, իսկ արհեստների ու առևտրի զարգացումը դանդաղ էր ընթանում: Ծանր էր գյուղացիության վիճակը ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ Լոռիում: Գյուղացիությունը գտնվում էր իրավազուրկ վիճակում և միշտ դաժան շահագործման էր ենթարկվում: Երբ 1801 թվականի սեպտեմբերի 12-ին Վրաստանը միացավ Ռուսաստանին², նրա հետ Ռուսաստանին միացան նաև Հայաստանի հյուսիսային մի քանի շրջաններ, այդ թվում՝ Լոռին³, Ղաղախը, Քարվանսարան և Շամշադինը՝ աղատվելով պարսկական դաժան տիրապետությունից:

¹ Խ. Ար ո վ յ ա ն, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 8, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1958, էջ 57:

² Акты, собранные Кавк. арх. комиссией, Тифлис, 1844, том VI, часть I, стр. 467.

³ Լոռու գավառն ու Բերդը կազմել են պատմական Գուգարաց Տաշիր գավառի մեկ մասը: Լոռու Բերդը Գուգարաց մայրաքաղաքն էր, այժմ փոքրիկ մի գյուղ՝ Ստեփանավանից (նախկին Զալալօղլուց) 3 կիլոմետր դեպի արևելք (սե՛ս «Ուղեգրություններ», էջ 525):

Ռուսները, գալով Ղարաբաղիսա, հիմնեցին մի զորակա-
յան, որի համար կառուցեցին փայտից մի քերդ, նրա մեջ գե-
տեղեցին մոտ 20 թնդանոթ: Այդ քերդը համարվում էր անա-
սիկ: Այսպիսով, 19-րդ դարի սկզբին Ղալաբաղիսան դառնում
է ռուսական սահմանապահ: բանակի հրամանատարութեան
կայանը: Այդ նպատակով Ղարաբաղիսայում կառուցվում են
մի քանի ժամանակավոր փայտյա շէնքեր, ուր տեղավորվում
են սահմանապահ կայանի զինվորներն ու հրամանատարները:

Թուրքական ու պարսկական բռնակալներից ազատագրվե-
լու համար ինչպես ողջ Հայաստանի, այնպես էլ Շիրակի հա-
յերը դիմում էին Ռուսաստանի օգնութեանը: Նրանք ցանկա-
նում էին իրենց վրայից թոթափել պարսկական ու թուրքական
կեղեքիչների գարավոր ծանր լուծը:

1801 թվականին, երբ Արեւելյան Վրաստանի հետ միասին
Ռուսաստանի անկախութեան տակ է անցնում Լոռի-Փամ-
բակը, Շիրակի հայերը քանիցս դիմում են սահմանապահ
զորքերի օգնութեանը: Ընդառաջելով Շիրակի բնակչության
ցանկութեանը, գեներալ-մայոր Նեսվետաւը 1805 թվականի
մարտի 30-ին զորային միավորումներով Ղարաբաղիսայից
մանում է Շորագյալ և գրավում Արթիկը:

1804—1813 թվականների ռուս-պարսկական և 1806—1812
թվականների ռուս-թուրքական պատերազմներից հետո Փամ-
բակ—Շորագյալի սահմանամերձ շրջաններում բնակչութունը
մի փոքր շունչ քաշեց պարսկական ու թուրքական զավթիչ-
ների հարձակումից, բայց այն երկար շտեկեց: 1826 թվականի
հուլիսին, առանց պատերազմ հայտարարելու, պարսկական
բանակը ներխուժեց Անդրկովկաս, որպեսզի ռուսներին դուրս
հանի Անդրկովկասից: Այդ ժամանակ Երևանի սարդարի եղ-
բայր Հասան խանն իր զորքերով առաջինը հարձակվեց Փամ-
բակի և Շորագյալի վրա:

1826 թվականի հուլիսի 16-ի լուսաբացին պարսկական
զորքերը Հասան խանի հրամանատարութեամբ հարձակվեցին
Խաղարաբաղիսայի վրա: Չհավատալով խանի խոստումներին և
հաշիվ շտեկելով նրա սպառնալիքները, գլուղի բնակչութունը



Ղարադիլիսյանի հին տները

անձնատուր չեղավ և պաշտպանվեց: Բայց պարսկական զոր-
քերին հաջողվեց ներխուժել գյուղ: Նրանք բանդեցին ու հրդե-
հեցին աները, հափշտակեցին ունեցվածքը, կոտորեցին
երեխաներին, կանանց և ձերերին: Իսկ երիտասարդներին գե-
րի տարան:

Խ. Աբովյանը և նրա ուղեկիցները, դանվելով Ղարաբլի-
սայում, ականատես են լինում Լոուս¹ բնակչության նկատ-
մամբ Հասան խանի զորքերի գործադրած բռնություններին,
ավերածություններին ու կոտորածներին: 1826 թվականի
ամռանը, Հասան խանի արշավանքի ժամանակ, ժողովուրդը
հարկադրված է եղել Դվալի բարձրավանդակով հեռանալ ու
քարայրերում տպաստան գտնել: Պարսկական հրոսակա-
խմբերը քարը-քարի վրա շեն թողել, կոտորատել են ամեն ինչ,
այրել են խոտի դեղերը, ողջ գյուղը, նույնիսկ դաշտի ցան-
քերը, սուսաց շատրի փայտաշեն եկեղեցին:


Պարսկական մի այլ զորամաս,— գրում է Խ. Աբովյա-
նը,— հարձակվել է թվով հիսուներից ավելի կազակների վրա,
որոնք գտնվում էին Ղարաբլիսայից ոչ շատ հեռու ընկած
Համշալու արոտավայրի մոտ, բոլորին կոտորել և հրեատա-
նուն անհրաժեշտ ձիերը տարել²:

Ինչպես տեսնում ենք, 1826 թվականի ամռանը պարսկա-
կան զորքերը, առանց պատերազմ հայտարարելու, հարձակ-
վել են Փամբակի և Շորաղչալի անպաշտպան հայ բնակ-
թյան վրա, ամաչացրել են գյուղերը, երեխաներին ու կա-
նանց մի մասին սպանել, հարյուրավոր ընտանիքներ գերու-
թյան մատնել:

Ազգային ճնշումից, ֆեոդալական շահագործումից, ինչպիսի
նաև պարսկական խաների ծանր լծից ազատագրվելու ձգտու-

¹ Լոսին նախկին Կովկասյան փոխարքայության Բորչալուի գավառի մի
մասն էր: Այդ գավառի մեջ էին մտնում, վրացական ՍՍԲ Մարնատլի
(Շուրավերի) շրջանից բացի. Հայկական ՍՍԲ Ալավերդու, Սևանալճախի
շրջանները և նույնիսկ Սևանի Ղարաբլիսայի շրջանների մի մասը:

² Խ. Աբովյան, հուլիսի 1826 թ. 1826 թ. 1826 թ. 1826 թ. 1826 թ.



մից ելնելով՝ ուսուցարսկական պատերազմների տարիներին ուսակաւն բանակին օգնութիւն ցույց տվեցին Հայաստանի աշխատավոր գլուղացիները: Երանցից կազմակերպված աշխարհազորային ջոկատները, կամավորական խմբերը, ուսակաւն բանակների հետ համագործակցած, կոլլում էին պարսկական զորքերի դեմ: Այդ կոլլներում հազարավորները թվում աչքի բնկալ նաև Ղարաքիլիսայի բնակիչ Գրիգոր Քաւլանթարյանը, որն իրրև հմուտ հետախույզ կատարում էր մի շարք գծվարին հանձնարարութիւններ: Կոլլի դաշտում նա երբ անդից ծանր վիրավորվեց: Քաւանթարյանի հայրենասիրական օրինակը վարակեց հայրենակիցներից շատերին, որոնք նրա ղեկավարութեամբ կատարում էին հետախույզի, սուբհանդակի և կապավորի պանազան հանձնարարութիւններ¹:

Ինչպես Հայաստանի շատ շրջաններ, այնպես էլ Փամբրակի ու Ղարաքիլիսայի գլուղացիները անվճար կամ շնչին վճարով ուսակաւն բանակի զորամասերին հատկացնում էին սննդամթերք, հատկապես հաց և անասուններ, կամ փոխադրական միջոցներ էին տրամադրում՝ պարեն, զենք, զինամթերք տեղ հասցնելու համար: Միաժամանակ հայ աշխատավորները մեծ օգնութիւն էին ցույց տալիս ուս վիրավոր զինվորներին ու հրամանատարներին:

Ռուսական բանակի հաղթանակով հայ ժողովուրդը փրկվեց իրեն սպառնացող ֆիզիկական բնաջնջման վտանգից, 1828 թվականի փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին:

Տարբեր վայրերից, մասնավորապես Պարսկաստանից և Թուրքիայից Արևելյան Հայաստան գաղթեցին շատ հայ աշխատավորներ: Հետագայում Արևելյան Հայաստանը դարձավ հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, հասարակական ու կուլտուրական կյանքի զարգացման օջախը: Աղատագրվելով

¹ Ձ. Գրիգորյան, Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցութիւնը 19-րդ դարի սկզբին, Երևան, 1957, էջ 102:

պարսկական ու թուրքական ծայրահեղ հետամնաց ֆեոդալական կարգերից, հայ ժողովուրդը ներգրավվեց ուսական դարգացող անտեսական կյանքի ընդհանուր ոլորտի մեջ: Ցարիզմը, եյնելով շահագործող դասակարգերի շահերից, պարսկական տիրապետութեանից ազատազրկած Հայաստանը դարձրեց սուսական արգյունաբերութեան հումրի աղբյուրներից և վաճառահանման շուկաներից մեկը: 19-րդ դարի կեսերին արդեն Հայաստանի էկոնոմիկան ուսական զարգացող էկոնոմիկայի անբաժանելի մասն էր կազմում:

«Ռուսական կապիտալիզմը,— գրում է Վ. Ի. Լենինը,— կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառութեան մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամիտիվածութեան մնացորդ հանգիսացող նրա տեղական առանձնահատկութեանները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում: Հետոնֆորմյան ժամանակաշրջանի սկզբին նոսր բնակավորված կամ լեռնականներով բնակավորված երկիրը, որոնք համաշխարհային անտեսութեանից և նույնիսկ պատմութեանից դուրս էին կանգնած, դառնում էր նախարգյունաբերողների, գինու առևտուր անողների, ցորենի ու ծխախոտի ֆարրիկանտների երկիր»¹:

Գյուղացիական ռեֆորմից և 1860-ական թվականների բուրժուական մյուս ռեֆորմներից հետո Ռուսաստանում կապիտալիզմն ավելի արագ զարգացավ՝ ունենալով արդեն մի քանի հազար խոշոր կապիտալիստական ձեռնարկութեան: Ռուսաստանի անբաժանելի մասը կազմող և նրա հետ տարբեր ձևերով կապված Հայաստանը կապիտալիզմից խուսափել չէր կարող: Սակայն Հայաստանի թե՛ նախկին իրանական և թե՛ նախկին թուրքական դավառները անտեսապես ու կուլտուրապես այնքան հետամնաց էին, այնքան աղքատիկ էին տեխնիկայով, որ բուն Ռուսաստանի հետ համաբույլ ընթանալ

1 Վ. Ի. Լենին, Երկիր, հատոր 3, էջ 771:

չէին կարող: Ասիական զեապոստիզմից ժառանգած այդ հետա-
մնացութիւնն իր արագորեն փրկվելը հայ ժողովրդի համար
առանձնապէս դժուար էր: Ցարիզմի զազութացման քաղաքա-
կանութեան հետեանքով Հայաստանը լավագույն դեպքում կա-
րող էր դառնալ Ռուսաստանի արդշունարեւական շրջանների
համար վաճառահանման շուկա: 1870-ական թվականներին
Հայաստանում նոր միայն սկիզբ է առնում կապիտալիզմի
զարգացումը, այստեղ սկսում են ավելի արագորեն զարգա-
նալ արտադրողական ուժերը և բուրժուական արտադրական
հարաբերութիւնները: Ցարական կառավարութիւնը, ծախ-
վելով ազգային ճնշումները, բազմատեսակ հարկերի միջոցով
հսկայական միջոցներ էր քամում Հայաստանի առանց այն էլ
ծանր վիճակում ապրող աշխատավորներից:

Հետեւֆորմչան շրջանում կապիտալիզմի զարգացումը
խոշոր փոփոխութիւններ մացրեց նաև գյուղում: Այստեղ
արագորեն քաչքայվում է գյուղական համայնքը, նատուրալ
տնտեսութիւնը տեղի է տալիս ապրանքային տնտեսութեանը,
բստ որում ապրանքի է վերածվում նաև աշխատուժը, մեծա-
նում է գյուղացու կախումը շուկայից: Գյուղացին կամաց-կա-
մաց գրկվում է հողից, տնտեսներին: Նա իր գոյութիւնը
պահպանելու համար վաճառքի է հանում իր աշխատուժը: Ար-
տադրութեան միջոցները կենտրոնանում են փոքրաթիվ ունե-
վորների ձեռքում:

Կապիտալիզմի զարգացմանը նպաստեցին հողային ռե-
ֆորմը, ուսական կապիտալի մուտքն Անդրկովկաս և ալա-
ճանապարհային շինարարութիւնը: 1870-ական թվականնե-
րին ցարական կառավարութիւնը կառուցեց մի շարք կարևոր
խճուղիներ, այդ թվում՝ Թիֆլիս—Դիլիջան—Երևան, Երևան—
Ջուլֆա, Դիլիջան—Ղարաբաղիսա—Ալեքսանդրապոլ, Ալեք-
սանդրապոլ—Կողր և Նախիջևան—Գորիս խճուղիները, իսկ
1899 թվականին պատրաստ էին Թիֆլիս—Ղարաբաղիսա—
Ալեքսանդրապոլ, հ ե տ ա գ ա յ ս ու մ՝ Ալեքսանդրապոլ—Կարս,
1902 թվականին՝ Ալեքսանդրապոլ—Երևան երկաթուղային գը-
ծերը:

1899 թվականի հունվարի 25-ի № 168 հրամանով բացվում է ժամանակավոր մարդատար գնացքների երթևեկութունը Թիֆլիս—Ղարաքիլիսա ուղեմասով, իսկ 1899 թվականի փետրվարի 7-ին բացվում է երկաթուղային գնացքների մըշտական երթևեկութունը Թիֆլիս—Ղարաքիլիսա—Ալեքսանդրապոլ ուղեմասով¹:

Կապիտալիստական հարաբերութունների զարգացումով ինչպես Հայաստանի մյուս գյուղերում, այնպես էլ Ղարաքիլիսայում ուժեղացավ գյուղացիության քայքայման և շերտավորման պրոցեսը, սկսեց ծավալվել վաշխառուական կապիտալը, հանգես եկավ գյուղի հարուստ շերտը և սկսեց իր ձեռքում կենտրոնացնել հողային ֆոնդը, շահագործել աշխատավոր գյուղացիությանը:

Լոռու ամենախոշոր հողատերերն էին համարվում էջմիածնի, Հաղպատի և Սանահինի վանքերը, ինչպես նաև Լոռու թավաղները, որոնք ամենադաժան վերստի շահագործում ու կեղեքում էին աշխատավորներին և խոշոր հարստություն կուտակում:

Ղարաքիլիսայի հարուստներից մեկը խաչատուր Աբուն էր՝ իր Ալեքսանդր և Սողոմոն որդիներով, որոնք ապրում էին Ալեքսանդրապոլում: Սրանք պետական խոշոր կապալառուներ էին, շենքեր ունեին Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Ջալալօղլիում: Արսեները իրենց պատկանող Ղարաքիլիսայի զորանոցները կապալով էին տալիս զորքին: Կովկասի փոստային ցանցի մեծ մասի փոխադրական սպասարկումը գրեթե սրանց ձեռքումն էր գտնվում: Ղարաքիլիսացի մյուս աչքի բնկնող հարուստը Եղիզարովների ընտանիքն էր, որը զորքին մատակարարում էր հանդերձանք, սնունդամթերք, իսկ ձիերին՝ անասնակեր: Աբուները, Եղիզարովները միաժամանակ խոշոր վաշխառուներ էին: Սրանք այդ

¹ А. Т. Сагратян, Очерки по истории строительства ж. д. в Армении и перспективы дальнейшего его развития, рукопись, стр. 210.

նպատակի համար հսկայական միջոցներ էին ներդնում և պարտապաններին կեղևըրում:

Ղարաքիլիսաում կային մի քանի տասնյակ առևտրականներ, որոնց մեջ աչքի էին ընկնում՝ Նալբանդյանները, Հակոբյանները, Աղարաբջանները և Լոռյանները: Կային նաև հարուստներ, որոնք ապրում էին Թիֆլիսում, Բաքվում, բայց Ղարաքիլիսայում ունեին ամառանոցներ: Գրանցից մեկը Բաքվի նավթարդյունաբերող Թախրովն էր: Նա Ղարաքիլիսայում կառուցել էր գեղեցիկ կոհարկանի շենք (այժմյան «Հաստան» սանատորիան), ուր ամեն ամառ ընտանիքով գալիս էր հանգստանալու:

Ղարաքիլիսեցիք մեծ մասամբ զբաղվում էին հողագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով և առևտրով: Միաժամանակ նրանք ծառայում էին երկաթուղային ցանցում ու փոստային կայաններում:

Ղարաքիլիսայի հողը մեծ բերք չէր տալիս, դրա համար էլ նրանք հացը բերում էին Շիրակից ու Ապարանից¹, իսկ երկաթգիծն անցկացնելուց հետո՝ Հյուսիսային Կովկասից և Ուկրաինայից:

Գյուղի վարելահողերն ընկած էին լեռների լանջերին, անտառների բացատներում, դրա համար էլ դրանց մշակումը կապված էր մեծ դժվարությունների հետ:

Ղարաքիլիսայի բնակիչները սերտորեն կապված էին հողի հետ: Հողաշինարարական հանձնաժողովի տվյալներով, 1911 թվականին Ղարաքիլիսան ուներ 4534 դեսյատին հող², որից վարելահող՝ 1031, խոտհարք՝ 1257, անամերձ՝ 64, արոտավայր՝ 2182 դեսյատին (հիմնական բնակչությունը կազմում էր 4416 մարդ): Յուրաքանչյուր շնչին ընկնում էր 1,2 դեսյատին, որից միայն վարելահող՝ 0,23 դեսյատին³:

¹ «Մուրճ» ամսագիր, № 10, տե՛ս Ա. Սրհնդյանի «Մեծ Ղարաքիլիսայի ներկա դրությունը» հոդվածը, էջ 1581:

² Обзор Эриванской губернии за 1912 г., В. Неклепаев: «Нараклис, как климатический курорт», стр. 71—72.

³ Նույն տեղում, էջ 72:

Սակայն այդ հողերն ըստ շնչերի հավասարաչափ չէին բաշխված: Հողերի մեծ մասը գտնվում էր մի խումբ մարդկանց ձեռքում: Ղարաքիլիսայի հողերի մշակութունից ստացված բնդհանուր հկամուտը 1910 թվականին կազմում էր 19059 ուրբի 91 կոպեկ: Երկրագործութունից ստացված հկամուտը շատ քիչ էր, որովհետև Ղարաքիլիսան ոչ միայն սակավահող էր, այն էլ անբերրի, այլև հողը մշակվում էր շատ պրիմիտիվ գործիքներով: Արորով էին վարում, չէին պարարտացնում, ամեն տարի միևնույն կուլտուրան էին աճեցնում դաշտերում (ցորեն, գարի, հաճար և այլն), որի պատճառով հողն ուժասպառ էր լինում: Ղարաքիլիսան թեև ջրառատ էր, սակայն ջրանցքներ չունեիր: Գյուղատնտեսութան զարգացմանն օգնելու նպատակով 1910 թվականին Ղարաքիլիսայում հիմնվեց վարկային ընկերություն: Վարկից օգտվեցին գլխավորապես ընկերության ունեւոր անդամները, այն գործադրելով մեծ մասամբ շինարարության և առևտրի ղանազան կարիքների համար: Ընկերության անդամների թիվը մեկ տարվա մեջ հասավ 238-ի¹: Սակայն գյուղացիության վիճակը բարելավելու գործում վարկային ընկերությունը որևէ դեր չկատարեց:

Ղարաքիլիսեցիների երկրորդ կարևոր զբաղմունքը անասնապահութունն էր, որի համար Ղարաքիլիսան ունի փարթամ արոտատեղիներ: Մայմիսի լանջերն ու ստորոտները, ինչպես և Ալթուն-թախտը իրրև արոտավայր օգտագործվում էին մինչև խոր աշուն: Անասնապահության համար խոշոր նշանակություն ունեին նաև Ղարաքիլիսայի ձմեռանոցները:

1911 թվականին զարաքիլիսեցիներն ունեին 2885 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 1035 ոչխար և այծ, 68 ձի: Խոշոր եղջերավոր անասուններից 260 զույգը եղևներ և գոմեշներ² էին, որոնց մեծ մասը պատկանում էր մի խումբ հարուստների: Երկրագործությամբ զբաղվող զարաքիլիսեցիներ-

¹ «Մուր» ամսագիր, № 10, տե՛ս Ա. Արհևյանի «Մեծ Ղարաքիլիվածները»:

² Обзор Туркменской губернии за 1912 г., стр. 72—73.

րի ճնշող մեծամասնությունը լծկանից զուրկ էր: Ինչպես տեսնում ենք, այստեղ անասնապահությունը ևս լավ վիճակում չէր գտնվում: Անասնապահության ընդհանուր եկամուտները 1911 թվականին կազմեցին 32545 ու¹: Եթե մեխանիկորեն այն բաժանենք ըստ շնչերի, յուրաքանչյուր անձին անասնապահության եկամուտներից կրնին 7 սուրլի 35 կոպեկ, իսկ հողագործությունից՝ 4 սուրլի 30 կոպեկ:

Ղարաքիլիսեցիներին զգալի եկամուտ էր տալիս մեղվաբուծությունը: Դեռևս ավելի քան մեկ դար առաջ և՛ Արսուլյանն այդ կապակցությամբ գրում է.

«Համարյա ամեն մի ընտանիք ղբաղվում էր այնտեղ մեղվաբուծությամբ, և հաճելի հովիտն այնքան սննդամթերք էր տալիս այդ ժրաշան միջատներին, որ նրանք հարյուրապատիկ վարձատրում էին իրենց պահապանների հոգատարությանը»²:

1911 թվականին մեղվաբուծությամբ ղբաղվում էին 42 ընտանիք, որոնք ունեին 1056 հատ փեթակ և ստացել էին 1000 փութ մեղր ու 60 փութ մեղրամում՝ 13560 սուրլի արժեքով: Տնտեսության այս ճյուղը ղարգայման խոշոր հեռանկարներ ունեւր Ղարաքիլիսայում:

Ղարաքիլիսայում 91 հողի ղբաղվում էին զանազան արհեստներով, ըստ որում 23 հողի կոշկակար, 20 քարտաշ, 13 հյուսն-ատաղձագործ, 8 զերձակ, 6 դարբին, 4 թիթեղագործ, 6 ներկարար, 4 վարսավիր, 2 ժամագործ, 2 տակառագործ և մեկական ոսկերիչ, փականագործ և թամբագործ: Այս արհեստավորները միաժամանակ կապված էին հողի հետ: Արհեստներից սրանց ստացած տարեկան եկամուտը 1911 թվականին կազմում էր 8120 սուրլի³:

1 Обзор Оливанской губернии за 1912 г., стр. 73.

2 Խ. Արսուլյան, հատոր 8, էջ 57—58:

3 Обзор Оливанской губернии за 1912 г., стр. 75.

1911 ԹՎԱԿԱՆԻՆ ՂԱՐԱՔԻՎԻՍԻՅՈՒՄ ԿԱՅԻՆ ՀԵՏԵՎՅԱԿ
ԱՌԷՎՆՏՐԱՆԱՐԳՅԵՐԻՆԱՐԵՐԱԿԱՆ ՁԵՌՆՆԵՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մանուֆակտուրայի (կտորեղենի) խանութ	13
2. Նուարեղենի խանութ	6
3. Մսի վաճառքի խանութ (ամսանք 20), ձմեռանք	5
4. Մրդավաճառի խանութ	4
5. Մանրածախ խանութ	30
6. Պանդոկ	6
7. Ճաշարան	3
8. Բաղնիք	1
9. Զրազույց	4
10. Կղմիկների գործարան	3
11. Լիմոնադի խանութ	3
12. Փոստ	9
13. Թոնիր	3
14. Հրուշակարան	1
15. Հյուրանոց	3
16. Կաթնեղենի խանութ	1
17. Իջևան	4

Բացի սրանցից, կային խմիչքեղենի սննդամթերքի և անտառանյութի 17 պահեստներ¹:

Վերոհիշյալ առևտրա-արդյունաբերական ձևոնարկություններն ու կոմունալ օբյեկտները 1911 թվականին ունեցել են 433 հազար ուսուրու շրջանառություն, որի տարեկան շահույթը կազմում էր 43600 ուսուրյի գումար²:

Ղարաքիլիսայի գեղեցիկ բնության և նրա առողջարար կլիմայի շնորհիվ բազմաթիվ հովեկներ ամեն ամառ այստեղ էին անցկացնում իրենց հանգիստը: Այդ պատճառով զարաքիլիսեցիները լրացուցիչ եկամուտ էին ստանում՝ ամառներն իրենց սենյակները հովեկներին վարձով տալով: 1911 թվա-

¹ Обзор Эриванской губернии за 1912 г., стр. 73—74.

² Նույն տեղում, էջ 74:

կանին նրանք ամառանոց եկողներին վարձով էին տվել 226 սենյակ, դրանից ստանալով 9894 ռուբլի գումար¹։

Չկարողանալով պահպանել իրենց գոյութունը, դարաքիլիսեցիք դիմում էին պանդխտության։ Նրանք առավել քիչ-չալի եկամուտ էին ձեռք բերում Բաքվում, Թիֆլիսում և Բաթումիում աշխատելով։ 1911 թվականին 531 դարաքիլիսեցիներ աշխատում էին Բաքվի նավթահանքերում, Թիֆլիս—Բաթումի երկաթուղու շինարարության վրա, մանր ձեռնարկություններում և այլն։ Ղարաքիլիսեցիներից շատերը ծառայում էին Անդրկովկասյան երկաթուղում՝ որպես կոնյուկտորներ, սլաքավարներ, վերանորոգող բանվորներ և այլն։ Վերոհիշյալ դրադմունքները դարաքիլիսեցիներին բերում էին տարեկան 55 հազար ռուբլու եկամուտ²։

Ղարաքիլիսայի երիտասարդության զգալի մասն էլ կառուպանություն (չամշիկություն) էր անում փոստային կայարաններում։ Չմոռան սառնամանիքին նրանք բարձրանում էին Կուկուսյան լեռնաշղթան, Դվալի, Ջաջուռի և Դիլիջանի բարձրավանդակները՝ դրա դիմաց ստանալով շնչին վարձատրություն։

Ինչպես տեսնում ենք, երկրագործությունից, անասնապահությունից, արհեստներից և այլ դրադմունքներից ստացված միջոցներն այնքան քիչ էին, որ չէին բավարարում դարաքիլիսեցիների առօրյա կարիքները։ Դրա համար էլ նրանք, թողնելով հայրենի գյուղը, գնում էին Կովկասի տարբեր վայրերը՝ աշխատանք որոնելու, ապրուստի միջոցներ ստեղծելու նրանցից շատերը, օտարության մեջ կորցնելով առողջությունը, ուժասպառ եղած՝ գյուղ էին վերադառնում ու ոչ մի կերպ չէին կարողանում վերականգնել իրենց քայքայված անասնությունը։

¹ Обзор Эриванской губернии за 1912 г., стр. 74.

² Նույն տեղում, էջ 75։

Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի Ղարաքիլիսայի տեղամասի մեջ մտնում էին 36 գյուղ¹ մոտ 50 հազար բնակչով, 78 հազար ղևայատին տերիտորիայով, շհաշված մի բանի հույար ղևայատին պետական հողերը և անտառները: Ղարաքիլիսայի խճուղին իրար է միացնում Թիֆլիսի և Երևանի (այժմ Կիրովաբադ) նահանգներն ու Նոր Բայազետի գավառը: Ղարաքիլիսան հանդիսանում էր այդ նահանգների և գավառի տրանզիտային ապրանքների պահեստային կենտրոնը: Այդպիսի մեծ բնակավայրերից էին Զալալօղլին (այժմ Ստեփանավան), Դիլիջանը և Նոր Բայազետը (այժմ Կամո): Այդ բնակավայրերի ստացած և ուղարկած ապրանքափոխանակութունը կատարվում էր Ղարաքիլիսայում: Այդ է ապացուցում Ղարաքիլիսայի երկաթուղային կայարանով մեկնած մարդկանց, ուղարկված ապրանքների, ինչպես նաև կապի գրասենյակի, փոստ-հեռագրական թղթակցութունների բանակը: Միայն 1911 թվականին Ղարաքիլիսայի կայարանում ծախվել է 37 հազար երկաթուղային տոմս, ուղարկվել է 25174 փութ ծանրոց, իսկ բեռնային արագությամբ՝ մոտ մեկուկես միլիոն փութ: Ստացվել է ծանրոց 22029 փութ, իսկ բեռնային արագությամբ՝ մեկ միլիոն 200 հազար փութ (5000 բնակիչ ունեցող Ղարաքիլիսայից այդքան մեկնող, ապրանք ստացող և ուղարկող դժվար թվիներ): 1911 թվականին փոստ-հեռագրական գրա-

1 Գյուղերն են՝ Համզաշիման (Բուլդղյուղ), Հաջիդարա (Մակարաշին, այժմ Լեռնապատ), Ղշաղ (Ժղանով), Գարբաս, Բզովյալ, Յաղուրի (Մեղրուտ), Սարմուսախի (Քարաբերդ), Վարդանի (Խնձորուտ), Սիսիմալան, Հալավար, Սարալ, Արշուտ, Ղուրսալի, Խանջուղաղ (Գյոզալղարա), Վոսկրեսենովկա (Լեռմոնտովո), Նիկիտին (Ֆիլեմտովո), Համամլի, Որդնավ (Ջրուշեն), Ղաչաղան (Լեռնավան), Զոթուռ (Սարամեջ), Սպիտակ (Լեռնանցր), Զիզդամալ, Աֆանդի (Քարաձոր), Պարնի (Մեծ Պարնի), Նալրանդ, Քափանի, Գյորսան (Գողարան), Քյուլլիջա (Սարահարթ), Ղարալ (Կաթնաձոր), Ալիդրեկ (Մաղկաշեն), Ղալիաղչի (Հարթաղյուղ), Ղարարոյա (Խնկույան), Աղբուլաղ (Լուսաղբուր), Գյոզյոզուշ (Սարալանջ), Ղլորան (Շենավան): Գյուղերի նոր անունները տե՛ս Հայկական ՍՍԹ վարչատարածքային բաժանումը, Հայպետհրատ, 1955 թ., Երևան, 41—42 և 69—70 էջերը:

սենյակն ստացել է 101178 հասարակ նամակ, 5494 պատ-
վիրված նամակ, 798 ծանրոց, 4630 դրամական փոխադրում,
53930 հեռագիր, 23200 պետական ծրար¹։ Սա վկայութունն
է այն բանի, որ Ղարաբխիլիսայում էին գտնվում պետական,
ինչպես նաև հասարակական մի շարք հիմնարկներ, այդ թը-
վում։

1. Փամբակի հետարննչական հաշտարար տեղամասի վա-
րիչի ատյանը, որին ենթակա էր Ալեքսանդրապոլի դավառի
ուստիկանական առաջին տեղամասը։

2. Ալեքսանդրապոլի դավառի ուստիկանական առաջին
տեղամասի պրիստավը։

3. Ղարաբխիլիսայի փոստ-հեռագրական գրասենյակը։

4. Ալեքսանդրապոլի անտաստպետության անտառի հըս-
կիչը։

5. Անասնարուժական կետը։

6. Տեղամասային անասնարուչվը։

7. Փամբակի հետարննչական հաշտարար տեղամասին
կից գատական պրիստավը։

8. Թիֆլիսի նահանգի երկրորդ շրջանի անտառային վերա-
հսկիչը։

9. Անդրկովկասյան երկաթուղու 13-րդ տեղամասի պետի
գրասենյակը։

10. Ղարաբխիլիսայի երկաթուղային կայարանը։

11. Երթևեկության կայանը (15 ձիերով)² Ղարաբխիլիսայից
Գիրիջան և նրա մերձակայքը զնադողների համար։

12. Ղարաբխիլիսայի գյուղական վարչությունը։

13. Հայկական եկեղեցական-ծխական հոգաբարձությու-
նը, որի զբուխ կանգնած էր 5 հոգուց բաղկացած խորհուրդը²։

14. Ղարաբխիլիսայի վարկային ընկերությունը։

15. Սպանդանոցը։

16. Գյուղական հիվանդանոցը։

¹ Обзор Приваиской губернии за 1912 г., стр. 69.

² նույն տեղում, էջ 69—70։

Տարեցտարի աճում էր Ղարաքիլիսայի բնակչությունը: 1886 թվականին Ղարաքիլիսան ուներ 2686 բնակիչ¹: 1893 թվականին այն հասավ 3083 մարդու²: Բնակչության մեծամասնությունը տեղացիներ էին. կային նաև գաղթականներ, զվարժորապես Արարատյան դաշտավայրից և մասամբ Զանգեզուրից, ինչպես նաև Կարինի (Էրզրում) 1830-ական թվականների մեծ գաղթականության մնացորդներից, որոնք սկզբում բավականին ստվար թիվ էին կազմում: Հետագայում նրանց մի մասը գաղթել է Այեքսանդրապոլ, իսկ Ղարաքիլիսայում մնացել էին 80 տուն³: Սրանք էլ կրելով տեղացիների ազդեցությունը, ոչնչով չեն տարբերվում նրանցից իրենց կենցաղով, նիստուկացով ու այլ սովորություններով:

1853 թվականի աշնանը Ղարաքիլիսայում հիմնվեց զբարոց: Գարոցի հիմնադրումը նշանակալից երևույթ էր Ղարաքիլիսայում: Այդ զբարոցի առաջին ուսուցիչը ներսիսյան զբարոցի շրջանավարտ Հակոբ Շահինյանն էր: Նրա զբարոցը Տեր-Քոզիկյան զբարոցից ոչնչով չէր տարբերվում: 1871 թվականի հոկտեմբեր ամսին, երբ սկսվեցին պարսպմունքները, զբարոցն ուներ միայն մի սենյակ, ուր պարսպում էին տարբեր դասարանների երեխաներ:

1875 թվականի օգոստոսին հանգանակություն սկսվեց զբարոցի շենքի կառուցման համար: Նվիրատվություն գումարը 2000 ուրլուց անցավ: Գարոցի շենքը պետք է կառուցվեր գյուղի կենտրոնում՝ «Մեյդան» կոչվող վայրում: Սկսվեցին շինարարական աշխատանքները: Մինչ այդ, պարսպմունքները տեղի էին ունենում մասնավոր բնակարանում:

1878 թվականի դեկտեմբերին շարունակվեց հանգանակությունը, այդ նպատակի համար հավարվեց 3000 ուրլուց

1 Որից արական՝ 1420, իգական՝ 1266 մարդ:

2 Որից արական՝ 1613, իգական՝ 1470 մարդ (տե՛ս «Մուրճ» ամսույի, 1893 թ., հոկտեմբեր, № 10, էջ 1584):

3 Հ. Ա. Եփրեկյան, Բնաշխարհիկ բառարան, հատոր 1, էջ 482:

ավելի գումար¹: 1879 թվականի հոկտեմբերին արդեն զբա-
րոցական շենքը պատրաստ էր: Նույն տարին բացվեց նաև
օրիորդաց դպրոցը՝ և. Խանդաղյանի սեփական սենյակներում,
մինչև որ կարգի բերվեց և դպրոցի նպատակներին հարմա-
րեցվեց մի լքած գործարանի երկհարկանի խարխուլ շենքը:
Ուսուցչական խմբի մեջ էր Ղարաբաղյանը, որն ավարտել էր
Ուկրաինայի Ումանի երկրագործական դպրոցը: Ղարաբաղի-
սայի հոգաբարձության արամադրության տակ դրվեց մի քա-
նի հազար ութիսի գումար, որով դպրոցները վերակառուցվե-
ցին և կահավորվեցին: Դպրոցն ուներ 1000 գրքից բաղկացած
գրադարան: Նրա աշխատանքներն սկսեցին կարգավորվել:
Աշակերտների և աշակերտուհիների թիվը քանի զնում ավելա-
նում էր:

1911. թվականին Ղարաբաղիլիսայում արդեն կար երկդաս-
յան ուսումնարան՝ 5 ուսուցիչներով և 157 աշակերտներով:
Սովորող չուրաքանչյուր աշակերտից դանձվում էր 6 ութլի
ուսման վարձ:

Հայկական եկեղեցական-ծխական երկդասյան ուսում-
նարանն ուներ 12 ուսուցիչ և 411 աշակերտ, որից 196-ը աղ-
ջիկ: Ուսումնարանին կից կային կազմատուն և զամբյուղ գոր-
ծելու արհեստանոց:

1900-ական թվականներից Ղարաբաղիլիսայում գործում էր
նաև ռուսական դպրոցը, որի պարապմունքներն սկսվել էին
Փաշինյանների տանը: 1905 թվականին այդ դպրոցը տեղա-
փոխվում է երկաթուղային կայարանի մոտ կառուցված շենքը:
Դպրոցի 6 դասարանում սովորում էին մոտ 200 երեխաներ:
Այդ դպրոցում է սովորել հայ արձակի ականավոր վարպետ
Ստ. Զորյանը: Դպրոցի տեսուչն էր Գ. Զինանյանը:

Ղարաբաղիլիսայում կար նաև երկաթուղային մեկդասյան
ուսումնարան՝ երկու ուսուցչուհիներով և 58 սովորողներով:

¹ Ղարաբաղիլիսայում հանդանակություն կատարվել է՝ 1878 թ. Արևմտյան
Հայաստանի դպրոցներին, 1900 թ. Ախալքալաքի, 1902 թ. Կարինի երկրա-
շարժից տուժած բնակչությանը և 1903 թ. ճեմարանին օգնելու նպատակով:

1912 թվականի փետրվարին Ղարաքիլիսայի նորակա-
ռույց դպրոցի շենքը հրդեհ ընկավ և վառվեց: Դպրոցական
պարապմունքները դադարեցին:

Դպրոցի նոր շենք կառուցելու համար կազմվեց հատուկ
հանձնաժողով, որի նախաձեռնությամբ կազմակերպված
նվիրատվութուններին արձագանքեց գյուղի չքավորության
մեծամասնութունը: Նրանք իրենց համեստ լուծման մտքին
դպրոցի կառուցման ֆոնդը, մեկը՝ դրամով, մյուսը՝ քարով,
փայտով, փոխադրականով, քար, հող, ավազ կրելով կամ ֆի-
զիկական աշխատանքով: Սակայն նոր շենք չկառուցվեց, որով-
հետև հենց այդ ժամանակ Սողոմոն և Ալեքսանդր Աբուե եղ-
բայրներն իրենց շենքերից մեկը նվիրեցին դպրոցին, ուր և
շարունակվեցին դպրոցական պարապմունքները:

Ողորմելի վիճակում էր գտնվում Ղարաքիլիսայի բնակչու-
թյան առողջապահության գործը: Այստեղ կար մի մասնավոր
դեղատուն, գյուղական հիվանդանոց, որն ուներ մեկ բժիշկ,
մանկաբարձուհի և երկու բուժակ, երկաթուղային բուժ-ընդու-
նարան, որը նույնպես ուներ մեկ բժիշկ, մանկաբարձուհի և
երկու բուժակ:

1908 թվականից Ղարաքիլիսայում գոյութուն ուներ հա-
սարակական ակումբ: Ակումբին կից գործում էր մի աղքատիկ
գրադարան-ընթերցարան, ինչպես նաև խաղարան, ուր իրենց
ժամանակն էին անցկացնում հաճախորդները:

Ղարաքիլիսեցիների համար հանգստի վայրը «Ռոտոնդա»
ամառային ակումբն էր ու նրան կից ծառուղին: Ամառվա
ամիսներին բացվում էին «Արագած» անունով մասնավոր աչ-
գին, ինչպես նաև Երկաթուղային պարկը, որը գոյութուն ուներ
1900-ական թվականներից և վաղուց ղարաքիլիսեցիների ու
ամառանոց եկողների համար ծառայում էր իբրև հանգստյան
վայր: «Արագած» այգում տեղի էին ունենում համերգներ, իսկ
«Ռոտոնդա» ամառային այգում՝ պարի երեկոներ և ներկա-
յացումներ:

Ղարաքիլիսայի փողոցները ծուռումուռ էին, նեղ և խոր-
դուրսորդ: Որոշ փողոցներում բարձր սյունների վրա ամրացված

էին նազմի մեծ յապատերներ, որոնք ազոտ կերպով լուսավորում էին իրենց շուրջը: Փողոցների անկյուններում տախտակների վրա գրված ու փակցված էին փողոցների անունները¹: Տները ճարտարապետական կառուցումների տեսակետից աչքի չէին գարնում, կային նաև գեանափոր խրճիթներ: Ղարաբլիխայի գլխավոր փողոցը կոչվում էր Ալեքսանդրովսկայա, որը ձգվում էր գեպի կայարան: Այդ փողոցով էր անցնում Աղստաֆա—Ալեքսանդրովսկ խճուղին: Ալեքսանդրովսկայա փողոցի աջ ու ձախ կողմերին դասավորված էին կրպակների շարքերը: Այդ փողոցի վրա էր գտնվում նաև Ղարաբլիխայի շուկան, ուր արտակարգ աշխուժութուն էր տիրում մասնավորապես կիրակի և տոն օրերին:

Եվրոպական ճանապարհորդների նկարագրած գեանափոր տների փոխարեն 19-րդ դարի վերջերին Ղարաբլիխայում արդեն կային բազմաթիվ քարաշեն տներ՝ մինչև իսկ կղմինգրի և թիթեղե տանիքներով: Այդ ցիրուցան, ծռռուծուռ դասավորված տները գյուղին ահաճ տեսք էին տալիս: Շենքերը մեծ մասամբ նոր ձևով էին շինվում, տները շրջապատվում պարտեզներով,—ղլխավորապես խնձսրենու, բալենու ծառերով: Խմելու համար Ղարաբլիխայի բնակչութունը մեծ մասամբ օգտագործում էր Վանաձոր գետակի ջուրը: Բացի այս գետակից, գյուղում կային նաև մի շարք աղբյուրներ՝ Ռոտոնդյան և Միխայլովյան փողոցների անկյունում, Շարբաթովյան և Եղիգարյան փողոցների վրա և այլուր: Խմելու համար օգտագործվում էին նույնիսկ ջրհորների ջրերը: Ջրհորներում տարվա բույր եղանակներին ջուր էր լինում:

1912 թվականին «Բազմիլ» կոչված աղբյուրից ջուրը բերվեց մինչև շուկա: Ղարաբլիխայիները երազում էին ջրմուղ ունենալ, բայց դրա համար միջոցներ չունեին:

¹ Փողոցները կոչվում էին Բաֆֆու, Արձրուու, Պտականյանի, Եկեզեյու, Պուշկինի, Միխայլովյան, Լարիս-Մեկերովի, Իվանովի, Ռոտոնդյան, Գարեհնատորյան, Փիրամյան, Շարբաթովյան, Եղիգարյան, Ջինանյան և այլ անուններով:



Ղարաքիլիսայի փողոցները լինը

Արևելյան Հայաստանը, ազատագրվելով Պարսկաստանի ու սուլթանական Թուրքիայի լծից և անցնելով ռուսական տիրապետության տակ՝ ոչ միայն տնտեսական, այլև հասարակական-կուլտուրական կյանքի զարգացման համար որոշ հնարավորություններ ստացավ: Չնայած այդ ժամանակ Ռուսաստանը ճորտատիրական հետամնաց երկիր էր, բայց նրա էկոնոմիկայում և հասարակական կյանքում սկսվել էր առաջադիմական պրոցես: Այդ պայմաններում, 1870-ական թվականներին, Հայաստանում տնտեսական կյանքի զարգացման հետ միասին սկսում է զարգանալ նաև հասարակական և կուլտուրական կյանքը: 1870—80-ական թվականներին տեղի ունեցող ազդեցին-ազատագրական շարժումներն արձագանք են դառնում Հայաստանի մի շարք վայրերում, այդ թվում նաև Ղարաքիլիսայում: Այստեղ աշխատավորները շփման մեջ մտնելով Երևանը, Ալեքսանդրապոլի, Բաքվի, Թիֆլիսի հետ, մասնակից դարձան կատարվող հասարակական-քաղաքական իրազարժություններին: Դրա վկայությունն է 1874 թվականի հունիս ամսին Ղարաքիլիսայում հիմնված «Կանտորա հայրենյաց սիրո» անունով խմբակը: Խմբակի ղեկավարն էր Գևորգ Խոսրովյանցը, քարտուղարը՝ Համբարձում Բալասանյանը: Խմբակը ունեցել է կիսալեզակ բնույթ, նրա անդամները պարապել են «ազգօգուտ գործերով»: Համբարձում Բալասանյանը 1874 թվականի հունիսի 29-ի թվակիր նամակում «Կանտորայի» մասին գրում է.

«1874 թվականի հունիսի 20-ին մի քանի հայեր, որոնց մի մասը Ղարաքիլիսայում էր ծառայում, մի մասն էլ երկար ժամանակով օդափոխության համար եկել էր

Ղարաքիլիսա, կամավոր կերպով կազմեցին մի խմբակ՝
«Կանտորա հայրենյաց սիրո» անունով»¹:

Այդ խմբակի անդամները շարաթական 3 օր հավաքվում և կարգում էին զանազան յրադրեր, ազգային պատմության գրքեր, միաժամանակ ամեն տեսակ ազգօգուտ գործերի մասին էին մտածում, որպեսզի Ղարաքիլիսայի հայերի մեջ վառ մնա հայրենասիրությունը: Այդ խմբակը պետական գործերով չէր զբաղվելու, որովհետև այն արգելված էր:

Ահա «Կանտորա հայրենյաց սիրո» խմբակի հետապնդած նպատակները: Սակայն «Կանտորան», այնուամենայնիվ, ունեւրազաբաական բնույթ: Երևանի նահանգական ժանդարմական վարչության փաստաթղթերում հաճախ հիշատակվում է, որ «Կանտորայի» անդամների մոտ կատարած խուզարկության ժամանակ հայտնաբերվել են «մի քանի բանաստեղծություններ, որոնցում կոչ է արվում պայքարել Հայաստանի անկախությունը վերականգնելու համար»²: «Կանտորային» չի հաջողվել ծավալել գործնական-քաղաքական լայն աշխատանք, բայց նա եղել է քաղաքական բնույթի խմբակ: Չէ՞ որ հաճախ քաղաքական հարցերով զբաղվող խմբակներն ու կազմակերպությունները հանդես էին գալիս ինքնազարգացման և ինքնակրթության քողի տակ:

Մեծ Ղարաքիլիսայում հիմնված «Կանտորա հայրենյաց սիրո» խմբակը շունեցավ երկար կյանք: Նրա գոյությունը տևեց մոտ մեկ տարի: 1875 թվականի ապրիլ ամսին Երևանի նահանգական ժանդարմական վարչությանը հաջողվում է հայտնաբերել «Կանտորա»-ն և լիկվիդացնել այն: Խմբակի անդամները ձերբակալվում են և մեկ ու կես տարի բանտ նստելուց հետո ազատ են արձակվում, սակայն նբանք

1 Վ. Պարոսմյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, էջ 186:

2 Խոսքը վերաբերում է Արեւմտյան Հայաստանի ազատագրությանը:

դանվում են ստիկանություն: վերահսկողության տակ¹:

1875 թվականի հունիսի 2-ին թագավորին ներկայացված ժանդարմական զեկուցագրում ասված է.

«Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի Ղարաբլիխա գյուղում հայանաբերված է «Կանտորա հայրենյաց սիրո» անունով գաղանի բնակրություն: Այդ բնակրությունը հիմնել են հայերը՝ նպատակ ունենալով իրենց հավատակիցների մեջ բարձրացնել հայրենասիրական ոգի և ձեռք բերել անկախություն»²:

Հայաստանի մի շարք քաղաքներում և Ղարաբլիխայում գործող խմբակները լիկվիդացնելուց հետո էլ, սուս-թուրքական պատերազմի տարիներին, ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ Ղարաբլիխայում բնակիչները մեծ օգնություն կազմակերպեցին սուսական զորքին:

1877—1878 թվականների սուս-թուրքական պատերազմի ժամանակ Կովկասի հայ բնակչությունը բազմակողմանի օգնություն էր ցույց տալիս սուսական բանակին: Երկրի հայաբնակ շրջաններում կազմակերպվել էին կամավորական խմբեր, աշխարհազորային ջոկատներ: Կամավորական խմբերում Ղարաբլիխայից և նրա շրջակա գյուղերից շատ մարդիկ էին մասնակցում: Կամավորները սուսական զորային ստորաբաժանումներում հերոսաբար կռվել են և նույնիսկ պարզևարվել: Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայերը մեծ հոգատարություն էին ցուցաբերում նաև վիրավոր զինվորների նկատմամբ: Պատերազմի հենց առաջին ամիսներին Ղարաբլիխա գյուղի մի շարք բնակիչներ իրենց տները սրամադրեցին տեղի կիսահոսպիտալի վիրավորներին³: Այսպիսով,

¹ Մ. Գ. Ն եր ս ի ս յ ա ն, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1955, էջ 171—174:

² Վ. Պ ա ր ս ա մ յ ա ն, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, էջ 158:

³ Մ. Գ. Ն եր ս ի ս յ ա ն, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 205:

հայերը ուսու-թուրքական պատերազմի ժամանակ ակտիվ նյութական ու ռազմական օգնություն ցույց տվեցին ուսու-կան բանակին:

Ռուս և հայ ժողովրդի միջև հաստատված բարեկամու-թյունը դրսևորվում է ոչ միայն Պարսկաստանի և Քուրդիստանի գեղամիջավայրում պատերազմների տարիներին, այլև ներքին թշնա-մու՝ ցարական կառավարության դեմ, որի ծանր լծի տակ տնքում էր ոչ միայն հայ, այլև հենց ինքը՝ ռուս ժողովուրդը: Գրա համար էլ հայ ժողովուրդը համախմբվում է Ռուսաս-տանի ռեուլյուցիոն ուժերի շուրջը և պայքար ծավալում ցա-րական ֆեոդալական կարգերի դեմ: Այդ պայքարը ավելի մասսայական դարձավ, երբ հանդես եկավ ռուսական բանվոր դասակարգը՝ բոլշևիկների պարտիայի պիսավորությամբ:

1890-ական թվականներից մարքսիստական խմբակներ ու կազմակերպություններ են սկսում առաջ դալ Անդրկովկասում: 1899 թվականի ամռանը Ստ. Շահումյանին հաջողվում է Հայաստանում մի խումբ երիտասարդներից ստեղծել մարք-սիստական խմբակ: Նրա պարագլուխներն անցնում էին չափազանց հետաքրքիր: Խմբակի պրոկլամացիաները տա-րածվում էին ամբողջ Հայաստանում:

1902 թվականի հոկտեմբերին Թիֆլիսում հայերեն լեզվով լույս է տեսնում լենինյան «Լսկրա»-ի գաղափարների պաշտ-պան «Հայ սոցիալ-դեմոկրատների միություն» օրգան «Պրո-լետարիատ» անլեզու թերթը: Վ. Ի. Լենինը «Լսկրա»-ի էջե-րում ողջունում է այդ թերթի երևան գալը:

1903 թվականից աշխատանքներ են սկսվում ինչպես Հայաստանի մի շարք քաղաքներում ու շրջաններում, այնպես էլ Ալավերդու պղնձահանքերում, գործարանում, Սանահինի դեպոյում և Լոռու մի շարք գյուղերում:

Լոռու բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացու-ցիչների խորհրդակցությունը, որ տեղի ունեցավ 1905 թվա-կանի մայիսին Հաղպատի մոտերքում, ստեղծեց ՌՍԴԲՊ Բորչալուի կոմիտե: Ստ. Շահումյանի ղեկավարությամբ ՌՍԴԲՊ Լոռու խմբակները վերածվեցին պարտիական սկզբնա-

կան կազմակերպութիւնների և նրանց բազայի վրա ստեղծվեցին ՌՍԴԲԳՊ կոտու կազմակերպութիւնն ու նրա կոմիտեն:

Հայաստանի ռեւոլյուցիոն շարժման ծավալման ու խորացման գործում մեծ դեր խաղաց հայ բոլշևիկյան մամուլը («Կայծ», «Նոր խոսք», «Թրեր» և այլն): 1905 թվականին Ղարաքիլիսա է աչցելում Ստեփան Շահումյանը և հանդես է գալիս բավական բազմամարդ ժողովում: Ժողովականների մեջ գտնվելով, Վահան Տերյանը գրում է.

«Բայց պարզ հիշում եմ, որ մի տարօրինակ ուժ գրավում էր ինձ դեպի այդ սքանչելի մարդը, որի մտածողութիւնն ու զգացողութիւնը իմից բոլորովին տարբեր էր: Նրա կեցիվածքում, ձայնում, շեշտում, վերջապես զարմանալի դեմքում կար անսահման մի գրավչութիւն, անդիմադրելի մի հմայք... Լինելով անձանոթ նրա անձնավորութիւնն և օտար նրա աշխարհայացքին, տասնյակ տարիների ընթացքում, երկու անգամ միայն, այլև թուրքիկ կերպով, տեսնելով այդ մարդուն՝ միշտ հիշել եմ նրան մի տարօրինակ համակրանքի զգացումներով, միշտ զգացել եմ նրա հմայքի ուժը...»¹:

1905 թվականի օգոստոսի 18-ին Ղարաքիլիսայում, Փաշինյանի բնակարանում տեղի ունեցավ ժողով, որտեղ Ստ. Շահումյանը հանդես եկավ մի զեկուցումով՝ «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» թեմայով: Ստ. Շահումյանի զեկուցմանը ներկա էին 50-ից ավելի ընկերներ: Ժողովին նախագահում էր Հայկ Ազատյանը:

1907—1908 թվականներին Ղարաքիլիսա է եկել նաև Ալեքսանդր Մյասնիկյանը և հիւլյթներ ունեցել:

1905—1907 թվականներին ուսական առաջին բուրժուազեմոկրատական ռեւոլյուցիային արձագանքեցին ինչպես Հայաստանի մյուս քաղաքների ու շրջանների, այնպես էլ կոտու աշխատավորները:

¹ Վ ա հ ա ն Տ եր յ ա ն, Երկերի ժողովածու, հատոր 4, Պետհրատ, Երևան, 1925, էջ 340—341:

1905—1907 թվականների ռուսական առաջին սեռայնոստրիայի երեք տարիները մեծ փորձ հանդիսացան ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի աշխատավորութեան համար:

Ռուսական առաջին սեռայնոստրիային հաջորդեցին սեռայնոստրիայի տարիները: Այդ տարիներին իւրաքանչիւր կարգից պարտական կազմակերպութեանները, և նրանց աշխատանքը համեմատաբար սկսեց թուլանալ: Նացիոնալիստական պարտիաները, մասնավորապես դաշնակները, մեծ վնաս հասցրին պարտական աշխատանքներին: Չնայած այդ բոլորին, ցարական կառավարութեանը շահողովեց ամբողջովին ճշդ բանվորների և գյուղացիների սեռայնոստրիայի շարժումը:

Հայաստանի աշխատավորների վիճակն է՛լ ավելի ծանրացաւ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Անդրկովկասը, այդ թվում Հայաստանը, դարձաւ պատերազմի թատերարև: Այդ տարիներին աշխատավորները տնտեսական անկման հասան, դուրսը համատարած քայքայման ենթարկվեց, ամենուրեք սպեկուլյացիա, անլուր բռնութեաններու շահագործում: Այս բոլորը հանգեցրին սեռայնոստրիայի շարժումների ուժեղացմանը:

1917 թվականի փետրվարի 27-ին Ռուսաստանում հաշթանակեց բուրժուազեմոկրատական սեռայնոստրիան, տապալվեց ցարական ինքնակալութեանը:

Փետրվարյան սեռայնոստրիայի լուրջ արագութեամբ տարածվեց ողջ Անդրկովկասում: Ինչպես Հայաստանի բազմաթիւ վայրերում, այնպես էլ Ղարաբաղիստայում, երկաթուղային այգում, տեղի ունեցաւ միտինգ: Միտինգում ելուցթներ ունեցողներն առաջարկեցին սահմանել եւթժամյա բանվորական օր, կալվածատերերից բռնագրավել հողերը, ազատել քաղաքական բանտարկյալներին:

Հայաստանի մի շարք վայրերում՝ Ալեքսանդրապոլում, Ալաւերդում, Ղափանում, ինչպես նաև Ղարաբաղիստայում ստեղծվեցին Բանվորների ու Զինվորների Սովետներ:

Մարտի 8-ին (21) զինվորների մեծ միտինգ տեղի ունեցաւ Ղարաբաղիստայում: «Պայքար» թերթն այդ կապակցու-

Թյամբ հաղորդում է, որ մարտին այստեղ կայացած խոշոր ցույցում ցուցարարները ամենից առաջ ուղջունում էին Պետ-
րոսբրադի պրովետարիատին և զինվորներին, պահանջում ան-
հատուց Սովետական իշխանություն ստեղծել բոլոր վայրե-
րում, դադարեցնել պատերազմը: Յույցում բազմաթիվ դրո-
շակների մեջ աչքի էր ընկնում այն դրոշակը, որի վրա որպես
ազատության խորհրդանշան նկարված էր մի կին. նրա ոտ-
երի տակ թափված էին շղթաներ, իսկ դրոշակի վերևի մա-
սում գրված էր՝ «Շղթաներն ընկան, Ռուսիան ազատագրվեց»:

Հսկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեուլյուցիայի հաղ-
թանակով Ռուսաստանում իշխանության գլուխ անցավ բան-
վոր դասակարգը՝ Կոմունիստական պարտիայի գլխավորու-
թյամբ: Սակայն Անդրկովկասում 1918 թվականի մայիսին
իշխանության գլուխ անցան հայցիոնալիստական պարտիանե-
րը, Հայաստանում՝ զաշնակները, որոնք Հայաստանը վերա-
ծեցին անգլո-ամերիկյան իմպերիալիստների գաղութի, պա-
տերազմների թատերաբեմի, իսկ աշխատավորությանը մատ-
նեցին կոդոսուտի, սովի ու համաճարակի Այդ տարիներին
հայ ժողովուրդը կանգնած էր կործանման սպառնալիքի առաջ:

Հայաստանի աշխատավորները, ունենալով ռուս մեծ եղ-
բայրական ժողովրդի օրինակը, Կոմունիստական պարտիայի
զեկավարությամբ հեռեդղական պայքար ծավալեցին Հայաս-
տանում սովետական կարգերի հաղթանակի համար:

* *
*

Հսկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեուլյուցիայի հաղ-
թանակով տապալվեց կապիտալիստների ու կալվածատերերի

տիրապետութունը, երկրում հաստատվեց պրոլետարիատի գրիկտաուորա՛:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեուլուցիայի հաղթանակից հետո Ի. Վ. Ստալինը գրում է.

«Ամբողջ իշխանութունը բանվորներին ու գյուղացիներին» կանչը որոտալից տարածվեց ամբողջ երկրով մեկ՝ ոտքի հանելով ճեշված մասսաներին: Եվ երբ Ռուսաստանի հյուսիսում արձակված այդ կանչն սկսեց կենսագործվել այնտեղ, Անդրկովկասի ունեոր դասակարգերն ակնբախ տեսան, որ Հոկտեմբերյան ռեուլուցիան և Սովետական իշխանութունն անխուսափելի մահ են բերում իրենց: Պայքարը Սովետական իշխանության դեմ, այդ պատճառով էլ, դարձավ նրանց համար կյանքի ու մահվան հարց»²:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեուլուցիայի հաղթանակից հետո Անդրկովկասի, այդ թվում Հայաստանի աշխատավորները, բուլշևիկյան կազմակերպութունների ղեկավարությամբ, պայքարի գուրս եկան սովետական կարգերի հաղթանակի համար: Բուլշևիկյան կազմակերպութունները ծավալուն պայքար կազմակերպեցին դաշնակիներին, մենշևիկներին, էսեռներին, մուսավաթակիսներին դեմ: Այդ պայքարում կոսովեց Հայաստանի բուլշևիկյան կազմակերպութունը:

Հայաստանի մի շարք վայրերում, այդ թվում նաև Ղարաբաղի սոցյալում կայացած ժողովներում ու միտինգներում աշխատավորները որոշումներ էին ընդունում, որ իրենք ճանաչում են Վ. Ի. Լենինի գլխավորած Սովետական Ռուսաստանի կա-

¹ Աշխատության այս մասը շարագրելիս օգտագործել ենք ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալում և Կրթականի գալատագիտական լիանդարանում գտնվող՝ հին բուլշևիկներ Ս. Խանոյանի, Վ. Մխիթարյանի, Հ. Գանիելյանի, Վ. Այվազյանի, Խ. Մալումյանի, Մ. Տեր-Գևորգյանի, Մ. Գարագաշի, Մ. Անտիկյանի, Հ. Ղազարյանի, Մ. Ղազարյանի, Ա. Մխիթարյանի հուշերը:

² Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 4, Երևան, 1948, էջ 60:



Արկարապոսի կայանը (ԵՄԿ)-անի թիվանից

սովարտիստներ և պատրաստակամութիւն են հայտնում պայքարել Սովետական իշխանութեան հաղթանակի համար: Սակայն աշխատավորական մասսաների ցանկութեան հակառակ, հակառակույցիսն իշխանութեան օրդան Անդրկովկասեան սեյմը, գերմանա-թուրքական և ամերիկա-անգլիական իմպերիալիստների կամբով, 1918 թվականի ապրիլի 22-ին Անդրկովկասը հայտարարեց «անկախ ուսպուրիկա» և կայերը խզեց Սովետական Ռուսաստանից: 1918 թվականի մայիսի վերջերին Թիֆլիս քաղաքում ստեղծվեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ազգային կառավարութիւններ՝ մենչևիկներ, մուսավաթականների և դաշնակցականների գլխավորութեամբ:

Գերմանա-թուրքական դավթիչները և անգլո-ամերիկյան ու ֆրանսիական իմպերիալիստները Անդրկովկասում իրենց պլաններն իրականացնելու համար օգտագործեցին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հակառակույցիսն ուժերին: Օտարերկրյա զաղութարարները և դաշնակիներն ու մենչևիկները 1918 թվականի գեկտեմբերին ազգամիջյան պատերազմ կազմակերպեցին: Դրա դեմ վճռական կերպով բողոքեցին Վրաստանի, Հայաստանի բոլշևիկյան կազմակերպութիւնները: Նրանք աշխատավորութեանը ցույց տվեցին այդ պատերազմի հրահրման նպատակները:

Հայ և վրաց ժողովուրդների միջև տեղի ունեցած եղբայրասպան պատերազմի մասին Գ. Կ. Օրջոնիկիձէն գրում է.

«Եթե Վրաստանի և Հայաստանի փոխհարաբերութիւնների ամբողջ պատմութիւնը երբեք պատերազմ չի տեսել այդ երկու եղբայրական ժողովուրդների միջև, ապա բավական եղավ, թույլ տվեք ասել, սոցիալիստների՝ մենչևիկների ու դաշնակիների իշխանութեան գլուխ անցնելը, և ահա երկու եղբայրական ժողովուրդները մահացու կռիվ սկսեցին ինչ-որ մի պատառ հողի համար, թափելով հարյուրավոր բանվորների և գյուղացիների՝ հայերի և վրացիների արյունը ի հաճույս անգլիական վաճառականների և արդյունարերողների, որոնք օգ-

սովեցին դրանից, որպեսզի թե՛ մենշևիկուհի և թե՛ դաշ-
նակցական բանդիտներին քշելին վիճելի առհասարակացից
և հայտարարելին այն շեղոք դոտի, այսինքն՝ ուղեին իրենց
ձեռքը, որը նրանք արին»¹: Հայաստանի և Արարատի
միջև ստեղծեցին «չեղար գոտի»:

«Չեղար գոտում» աշխատավոր ժողովուրդը սովի էր մա-
նրվել, թաղանք, ավաղակութունն ու զոլութունը սովորական
բան էին դարձել²: Լուռու աշխատավորները շահագործվում և
կեղծբվում էին ոչ միայն կալվածատերերի, կուլակների ու
անգլիական նահանգապետի, այլև դաշնակ ու մենշևիկ կո-
միսարներին, շինովնիկներին և աչլոց կոչմից:

Լուռու աշխատավորների վիճակն ավելի վատացավ, երբ
1918 թվականի մայիսին թուրքական զորքերն անցան Ախուր-
յան գետը, շրջապատեցին Ալեքսանդրապոլը՝ շրջակա գյու-
ղերով և շարժվեցին դեպի Ղարաբաղի սա, իսկ մյուս կողմից
դեպի Երևան՝ Զուլֆա դնալու համար: Սկսվեց դադթը Արև-
մուտյան Հայաստանից՝ Ղարսի շրջանից, Ալեքսանդրապոլի և
Երևանի գավառներից: Գաղթականները, ճանապարհին կորց-
նելով իրենց անասունները, տնային իրերը, ուժասպառ ու մո-
լորված փախչում էին դեպի Ղարաբաղի սա, դեպի Սանահին ու
Դիլիջան:

«Մայիսի կեսերին— դրում է պատմարան կետն,— Ալեք-
սանդրապոլի պահեստներն ընկնում են թշնամու ձեռքը:
Ժողովուրդը խելակորույս փախչում է դեպի Ղարաբաղի-
սա, լցնում է նրա ձորը՝ իր անասուններով, սաչկերով:
Փախչում է հայկական զորքը: Գեներալ Նազարբեկովը՝
դրանց հրամանատարը, նահանջելով դեպի Դիլիջան, հու-
սահատական հեռագրեր էր ուղարկում Ազգային խոր-
հրդին, դանգատվում էր, թե իր մոտ մնացել են միայն

¹ Գ. Կ. Օրջոնիկի ձեռագրեր, Ընտիր հոդվածներ և ճառեր, 1918—1937, Հայպետհրատ, Երևան, 1950, էջ 74:

² Ողտագործիկ Լևր Ս. Կարապետյանի «Ձինված սպասարկությունը և ու-
րում 1921 թվականին» աշխատությունը, Երևան, Հայպետհրատ, 1955 թ.

կրեք հարյուր հոգի և իրեն մնում է գերի բնկնել թուրքերի ձեռքը»¹։

Հայաստանը կտրվելով արտաքին աշխարհից, 1918 թվականի ամռանը սարսամիելի ծանր գրուձյան մեջ էր գտնվում։ Այդ ծանր պահին Ղարաքիլիսայի և Սարգարաբադի տակ տեղի ունեցած անհավասար մարտերում ժողովուրդը հերոսական դիմադրություն ցույց տվեց թուրքական բանակին²։

Թուրքական զորքերը, Ալեքսանդրապոլից շարժվելով դեպի Ղարաքիլիսա, 1918 թվականի մայիսի 21-ին առանց դիմադրության գրավում են Համամլի գյուղը։ Այդ օրերին գեներալ Նաղարբեկովի շտաբը Ալեքսանդրապոլից տեղափոխվում է Ղարաքիլիսա, ապա՝ Դիլիջան։

Ղարաքիլիսայի և Փամբակի մյուս գյուղերի բնակիչները որոշում են իրենց կյանքն ու պատիվը պաշտպանելու համար դիմադրություն ցույց տալ թուրքական զորքերին։ Նրանք տեսնում էին, որ իրենք մենակ են մնացել, որ ազգային զորամասերի վրա հույս դնել չի կարելի։

Ղաղախից եկած գյուղացիները հավաքվում են Դիլիջանում, ուր կայանում է զորահանգես։ Զորահանգեսից հետո նրանք շարժվում են դեպի Ղարաքիլիսա։ Ճանապարհին սարերից խշնոզ գյուղացիները խառնվում էին Դիլիջանից եկողներին և նրանց հետ մայիսի 24-ին հասնում Ղարաքիլիսա. այնտեղից էլ մեկնում Արշուտ կիսակայարանը։

Ղարաքիլիսացիներն ունեին հրացաններով զինված 5—6 հազար կովոդներ և 6 զնդաղիթ, իսկ թուրքերը՝ 10 հազարանոց զորք և թնդանոթներ³։ Արշուտ կիսակայարանի մոտ ըսկըսվում է կռիվը։ Առաջին հարձակումը կատարում են հայերը։ Կռիվը տևում է մինչև ուշ գիշեր։ Թշնամին դիմում է փա-

1 Լ և ո, «Անցյալից», հուշեր, Բղթեր, զատումներ, Թիֆլիս, 1925 թ., էջ 399։

2 Օղտագործել ենք Հ. էլիբերկյանի «Ղարաքիլիսայի ճակատամարտը 1918 թ. մայիսին» հոդվածը։ Տե՛ս Հայկ. ՍՍՌ ԳԱ-ի հաս. բաժ., «Տեղեկագիրք», 1947, № 7։

3 «Մշակ», 1918 թ., հունիսի 5, № 104։

խուստի: Այդ օրը հայերն ավար են վերցնում երկու թնգանոթ ու հինգ գնդացիք և առաջ շարժվելով՝ գրավում են Համամլուի բարձունքները: Մյուս օրը թշնամին գերազանց ուժով դիմում է հարձակման, բայց համառ դիմադրությունը կանգնեցնում է նրա գրոհը: Հայերը դիմում են հակահարձակման և թշնամուն այնպիսի հարված են հասցնում, որ թուրքական հրամանատարությունը կարսի շրջանից լրացուցիչ ուժեր է պահանջում: Երեք վերսա հեռավորությունից զարաքիլիսեցիները «ուռա» գողնելով գրոհի են անցնում և թշնամուն փախուստի մատնում: Նույնպես նրա գերազանց ուժերին ու տեխնիկային: Թուրքական զորամասն իր մեծ կորուստները համալրում էր նոր ուժեր ստանալով: Չորս օր հերոսաբար կռվելուց հետո, ռազմամթերքի կատարյալ սպառման և նոր օժանդակ ուժեր չստանալու պատճառով, զարաքիլիսեցիները բռնում են նահանջի ճամփան: Մայիսի 25—28-ը հերոսաբար դիմադրելով թշնամու գերազանց ուժերին, կռվող հայ գյուղացիները մայիսի 28-ի երեկոյան թողնում են Ղարաքիլիսան: Միայն այդ ժամանակ թուրքական զորքերը կարողանում են մտնել Ղարաքիլիսա:

«Հայերի՝ թուրքական զորքերի դեմ մղած պայքարի մեջ Ղարաքիլիսայի կռիվը բռնում է բացառիկ տեղ իր խիզախությամբ, իր հերոսական ոգով: Հայ-թուրքական կռիվների միջոցին ոչ մի տեղ հայկական զորքերն այնպիսի խիզախ, անձնուրաց դիմադրություն չցուցաբերեցին, ինչպես այդ արին Ղարաքիլիսայի մոտ հայ գյուղացիները, այդ լեռնական, երկրագործ և հովիվ մարդիկ: Նրանց անվարժ, անհավասար քայլող խմբերը գնում էին իրենց պատիվը, տունը, ընտանիքը պաշտպանելու և մեռնելու պարզ դիտակցությամբ»¹:

Նույնիսկ թուրքական հրամանատարությունը խոստովանում էր հայերի այդ հերոսական դիմադրության փաստը.

¹ «Մշակ», 1918 թ., 11 հունիսի

«Երզնկայից մինչև Ղարաքիլիսա ոչ մի հայ զինվորի չպատահեցինք, — ասում են թուրք հրամանատարները. — բայց Ղարաքիլիսայի պատերի տակ միայն հայ զինվորը սրբեց իր ճակատից այդ արատը»:

Սակայն այդ հերոսամարտը չկարողացավ կոտորածից ու թալանից ազատել Ղարաքիլիսան, ոչ էլ կարողացավ երկաթուղագիծը հայերի ձեռքում պահել¹:

Թուրքերն ամեն կողմից օղակեցին Ղարաքիլիսան և սկսեցին սրախողխող անել, թալանի ենթարկել բնակչությանը: Էլ տուն չէր մնացել, որ չթալանեին, ամբողջ վերին թաղը կատարելապես գատարկվել էր:

Ղարաքիլիսան մի սպանդանոց էր դարձել՝ Մի քանի օր շարունակ մարդկային արյուն էր հոսում Ղարաքիլիսայի փողոցներում: Զոհերի թիվը հասնում էր մի քանի հազարի: Թուրքական գավթիչները տարան զրեթե ամբողջ անասունները, կողոպտեցին տնային արժեքավոր բոլոր իրերը, խանութները, երկաթուղու արժեքավոր սարքավորումը, այն ամենը, ինչ որ կարողացան ձեռք ձգել: Արժեքավոր ոչինչ չթողին: Նրանք երկաթուղու կայարանում թանկագին գորգերից, անկողիններից և տնային այլ իրերից ահագին զեզեր էին կազմել և վազոններով կրում էին գեպի Կարս, դեպի Էրզրում: Թուրքական զորքերը շոռացան թալանել նաև եկեղեցիին. ինչպես նաև Ղարաքիլիսայի շրջակա գյուղերը, մասնավորապես Հաջիգարան, Ղշլաղը, Բզովղալը և այլն: Փամբակից և Լոռուց, ոչ լրիվ տվյալներով, նրանք տարան 36 հազար զուլա խոշոր և 110 հազար մանր հզներավոր անասուն: Միայն Փամբակի գյուղերից տարան 527 հազար փութ հացահատիկ և այլն²:

Ժամանակակիցը այդ կապակցությունը գրում է.

«Գերեզմանային խորին լուռությունն իր լայն թևվերը տարածել էր Ղարաքիլիսայի վրա, այլևս

¹ Լ և ս, «Անյայտից», հուլիս, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925, էջ 400:

² Ս. Ա զ ա յ ա ն, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Հայպետհրատ, 1957, Երևան, էջ 177:

չէին երևում ոչ մարդ, ոչ անասուն, ոչ բոջուն: Չլին լսվում ոչ աքաղաղի կանչը, ոչ հավերի կոկոսցը, ոչ էլ կովերի, եղների բառաչը, ոչ ոչխարների մայունը և ոչ էլ կենսուրախ, շարաճճի մանուկների ազմկալի խաղերն ու երգերը: Ամեն ինչ լռել էր, ամեն ինչ պապանձվել: Սև ազոպիներն էին միայն կոնշալով ուրախ-ուրախ սավառնում դիակների վրա: Կանայք ու մանուկները ցրվում էին դաշտերը՝ կանաչ ուտելու, անասունների նման արածելու: Սովին հաջորդեց զարհուրելի համաճարակը՝ տիֆը, խոլերան: Գատարկվել էին բոլոր փողոցները: Կենսուրախ Ղարաքիլիսան մի հսկա գերեզմանոցի էր փոխվել: Գյուղում մնացածներն ամուր փակվել էին տներում, ներքնահարկերում, նկուղներում, սենյակների տախտակամածի տակ: «Ղափուլյի աչ», — գոռում-գոչում էին թուրքական ասկյարները և դոները խորտակում, փշրում»¹:

Ահաբեկված ժողովուրդը չէր կարողանում փողոց դուրս գալ: Հինգ ամիս շարունակ երկյուղ կրելով՝ տներում գիշերները ճրագ չէին վառում: Գիշեր-ցերեկ գոռ ու լուսամուտ փակած՝ խավարի մեջ իրար հետ շշուկով էին խոսում:

1918 թվականի հոկտեմբերի 5-ին թուրքական զավթիչների ճեղքան Ղարաքիլիսայից, սակայն Ղարաքիլիսայի բնակչության համար խաղաղ պայմաններ չտեղծվեցին, թուրքական թալանչիներին փոխարինեցին դաշնակ մաուկերիստները, որոնք ահ ու սարսափի մեջ էին պահում բնակչությանը: Դրա համար էլ բնակչության դժգոհությունն ավելի էր սաստկանում տիրող կարգերի դեմ:

1919 թվականի ամռան ծանր վիճակի մասին Ղարաքիլիսեցիների համախոսականում գրված է.

«Ղարաքիլիսայի հասարակությունը սարսափով էր մըթնեցնում իր օրերը՝ շարագործների, մարդասպանների և մաուկերիստների կատարած մի շարք սարսափեցնող

¹ Կիրովականի գավառագիտական թանգարան, գործ 1, թերթ 37:

գործողութիւնների պատճառով: Օրը ցերեկով փողոցներում խաղաղ բաղաբացիների վրա հարձակում գործելը սովորական երևույթ էր դարձել»:

Ահա թե ինչու Ղարաքիլիսայից ներքին գործոց մինիստրին գրում են.

«Ձաջուռի նահանջից հետո մեր մի քանի գորամասերի կողմից կատարված թալանները ճանապարհի վրա բնկած դյուղերում, առանձնապես Ղշլաղի և Դարբասի ավերածութիւնները խմբապետ Սեպուհի գինվորների կողմից՝ ժողովրդի մեջ առաջ են բերել հակահառավարական տրամադրութիւն, և դյուղացիութիւնն այդ շրջանում չի ուզում ճանաչել կառավարութեան ներկայացուցիչներին».

Ահա այսպիսին էր Ղարաքիլիսայի, ինչպես նաև Հայաստանի բնակչութեան վիճակը դաշնակիների տիրապետութեան զեռու առաջին շրջանում, հետագայում այն ավելի վատթարացավ:

* *
*

Գեռու 1917 թվականի սկզբներին Ղարաքիլիսայում ուսուցիտները տրամադրութիւններով համակված մի խումբ երիտասարդներ հաճախ հավաքվում էին գրադարանում, ուր տեղի էին ունենում գրույցներ, զեկուցումներ, գաղտնի ժողովներ: Այդ երիտասարդները 1917 թվականի հուլիսին Անուշավան Վարդանյանի նախաձեռնութեամբ ու ղեկավարութեամբ կազմակերպեցին բոլշևիկյան բջիջ՝ յսթ հոգուց բաղկացած¹:

Ղարաքիլիսայի սպարտիական այդ բջիջը սկսեց որոշ մասնակցութիւն ունենալ դյուղացիների և երկաթուղային բան-

¹ Անուշավան Վարդանյան, Վերջինե Միլիթարիստ, Վաղինակ Մուսկատ, Սուրեն Աղատյան, Սերյոժա Բախշինյան, Արաւովազ Հախինյան, Արամայէս Աղատյան:

վորների մեջ տարվող քաղաքական աշխատանքներին. դրանց օգնում էին այդ ժամանակ Թիֆլիսից հաճախ Ղարաբլիխա ժամանող Արտակ Ստամբուլցյանը, Գևորգ Ալիխանյանը և Շմուկեիչը, իսկ Ալեքսանդրապոլից՝ Լիպարիտ Աթարբեկյանը և ուրիշներ:

Ռեուլուցիոն աշխատանքների ծավալման զգալի հենարանը 218-րդ սարատովյան դրուժինան էր, որ գտնվում էր Ղարաբլիխայում: Ղարաբլիխայի ընկերները սկսեցին ակտիվ աշխատանք ծավալել Սահմանադիր ժողովի ընտրությունների նախապատրաստման օրերին:

Երկրային Կոմիտեից եկած Շմուկեիչը, Վ. Մուսոյանը, Ե. Գևորգյանը մեկնում են Համամլի, այնտեղ գտնվող կայազորը: Սպաները կարծում են, թե սրանք էսեռներ են, եկել են Սահմանադիր ժողովի հարցերով: Նրանք իսկույն հավաքում են զինվորներին: Ելույթներից պարզվում է, որ սրանք բուշեիկներ են: Ստեղծված առիթն օգտագործելով՝ ընկերները զինվորներին բացատրում են Հոկտեմբերյան ռեուլուցիայի հաղթանակի, Սահմանադիր ժողովի ընտրությունների կարգի մասին, կոչ են անում քվեարկել բուշեիկների ցուցակի օգտին, որ թեկնածու էր առաջադրված Ստ. Շահումյանը:

Պարտիական բջիջի աշխատանքները շարունակվում էին մինչև թուրքական զավթիչների Ղարաբլիխա մտնելը: 1915 թվականի մայիսից ժամանակավորապես զաղարկցին նրա՛ն: աշխատանքները, իսկ 1919 թվականի ամռանը Ղարաբլիխայում պարտիական կազմակերպության աշխատանքներն զգալի կերպով աշխուժացան. կազմակերպվեց նոր բջիջ, որն իսկույն աճեց: Ղարաբլիխա պարտիական աշխատանքի եկան մի խումբ բուշեիկներ՝ Անուշավան Վարդանյանը, Երվանդ Հայրապետյանը, Մաթևոս Գրիգորյանը, Հարություն Թորոսյանը, Վաղարշակ Վարդանյանը և ուրիշներ:

Երկաթուղում ևս ստեղծվեց պարտիական կազմակերպություն, որի կազմում էին՝ Հրաչիկ Մուղնեցյանը, Մադակ Ալտյանը, Գրիգոր Հայրապետյանը, Ենոք Ավետիսյանը և ուրիշներ: Վախժանյանը Զոբանյանի և Գեղեոն Տեր-Մևսրոպյանի



Հին բուշնիկ է. Մխիթարյան

միջոցով զգալի աշխատանքներ կատարվեցին Համամլի և Նալբանդ կայարանների երկաթուղայինների շրջանում:

1919 թվականի վերջերին Ղարաքիլիսայի պարտիական կազմակերպությունը Միսակ Տեր-Գևորգյանի միջոցով սերտ կապեր հաստատեց Հաջիգարայի պարտիական կազմակերպության հետ: Այդ կազմակերպությունը, որը բազկացած էր 17 մարդուց, որոշ աշխատանքներ էր կազմակերպում ոչ միայն Հաջիգարայում, այլև շրջակա գյուղերում: Ղարաքիլիսայում աճում էր նաև զործող երիտասարդական կազմակերպությունը, որը դարձել էր պարտիական կազմակերպության կարևոր սեղանը:

1919 թվականի նոյեմբերին Ղարաքիլիսայում ընտրվում է պարտիական նոր կոմիտե՝ որի մեջ մտնում են՝ Վերգինե Մխիթարյանը, Երվանդ Հայրապետյանը, Մաթևոս Գրիգորյանը, Հարություն Թորոսյանը և Վաղինակ Մուսվանը:

Գրադարանը, ուր աշխատում էր Վ. Մխիթարյանը, դարձավ պարտիական աշխատանքի կենտրոն: Գրադարանում կայացած առանձին ժողովներին, որ հաճախ անց էին կացնում Ասքանազ Մուսվանը, Սերգո Մարտիկյանը, Սերգո Խանոյանը և ուրիշներ, մասնակցում էին ոչ միայն Ղարաքիլիսայի, այլև Լոռու, Դիլիջանի, Ալեքսանդրապոլի կազմակերպությունների ներկայացուցիչները: Բացի բոլշևիկներից, ակումբի շուրջը համախմբված էին բազմաթիվ անպարտիական ընկերներ, որոնք սիրով էին կատարում զանազան հանձնարարություններ¹:

1920 թվականի հունվարին լուր ստացվեց, որ Ալեքսանդրապոլից Ղարաքիլիսայի բանտն են բերել բոլշևիկներ Եզոր Սևյահին և Լևոն Ուլիբեկյանին: Ղարաքիլիսայի բոլշևիկները նրանց հետ տեսակցություն կազմակերպեցին և տեղեկու-

¹ Անպարտիական այդ ընկերներից էին՝ Աշոտ Կոստանյանը, Գեղամ Նալբանդյանը, Երեմ Եղջատյանը, Գրիգոր Անանյանը, Պետրոս Ղազարյանը, Արշակ Առաքելյանը, Արշամ Ամիրբեկյանը, Հմայակ Փաշինյանը և ուրիշներ:

թյուններ հաղորդեցին Ղազարբիրխասյում տարվող աշխատանքները մասին:

Այսպիսով, 1920 թվականի սկզբին Ղարաբիրխասյում արդեն կար ձեռնարկված պարտիական կազմակերպություն, որը կապված էր Արմենկոմի և Ալեքսանդրապոլի բոլշևիկների հետ: Պարտիայի անդամներ Խաչիկ Մալումյանի, Հայկ Մխիթարյանի, Վաղինակ Օզարաշյանի, Գավիթ Քոչարյանի, Արամյա Օհանյանի, Մեսրոպ Արզումանյանի, Սամուել Պարզյանի և ուրիշների միջոցով պարտկազմակերպությունն ակտիվ աշխատանք էր ծավալում Ղարաբիրխասյում և նրա շրջակայքում գտնվող գործառններում:

1920 թվականի հունվարին Երևանում կայացած Հայաստանի Կոմունիստական պարտիայի անընդալ կոնֆերանսին Ղարաբիրխասյի պարտիական կազմակերպության կողմից մասնակցում էր Վաղարշակ Վարդանյանը: Այդ կոնֆերանսի որոշումների ոգով Ղարաբիրխասյի պարտիական կազմակերպությունն սկսեց վերակառուցել իր աշխատանքները, նախապատրաստվել զինված ապստամբության՝ սովետական կարգերի հաստատման համար: Ավելի սերտ և ավելի կոնկրետ դարձավ պարտիական կազմակերպության կապը ՌԿ(Բ)Պ Կովկասյան բյուրոյի և Արմենկոմի հետ:

1920 թվականի մարտի վերջին ՌԿ(Բ)Պ Հայաստանի Կոմիտեի ղեկավարությունը Ալեքսանդրապոլում դումարվեց պարտիական կոնֆերանս, որին մասնակցեցին նաև Ղարաբիրխասյի պարտիական կազմակերպության ներկայացուցիչներ Ե. Հայրապետյանը և Ռ. Սահանյանը: Կոնֆերանսը միջոցառումներ նշեց պարտիական աշխատանքներն ուժեղացնելու համար: Գրան խոշոր շափով նպաստեց Ազրբեջանի աշխատավորության ձևեր բերած հաղթանակը: Ազրբեջանի աշխատավորները, ռուսական 11-րդ փառապանծ բանակի օգնությամբ, 1920 թվականի ապրիլի 28-ին Ազրբեջանում հաստատեցին սովետական կարգեր: Այդ բանը մեծ շափով օգնեց Հայաստանի աշխատավորներին՝ սովետական կարգերի հաղթանակի համար մղվող նրանց պայքարում:

Աղբրեւջանում սովետական կարգեր հաստատվելու լուրը մեծ խանդավառութեամբ բնորոշեցին ինչպես ողջ Հայաստանի, այնպես էլ Ղարաբաղի սոցիալիստական աշխատավորները: Այդ օրերին Ղարաբաղի սոցիալիստական պարտիական կազմակերպությունը մեկական ներկայացուցիչ ուղարկեց Երևան և Ալեքսանդրապոլ՝ առաջիկա անելիքների մասին ցուցումներ ստանալու նպատակով:

Մտահնում էին Մայիսմեկյան օրերը: Հայաստանի, այդ թվում և Ղարաբաղի սոցիալիստական բոլշևիկները նախապատրաստվում էին մարտականորեն դիմավորելու միջազգային բանվորություն համերաշխության օրը:

1920 թվականի մայիսմեկյան ցույցը նախապատրաստելու նպատակով մի շարք ընկերներ ուղարկվեցին տեղերը, իսկ Վերդինե և Վարդուշ Մխիթարյանները ցուցարարների համար պատրաստելու էին կարմիր ժապավեններ, դրոշակներ և լուսանկարներ¹:

Ապրիլի 30-ին Գ. Հայրապետյանի և ապա Ա. Վարդանյանի բնակարաններում կայացած ժողովներում քննարկվեց մայիսմեկյան ցույցի անցկացման պլանը, մասնավորապես երկաթուղային պարտիական կազմակերպության անելիքները:

1920 թվականի մայիսի 1-ի առավոտյան ցուցարարները դրոշակներով ու լուսանկարներով հավաքվեցին երկաթուղային այգում² և շարքերով շարժվեցին դեպի քաղաքի հրապարակը:

Ձրոսաչափը դուրս՝ ցուցարարներին միացան Հաջիդարայի գյուղացիները: Նրանց դրոշակի մի երեսին գրված էր. «Կեցցե՛ Բանվոր-գյուղացիական խորհրդային իշխանությունը Հայաստանում», իսկ մյուս երեսին՝ «Կորչե՛ն հայ-թուրքական կոտորածները»: Հրապարակի մոտ ցուցարարներին միացան Յազուբլիից եկած գյուղացիները՝ Մ. Սարգսյանի և Լ. Թուրյանի գլխավորությամբ, իսկ փայտամշակման արհեստանոց-

¹ Գրոշակի վրա գրելու հնարավորություն չունենալու պատճառով նրանք կարմիր դրոշի վրա դեղին թելով ասեղնագործել էին «Կեցցե՛ խորհրդային Հայաստանը» բառերը:

² «Կիրովականի կուստետական», 1957 թ. 4 ապրիլի, տ.ս. Վ. Մուսվաթի «Հուշեր Ղարաբաղի սոցիալիստական ընդհատակից» հոդվածը:

ների բանվորները՝ ատաղձագործ Հ. Մելիքյանի ղլխավորությամբ:

Քանի զնում ցուցարարների շարքերը բազմամարդ էին զաննում: Նրանք կանգ առան Ղարաքիլիսայի կենտրոնում գտնվող զրադարանի շենքի դիմաց: Այնտեղ եկան նաև Վոսկրեսենովիկա գյուղի ուսուցչուհայինները՝ Ա. Զաղորեկինի և Գ. Շուրինի ղեկավարությամբ: Սկսվեց միտինգը:

Առաջինը հանդես եկավ Ե. Հայրապետյանը, սույա՝ Մ. Գրիգորյանը: Բոլշևիկ հռետորները նախ ողջունեցին Ազրբեջանում սովետական կարգերի հաստատումը և սույա մեկնարանեցին ստեղծված ստույտցիոն իրադրությունը Հայաստանում:

«Ես անգրագետ գյուղացի եմ, — ասում է Պ. Տեր-Գեորգյանը, — երկար խոսել չեմ կարող: Միայն մի բան հաստատ գիտեմ, որ գյուղացին հողը վարում է, արտը ցանում, բայց արախ միջին փշեր են դուրս գալիս, մինչև փշերը չհանի, գյուղացին բերք չի ստանա: Դաշնակցականներն էլ աչդ արախ փշերն են, մինչև նրանց արմատախիլ չանենք, հայ ժողովուրդը չի ազատագրվի»:

Միտինգում ելույթներ ունեցան նաև Մ. Սարգսյանը և Մ. Անտինյանը: Վերջում Ե. Հայրապետյանը կարգաց բանաձև, որը վերջանում էր «Կեցցե՛՛ հորհրդային Հայաստանը» բառերով: Այնուհետև ցուցարարները շարժվեցին դեպի երկաթուղային կայարան: Նրանց մի մասը, գալով կայարան, նստում է դրոշակներով, կանաչ ճյուղերով և ծաղիկներով զարդարված մի զնացք ու շարժվում դեպի Փամբակ, Շահալի, Քոլագիրան և Սանահին¹: Շահալիում զնացքը ընդունում են Կ. Բեկդաշյանը և Ս. Ղուկասյանը: Կայարանում կայացած միտինգում ելույթ ունեցավ Զ. Աշրաֆյանը, Քոլագիրանում՝ Մ. Գրիգորյանը, իսկ Սանահինում՝ Ե. Հայրապետյանը: Սանահինի բազմամարդ մի-

1 Գնացքը պատրաստել էին երվանդ և Գրիշա Հայրապետյանները՝ վաղիակ Այվազյանի հետ միտինգ: Գնացքի ղլխավոր արգելավարն էր Հայի Դանիելյանը, իսկ մեքենավարը՝ Արտեմ Տեր-Գրիգորյանը:

տինգում վրացեբն լեզվով խոսեց նաև Երկրային կոմիտեի հրահանգիչ Ա. Աուշտրոյսնը: Նույն ազիտգնացքը Սանահինից մեկնեց Արշուտ, Համամլի, Նալբանդ և Ղալթաղչի կայարաններն ու վերադարձավ:

Մեռնակները փորձելյին գնացքը բռնել և պահել Սանահին կայարանում, բայց ցուցարարներն շտապ վերադարձան, նախքան Սադախուլուից մեռնակների կանչած զրահագնացքի գալը:

1920 թվականի մայիսի 1-ից հետո Ղարաքիլիսա է գալիս Ս. Խանոյանը: Նա տեղավորվում է կայարանին մոտիկ Ե. Հայրապետյանի տանը: Մայիսի մեկյան ցուցից հետո բոլշևիկների մի մասը թաքնվել էր, մի մասն էլ գյուղերումն էր դտնըվում:

Գաշնակները մայիսի 7-ի առավոտյան ձերբակալեցին Ե. Հայրապետյանին. Մ. Գրիգորյանին և նույն օրն էլ աքսորեցին Գիլիջան, սակայն կես ճանապարհից ետ բերին Ղարաքիլիսայի բանտը: Այդ նույն օրը ձերբակալեցին նաև Վ. Մուսվյանին և Վ. Մխիթարյանին:

Այդ գիշեր Վ. Վարդանյանը, Կ. Միրիմանյանը կազմակերպել ու պատրաստել էին զինվորներին և միլիցիային, իսկ իրենք գնացել էին անտառ, որ առավոտյան վաղ կապվեն Հաջիզարա գյուղի հետ: Նույն գիշերը քաղաքում արգեն կատարվել էին մի շարք բոլշևիկների ձերբակալություններ: Զինված հաջիզարեցիները, իմանալով այդ մասին, մտնում են անտառ: Սրանցից Մ. Տեր-Գևորգյանը, Մ. Ղարաղաջյանը և Ս. Միկինյանը գնում են քաղաք՝ ստեղծված իրադրությունը ծանոթանալու համար, բայց այդտեղ էլ ձերբակալվում են: Անտառում հավաքվածները, տեղեկություն չստանալով հետախուզության գնացած կապավորներից, վերադառնում են գյուղ:

Ռ. Ոսկանյանի տանը զինվորների ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպման պահին զաշնակները ձերբակալում են Վ. Վարդանյանին և Թ. Ոսկանյանին: Հակառակորդի կողմից ձերբակալվում են նաև Լոռի գնացած Հ. Թորոսյանը, Ս. Ար-

շահունին, Հ. Բարբուճյանը, Հ. Մաղաթյանը, Ալեքսանդրապոլ գնացող Խ. Հովսեփյանը և Ս. Զավարյանը, ինչպես նաև Դիլիջանից Ղարաքիլիսա եկած՝ կոմիտեի ներկայացուցիչ Ա. Յվաչգրը: Երկու օրում Ղարաքիլիսայից, Ալավերդուց և Դիլիջանից դաշնակիները ձերբակալում են մոտ 50 մարդու, այդ թվում Ալավերդուց՝ Մ. Շեստակովին, Շակովին, Երկաթգծից՝ Վ. Ալվազյանին, Գ. Յուզրաշյանին և ուրիշներին: Միայն Ա. Խանոյանին և Ռ. Ոսկանյանին է հաջողվում փախչել¹:

Բանտարկյալները, գրսից ոչ մի տեղեկություն չունենալով, տաղնապալի վիճակում էին: Մայիսի 9-ին բանտի բակի պարիսպներին է մոտենում մեկը՝ շալը գլխին: Նա թղթի կտոր մեկնում բանտարկյալներին, որի մեջ գրված էր.

«Զրահապատը շեկավ, ասացեր՝ ի՞նչ անենք: Եթե ոչ հրածեղտ է գինված միջամտություն, ասացե՛ք»:

Բանտի պահակներն այդ նկատում են, մոտենում կնոջը, շալը գլխից պցում, և ինչ... կին թվացողը մի երիտասարդ էր (հաջիդարեցի Մ. Գարազաշը). նրան ծեծում են ու ձերբակալում: Մայիսի 17-ին Ղարաքիլիսայի բոլոր բանտարկյալներին, մոտ 50 մարդու, փոխադրում են Ալեքսանդրապոլի բանտը և նրանցից յուրաքանչյուրին դատապարտում 2—8 տարի մասնակիով բանտարկության²:

Անցնում են ամիսներ: Հայաստանի, այդ թվում նաև Ղարաքիլիսայի աշխատավորների դրությունը դնալով վատանու՝ է, գժգոհություններն ավելի են մեծանում տիրող կարգերի դեմ: Վրա է հասնում թուրքական գավթիչների նոր օկուպացիան:

1920 թվականի մայիսից, Ղարաքիլիսայում մնացած պարտիականները ընդհատակում հնարավորին չափ շարունակում

¹ Վերգրեն Մխիթարյանի հուշերը, «Հիշողություններ Ղարաքիլիսայից», տե՛ս ԵՆՄԻՍԿԻ արդարամբությունը Հայաստանում» (1920—1930), ՊԼՄՀրատ, 1930, էջ 117—121:

² «Կայծ» թերթ, 1957 թ. 20 հոկտեմբերի տե՛ս Ռ. Փաշինյանի «Վերգրեն Մխիթարյան» վերնագրով հոդվածը:

են իրենց գործունեությունը՝ կապեր հաստատում Թիֆլիսի, Երևանի, Ալեքսանդրապոլի հետ և նախապատրաստական աշխատանքներ տանում Ղարաքիլիսայում սովետական կարգի հաստատելու համար: 1920 թվականի նոյեմբերի 7-ին Ղարաքիլիսայի բանտից 15 բնակիրներ ազատվում են, իսկ մինչ այդ մի քանիսն արդեն ազատվել էին՝ Բանտից ազատվածները մնացել էին Ալեքսանդրապոլում:

Այդ ժամանակ Ղարաքիլիսան լցվել էր զաղթականներով սննդամթերքի սարսափելի պակասությամբ և զգացվում, հիվանդությունները մասսայական էին դարձել, բնակչությունն ազետալի վիճակում էր գտնվում:

1920 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանում սովետական կարգեր հաստատվեցին:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Լոռու բռնապետության կազմակերպությունները մտան Ղարաքիլիսայի պարտիական կազմակերպության մեջ: Լոռու աշխատավորները սերտ կապ հաստատեցին Սովետական Հայաստանի աշխատավորների, իսկ պարտիզանական ջոկատները՝ Սովետական Բանակի հրամանատարության հետ:

1920 թվականի նոյեմբերի 30-ին Ղարաքիլիսայում անկուսակցներ են, որ Կարմիր Բանակի միավորումները մտել են Գիլիջան Դեկտեմբերի 3-ին Ղարաքիլիսայում ընտրում են հինգ հոգուց բաղկացած Ռեկոմ (Ռեկոմի նախագահ՝ Ս. Մանուցյան, անդամներ՝ Վ. Մուսվյան, Ա. Վարդանյան, Մ. Խանզադյան և Գ. Մարգարյան): Ռեկոմը ներկայացուցիչներ է ուղարկում Երևան, Ալեքսանդրապոլ և Ղազախ՝ նրանց հետ կապ պահպանելու համար:

Դեկտեմբերի 3-ին փոստի մոտ տեղի է ունենում միտինգ, ուր ընթերցում են Ռեկոմի առաջին հրամանը՝ Ղարաքիլիսայում Սովետական իշխանություն հաստատելու մասին:

Ռեկոմի հրամանում գրված էր, որ 1920 թվականի դեկտեմբերի 3-ից Ղարաքիլիսայում և նրա գավառում հայտարարվում է Սովետական իշխանություն: Առաջարկվում է բնակչությանը՝ բոլոր հարցերով դիմել Ռեկոմին, միաժա-

մանակ զգուշացվում է, որ Ռեկոմի հրամանները շկատարող-ները կենթարկվեն խիստ պատասխանատուության:

Միտինգի ժամանակ տեղեկանում են, որ Կարմիր Բանակի հրկու հրամանատարներ՝ ղրվիզիայի հրամանատար Պ. Կուրիշկոն և կոմիսար Դվորյանինովը Ղարաքիլիսա են եկել:

Միտինգի մասնակիցները Կարմիր Բանակի ներկայացուցիչներին ընդունում են մեծ ջերմությամբ: Միտինգում ճառով հանդես է գալիս զինվորական կոմիսար Դվորյանինովը: Նա նախ ողջունում է զարաքիլիսեցիներին գաշնակների տիրապետությունից ազատագրվելու կապակցությամբ և ապա կոչ անում՝ ամրապնդելու Սովետական իշխանությունը:

Դեկտեմբերի 3-ի միտինգից հետո կայացավ Ռեկոմի նիստը, որին մասնակցեցին նաև ղրվիզիայի հրամանատար Պ. Կուրիշկոն և կոմիսար Դվորյանինովը: Նիստում հաղորդում տրվեց կարգ ու կանոնի հսկողության մասին: Ռեկոմը միլիցիայի պետ նշանակեց Մ. Խանդադյանին: Այդ նիստում էլ պայմանավորվեցին, որ Կարմիր Բանակի ղորամասերը Վոսկրեսենովկա գյուղից պետք է առավոտյան մտնեն Ղարաքիլիսա:

Դեկտեմբերի 4-ի առավոտյան ժողովուրդը հավաքվել է, Վարդանլիի ձորում (Օսեփանց կամուրջի մոտ) Կարմիր Բանակի ստորաբաժանումներին ղիմավորելու համար: Վերջապես երևում են Դիլիջանի ճանապարհից իջնող կարմիր հեծելազորի զինվորները... Սպասողները ցնծություն են ապրում, շատերի աչքերից ուրախության արցունքներ են թափվում:

Հեծելազորը մոտենում է հավաքված ամբոխին: Ջիերից իջնում են ղրվիզիայի հրամանատար Պ. Կուրիշկոն և կոմիսար Դվորյանինովը: Նրանք գրկախառնվում են քաղաքի աշխատավորության ներկայացուցիչների հետ: Սկսվում է միտինգը. Հանդես են գալիս Ա. Վարդանյանը և Մ. Խանդադյանը: Վերջինս ուռևերեն լեզվով ճառ է արտասանում: Միտինգի ժամանակ

1 Победа Великой Октябрьской социалистической революции (сборник воспоминаний участников революции), «Воспоминания о Караглинском подполье», Москва, 1958, стр. 347—363.

Դիլիջանից եկող ավտոմեքենան մոտենում է աշխատավորութ-
յան ներկայացուցիչներին ու ղորային ստորաբաժանման
մարտիկներին: Մեքենայից իջնում են Ա. Կախոյանը, Վ. Ղա-
ղանջյանը, Լ. Ուլիբեկյանը և ուրիշներ: Հայաստանի Ռեկոմը
նրանց ուղարկել էր Ղարաքիլիսա՝ պարտիական ու սովետա-
կան ղեկավար աշխատանքի:

Կարմիր Բանակի ստորաբաժանումները մտան Ղարաքի-
լիսա: Վերջինս տոնական տեսք ստացավ: Այստեղ ամենուրիք
սիրալիր կերպով ընդունեցին կարմիրբանակայիններին ու
հրամանատարներին:

Ղարաքիլիսայում սովետական կարգեր հաստատվելուց մյ
շաբաթ հետո, 1920 թվականի դեկտեմբերի 11-ին կայացավ
տեղի պարտիական կազմակերպութայն ընդհանուր ժողովը՝
սրին ներկա էին 97 մարդ: Ժողովը լսեց Ե. Հայրապետյանի
զեկուցումը Ալեքսանդրապոլի կազմակերպութայն կատարած
հերոսական աշխատանքների մասին և որոշեց ողջույններ ու-
ղարկել Ալեքսանդրապոլի բանվորներին, որոնք հերոսական
պայքար են ծավալել իրենց քաղաքում սովետական կարգերի
հաստատման համար¹:

1921 թվականի դեկտեմբերի 27-ին Ղարաքիլիսայում կա-
յացած բազմամարդ միտինգում հանդես եկան Բուդու Մղիվա-
նին, Թուրքական կոմպարտիայի նախագահ Մուստաֆա Սուբ-
խին, Հայկ Աղաաչյանը և Հեղկոմի նախագահ Սերո Մանուց-
յանը: Նրանք կոչ արին ամրապնդել Սովետական իշխանու-
թյանը: Միտինգում որոշում ընդունեցին սղջույնի հեռազրեր
ուղարկել Սովետական Ռուսաստանի և հարևան Ադրբեջանի
կառավարութուններին²:

1920 թվականի նոյեմբերին դաշնակիների կառավարութուն-
նը համաձայնութուն է տալիս՝ չեղոք դոտին վրացական
զորքեր մտցնելու մասին: Դրանով նրանք չեղոք դոտին ամուր

¹ «Կոմունիստ», Հիկ Կենտկոմի և ՀՍԽՀ Հեղկոմի օրդան, 1920 թ.
12 դեկտեմբերի:

² «Կոմունիստ», Հիկ Կենտկոմի և ՀՍԽՀ Հեղկոմի օրդան, 1920 թ. 29
դեկտեմբերի:

բազա են դարձնում Անդրկովկասում սովետական կարգերի դեմ պայքարելու համար: Վրացական մենշևիկները, չբավարարվելով չեզոք գոտիով, շարժվում են մինչև Շահալի՝ դրավելով Զալալոյիին (այժմ Ստեփանավան), Լորուտը, Աթանք և այլն: Գրավված շրջաններում ստեղծվում է ամենաձանր վիճակ:

1920 թվականի սեպտեմբերին Բաքվում տեղի ունեցած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարին չեզոք գոտուց մասնակցեցին 15 ներկայացուցիչ: Նրանք համագումարից հետո տեսակցութուն ունեցան Ս. Օրջոնիկիձեի, Ա. Կիրովի, Ա. Միկոյանի և Ա. Մոսվյանի հետ, ցուցումներ բնագրան դինված ասպտամբուժյուն նախապատրաստելու համար:

1920 թվականի դեկտեմբերի 17-ին Ղարաքիլիսայի Ռեկոմը հայտնում է Երևան, ՀԿ(Բ)Պ Կենտկոմին, որ իրենք կազմակերպել են դինված ուժեր՝ ամեն մի գյուղում 50-ից մինչև 200 մարդ, և այդպիսինների թիվը հասնում է մինչև 2500 մարդու:

Լոռու դինված ասպտամբուժյունը նախապատրաստելու և այն դեկավարելու համար 1920 թվականի դեկտեմբերի 20-ին ՀԿ(Բ)Պ Կենտկոմը որոշում է Սովետական Ղարաքիլիսայում ստեղծել «ասպտամբուժյան շտաբ» Հովսեփ Լազյանի գլխավորությամբ¹:

¹ Օգտագործել ենք Ա. Մ. Հակոբյանի «Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թվին» աշխատությունը, Պետհամալսարանի հրատարակչություն, Երևան, 1948 թ.:

² Հովսեփ Գևորգիի Լազյանը ծնվել է 1888 թ. Ախալցխա քաղաքում: Եղել է սպարորդ բանվոր, 1907 թ. մտել է Կոմունիստական պարտիայի շարքերը: Հ. Լազյանը ակտիվ կերպով մասնակցել է Բաքվի Կոմունայի պայքարին: Այնուհետև արտրվել է Աստրախան Ազրբեջանում սովետական կարգեր հաստատվելուց հետո նա անցել է պարտիական աշխատանքի: 1920 թվականի աշնանը, իրի բողաշխատող, Կարմիր Բանակի հետ միասին գալիս է Հայաստան: Շուտով ՌԿ(Բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հանձնարարությամբ մեկնում է Լոռի և տեղում դեկավարում Լոռու դինված ասպտամբուժյան նախապատրաստումն ու իրականացումը (տե՛ս Ա. Կարողեայան, «Ձինված ասպտամբուժյունը Լոռիում 1921 թվականին», Հայպետհրատ, Երևան, 1955, էջ 60):

1921 թվականի հունվարին ավարտվում են ուսուցչի մասնաճյուղի մոբիլիզացիան և զինված ուժերի կազմակերպման աշխատանքները: Այդ օրերին Ղարաքիլիսայում էր գտնվում Լոուու շրջանների գյուղացիներից կազմված կարմիր պարտիզանների մի ջոկատ՝ 450 մարդ, որը կոչվում էր «Ղարաքիլիսայի պահակային գումարտակ»: Կար նաև մի ուրիշ զինվորական գումարտակ: Այս ստորաբաժանումների մարտիկները Այավերդու գործարանի և Երկաթգծի բանվորներն ու ուսուցչի մասնաճյուղի գյուղացիներն էին:

Նույն թվականի հունվարին Լոուու գումարտակի անդամները սկսեցին հարցը քննարկելու համար Սովետական Ղարաքիլիսայում հրավիրվում է Լոուու պարտիզանական կազմակերպության կոնֆերանս՝ շեղոք գոտու ներկայացուցիչների մասնակցությամբ: Կոնֆերանսը ղեկավարում էր ՀԿ(Բ)Պ Կենտկոմի և Հայաստանի Ռեկոմի անդամ Ա. Մալախյանը:

1921 թվականի փետրվարի 7-ին կազմակերպվում է Լոուու Ռազմա-ուսուցչի կոմիտեն: Ապստամբության սկիզբը նրա շահակվում է փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը, ժամը 2-ին: Սահմանված ճիշտ ժամկետին Լոուու շեղոք գոտում ապստամբություն սկսվեց, որը արագությամբ տարածվեց: Ապստամբներին օգնության հասան նաև Ղազախի և Ղարաքիլիսայի պարտիզանական ջոկատները: Ընդհանուցելով ապստամբներին՝ հերոսական 11-րդ բանակի զորամասերը փետրվարի 12-ին անցան շեղոք գոտու սահմանը, օգնության հասան Լոուու ապստամբներին:

«Պարզ է, իհարկե, — ասում է Ս. Օրջոնիկիձեն, — որ մոտ կանգնած Կարմիր Բանակը չէր կարող սառնարյուն կերպով նայել, թե ինչպես են մենշևիկները զնդակահարում Սովետական իշխանության համար ապստամբություն բարձրացրած գյուղացիներին: Բոցավառվող Վորոնջովկա և Պրիվոլնոյե գյուղերը մի սզղանշան եղան, ու

րով Կարմիր Բանակին օգնութեան կանչեցին ապստամբ-
ներին»¹։

Չնդոք գոտում ապստամբութեան արագ և հաջող հաղթա-
նակից հետո ապստամբութեան շտաբը և Լոսու Ռեկոմը հայտ-
նում են, որ Լոսու չեղոք գոտում հաստատուեց Սովետական
իշխանութունը։

Ինչպես նշել է Ս. Օրջոնիկիձեն, 3—4 օրում ոչ միայն Լո-
սու չեղոք գոտին, այլև ամբողջ Բորչալուի գավառը ազատվեց
մենչեկիկյան դորամասերից։

1921 թվականի փետրվարի 16-ին Բորչալուի գավառի Շու-
լավեր գյուղում կազմակերպվում է Վրաստանի Ռեկուլցիոն
կոմիտե (Ռեկոմ), որը Վրաստանը հայտարարում է Սովետա-
կան Սոցիալիստական Ռեսպուբլիկա։ Փետրվարի 25-ին
Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում, այս ամբողջ Վրաս-
տանում ծածանվում է հաղթանակի կարմիր դրոշը։

1921 թվականի փետրվարին դաշնակիները, օտարերկրյա
խմբերիալիստների օժանդակութեամբ, նոր ավանտյուրա
բարձրացրին և զավթեցին Երևանը։ Փետրվարյան ավանտյու-
րայի օրերին Կարմիր Բանակին օգնելու նպատակով Ղարա-
քիլիսայի երկաթուղայիններից կազմվեց մի կոմունիստական
ջոկատ՝ 60 մարդուց բաղկացած։ Ջոկատի ղեկավարն էր Պ.
Կուլենեցովը։ Նրա շարքերում էին երկաթուղայիններ (այժմ հին
բոլշեկիներ) Գ. Սահակյանը, Հ. Դանիելյանը և ուրիշներ։ Ջո-
կատը մեկնեց Դիլիջան—Բայազետ ուղղութեամբ։

Հայաստանի Կարմիր Բանակի ուժերի մի մասը նահանջեց
զեպի Ղամարու—Նորաշեն, մյուսը՝ Ելենովկա—Դիլիջան։

1921 թվականի մարտին ձևավորվեց երևանյան դորա-
խումբը՝ Միխայիլ Վելիկանովի գլխավորութեամբ։ Ջորա-
խումբն առաջադրանք ստացավ ազատագրել Երևանը։ Վելի-
կանովի խմբի շտաբը գտնվում էր Ղարաքիլիսայում։ Այնտե-
ղից դորամասերն անցան Սպիտակի լեռնանցքով դեպի Ապա-

¹ Գ. Օրջոնիկիձե, Ընտիր հուշածներ և ճառեր, Հայպետհրատ,
Երևան, 1950, էջ 45։

րան—Աշտարակ—Երևան: 1921 թվականի ապրիլի 2-ին վե-
լիկանովի գլխավորած միավորման մարտիկները, հյուսիսից
և հարավից հարձակվող Հայկական Կարմիր Բանակի զորքե-
րի հետ, մտան Երևան և վերականգնեցին սովետական կար-
գերը:

Այսպիսով, Հայաստանի աշխատավորները, Կոմունիստա-
կան պարտիայի ղեկավարութեամբ, ուսական փառապանծ
11-րդ բանակի օգնութեամբ տապալեցին դաշնակիների արյու-
նոտ տիրապետութունը և Հայաստանում հաստատեցին սովե-
տական իշխանութուն:





Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ

1. ՆԱԽԱԳԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(1920—1940)

Մեր երկրի բանվորներն ու գյուղացիները, կոմունիստական պարտիայի ղեկավարութեամբ հաջողութեամբ ավարտելով ժողովրդական տնտեսության վերականգնումը, ձեռնամուխ հղան երկրի սոցիալիստական ինդուստրացիանը, առանց որի անհնար էր ձեռք բերած ազատության ու անկախության պաշտպանումը, սոցիալիստական շինարարության հետագա ծավալումը:

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերականգնման շնորհիվ ՍՍՌՄ-ում լիկվիդացվեց տեխնիկա-տնտեսական հետամնացությունը: Մեր ազդարային երկիրն իր սեփական ուժերով վերածվեց անհրաժեշտ սարքավորում արտադրելու ընդունակ ինդուստրիալ երկրի:

Վ. Ի. Լենինը դեռևս 1922 թվականին ասել է.

«Առանց ծանր արդյունաբերությունը փրկելու, առանց այն վերականգնելու, մենք չենք կարող կառուցել ոչ մի արդյունաբերություն, իսկ առանց ծանր արդյունաբերության, մենք ընդհանրապես կկործանվենք, որպես ինդուստրիալ հրկիր»¹:

Սովետական ժողովուրդը, կենսագործելով Վ. Ի. Լենինի պատմական ցուցումը, ամենակարճ ժամկետում ստեղծեց ծանր ինդուստրիա, որը մեր երկրի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման համար ապահովեց տեխնիկական սարքավորում: Ինդուստրացումը մեր երկրում իրականացվեց արտաքին ու ներքին թշնամիների դեմ մղված վճռական պայքարի պայմաններում:

Սովետական կառավարությունը ինչպես մյուս եղբայրական ուսպուրիկաների, այնպես էլ Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության մեջ խոշոր ներդրումներ կատարեց: Դրա շնորհիվ Հայաստանի աշխատավորներն առաջին և երկրորդ հնգամյակների տարիներին շահագործման հանձնեցին բազմաթիվ ջրանցքներ, էլեկտրակայաններ, հանքահորեր, ֆաբրիկաներ ու գործարաններ:

Սովետական կառավարությունը քսան տարում (1920—1940 թվականներ) Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության զարգացման մեջ ներդրեց մոտ 2,3 միլիարդ ռուբլի, որից միայն արդյունաբերության ու էլեկտրաէներգիայի արտադրության համար՝ 908 միլիոն ռուբլի²: Այդ ներդրումների շնորհիվ 1940 թվականին Հայաստանում գործում էին 120 արդյունաբերական ձևանարկություններ, որոնց ղգալի մասը կառուցվեց երկրորդ և երրորդ հնգամյակների տարիներին: Ռեսպուբլիկայում հայտնաբերվեցին ու շահագործման հանձնվեցին նոր հարուստ հանքավայրեր, որոնց հիման վրա նա-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 506:

2 Соц. строительство Армянской ССР, 1920—1940 г.г. (стат. сборник), стр. 19.

խապատերազմյան տարիներին սկսվեցին Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի կառուցման աշխատանքները։ Ռեսպուբլիկայում ծավալվեց մեքենաշինական արդյունաբերությունը, արագ տեմպերով սկսեց զարգանալ շինանյութերի արդյունաբերությունը։ Արդյունաբերության առաջավոր ճյուղերը դարձան զուտավոր մետալուրգիան և քիմիական արդյունաբերությունը, զործարկվեցին սննդի ու թեթև արդյունաբերության տասնյակ նոր ձևեր արկություններ։

Արդյունաբերության ընդլայնված վերարտադրության շնորհիվ 1940 թվականին ռեսպուբլիկայի արդյունաբերության համախառն արտադրանքը հասավ 430 միլիոն ռուբլու։ Այդ տարիներին արդյունաբերության մեջ ներդրվեց նորագույն տեխնիկա, բարձրացավ բանվորների տեխնիկական մակարդակը և աշխատանքի արտադրողականությունը, ինչպես նաև արդյունաբերության բոլոր ճյուղերում լայն կիրպով ծավալվեց սոցիալիստական մրցությունը։ Այսպիսով, Սովետական Հայաստանի արդյունաբերության բոլոր ճյուղերի արտադրանքը 1940 թվականին, նախասովետական 1913 թվականի համեմատությամբ, ավելացավ 8,7 անգամ, այդ թվում խոշոր արդյունաբերության արտադրանքը՝ 22,7 անգամ¹։ Նախապատերազմյան տարիներին արդյունաբերության արտադրանքի տարեկան միջին աճը Հայաստանում ավելի բարձր էր, քան ողջ Սովետական Միությունում։ Մի բան, որ բացատրվում է Սովետական Միության կողմից մեր ռեսպուբլիկային ցույց տրվող մշտական օգնությամբ։ Միայն այս պայմանով է, որ Սովետական Հայաստանն անցավ սովետական առաջավոր ռեսպուբլիկաների շարքը։ Արագ տեմպերով զարգացող Հայկական ՍՍՌ մայրաքաղաքից՝ Երևանից բացի, ռեսպուբլիկայում ստեղծվեցին արդյունաբերական նոր կենտրոններ, բանվորական նոր ավաններ և սոցիալիստական նոր քաղաք-

¹ Ա. Զրադացյանյան, Սովետական Հայաստանի արդյունաբերական զարգացումը, տե՛ս «Պատմությանսիրական հանդես», Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ, 1959 թ., № 1, էջ 171:



Երկաթուղային, հին թռչնիկ Խ. Մարտիչյան

ներ՝ Լենինականը, Կիրովականը, Ալավերդին, Ղափանը, Արթիկը, Հոկտեմբերյանը և այլն:

* *

•

1920 թվականի դեկտեմբերի սկզբներին Ղարաբաղի սոցիալիստայի և նրա շրջակա գյուղերի բնակիչները սարսափելի դրություն մեջ էին: Նրանք զրկվելով ամեն ինչից, սովի ու համաճարակի մատնվելով, հուսահատական վիճակի էին հասել: Ինչպես առանձին քաղաքացիներին պատկանող ունեցվածքը, այնպես էլ պետական պահեստները թալանվել էին: Ահա այդպիսի ծանր պայմաններում էր գործում Ղարաբաղի սոցիալիստայի Հեղկոմը: Նրա առաջին գործերից մեկն այն եղավ, որ թալանի նպատակով տարված ամբողջ գույքը երկաթուղային կայարանից բերեց Ղարաբաղի սոցիալիստային հայտնաբերից թաքցրած պետական գույքը և հանցագործներին պատժի ենթարկեց: ՀՀ-ի միջոցով համապատասխան շրջանները ինչպես պահեստների, այնպես էլ թաքստոցներից բռնագրավված մթերքները կենտրոնացրին իրենց ձեռքում:

Հեղկոմը բազմաթիվ միջոցառումներ ձեռնարկեց բժավոր տիֆի սկսված համաճարակը կանխելու համար: Սուր վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով Հեղկոմը բաց արեց երկու հիվանդանոց, որից մեկն ուներ մոտ հարյուր, իսկ մյուսը՝ 50 մահճակալ: Ապրիլի 1-ին և հատկապես նրա վարիչ Դ. Տեր-Մկրտչյանի ջանքերով փողոցներից հավաքված 130 անապատան երեխաները տեղավորվեցին որբանոցում: Բընակչությունն սպասարկելու նպատակով բացվեցին ճաշարան, վարսավորանոց, դերձականոց, հյուսնոց: Պետականացվեցին բոլոր փոխերն ու ջրաղացները:

1 «Կոմունիստ», 1921 թ., 18 հունվարի

Ղարաքիլիսայի շրջակայքը մաքրելու, կարգավորելու համար երկաթուղայինները, հիմնարկ-ձեռնարկությունները բանվոր-ծառայողները կազմակերպեցին շաբաթօրյակներ: Նման շաբաթօրյակներ կազմակերպվեցին նաև Երևանի և Ալեքսանդրապոլի բանվորներին վառելիքային ուղարկելու նրպատակով: 1921 թվականի հունվարի 15-ին, կիրակի օրը, առավոտյան քաղաքի բանվոր-ծառայողները հավաքվեցին Հեղկոմի շենքի առաջ, ուր կայացավ թոուցիկ միտինգ, որը մասնակիցներն ալ-կարմիր դրոշներով, նվագախմբի ուղեկցությամբ, շարժվեցին դեպի կայարան և այնտեղից գնացրով մեկնեցին Փամբակ կայարան: Շաբաթօրյակի մասնակիցները, անտառում կտրեցին ծառեր և տասնյակ խորանարդ մետր վառելիքային բարձեցին վազոնները: Շաբաթօրյակին մասնակիցեցին պատանիները, երիտասարդները և ծերերը: Նրանք բարձաված մի քանի վազոն վառելիքային ուղարկեցին Երևանի և Ալեքսանդրապոլի բանվորներին:

Փողոցները մաքրելու, մայթերը հարթելու, սալահատակելու և ընդհանրապես քաղաքում շինարարական աշխատանքներ ծավալելու նպատակով դավառային գործադիր կոմիտեի նախագահ Ռ. Գաշտոյանը մի հատուկ ծրագիր էր մշակել: Մրադրի համաձայն կազմակերպվեցին բազմաթիվ շաբաթօրյակներ: 1923 թվականի հուլիսից սկսվեցին ջրմուղի, ինչպես նաև էլեկտրակայանի շինարարական աշխատանքները:

Քաղաքում կազմակերպվող շաբաթօրյակներին և շինարարական աշխատանքներին ակտիվ կերպով մասնակցում էին բանվոր-ծառայողները, երկաթուղայինները, ինչպես նաև Ղարաքիլիսայում գտնվող հայկական զորային միավորման մարտիկներն ու հրամանատարները, մասնավորապես սակավորների վաշտը: Վերջիններիս ուժերով կառուցվեց Ղարաքիլիսայից Յաղուբլի տանող կամուրջը: Այդ կապակցությամբ Գալստային գործադիր կոմիտեն իր 1922 թվականի նոյեմբերի 2-ի դրուժյամբ խնդրում է Հայաստանի Կենտրոնական

1 «Երոզրգային Հայաստան», 1921 թ., 27 օգոստոսի:

դյունաբերութեանը օժանդակելու միջոցառումների մասին, դրանով պայմաններ ստեղծելով արտոնների կազմակերպման համար:

1921 թվականի մայիսի 23-ին կաշվեղենի և ջուլհականոցի բաժնի վարիչ Ս. Մելիք-վարդանյանը Ղարաքիլիսայից պրում է.

«Կաշվի արհեստանոցի գործը շկարողացանք նախապատրաստել, որովհետև Ղարաքիլիսայում 20 որմնաղիրներից մնացել էին 3—4-ը, նրանք էլ մեկ ֆունտ հացով շէին համաձայնվում աշխատել: Զուլհակի արհեստանոցի աշխատանքներն սկսելու համար ո՛չ շենք ունենք, ո՛չ հում նյութ, և ո՛չ էլ սարքավորում: Տեղական ուժերով մի կերպ հինգ հատ դազգահ պատրաստեցինք, իսկ մաքորներ և սանրեր Զալալօղլուց բերել տվինք: Քիչ է աշխատող բանվորների վարձատրութունը»¹:

Այնուամենայնիվ, հաղթահարելով բոլոր դժվարութունները, 1921 թվականին Ղարաքիլիսայում ջուլհականոց կազմակերպվեց: Զուլհականոցի հինգ դազգահի վրա, ինչպես և մանարանի ու զոզոզ ցեխերում աշխատում էին 99 բանվորուհիներ²: Հետագա տարիներին ջուլհականոցը մեծացավ ու հարստացավ նոր սարքավորումով և մի քանի անգամ կրկնապատկեց իր համախառն արտադրանքը: Այդ տարիներին կազմակերպվեցին նաև լիմոնազի արտադրութունը և ներկման երկու արհեստանոցները:

Մի կողմից գործազրկութունը վերացնելու, մյուս կողմից տասնյակ արհեստավորների ու տնայնագործների սոցիալիստական շինարարութեան մեջ ներգրավելու, ինչպես նաև առևտրականների, նէսմանների, սպիկուլյանտների դեմ պայքարելու նպատակով տարեցտարի Ղարաքիլիսայում ընդլայնվեց կարի, կոշիկի, փայտամշակման, գորգսպործական

¹ Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության պետական կենտր. արխիվ, ֆ. 115, դ. 252, թ. 3—4:

² Նույն տեղում, գործ 72, թ. 9:

մետաղամշակման արտելների ցանցը: Արհեստավորների համախմբման նոր ձևը, որը լինինյան կոոպերատիվ պլանի կենսագործումն էր, բարձրացրեց նրանց աշխատանքի արտադրողականութունը, պայմաններ ստեղծեց ֆիզիկական որոշ աշխատանքներ մեքենայացման ենթարկելու համար: Այդ տարիներին արտելները բավարարում էին ժողովրդի անմիջական սպառողական պահանջների մի նշանակալի մասը: Նէպի ժամանակ աշխուժացավ առևտուրը: Հետագա տարիներին արհեստակցական կոոպերացիան ժողովրդական տնտեսության ինդուստրացիան բազայի վրա սկսեց մեծ վերելք ապրել: Տնայնագործներին և արհեստավորներին կոոպերացման ենթարկելու միջոցով պայմաններ ստեղծվեցին, որ նրանք ակտիվորեն մասնակցեն սոցիալիստական շինարարությանը:

Ղարաքիլիսայի բնակչության հիմնական եկամուտը դեռևս հողագործությունից էր: 1925 թվականին քաղաքում ապրող 693 բնտանիք զբաղվում էր հողագործությամբ¹: Ահա ինչու Ղարաքիլիսայի Գավառային գործադիր կոմիտեն դեռևս 1923 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ քաղաքի հողային տարածությունները ընդարձակեց մինչև Ղշաղ գյուղի հողերը և Փաշիգյուղի գետակը²:

1923 թվականից վարկային բնակչության նախաձեռնությամբ Ղարաքիլիսայում ստեղծվեց չբավորական խմբակ, իսկ 1927 թվականին կազմակերպվեց կոլտնտեսություն: Նորաստեղծ կոլտնտեսությունը զբաղվում էր անասնապահությամբ և պալարածությամբ: Սակայն 1931 թվականին, քաղաքի արդյունաբերության հետագա զարգացման կապակցությամբ, վերագաս օրգանների որոշմամբ վերացվեց կոլտնտեսությունը և նրա բազայի վրա կազմակերպվեց մերձքաղաքային տնտեսություն:

Ղարաքիլիսայում կառուցվեց հիդրոէլեկտրակայան³ 125 ձիու ուժի կարողությամբ, որը շահագործման հանձնվեց 1924

¹ Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյան ևոկտյուբրյաի և սոցիալիստական շինարարության պետ. կենտր. արխիվ, ֆ. 112, գ. 1152, թ. 87:

² Նույն տեղում, գ. 159, թ. 13:

Թվականի մայիսի 2-ին: Էլեկտրակայանի բացմանը նվիրված թուղթիկ միտինգին մասնակցում էր Հայաստանի Ժողովուրդի նախագահ Ս. Լուկաշինը:

Քաղաքում սկսեցին կառուցել մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, այդ թվում Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանը: Աճող գործարանները, ինչպես և քաղաքի բնակչությանը էլեկտրաէներգիայով ապահովելու խնդիրը լուծվեց միայն Չորագետի հիդրոէլեկտրակայանի կառուցումով:

1922 թվականի վերջերին հիմնվեց Ղարաքիլիսայի տպարանը՝ մի մասնավոր տան ներքնահարկում: Սկզբում տպարանը ուներ մեկ «Ամերիկանկա» տպագրող մեքենա, որի վրա աշխատում էին երկու բանվոր: 1924 թվականին ստացվում է երկրորդ մեքենան, բանվորների թիվը հասնում է հինգի (չորս զրաշար, մեկ տպագրիչ): Տպարանը կատարում էր մանր պատվերներ: Միայն 1928 թվականին տպարանը ստանում է նոր սարքավորում:

1930 թվականին կառուցվեց և շահագործման հանձնվեց տպարանի երկհարկանի նոր շենքը, ուր սկսվեցին տպագրվել «Կարմիր զինվոր», հետագայում՝ «Սոցարշավ» և «Քիմշեն» թերթերը: Տպարանում ավելացավ զբաղարների թիվը: Այդ տարիներին զբաղարական ցեխում էին աշխատում վարպետներ Ս. Բեդիջանյանը, Ե. Ֆահրադյանը, Գ. Խաչատրյանը, որոնք հետագայում շնորհակալ աշխատանք կատարեցին նոր երիտասարդ կադրերի որակավորման ուղղությամբ: 1931 թվականին մեծանում է տպարանի արտադրական կարողությունը, բանվորների թիվը հասնում է 15-ի: Պատրաստվում են նոր երիտասարդ կադրեր, որոնք իրենց պլանները միշտ դերակատարում են: Տպագրիչներ Գ. Իսկանյանը, Մ. Մանուսաջյանը, Կ. Սաղաթեկյանը, Ռ. Զարգարյանը, զբաղարներ Ս. Ստեփանյանը, Մ. Զուղուրյանը, Հ. Եթևյանը բարձրորակ աշխատանք էին կատարում: Աշխատանքի լավագույն օրինակ էին տալիս Ս. Կիրակոսյանը, Գ. Խոջեցյանը, Ս. Պապիկյանը: Տպագրվող թերթերին ավելանում է Խոջեցյանը, Ս. Պապիկյանը:

տում» թերթը: Մինչև Ջորադէսից էլեկտրաէներգիա ստանալը (1932 թ.) տպարանում ամեն ինչ կատարվում էր ձեռքի աշխատանքով: Տպարանի կոլեկտիվը, ծավալելով սոցիալիստական մրցությունը, 1935 թվականի տարեկան պլանը կատարեց 11 ամսում: Բացի թերթերից, տպարանը կատարում էր Կառուչուկչինի, Քանաքեուզէսի, Չորագէսի, Ալ. Մյասնիկյանի անվան փմիական գործարանի և այլ ձեռնարկությունների պատվերները:

Ղարաքիլիսայի կղմինդրի գործարանը, իբրև մասնավոր ձեռնարկություն, գոյություն ուներ դեռևս նախասովետական տարիներին: Այն պետականացվեց 1922 թվականին: Գործարանը, շարունակելով իր աշխատանքները, Ղարաքիլիսայի և նրա հարևան շրջանների բնակչությանը մատակարարում էր կղմինդր և աղյուս: Գործարանում աշխատանքային պրոցեսները պրիմիտիվ էին, ամեն ինչ կատարվում էր ձեռքի աշխատանքով:

1932 թվականի նոյեմբերի 29-ին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 12-րդ տարեդարձի օրը, Ղարաքիլիսայում շահագործման հանձնվեց աղյուսի գործարանը, որն ուներ վեց հնոց, յուրաքանչյուրը տասը հազար աղյուսի տարողությամբ: Գործարանը, ուր աշխատում էին մոտ 50 բանվոր, երկրորդ հնգամյակի տարիներին արտադրել է 1,5 միլիոն կղմինդր և 2 միլիոն աղյուս:

1925 թվականին ստեղծվեց «Գորգագործ» արտելը, ուր առաջին ամիսներին աշխատում էր 7—10 բանվորուհի: Այնուհետև ավելացավ արտելի տարեկան արտադրանքը: 1935 թվականի 500 քառակուսի մետր գորգի դիմաց 1940 թվականին արտադրվում էր մոտ երեք հազար քառակուսի մետր գորգ¹:

1927 թվականին կազմակերպվեց գործվածքային «Նոր տարազ» արտելը, իսկ 1928 թվականին՝ փայտամշակման արտելը: Դրանցից յուրաքանչյուրում աշխատում էին 30—40

¹ Հալաստանի ՊԿԱ, ֆ. 115, դ. 945, թերթ 74:

բանվոր: Հետագայում, տարեցտարի ավելանում է բանվորների թիվը և համապատասխանորեն աճում է արտեղյակների տարեկան արտադրանքը:

1929 թվականի աշնանը հիմնական կոշիկի «նոր ուղի» արտելը:

Նույն թվականին էլ կազմակերպվեց գույպագործական արտելը: Այստեղ առաջին ամիսներին աշխատում էր ընդամենը ութ մարդ: 1930 թվականին արտելի բանվորների թիվը հասավ 25-ի, որոնք տարեկան տալիս էին 20 հազար զուգ գույպա: Արտելում ավելի շատ արտադրանք էին տալիս հարվածային բանվորուհիներ Ք. Մելիքյանը, Վ. Գանձակյանը, Հ. Թամանյանը, Լ. Ջուլհակյանը և ուրիշներ:

1930 թվականին գործարկվեց հացի գործարանը, որն սկզբում ուներ 80 բանվոր և օրական արտադրում էր 15 տոննա հաց: 1935 թվականին շարք մտավ կաթի գործարանը՝ փոքր արտադրողականությամբ:

1933 թվականին Ղարաքիլիսայում հիմնվեց կույրերի ուսումնա-արտադրական արտելը, որը տարեցտարի ընդարձակվեց՝ արտադրելով լայն սպառման առարկաներ:

1934 թվականի մարտին կազմակերպվեց մորթու-մուշտակի արտելը՝ ուր աշխատում էր 12—15 մարդուց բաղկացած բանվորների մի խումբ՝ սուս մասնապետներ Ա. Կարբուշենկոյի, Ի. Վալուշկինի և ուրիշների ղեկավարությամբ: Հաջորդ տարին արտելն արտադրում էր կանաչի կիսամուշտակներ: Չունենալով ոչ մի սարքավորում, արտելը տեխնոլոգիական յուրաքանչյուր պրոցես կատարում էր ձեռքով: 1935—1936 թվականներին կազմակերպվեց մշակման ցեխը, իսկ հետագայում՝ կարի ցեխը: Այդ տարիներին արտելում աշխատում էր 65—70 բանվոր: 1940 թվականի մարտի 9-ից մորթու-մուշտակի արտելը վերակառուցվում և դառնում է ֆաբրիկա, որն սկսում է արտադրել կիսամուշտակներ, ձեռնոցներ, գրվխարկներ և այլն: Միայն 1940 թվականին ֆաբրիկայում 119 բանվորների ուժերով մշակվել է 99147 մորթի, որից ար-

տադրվել է 21287 կիսամուշտակ և 1000 զույգ ձեռնոց: Նրա տարեկան արտադրանքը կազմել է 768 հազար ութլի: Այստեղ հարվածայիններ էին մեխանիկական ցեխից՝ Ե. Հարությունյանը, Ա. Անտոնյանը, կարի ցեխից՝ Ի. Տոլստոյը, Խ. Փաշինյանը, Ա. Ամիրխանյանը, Մ. Ավետիսյանը և ուրիշներ:

1929 թվականին Ղարաքիլիսայի աշխատավորութունը ձեռնամուխ եղավ մի նոր խոշոր ձեռնարկության՝ քիմիական գործարանի շինարարությանը: Ղարաքիլիսայից արևմուտք, Տատալուի և Զիչխան գետի միջև ընկած հարթավայրում, սկսվեց պահեստային շենքերի կառուցումը: Գործարանի շինարարությանը զուգընթաց, «Խիմստրոյը» 1929 թվականին մըշակեց Ղարաքիլիսայի քիմիական գործարանի նոր, վերջնական նախագիծը, որը կազմվեց «Յոսֆատո-Բոլագետ» և «Էլեկտրոքիմիկա» ֆիրմաների ներկայացուցիչներ՝ Չվեդացի մասնագետ Պետերսոնի և նորվեգացի Բյունեի մասնակցությամբ: Ըստ այդ նախագծի, որին հավանություն էր տվել Միութենական Ժողովատնտեսությանը, Ղարաքիլիսայում կառուցվող քիմիական գործարանը պետք է բաղկացած լիներ կրի շորս վառարաններից՝ տարեկան 30 հազար տոննա կրի արտադրողականությամբ, և կարբիդի երեք վառարաններից՝ 27 հազար տոննա կարբիդի արտադրողականությամբ:

1931 թվականի վերջերից Ղարաքիլիսայի քիմիական գործարանի շինարարությունն անցել էր տնտեսաշվարկի: Այդ նույապատկով կազմակերպվել էին 42 հարվածային և տնտեսաշվարկային բրիգադաներ:

Գործարանը բանվորական ուժով ապահովելու նպատակով Ղարաքիլիսայի կոմերիտական կազմակերպությունը վերցրեց ֆիմշենի շեֆությունը: Միստեմատիկաբար կազմակերպվող շաբաթօրյակներից բացի, շինարարության վրամշտական աշխատանքի համար մոբիլիզացվեցին 175 կոմերիտականներ: Շրջանի յուրաքանչյուր կոմերիտական պարտադիր կերպով տասն օր աշխատեց ֆիմշենում: Բացի այդ, շրջանի գյուղերը սիստեմատիկաբար տրանսպորտով ու բանվորական ուժով օգնում էին շինարարությանը:

1931 թվականի նոյեմբերին «Ավանգարդ» թերթը գրում էր.

«Ղարաքիլիսայի կոմսոմոլն արդարացրեց իր շեֆական կոչումը նորակառույց Քիմշենի նկատմամբ»¹:

Կառուցվող բիմիական գործարանի գործարկումն արագացնելու նպատակով 1932 թվականի փետրվարի 16-ին ՍՍՌՄ Ծանր արդյունաբերության ժողկոմատը և սպրիլի 9-ին Աշխատանքի Պաշտպանության Խորհուրդը իրենց հատուկ որոշումներով Քիմշենը մտցրին հարվածային շինարարության շրջանների ցանկը: Այդ որոշումներն ղգալի բեկում մտցրին գործարանի շինարարության աշխատանքներում:

Քիմշենի բանվորները և ինժեներատեխնիկական աշխատողները, բնութքյան ասնելով Լենինգրադի բանվորների կոչը, հատուկ կոչով ղիմեցին Սովետական Հայաստանի բոլոր բանվորներին, կոլտնտեսականներին և աշխատավոր մենատնտեսներին, ինչպես նաև Ձորագէսի կառուցող մարտական բնկերներին: Կոչում նշված էր, որ մեր երկրում կառուցվող 518 ղիղանաների թվում արղեն պատրաստ են Ղարաքիլիսայի բիմիական գործարանի կրի և կարբիղի առաջին վաւարանները, կարբիղ-ցիւանամիղի ցեխերն ու բանվոր-ծառայողների բնակարանները: Ձորագէսցիւների առաջ մարտական խնղիր էր գրվում՝ արագ թափով ավարտել 2-րդ և 3-րդ տուրբինների մոնտաժավորումն ու Ձորագէս—Ղարաքիլիսա էլեկտրահաղորղման գծի կառուցումը:

Քիմշենցիներն իրենց նամակով ղիմեցին նաև Թիֆլիսի և Երևանի մեխանիկական գործարանների, Մոսկվայի էլեկտրամիավորման արտելի, էլեկտրագործարանի, Օրեխովո-Ձուււոյի, Կիււի և այլ գործարանների բանվորներին, որպեսղի նրանք ամենաարագ կերպով և բարձր որակով կատարեն Քիմշենի պատվերները²:

¹ «Ավանգարդ», օրղան Հայաստանի Լենինյան Կոմերիտմիության Կենտրոնական և Երևանի Կոմիտեների, 29 նոյեմբերի 1931 թ.:

² «Խորհրղույին Հայաստան», 14 նոյեմբերի 1932 թ.:

Հոկտեմբերյան սեպտեմբերի 15-ամյակի առթիվ ծավալված մրցութային մեծ խանութային մրցույթում առաջ բերեց գործարանի շինարարների մեջ, որոնք այդ օրերին գործարանի ցեխերի մոնտաժավորումը հաջողությամբ կատարում էին՝ Մոսկվայից ժամանած մի խումբ մասնագետ-ինժեներներ կրոշիլինի, Ագապկինի և Սկարեցկինի ղեկավարությամբ:

ՀամԿ(բ)Պ 17-րդ կոնֆերանսը պարտիական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպություններից պահանջում էր բանվոր դասակարգից պատրաստել նորագույն տեխնիկային տիրապետող բարձրորակ մասնագետներ՝ ինժեներներ, տեխնիկներ և այլ աշխատողներ, առաջնորդելով հետևյալ նշանաբանով. «Վերակառուցման շրջանում տեխնիկական է վճռում ամեն ինչ»: Տեխնիկային տիրապետելու մարտական առաջադրանքի կենսագործումը չափազանց անհրաժեշտ էր սովյալ էտապում: Երկրում նորագույն տեխնիկայով աշխատող ձեռնարկություններն առավելագույն արտադրողականությամբ աշխատեցնելու և ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերն է՛լ ավելի արագացնելու նպատակով պարտիան առաջ քաշեց «Սովետական մարդիկ պետք է տիրապետեն տեխնիկային» մարտական առաջադրանքը:

Պարտիայի այս պահանջի առաջադրումը զուգահեռաբար էր Ղարաբիլիսայի քիմիական գործարանի գործարկման նախօրյակին: Անհրաժեշտ էին կադրեր՝ նոր սարքավորումը դործի դնելու, ստացվելիք արտադրանքի քանակական և որակական ցուցանիշներն ապահովելու համար: Գործարանի պրոկտիվի 7 տեխնիկի և 23 բանվորի երեք ամսով գործուղեց սովորելու Գորկու մարզի Ձերժինսկ քաղաքի Մ. Ի. Կալինինի անվան Չեռնոբիչինսկի քիմիական գործարանում: Միաժամանակ գործարանում կազմակերպվեցին էլեկտրամոնտյորներ, կրի վառարանի և կարբիդի հնոցների վրա աշխատողների համար տեխնիկական ուսումնասիրող խմբակներ, ուր բանվորներն ուսումնասիրում էին իրենց ցեխերի աշխատանքը և մասնագիտանում: Ինչպես դրսում որակավորված, այնպես էլ տեղում

աճած կադրերը, տիրապետելով արտագրութեան տեխնիկային, մեծ ջանք թափեցին կրթի ու կարբիդի վառարանների և ազդեցիկ սպահանջվող արտագրական կարողութեանը սպահովելու համար:

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1931 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ վերակազմվեցին գիտա-տեխնիկական և «Տեխնիկական մասսաներին» ընկերութունները: Այդ պատմական որոշումը կենսագործելու համար ինչպես ողջ երկրի արդյունաբերական ձեռնարկութուններում, այնպես էլ բրիտանական գործարանում կազմակերպվեց ճարտարապետ-տեխնիկների բյուրո, որի նախագահն էր ավագ աշխույժ, գլխավոր ինժեների տեղակալ Լ. Երզնկյանը: Ճարտարապետ-տեխնիկների բյուրոն օգնում ու ապահովում էր տեխնիկական ղեկավարութունը շինարարութեան, մոնտաժավորման պրոցեսում: Բյուրոն իր խմբակների միջոցով կազմակերպում էր «Տեխնիկական մասսաներին» նշանաբանով գործող խմբակներ, ուր սրակավորվում էին հարցուրարի բանվորներ, տեխնիկներ, տեխնոլոգներ:

Չնայած Քիմշենի բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների ջանասեր աշխատանքին, ժամկետին չապահովվեց գործարանի գործարկումը, որովհետև ուշանում էր սարքավորման մի մասի ստացումը: Տեսահաշվարկը որոշ օբյեկտներում ձեռնարկեցին բնույթ էր կրում: Բանվորական ուժի մեծ հասունութուն էր նկատվում: Աշխատանքի պրոցեսում մեխանիզացիան անբավարար էր կիրառվում:

Քիմշենի բանվորներին և ինժեներա-տեխնիկական աշխատողներին օգնութեան հասավ ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն, որը մայիսի 23-ի իր նիստում քննարկելով «Ղարաքիլիսայի բրիտանական գործարանի շինարարութեան և գործարկման հարցը», կոնկրետ միջոցառումներ նշեց գործարանի առաջին հերթի ցեխերի գործարկումն ապահովելու համար: ՀԿ(բ)Պ Կենտկոմի բյուրոյի մայիսի 23-ի որոշման կենսագործումն ապահովելու համար Ղարաքիլիսայի պարտիական շրջկոմի բյուրոն 1932 թվականի հունիսի 2-ին մշակեց միջոցառումներ:

Շրջանային կոմիտեն, մոբիլիզացնելով շրջանի պարտիական կազմակերպության ուժերը, խոշոր օգնություն կազմակերպեց Եսրակառույցի կոյնկալիվին:

Քիմշենի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, պարտիական կազմակերպությունների ղեկավարություններ, անձնագոհ աշխատանք կատարելով և շատ զրկանքներ կրելով հաղթահարեցին դժվարությունները և հաջողություններ շահագործման հանձնեցին Անդրկովկասի քիմիական արդյունարևության առաջնակիր: Մեր ռեսպուբլիկայում այդ տարիներին չկային ինչպես տնտեսական, այնպես էլ տեխնիկական հնարավորություններ խոշոր կառուցումներ կատարելու համար: Գործարանի ամբողջ շինարարության պրոցեսում փորման, հողաթափման, բարձման ու բռնաթափման, ինչպես նաև փոխադրման աշխատանքները կատարվում էին մարդկային ուժով, առանց մեքենաների: Փոխադրման բոլոր միջոցները՝ տրանսպորտը, գործարանի ունեցած մի քանի տասնյակ եզան սայլերն ու ձիու ֆուրգոններն էին: Սրանց օգնում էին կոլտնտեսությունների ուղարկած տրանսպորտը, տասնյակ մասնավոր սայլապաններն ու ֆուրգոնապանները:

Բանվորները՝ մեծ դժվարությունների էին հանդիպում սարավորման տեղափոխման և մոնտաժավորման աշխատանքներում: Առանձին մեքենաներ տեղից տեղ փոխադրելու համար լծում էին 18—20 զույգ եզներ: Այդ փոխադրումներն ավելի քան դժվար էին, որովհետև գործարանի տերիտորիայում ճանապարհներ չկային:

Քիմիական գործարանի կառուցման սկզբնական տարիներին Քիմշենի բանվոր-ծառայողները շատ դժվարություններ են հաղթահարել. նբաճեցից շատ-շատերը աշխատանքի էին գալիս պսուղերից: Նրանց համար դիուևս չէին ստեղծվել աշխատանքային և կենցաղային նորմալ պայմաններ՝ ճաշարան, ակումբ, հանրակացարան, բաղնիք և այլն: Այդ տարիներին շատ բրիգադաներ իրենց ցանկություններ աշխատում էին 12—14 ժամ, նույնիսկ բազմաթիվ բրիգադաներ՝ մոնտաժողներ, գոգողներ, փականագործներ, խառատներ և այլ

ուշխատողներ, չէին դադարեցնում աշխատանքը մինչև որ չլին կատարում տրված առաջադրանքը: Գործարանի ղրկեցիան, պարտիական կազմակերպության օգնությամբ ու ղեկավարութեամբ, սկսեց կառուցել բազմաթիվ բարաքներ: Բանվորների համար բացվեցին հանրակացարաններ, բաց զրանք գեոես պուրկ էին համապատասխան կահավորումից և անհրաժեշտ հարմարութեւններից: Բարաքներում սկսեցին կազմակերպել բանվորների սննդի, կուլտուր-լուսավորական և բուժսպասարկման գործը:

Գործարանի առաջին հերթի ցեխերը շահագործման հանձնելու նախօրյակին Հայկական ՍՍՌ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահութեւնը, ԱնդրՖեդերացիայի տասնամեակի հավերժացման կապակցութեամբ, 1932 թվականի մարտի 9-ի որոշմամբ Ղարաբիլիսայի բիմիական գործարանը կոչեց ԱնդրՖեդերացիայի հիմնադիրներից մեկի՝ պարտիական, սովետական և ռազմական ականավոր գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանի անունով¹:

Գործարանի անվանակաշումը նոր լիցք հազարղեց Քիմշենի բանվոր-ծառայողներին՝ աշխատանքային նորանոր սիրագործութեւններ կատարելու, իրենց գործարանը լինիլյան գլխարդիայի ականավոր գործիչ Ալ. Մյասնիկյանի անվանն արժանավայել արդշունաբերական ձեռնարկութեւն դարձնելու, նրա գործարկումը ժամկետին ապահուիլու համար: Այդ նպատակի իրականացմանը մեծապես նպաստեց այն հանգամանքը, որ 1932 թվականի նոյեմբերի 15-ին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 12-րդ տարեդարձի նախօրյակին, շահագործման հանձնվեց 11500 ձիու ուժի կարողութեւն ունեցող Ձորագէսի առաջին ազրեգատը, իսկ 1933—1934 թվականներին սկսեցին գործել կայանի մշուս երկու ազրեգատները, որոնք էներգետիկ բազա հանդիսացան Ալավիրդում պղնձարդշունաբերութեւն և

¹ Հայկական ՍՍՌ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահութեւն 1932 թ. մարտի 9-ի № 5/22 արձանագրութեւն, էջ 8:

Ղարաքիլիսայում քիմիական արդյունաբերության զարգացման համար:

ՀԿ(Բ)Պ Կենտկոմը, ողջունելով Ձորագէսի բացումը, դրել է:

«Ձորագէսը Հենինի կարևորագույն պատգամի իրագործման կոթողն է, սոցիալիզմի կառուցման նոր և խոշոր հաղթանակը: Չափազանց խոշոր է Ձորագէսի նշանակությունը մեր երկրի սոցիալիստական վերակառուցման ասպարեզում: Ձորագէսի կառուցումն ու գործարկումը երբեմնի ցարական տրորված գաղութը և ապա դաշնակցական դժոխքը սպիտակ ածուխի առաջ վեր ինդուստրիայի երկրի վերածող ամենափայլուն դրվագներից մեկն է»¹:

Ձորագէսցիները բոլշևիկյան խոստում տվեցին՝ կարճ ժամանակում անցկացնել Ձորագէս—Ղարաքիլիսա էլեկտրահաղորդման գիծը և քիմիական գործարանն ասպահովել էլեկտրաէներգիայով:

ՀԿ(Բ)Պ Կենտկոմի բյուրոն 1933 թվականի փետրվարի 14-ին քննության առավ Ղարաքիլիսայի քիմիական գործարանի ցիանամիդ-կարբիդի ցեխի գործարկումը նախապատրաստելու հարցը: Կենտկոմի բյուրոն նշեց շինարարության սուպարեզում մի շարք թերություններ՝ շինանյութի ժամանակին չստացվելը, բանվորական ուժի մեծ վատնումը, բանվորների անբավարար մասակարարումը, ինչպես և այս հարցերի վրա պարտիական շրջանային կազմակերպության կողմից լուրջ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը: Կենտկոմի բյուրոն նշեց միջոցառումներ ինչպես կրի, այնպես էլ կարբիդի վառարանների գործարկումը ժամկետին ասպահովելու համար: Այդ որոշմամբ հանձնարարվեց մի շարք մասնագետների՝ գործարանի գործարկման մոմենտին ասպահովել արդյունաբերական էլեկտրահոսանքի հաղորդումը և այդ նշանաբա-

¹ «Սոցիալիստիկ շայաստան», 15 նոյեմբերի 1932 թ.-1

նով կազմակերպել Ձորագէտ—Ղարարիլիսա հաղորդման գծի աշխատանքները:

1933 թվականի մարտի 22-ին Քիմշենի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, համառ աշխատանքից հետո, գործարկեցին կրի առաջին վառարանը և այդ առթիվ գեկուցեցին Հայաստանի պարտիական և սովետական գեկավար օրգաններին.

«ՀԿ(բ)Պ Կենտկոմ՝ քնկ. Ա. Խանջյանին

Ժողկոմխորհ՝ քնկ. Ա. Տեր-Պարբիկյանին

Ամսի 7-ին գործարկման ֆազը փոխանցված է կրի առաջին վառարանը, մարտի 22-ին, առավոտյան ժամը 8-ին արտադրվեց Տկվիրոլու ածուխով այրված մի բանի վազոնետիկա կիր: Շարունակում ենք աշխատանքը: Երբ ապագայում վառարանի նախագծային արտադրողա կանոթյանը»¹:

1933 թվականի մարտի 22-ին ստացվեց 25 տոննա կիր, 25-ին՝ 28,5 տոննա, 31-ին՝ 29 տոննա: Այսպիսով, կրի վառարանն օրական միջին հաշվով տալիս էր 29—30 տոննա կիր:

1933 թվականի սեպտեմբերի վերջերին շահագործման հանձնվեցին ազոտի և էլեկտրոդային մասսայի ցեխերը, ըստացվեց առաջին բալոն թթվածինը և առաջին էլեկտրոդային մասսան:

Կրի և ազոտի ցեխերից հետո հոկտեմբերի 23-ին շահագործման հանձնվեց կարբիդի առաջին վառարանը: Նույն օրը, երեկոյան ժամը 7-ին, ստացվեց առաջին կարբիդը: Կարբիդատորական անալիզները ցույց տվեցին, որ ստացված կարբիդը լավ որակի է, որին բարձր գնահատական տվեց շվեդացի մասնագետ Պետերսոնը: Կարբիդի ցեխի կոլեկտիվը համառ աշխատանք ծավալեց բարձր որակի կարբիդ ստանալու

¹ «Քիմշեն», 28 մարտի 1933 թ., № 21:



ՀԱՆՈՒՄՆԵՐԻ «ՔՐԻՍՏՈՍ» ԲՈՒՆԸ

Նամար: «Քիմշենի կարբիլ: գործներն ստացան առաջին վարչուն կարբիլը և այն նվեր ուղարկեցին Բաքու, «Ազնեթին»:

Այսպիսով, Քիմշենի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները առաջին հնգամյակի տարիներին ծավալած հերոսական աշխատանքով շահագործման հանձնարարին գործարանի առաջին հերթին գործարկվելիք կրի, կարբիլի և ազոտի ցեխերը: Այդ առթիվ ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանը Ղարաբիլիսայի քիմիական գործարանի ղեկավարությունը գրել է.

«Շնորհավորում եմ հարվածային բանվորներին, ինժեներա-տեխնիկական անձնակազմին՝ գործարանի առաջին հերթի ցեխերի գործարկման առթիվ: Վստահ եմ, որ կարճ ժամանակամիջոցում կտիրապետեք արտադրության տեխնիկային, բոլոր աղբեգատների աշխատանքը կհասցնեք սահմանված արտադրողականությանը, կվարողանաք ոչ ուշ, քան 1934 թվականի սկզբները պատվով դասվել էր: Երբեք ստացար քիմիական արդյունաբերության գիղանտների շարքը»:

ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահությունը հատուկ որոշում ընդունեց գործարանի բացման և նրա առաջավորներին պատվոգրերով պարգևատրելու մասին:

ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահության որոշմամբ, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 13-րդ տարեկարծի առթիվ, 1933 թվականի նոյեմբերի 30-ին կատարվեց Ղարաբիլիսայի քիմգործարանի բացումը: Այդ օրը ՀՍԽՀ Կենտգործկոմի պատվոգրով պարգևատրվեցին գործարանի 15 առաջավոր բանվորներ և ինժեներա-տեխնիկական աշխատողներ: Նշվեց Ղարաբիլիսայի ՀԼԿԵՄ շրջանային կազմակերպության մասույցած ծառայությունը շինարարությանն ա-

¹ «Բանվորական երեսե», օրվան ՀԿ(Բ)Պ երկուսի և Քաղխորհրդի, 1933, 12 նոյեմբերի:

² «Քիմշեն», 1933, 6 նոյեմբերի:

մենօրյա գործնական օգնություն ցուցաբերելու ուղղութեամբ¹։

Երկրին տարեկան 10 հազար տոննա կարբիդ տալու գործը ոչ միայն կարբիդագործների, այլև Ղարաքիլիսայի պարտիական կազմակերպության պատվի գործը դարձաւ։ Պարտիայի շրջկոմը 50 կոմունիստների մոբիլիզացրեց և ուղարկեց կարբիդի ցեխը մշտական աշխատանքի։ Քիմիայի ֆրոնտում աշխատելը փառքի ու պատվի գործ համարվեց։

Կատարելով 1934 թվականի հունվարին կայացած ՀԿ(Բ)Պ 9-րդ համագումարի որոշումը, հայրենասեր քիմիագործները նույն թվականի նոյեմբերի 29-ին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 14-րդ տարեդարձի օրը, շահագործման հանձնեցին ցիանամիդի ցեխը՝ 18—20 հազար տոննա արտադրական կարողութեամբ։ Իրանով ավարտվեց ցիանամիդի ցեխի շինարարության առաջին էտապը և սկսվեց ցեխի զարգացման երկրորդ էտապը՝ կալցիումի ցիանամիդի բազայի վրա ցիանալավի ցեխի շինարարությունը։

Ռեսպուբլիկայի աշխատավորները Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-ամյակի պատվին ծավալելիցին սոցիալիստական մրցություն։ Այդ օրերին Հայկական ՍՍՌ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահությունը որոշեց՝ ՀամԿ(Բ)Պ և Սովետական պետության ականավոր գործիչ Ս. Մ. Կիրովի հիշատակը հավերժացնելու նպատակով, Ղարաքիլիսա քաղաքն անվանել Կիրովական, իսկ Ղարաքիլիսայի շրջանը՝ Կիրովականի շրջան²։

Հայաստանի կառավարության սույն որոշումը ջերմութեամբ ընդունեցին Կիրովականի աշխատավորները։

1935 թվականի հունվարի 6-ին Կիրովական քաղաքում կայացավ բազմամարդ միտինգ։ Միտինգում ելույթ ունեցող

¹ Տե՛ս ՀՍԽՀ Կենտրոնական Նախագահության 1933 թ. նոյեմբերի 26-ին կայացած նիստի արձանագրությունը՝ «Սովետական Հայաստան», 29 նոյեմբերի 1933 թ.։

² Տե՛ս ՀՍԽՀ Բանվորա-դյուղայիական կառավարության օրենքների և կարգադրությունների մոզովածու, 1935 թ. հունվար (№ 1), էջ 26։

ընկերները, ուղղունելով իրենց քաղաքի վերանվանումը, խոստացան մտրիլիզացնել քաղաքի աշխատավորության ուժերը, ՀԿ(Բ)^Պ գեկավարութեամբ Կիրովականը դարձնել Ս. Մ. Կիրովի անվանը վաչկ սոցխալիտական բարեկարգ քաղաք:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-ամյակի պատվին սեպտեմբերիկայում ծավալված արտադրական արշավում առավել աչքի ընկավ Գ. Ղազարյանի բրիգադան, որը միշտ գերակատարում էր պլանները, բարձրացնում կարբիդի որակը, իջեցնում ինքնարժեքը, տալիս էլեկտրաէներգիայի մեծ խնայողութուն: Դրա համար էլ անվանի կարբիդագործը պարգևատրվեց Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով:

Ստախանովյան շարժման լայն ծավալման շնորհիվ բիմ-գործարանի կայեկտիվը 1936 թվականի հոկտեմբերի 3-ին կատարեց տարեկան պլանը: Ժամկետից շուտ պլանը կատարելու և մեկ միլիոն սուբյու կուտակում առու համար ՀԿ(Բ)^Պ Կենտրոնական Կոմիտեն իր սղջույնի հեռագրում գրում էր.

«Կիրովականի քիմգործարանի գիրեկտոր՝

ընկ. Ս. Մարգարյանին

Կուսկոմիտեի քարտուղար՝

ընկ. Հ. Մելիքյանին

Գործարկումի նախագահ՝

ընկ. Մ. Մարգարյանին

Հայաստանի Կ(Բ)^Պ Կենտկոմը շնորհավորում է Կիրովականի քիմիական գործարանի ստախանովականներին, բանվորներին ու ինժեներատեխնիկական անձնակազմին, որոնք առաջինը հանրապետության մեջ ժամկետից շուտ կատարեցին տարեկան պլանը: Կենտկոմը հավատացած է, որ Կիրովականի քիմիական գործարանի բանվորները և ինժեներատեխնիկական աշխատողները, շթուլացնելով տեմպը, մինչև տարվա վերջը

պլանից զուրս կտան առնվազն 2000 տոննա կարբիդ:

ՀԿ(բ)Պ Կենտկոմ¹:

Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի ողջույնի նամակը աշխատանքային նոր խանդավառությամբ անուշ լեզուից զուրս ծախանի բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների մեջ: Գործարանի ցեխերում մրցութայինն ավելի լայն ծավալ ստացավ՝ մինչև տարեվերջը երկրին էլ ավելի շատ արտադրանք տալու համար: Քիմիադործները 1937 թվականի մարտից սոցիալիստական մրցութային մեջ մասն Սովետական Վրաստանի Տեղիբույուլու ածխահատ բանվորները հետ:

Նրբորդ հնգամյակի տարիներին Հայաստանում հեղհեղտեղ ընդարձակվեցին և իրենց արտադրանքի տեսակներն ավելայրին ռեսպուբլիկայի քիմիական արդյունաբերության ձևաարկությունները:

Այդ տարիներին սրող աշխատանքներ կատարվեցին նաև Կիրովականի քիմիական գործարանում: 1938 թվականին շահագործման հանձնվեց կրի շորրորդ վառարանը: Գործարանի կոլեկտիվը 1939 թվականի համախառն արտադրանքի տարեկան պլանը կատարեց 119 տոկոսով և նախորդ տարվա համամատուցյամբ սովեց 51 տոկոս աճ²:

1939 թվականի արտադրական պլանները բարձր ցուցանիշներով կատարելու համար քիմիական գործարանի կոլեկտիվը շահեց ՍՍՌՄ Քիմիական արդյունաբերության մինիստրության և Արհմիութայն Կենտկոմի Փոխանցիկ գրողը: Կուլեկտիվի այս հաջողություններն արդյունք էին այն բանի, որ գործարանի պարտիական կազմակերպությունը, ելնելով ՀամԿ(բ)Պ 18-րդ համագումարի պատմական որոշումներից, վերակառուցեց իր աշխատանքները՝ իրականացնելով սովե:

1 «Շեքարշավ», օրգան Կիրովականի կոստրուկոմի և շրջործկոմի, 1938, 12 նոյեմբերի:

2 Գ. Բ. Հ ա ռ ու թ յ ու ը յ ա ն, ՀԿ(բ)Պ Կենտկոմի հաշվառությունը: ՀԿ(բ)Պ 13-րդ համագումարին, Պետհրատ, Երևան, 1940, էջ 20—21:

նիստորացիայի նկատմամբ իր վերահսկողութեան ֆունկցիան
և ապահովեց կոմունիստների ու կաճերիտականների ավան-
գատորային գերը, պլանների կատարման բարձր ցուցանիշ-
ները: Գործարանի 142 պարտիականներից 103-ն անմիջա-
պես աշխատում էին արտադրաէտն ցեխերում: Պարտիական-
ներից 68-ը բանվորներ էին, 79-ը՝ ցեխի վարիչներ ու վար-
չկաներ, 16-ը՝ բրիգադավարներ:

Գործարանում ծավալվեց ուսուցիչական տարակարգ շար-
ժումը: Բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատող-
ները սիստեմատիկ կերպով հանդես էին գալիս նորանոր ա-
ռաջարկով լուծենքով: Այդ առաջարկությունների ներդրումը
1938—1939 թվականներին պետութեանը տվեց 207.000, իսկ
1940 թվականին՝ 200.000 ուրբու խնայողութուն¹:

1940 թվականին թերահատարվեց գործարանի տարեկան
պլանը: Դրա հիմնական պատճառը հում նյութով ապահով-
ված չլինելն էր: Այդ կապակցութեամբ ձևափոխվեցին հա-
մապատասխան միջոցառումներ՝ Գավալուում (այժմ Արա-
րատ) ստեղծվեց հատուկ բարհանք: Դրա շնորհիվ աշ-
խատանքային բեկում առաջացավ 1941 թվականի առաջին ե-
ռամսյակում: Բոլոր ցեխերը գերակատարեցին իրենց եռամ-
սյակային պլանները:

Այսպիսով, 2-րդ և 3-րդ հնգամյակների տարիներին ցե-
խերում ներդրվող առաջավոր սարքավորման և տեխնոլոգիա-
կան պրոցեսների կատարելագործման շնորհիվ տարեցտարի
աճեց գործարանի արտադրական կարողութունը: Բան-
վորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները տիրա-
պետեցին արտադրութեան տեխնիկային, բարձրացրին աշխա-
տանքի արտադրութեան լուծումը: Նրանց անձնվեր աշխա-
տանքի շնորհիվ 1940 թվականին գործարանի տարեկան հա-

¹ Համկ(բ)Պ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հաս-
կական ֆիլիալի արխիվ, ֆ. 278, կապուց 1, դ. 19, թ. 23:

մախառն արտադրանքը կազմեց 12 միլիոն ուսուլի՝ 1934 թվականի հրեք միլիոն ուսուլու դիմաց, այսինքն՝ քառասպատկվեց՝

* *
*

Անդրկովկասում սովետական կարգերի հաստատումից հետո, երբ միացվեց Անդրկովկասյան երկաթուղային ցանցը, մեծ աշխատանք կատարվեց գծի վերանորոգման և կառուցման ուղղութեամբ, երթեկուսիքներն սկսեց աճել:

Այդ տարիներին Կիրովական կայարանում աշխատում էր հիսուն մարդուց բաղկացած կոնդուկտորային բրիգադան, որը գնացքները Կիրովականից տանում էր Սանահին: Նրանք օրական ստանում էին տասից ոչ ավելի վագոն՝ զանազան ապրանքներով:

1929 թվականից, երբ ձեռնարկվեցին Ալ. Մյասնիկյանի անվան բիմիական գործարանի արտադրական ցեխերի, ինչպես նաև սկսական ու անհատական բնակելի շենքերի շինարարություն աշխատանքները, երկաթուղին սկսեց ավելի ծանրաբեռնված աշխատել: Օրեցօր աճող այդ պահանջները բավարարելու նպատակով ոչ միայն ավելանում էր երկաթուղային ցանցի աշխատողների անձնակազմը, այլև կատարելագործվում էին աշխատանքի պրոցեսները:

Սոցիալիստական մրցության ծավալման շնորհիվ բեռնակիրների բրիգադան ամեն տարի գերակատարում էր իր պլանները: 1940 թվականին նրա պլանների կատարողականը անցավ 200 տոկոսից:

Երկաթուղային կայարանի հերթապահներ Վ. Գեորգյանի և Ա. Կոռյանի բարեխիղճ աշխատանքի շնորհիվ գնացքներն ուղարկվում էին ըստ շվաբուցակի: Իրենց ստանձնած պարտավորությունները մեծ հաջողությամբ էին կատարում գծի բան-

1 Ալ. Մյասնիկյանի անվան բիմիական գործարանի արխիվ. գ. 36, թ. 10:

վորները, որոնք գիծը հասցրել էին գերազանց վիճակի: Գնացքների անխափան երթևեկությունն ապահովելու գործում հատկապես աչքի էր ընկնում Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Խ. Մարությանը. նա իրեն հանձնարարված գծամասը պահում էր օրինակելի վիճակում:

Ձմռանը նախապատրաստված էին դիմավորում Կիրովականի երկաթուղային հանգույցի 13-րդ ուղիմասի բանվորները, որոնք մեկն տարի ժամանակից շուտ ավարտում էին շթերի վերանորոգման աշխատանքները և ապահովում գնացքների անվթար երթևեկությունը: Անխոնջ հոանդով էին աշխատում զծի բանվոր Ա. Մելիքսեթյանը, Վ. Գրիգորյանը, հարվածայիններ Գ. Պողոսյանը, Ա. Ներսիսյանը, ղենիչներ Մ. Ասատրյանը, Ա. Մակարյանը, կայարանապետ Տ. Պապյանը և ուրիշներ:

Առաջին օրերից Կիրովական կայարանում եղել է հինգ կարճ գիծ, բայց 1927 թվականից հետո դրանք երկարացվել են, միաժամանակ ավելացվել են փակուղիները՝ դեպի Հայմատառ, շրջկոոպ, հացամթերման կայան և քիմիական գործարան:

1935 թվականին կայարանում ստեղծվեց օժանդակ տրնտեսություն՝ բռնափոխադրման կայան: Բարելավվեցին կապի միջոցները, թեթև տիպի երկաթե ձողերը փոխվեցին ծանր տիպի ձողերով, դրանով հնարավորություն ընձեռվեց ծանրաբաշ գնացքների արագ երթևեկության համար:

1935—37 թվականներին լայնացվեց կառամատույցը, կառուցվեցին և շահագործման հանձնվեցին կոնդուկտորական, վաղոնների տեխնիկական ղենման շենքերը և սպասարանը:

Առաջներում երկաթուղային կայարանը լուսավորվում էր սյուններից կախված գազի լամպերով, երբ 1932 թվականին գործարկվեց Ջորագէսը, կայարանն ստացավ առատ էլեկտրաէներգիա: Կայարանն ու նրա շրջակայքը լուսավորվեց Իլյիչի լամպերով:

2. ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(1941—1945)

Գերմանա-ֆաշիստական զավթիչներն ուխտագրուծ ուղմական հարձակում գործնլսլլ մեր խաղաղ Հայրենիքի վրա՝ նպատակ ունեին զավթել Սովետական երկիրը, ստրկացնել նրա ազատ ժողովուրդներին, տառջալել աշխարհում միակ սոցիալիստական պետութլլունը՝ վերականգնել ցարական-բուրժուական կարգերը մեր երկրում:

Երբ չըսպարակվելլին ՍՍՌԻՐ Գերագույն Առլլին: Ենախադահութլլան Հրամանագրերը «Պատերազմական դրութլլուն հայտարարելու մասին», ինչպես ողջ երկրում, այնպես էլ Հայկական ՍՍԻՐ րաղաքներում ու գլլուղերում կայացան աշխատավորների բազմամարդ միախնգներ, ուր նրանք արտահայտեցին իրենց սերը դեպի մեր պանծալի Հայրենիքը և պատրաստակամութլլանը՝ մինչև վերջին շունչը կովելլու մեր երկիրը ներխուժած գերմանական զավթիչների դեմ: Միախնգներում ելլուլլ ունեցողները կող էին անում էլ ալլելի սերտորեն համախմբել մեր պանծալի Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարութլլան շուրջը:

Այդ միախնգներում բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները պարտավորութլլուններ էին ստանձնում բարձրացնելու աշխատանքի արտադրողականութլլունը, խնայելու հումքն ու էլլկտրահնգրդիան՝ ուղմաճակատին էլ ալլելի շատ արտադրանք տալու համար:

1941 թվականի հուլիսի 3-ին ինչպես մեր ողջ երկրի, այնպես էլ Հայաստանի աշխատավորները լսեցին Պաշտպանու-



Տեբաթափը ընտանախան ալդուի

թյան Պետական Կոմիտեի նախագահ Ի. Վ. Ստալինի ռադիո-
կուլյթը, որի մեջ մեկնաբանված էին մեր Հայրենիքի գլխին
կախված ահալոր վտանգը, զերմանական զավթիչների իմ-
պերիալիստական նվաճողական սլանները և թշնամուն ջախ-
ջախելու մարտական ծրագիրը:

Ի. Վ. Ստալինը ռադիոկուլյթում ասաց.

«Մեր պետության ստեղծող Վ. Ի. Լենինն ասում էր, որ
սովետական մարդկանց հիմնական հատկությունը պետք
է լինի բաջությունը, խիզախությունը, սպաքարում վախ
չունենալը, ժողովրդի հետ միասին մեր Հայրենիքի թշնա-
միների դեմ կռվելու պատրաստակամությունը: Անհրա-
ժեշտ է, որ բուլշևիկի այս հոյակապ հատկությունը դառ-
նա Սովետական Բանակի, մեր Կարմիր Նավատորմի, մի-
լիոնավորների ու միլիոնավորների և Սովետական Միու-
թյան բոլոր ժողովուրդների սեփականությունը»¹:

Ի. Վ. Ստալինի կուլյթում պարտիսական, սովետական, արհ-
միութենական, կոմերիտական ու տնտեսական կազմակեր-
պությունների առաջ խնդիր դրվեց՝ թիկունքում անհապաղ ամ-
բողջ աշխատանքը վերակառուցել ռազմական ձևով, ամեն ինչ
ենթարկել ռազմաճակատի շահերին՝ թշնամու ջախջախումը
կազմակերպելու խնդիրներին համապատասխան, բազմակող-
մանի օգնություն կազմակերպել Կարմիր Բանակին, ապահո-
վել նրա շարքերի համալրումը և ռազմաճակատն ապահովել
անհրաժեշտ ամեն ինչով: Հայրենական Մեծ պատերազմն ան-
հրաժեշտաբար պահանջեց ամենաարագ կերպով վերակառու-
ցել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը՝ երկրի
պաշտպանության շահերին համապատասխան:

«... Քանի որ գործը հասել է պատերազմի,— ասում
է Վ. Ի. Լենինը,— ապա ամեն ինչ պետք է ենթարկել
պատերազմի շահերին, երկրի ամբողջ ներքին կյանքը

¹ Ի. Վ. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ պա-
տերազմի մասին, Հայպետհրատ, Երևան, 1950, էջ 19:

պետք է ենթարկել պատերազմին, այդ առթիվ փորձա-
գույն տատանումն անզամ անթուշլատրելի է»¹։

Իրա համար էլ Հայրենական պատերազմի հենց սկզբից Սովետական Միության աշխատավորները Համկ(բ)Պ ղեկավարության մեր երկրի ողջ ներքին կյանքը վերակառուցեցին սաղմական ձևով և այն ենթարկեցին մեր Հայրենիքի պաշտպանության շահերին։ Հայրենիքի ազատության ու անկախության համար մղվող մարտերին մասնակցելու համար կոմավոր կերպով սաղմաճակատ մեկնեցին ինչպես ՍՍՌՄ բազմազգ ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի շատ զավակներ։

Հայկական ՍՍՌ ներքին գործերի մինիստրության Կիրովականի բաժանմունքի աշխատակից, կոմունիստ Պ. Մելքոնյանը գրում է.

«Բարձր գնահատելով Հայրենիքի պաշտպանության սրբազան գործը, խնդրում եմ ինձ ուղարկել բանակ։ Իմ երկու եղբայրներն էլ գտնվում են Սովետական Բանակի մարտական շարքերում։ Նրանք հերոսաբար դիմադրում են նենդ թշնամու «անպարտելի» անունը վաստակած մոտոմեքենայացված դիվիզիաներին»։

Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանի էլեկտրամոնայտր Բ. Գևորգյանը, բանվորներ Գ. Պողոսյանը, Վ. Բորիսենկոն և շատ ուրիշներ խնդրում են Կիրովականի զինկոմիտատիատին իրենց ուղարկել սաղմաճակատ՝ գերմանաֆաշիստական զավթիչների դեմ կռվելու համար։ Կոմավորների և զորակոչիկների առաջին շարքերում էին կոմունիստներն ու կոմերիտականները։

Կարմիր Բանակի հետ ոտրի ելան սովետական բազմազգ եղբայրական ժողովուրդները, այդ թվում նաև հայ ժողովուրդը։ Հազարներով ու տասնյակ հազարներով նրանք մասնում էին ժողովրդական աշխարհազորի միավորումների շարքերը։

¹ Վ. Ի. Լեւոն, Երկեր, հատոր 31, էջ 150։

Կիրովսկանում ևս կազմակերպվեցին ժողովրդական աշխարհազորի, կործանիչ զուսարտակների, հակաօդային պաշտպանություն, պարտադիր ռազմական ուսուցման ստորաբաժանումներ, որոնց մեջ մտան հարյուրավոր կիրովականցիներ՝ ռազմական գործը սովորելու: Աշխարհազորի շարքերը մտան Մ. Շահվերդյանը, Զ. Չալաղյանը, Ն. Մելիքսեթյանը, Կ. Գյուղայանը, Մ. Յապերուխան և Հայկական ՍՍՌ վաստակավոր ուսուցիչ Տ. Գեորգյանը: Վերջինս գրում է.

«Իմ որդին արևմտյան ռազմաճակատում կռվում է գերմանական զավթիչների դեմ, այդ ինձ հպարտացնում է: Չնայած իմ պատկառելի տարիքին, ես նույնպես մըլտնում եմ աշխարհազորի շարքերը՝ պաշտպանելու մեր փառապանծ Հայրենիքը»¹:

Քաղաքի պարտիական կազմակերպությունը և սովետական օրգանները զինկոմիսարիատի միջոցով խոշոր աշխատանքներ էին կատարում՝ աշխարհազորի, պարտադիր ռազմական ուսուցման և հակաօդային պաշտպանության ստորաբաժանումների պարապմունքները լավ կազմակերպելու համար: Նրանք միաժամանակ ճշտություն մը էին կատարում Կարմիր Բանակի շարքերի համալրման և տեխնիկական միջոցների մորթիլոպացման մարտական առաջադրանքը:

1942 թվականին պատերազմական գործողություններ էին տեղի ունենում Կովկասի մատույցներում: Հայաստանն արդեն խորթ թիկունք չէր: Այդ կապակցությամբ 1942 թվականի սեպտեմբերին ռազմական դրություն է հայտարարվում ռեսպուբլիկայի մի շարք քաղաքներում, այդ թվում նաև Կիրովսկանում՝ ու շրջաններում:

Ինչպես մյուս ռեսպուբլիկաներում, այնպես էլ Հայաստանում, այդ թվում նաև Կիրովսկանում, Սովետական Բանակի վերավեր-հիվանդ մարտիկներին բուժելու, նրանց մար-

¹ Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կարխնեաի արխիվ, ֆ. 266, ց. 5, թերթ 5:

² «Սոցաբաշավ», 1942 թ. 20 սեպտեմբերի:

տական շարքերը վերադարձնելու համար ստեղծվեցին հոս-
պիտաններ, ուր աշխատանքի նշանակվեցին բարձրորակ
կադրեր:

Ինչպես մեր երկրի խաղաղ շինարարության սյնակն էլ
Հայրենական պատերազմի տարիներին Հայաստանի աշխա-
տավորների պայքարը գլխավորում էր ՀամԿ(բ)Պ մարտական
ջոկատներից մեկը՝ Հայաստանի Կոմունիստական պարտիան:
Հայկական ՍՍՌ բանվորները, գյուղացիները և ինտելիգեն-
ցիան պատերազմի առաջին օրերից ձևոնամուխ եղան ամբողջ
աշխատանքների վերակառուցմանը՝ պատերազմական պայ-
մաններին համեմատ:

Կիրովականի պարտիական կազմակերպությունը, զբաղ-
վելով ազդեամակատին՝ օգնություն կազմակերպելու համար
արտագրական ձևոնարկություններում տարվող աշխատանք-
ներով, միաժամանակ աշխատավերների շրջանում քաղաքա-
կան-դադաֆարական աշխատանք էր տանում՝ նրանց սովի-
տական հայրենասիրության և ժողովուրդների բարեկամու-
թյան ոգով դաստիարակելու համար¹:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Հայաստանի
բանվոր դասակարգի մարտական ջոկատներից մեկը՝ Կիրո-
վականի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխա-
տողները իրենց ողջ աշխատանքը վերակառուցեցին ազդեա-
նակատի շահերին համապատասխան: Ամբողջ ժողովրդի հետ
նրանք դարձան է՛լ ավելի զգաստ, է՛լ ավելի կարգապահ, սո-
վորեցին աշխատել նոր ձևով, ազդեական ձևով:

Արդյունաբերական ձևոնարկություններից ազդեամակատ
մեկնած տղամարդկանց փոխարինելու եկան բազմաթիվ տնու-
յին տնտեսուհիներ, պատանիներ ու աղջիկներ, ծերության
պատճառով հանգստի գնացած հին բանվորներ: Հ. Հովհան-
նիսյանը, Հ. Պապիկյանը փոխարինեցին իրենց ամուսիննե-
րին, տնային տնտեսուհիներ Վ. Սահակյանը, Զ. Մարուքյանը,

¹ Աշխատության այս գլխում օգտագործել ենք Ա. Մնացականյանի
«Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմում» (1941—1945) ՀՍՍՌ
ԳԱ հրատարակչությամբ 1954 թ. լույս ընծայված աշխատությունը:

Ա. Քոչարյանը, Վ. Իվանովան, Ե. Մարկոսյանը փոխարինեցին իրենց հարազատներին:

Հայրենական պատերազմի տարիներին գործարանների ու ֆաբրիկաների ղեկավարին ցեխերում, ուր աշխատանքը ծանր էր, կանայք կատարում էին տղամարդկանց աշխատանքը: Նոր համալրված բանվորներին սրահավորելու համար կազմակերպվեցին տեխնիկայի տիրապետման խմբակներ, որոնց ղեկավարում էին ինժեներա-տեխնիկական աշխատողներն ու փորձված վարպետները: Այդ խմբակներում սովորելով տարբեր մասնագիտություն՝ նրանք կանգնեցին մեքենաների առաջ՝

Պատերազմը ինչպես ողջ երկրում, այնպես էլ Հայաստանում ղեկավարացրեց արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը: Որակյալ բանվորական ուժի մեծ մասը մեկնել էր ոսղմաճակատ: Խախտվել էին արդյունաբերական ձեռնարկությունների նյութա-տեխնիկական մատակարարման ստեղծված ուղիները: Արդյունաբերական ձեռնարկություններն էին եկել կանայք՝ պատանիներ, որոնց որակավորման համար ժամանակ էր պահանջվում:

Բացի կանանցից, գործարանում աշխատանքի անցան կիրովականի ֆաբրիկա-գործարանային ուսումնորանի սաները: որոնք, աշխատանքի անցնելով, ամենաարագ կերպով որակավորվեցին: Տարբործուսը Հայրենական պատերազմի տարիներին բազաբի արդյունաբերական ձեռնարկություններին ավելց տարբեր մասնագիտությամբ 1241 միջին որակի մասնագետներ: Այդ տարիներին բարձրորակ կադրեր տալու համար ֆարգործուսը շահեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առջնթեր Աշխատանքային սեղերվների վարչություն Փոխանցիկ կարմիր դրոշը:

Արտադրական ձեռնարկություններում բանվորական կադրերն ամրապնդելու, նրանց ուժերն առավել արդյունավետ օգտագործելու համար 1942 թվականի հուլիսի 24-ին Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետը մի շարք միջոցառումներ մշակեց:

Այդ կապակցությամբ Ժողկոմսովետը ղեկավարեց լսողոր արդյունաբերական ձեռնարկությունների ղեկա-

վարեներին, այդ թվում Կիրովականի Ալ. Մլասնիկյանի անվան քիմիական գործարանի զիրեկտորին պարտավորեցրեց՝ գործարաններում ռազմական կարգ ու կանոն մացնել, բարձր կարգապահություն ստեղծել և անողոր պայքար կազմակերպել գործալիքների դեմ:

1942 թվականի օգոստոսին ՀԿ(բ)¹ Կիրովականի շրջանային կոմիտեի պլենումում հատուկ քննարկման ենթարկվեց արդյունաբերական ձևոնարկություններում և երկաթուղային գծամասում տարվող աշխատանքների վիճակը և միջոցառումներ նշվեցին այդ աշխատանքները պատերազմական պայմաններին համեմատ կազմակերպելու համար:

Կիրովական քաղաքի բանվոր-ծառայողները քաղաքական և արտադրական մեծ ակտիվությամբ էին զործում Կոլկասի պաշտպանության օրերին իրենց տրված առաջադրանքները կատարելու համար: Ալ. Մլասնիկյանի անվան քիմիական, մեխանիկական, կղմինդրի-աղյուսի գործարաններում, մորթու-մուշտակի ֆաբրիկայում, երկաթուղում, ինչպես նաև արհեստագործական կոոպերացիայի խոշոր արտելներում 1942 թվականի օգոստոսի 26-ին տեղի ունեցած բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների ժողովներ: Ժողովներում ելույթ ունեցողները, խոսելով հիտլերյան զավթիչների կատարած բարբարոսությունների մասին, լճոական պատրաստակամություն հայտնեցին ՍՍՌԿ կոոպերական ժողովուրդների հետ միասին պաշտպանել մեր Հայրենիքի յուրաքանչյուր թիզ հողը, ավելի մեծ շահով օգնել Սովետական Բանակին՝ արտադրելով ռազմական ավելի շատ հանդերձանք, ռազմամթերք և պարենամթերք: Երկաթուղայինները պարտավորվեցին իսկական ռազմական կարգ ու կանոն ստեղծել իրենց աշխատանքի բոլոր բնագավառներում ու գերակատարել պլանները¹:

¹ «Սովետական Հայաստան», 1942 թ. 27 օգոստոսի:

Կիրովականի աշխատավորները ամեն օր լսելով ձայնը հեռուում էին Հայրենական պատերազմի ուղղման հաստատություններում ծառայող իրազարժույթյուններին և նորանոր պարտավորություններ վերցնում Կարմիր Բանակին օգնելու՝ թշնամու ջախջախումն արագացնելու համար:

Արձագանքելով Կուլնեցկի Ստալինի անվան մետալուրգիական կոմբինատի, մեր երկրի առաջավոր մի շարք գործարանների և եռակի շքանշանակիր Կիրովյան գործարանի կոլեկտիվների հայրենասիրական նախաձեռնությունը, Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանի բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները մտան համամիութենական սոցիալիստական մրցության մեջ և ստանձնեցին մի շարք պարտավորություններ:

Սոցիալիստական մրցության մեջ ստանձնած պարտավորությունների կատարման գործում քիմիական գործարանում բարձր ցուցանիշների հասան Ա. Աֆոնենկոյի ղեկավարած ցեխի բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները, որոնք պատերազմական տարիներին ոչ միայն կատարում էին իրենց պլանները, այլև հումքի և էլեկտրաէներգիայի խնայողություն էին տալիս: Բանվորներ Ա. Լևոնյանը, Ա. Գրիգորյանը, Լ. Ասատրյանը և շատ ուրիշներ գերակատարում էին իրենց պլանները: Այդ ցեխը, շահելով գործարանի Փոխանցիկ կարմիր դրոշը, այն երկար ժամանակ պահեց իր ձեռքում:


1942 թվականին, երբ ահավոր վտանգ էր կախված Կուլիասի վրա, մեր արդյունարերությունը դեռ նոր էր սկսել վերականգնել իր աշխատանքները՝ ուղղման հաստատությունների կատարելու համար: Այդ ծանր օրերին Ա. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանի կոլեկտիվը զրկվեց հում նյութ՝ քարածուխ, կոքս՝ անտրացիտ, թիթեղ ստանալու հնարավորությունից: Վագոնների պահասության պատճառով կրաքարը ևս նորմալ չէր ստացվում: Գործարանի կազրերի մի մասը մեկնել էր ուղղման հաստատության: Այդ պատճառով էլ գործարանի 1942 թվականի պլանը կատարվեց միայն 44,8 տոկո-

սով: Այստեղ արդեն օգնութեան հասան գործարանի օտար-
նալիզատորները, փորձված ինժեներները, վարպետները, ցեխե-
րի վարիչներն ու հերթափոխութեան պետերը, որոնք պատե-
րազմական պայմաններին համապատասխան տեղում հում
նյութի ռեզերվներ գտան և ապահովեցին գործարանի հաջորդ
տարիների պետական պլանների կատարումը: Կոքս և անտրա-
ցիտ շտանալու պատճառով կանգ էր առել կարբիդի արտա-
դրութունը, որի կարիքը շատ էր դգում ռազմաճակատը:
1942 թվականին գործարանի ղիբեկտոր Ս. Մելքումյանի և
կարբիդի ցեխի պետ Ա. Խաժակյանի ստաջարկով կարբիդ
ստանալու համար կոքսի և անտրացիտի փոխարեն օգտա-
գործվեց Տկվիբուլու քարածուխը: Փորձը տվեց դրական ար-
դունք, միայն այն տարբերութեամբ, որ ավելի շատ էր էլեկ-
տրաէներգիա սպառվում: Անդրկովկասում ռաջին անգամն
էր, որ Տկվիբուլու քարածուխով կարբիդ էր արտադրվում:
Վրացական ՍՍՌ Զևստաֆոնիի ֆերրոսիլիցիումի գործարանի
մի խումբ մասնագետների օգնութեամբ Կիրովականի քիմգոր-
ծարանում կոքսի փոխարեն Տկվիբուլու քարածուխ օգտագոր-
ծելով ստացվեց նաև ֆերրոսիլիցիում և յււրացվեց չորս ըս-
տանալու տեխնոլոգիան:

1942 թվականին ստաջարանք ստացվեց՝ Ստալինգրադ
ուղարկել վեց վագոն կարբիդ: Կարբիդագործները, կանգնելով
արտահերթ հերթափոխութեան, կատարեցին այդ մարտական
առաջադրանքը, պլանից դուրս ռազմաճակատ ուղարկելով
պահանջվող վեց վագոն կարբիդը:

Ռազմաճակատին զինամթերք տալու նպատակով դեռևս
1941 թվականին գործարանում կազմակերպվեց մի նոր ցեխ,
որի սարքավորման պատրաստումն ու տեղադրումը կատարե-
ցին մեխանիկական ցեխի բանվորները՝ անվանի վարպետ Ս.
Ղարազյոզյանի ղեկավարութեամբ:

Կրի վստարանների համար պետք էր մանրացնել կրա-
քարը, իսկ այդ շատ բանվորական ուժ էր պահանջում: Գոր-
ծարանի մեխանիկական ցեխի բանվորները ցեխի պետ Ս.
Ղարազյոզյանի նախագծով պատրաստեցին քար ջարդող մե-



Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի դիրեկտոր
ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ Ս. Թևոսյան

րենա, որը ոչ միայն կրի վատարաններն ապահովեց կրաքարով, այլև խնայեց մեծ քանակութեամբ բանվորական ուժ:

Գեոևս 1941 թվականի սեպտեմբերի 24-ին № 27 ցեխի հերթափոխի պետ Մ. Բարաչանը և վարպետ Խ. Մինասյանն ստացան ցիանապլավի առաջին հալոցքը: Այդ ցեխը մինչև շահագործման հանձնելը մեծ դժվարությունների առաջ էր կանգնած: Բանվորները գեոևս շփոթին արտադրության տեխնոլոգիան: Չնոնորեչենսկի գործարանից Կիրովական ժամանեցին փորձված մասնագետ Ն. Վոլկովը և վարպետներ Մուրտուզին, Նիկոլաևն ու Բ. Նիկիտինը: Սրանք ցեխի աշխատողներին սովորեցրին արտադրության տեխնոլոգիան: Մ. Շեկոյանը, Է. Չախմախսազյանը, ինչպես նաև Մոսկվայի Մենդելևի անվան քիմիատեխնոլոգիական ինստիտուտի շրջանավարտ Փ. Ղազարյանը գեոևս նոր էին աշխատանքի նշանակվել Կիրովականի քիմիական գործարանում: Այս երիտասարդ մասնագետները հերթափոխության վարպետներ Բ. Գավթյանի, Վ. Գևորգյանի, Տ. Բարսեղյանի հետ միասին հաղթահարելով մեծ դժվարություններ, ապահովեցին սարքավորման բարձր արտադրողականությունը:

№ 27 ցեխի համար Մոսկվայից ինքնաթիռով ստացվեց մանրացնող մեքենա: Այդ մեքենան ցածր կարողություն ունենալու պատճառով շէր բավարարում ցեխի պահանջները: Անվանի վարպետ Ս. Ղարադյուզյանի նախաձեռնությամբ գործարանի մեխանիկական ցեխի կոլեկտիվը տեղում պատրաստեց մուրճային աղաց և դրանով կանխեց պլանների կատարման համար առաջացած վտանգը:

Կիրովականի քիմիական գործադրանի բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները, արձագանքելով առաջավոր ձեռնարկությունների կոչին, մրցության մեջ մտան Չերժինսկ քաղաքի Մ. Ի. Կալինինի անվան քիմիական գործարանի կոլեկտիվի հետ, ստանձնեցին կոնկրետ պարտավորություններ: Իրենց ստանձնած պարտավորությունները գերակատարում էին ինժեներներ Ա. Ավագյանի, Հ. Կոստան-

յանի, Կուլիկովայի ղեկավարած ցեխերը: Սոցմրցման ծավալման շնորհիվ Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանը 1943 թվականի առաջին կիսամյակի պլանը կատարեց 108 տոկոսով և համամիութենական մրցության մեջ քիմիական արդյունաբերության սիստեմում գրավեց երրորդ տեղը և արժանացավ 30 հազար ռուբլի դրամական պարգևի¹:

Գործարանի պարտիական կազմակերպությունը գլխավորում էր ողջ կոլեկտիվի աշխատանքը. նրա ուշադրության կենտրոնում էին պլանների կատարման, աշխատանքի արտադրողականության բարձրացման հարցերը: Գործարանի պարտիական կազմակերպությունը քննեց Դավալուի հանքերի բանվորների աշխատանքի պայմանները և բանվորական ուժի օգտագործման հարցը: Պարտիական կազմակերպությունը գործարանի գիրկեցիայի ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ Դավալուի կրաքարի հանքերում համապատասխան քանակի տրանսպորտ չկա, եղած գույքի նկատմամբ էլ բացակայում է պահանջվող հոգատարությունը, գործարանի ղեկավար ընկերներն այնտեղ քիչ են լինում: Հանքերում նորմալ աշխատանք կազմակերպելու համար պարտիական կազմակերպությունը ձեռնարկեց կոնկրետ միջոցառումներ, որոնք դրական արդյունքներ տվեցին:

Գործարանում առաջավոր շատ բանվորներ, վարպետներ, բրիգադավարներ, տեխնիկներ և ինժեներներ հանդես էին գալիս իրենց ռացիոնալիզատորական առաջարկներով, որոնց կիրառումը հարյուր հազարների օգուտ էր բերում գործարանին: 1941 թվականին կիրառվել է 26 ռացիոնալիզատորական առաջարկ, որը տվել է 304.415 ռուբլու տնտեսում, 1943 թվականին՝ 43 առաջարկ, 174.507 ռուբլու տնտեսում, 1945 թվականին՝ 8 առաջարկ, 705 հազար ռուբլու տնտեսում²: Գործարանում աչքի ընկնող ռացիոնալիզատորներ էին Ս. Ղա-

1 ՀամԿ(Բ)Պ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 17, դործ 42, թերթ 9:

2 Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանի արխիվ, արտադրատեխնիկական բաժին, դործ 38, թերթ 11:

րազմուցյանը, Ա. Ա. Ֆոնենկին, Հ. Փուլզանը, Ա. Փահլևանյանը, Ա. Դաևսկին և շատ ուրիշներ:

Հայրենական պատերազմի տարիներին գործարանի կուլեկտիվը համամիութենական սոցիալիստական մրցության մեջ քիմիական արդյունաբերության դժուր կրկու անգամ գրավել է առաջին տեղը և ստացել 190 հազար ռուբլի գրամական պարգև մեկ անգամ՝ հրորդ տեղը¹: էլեկտրաէներգիայի խնայողության դժուր կրկու անգամ գրավել է հրորդ տեղը և ստացել է 25 հազար ռուբլի գրամական պարգև²:

Հայրենական պատերազմը գեռ չէր ավարտվել, կրթ ՍՍՌԾ ժողկոմսովետը սրուշում ընդունեց գյուղատնտեսության համար աջոտային պարարտանյութեր արտադրելու նպատակով ընդարձակել Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանը: 1943—1944 թվականներին սկսվեցին այդ նոր գործարանի շինարարական աշխատանքները:

Պատերազմի ժամանակ Կիրովականում մորթու-մուշտակի ֆաբրիկան ամբողջապես զբաղված էր ռազմական հանգերձանքի պատրաստումով: Ֆաբրիկայի բանվորներն ու բանվորուհիները, աշխատելով պատերազմական պայմաններին համեմատ, Սովետական Բանակի մարտիկների ու հրամանատարների համար պատրաստեցին 45 հազար ձեռնոց, 73 հազար մուշտակ, 4 հազար քուրք, 3 հազար կաճյակ (վալենկա) և 12 հազար գլխարկ³: 1941—1945 թվականներին ֆաբրիկան իր տարեկան պլանները կատարում էր 120—140 տոկոսով: Թաղմաճակատի պատվերներն է՛լ ավելի արագ կատարելու գործում առավել աչքի էին ընկնում Ս. Հարությունյանը, Ա. Հալևսկյանը, Ն. Թորոսյանը և ուրիշներ:

Պատերազմական տարիներին լարված կերպով աշխատեցին Կիրովականի կղմինդրի-աղյուսի գործարանի բանվորները,

1 Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանի արխիվ, արտադրական խնամարկական բաժին, գործ 38, թերթ 11:

2 Նույն տեղում:

3 Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կարխնետի արխիվ, ֆոնդ 266, գործ 5, թերթ 6:

որոնք անխափան աղյուս և կղմինդր էին մատակարարում զորամասերին, երկաթուղային օբյեկտներին, ինչպես նաև Վրաստանի և Ադրբեջանի եղբայրական ռեսպուբլիկաների շինարարական կազմակերպություններին:

Ռազմաճակատի պատվերներն էին կատարում նաև տեղական արդյունաբերության մեխանիկական գործարանը, կահույքի ֆաբրիկան և մասնավորապես արհեստագործական կոոպերացիայի կարի, կոշիկի արտելները: Վերջիններս մեծ քանակությամբ կոշիկեղեն և հանդերձանք տվին Սովետական Բանակի մարտիկներին:

Համամիութենական սոցիալիստական մրցության մեջ մտան նաև Կիրովականի երկաթուղային ուղեմասի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները: Նրանք մրցում էին Երևանի, Լենինականի և Սանահինի երկաթուղայինների հետ: Բազմաթիվ են անձնվեր աշխատանքի օրինակները, որոնք կատարում էին Կիրովականի երկաթուղայինները ուղեմասում և կայարանում: Սլաքավարներից սկսած մինչև շոգեքարշի մեքենավարներն իրար հետ մրցում էին՝ տրանսպորտի անխափան աշխատանքի, ռազմաճակատի պատվերները ժամկետին փոխադրելու համար:

Իրենց հայրենասիրական պարտքը պատվով կատարելիս Կիրովականի երկաթուղայինները 1941—1945 թվականների վազոնների բեռնման և բեռնաթափման պլանները նրանք կատարեցին 120—130 տոկոսով: Գծի վարպետ Խ. Մարուքյանի ղեկավարությամբ, ստախանովականներ Բ. Աթոյանի, Մ. Սարգսյանի, Ս. Ափինյանի, Մ. Քոչարյանի և ուրիշների լավ աշխատանքի շնորհիվ գիծը պահվում էր նորմալ վիճակում, ապահովվում զնայքների անխափան երթևեկությունը: Վերանորոգման արհեստանոցում ստախանովական դարբիններ Վ. Կոստանյանը, Ա. Ավետիսյանը և փականագործ Փ. Հովսեփյանն իրենց պլանները կատարում էին միշտ 150 տոկոսով: Վազոնազննիչների բարեխիղճ աշխատանքի շնորհիվ վազոնների զննման պրոցեսը կրճատվեց 10—15 րոպեով: Հանձնարարված աշխատանքը խնամքով էին կատարում ավ-

տոմատավորներ Վ. Ղազախեցյանը, Գ. Մարկոսյանը, Ս. Մելքոնյանը և ուրիշներ:

Կիրովական կայարանում առաջավոր մեքենավարների համրավ ունեին Ս. Բեժանյանը, Լ. Ղազախեցյանը և Մ. Առաքելյանը: Սրանք աշխատում էին լուսինական մեթոդով, սահմանված ժամկետից առաջ տեղ հասցենելով դնացքը՝ տալիս էին վառելանյութի խնայողություն և գերակատարում շոգերարշի վազքի նորման: Կայարանի կոլեկտիվում հիշատակույցան արժանի է կապի մեխանիկ Գ. Զուրաբյանը, որը կոլեկտիվի հետ միասին լավ վիճակում էր պահում կապի տնտեսությունը:

Հայրենական պատերազմի տարիներին երկաթուղում արվել են բազմաթիվ ուսցիտնալիզատորական առաջարկություններ: Կայարանի արհեստանոցում միատեղ աշխատող անվանի վարպետ Վահան Հովսեփյանը և նրա երկու որդիները արել են մի քանի ուսցիտնալիզատորական առաջարկ, որոնց ներդրումից արտադրությունն ստացել է տասնյակ հազարավոր ռուբլու խնայողություն:

Արդյունաբերական ձեռնարկությունների և երկաթուղային օբյեկտների պարտիական կազմակերպությունները ոչ միայն սոցիալիստական մրցության մեջ իրենց առաջավոր դերն էին կատարում, այլև մոբիլիզացնում էին կոլեկտիվի ողջ ուժերը՝ ազդմական պատվերների արագ կատարմանն արգելակող բոլոր դժվարությունները հաղթահարելու, սոցիալիստական մրցությունն ավելի ծավալելու, ուսցիտնալիզատորների առաջարկություններն ու աշխատանքի առաջավոր մեթոդները արմատավորելու համար: Պարտիական կազմակերպությունները, օգնելով ետ մնացողներին, բանվորների, ինժեներատեխնիկական աշխատողներին մեջ բարձրացնում էին պատասխանատվությունը՝ աշխատանքային նորանոր սխրագործություններ կատարելու և ազդամաճակտը անհրաժեշտ ամեն ինչով ապահովելու համար:

Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում սոցմրցումն ու առաջավորների շարժումը նոր երանգներ ստա-

ցան: Ինչպէս ամբողջ երկրում, այնպէս էլ Կիրովականի ար-
դյունաբերական ձեռնարկութիւններում ըստ պրոֆեսիաների
ծավալվեց բրիգադային մրցութիւնը, բաղմադազգահային-
ների, կոմերիտական ճակատային բրիգադաների, պրոֆեսիա-
ների համատեղման, երկու, երեք և հինգհարյուրականների
շարժումը: Պարտիական կազմակերպութիւնները, մոբիլի-
զացնելով բանվորների ուժերը, ոչ միայն նպաստում էին ար-
տադրանքի քանակի ավելացմանը, այլև ստեղծելով նոր ցե-
խեր, նոր ագրեգատներ, ասպահովում էին արտադրանքի նոր
տեսակների թողարկումը:

Հայրենական պատերազմում ստեղծված դժվարութիւն-
ներն էլ ավելի կոփեցին սովետական մարզկանց, և մեր երկ-
րի բաղմազգ ժողովուրդը իրավամբ նվաճեց հերոսական ժո-
ղովրդի հոշակ: Մեր բանվոր դասակարգն իր բոլոր ուժերը
նվիրարեց հաղթանակի գործին, անընդհատ կատարելա-
գործեց արտադրութեան տեխնիկան, ավելացրեց արդյունաբե-
րական ձեռնարկութիւնների կարողութիւնը, կառուցեց նոր
ֆաբրիկաներ ու գործարաններ: Սովետական Միութեան բան-
վոր դասակարգը աշխատանքային մեծ սխրագործութիւն կա-
տարեց Հայրենական պատերազմում: Դրանում իր լուսնի
ունի նաև Հայաստանի բանվոր դասակարգը, նրա մարտական
ջոկատներից մեկը՝ Կիրովականի բանվորներն ու ինժեներա-
տեխնիկական աշխատողները, որոնք իրենց ողջ աշխատանք-
ները վերակառուցելով ռազմաճակատի պահանջներին համա-
պատասխան, չուրացրին արտադրանքի նորանոր տեսակներ,
ռազմաճակատին տվեցին ավելի շատ արտադրանք և դրանով
խոյս սրբութեամբ կատարեցին իրենց պարտքը՝ Սովետական
Հայրենիքի հանդեպ:

* *
*

Մեր երկրի ժողովուրդները դեպի Սովետական Բանակն
ունեցած իրենց սերն ու համակրանքն արտահայտեցին ոչ

միայն արդյունաբերութեան մեջ և տրանսպորտում ռազմական պատվերների անթերի կատարումով, այլ և պատերազմի տարիներին ծնված ու լայն թափով ծավալված հայրենասիրական այնպիսի նախաձեռնություններով, ինչպիսիք են ռազմաճակատի մարտիկների համար նվեր-ծանրոցների ու տաք հագուստի ուղարկումը, Հայրենիքի պաշտպանութեան համար բազմատեսակ ֆոնդերի ստեղծումը:

Այդ նախաձեռնություններն ամենազերմ արձագանք գտան Սովետական Միութեան բոլոր քաղաքներում ու գյուղերում, ինչպես նաև Կիրովականում: Բոցաշունչ տրիբուն Կիրովի անունը կրող քաղաքի աշխատավորները նոր տարվա, Մայիս-մեկյան տոնի, Կարմիր Բանակի և Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի տարեդարձի օրերին 1715 նվեր-ծանրոց ուղարկեցին ռազմաճակատ՝ Սովետական Բանակի մարտիկներին, հրամանատարներին և քաղաշխատողներին: Այդ նվեր-ծանրոցների մեջ դրված էին հարյուրավոր սրտառուչ նամակներ, որոնք ոգեշնչում էին առաջավոր գծում գտնվող մարտիկներին՝ Հայրենիքի պաշտպանութեան համար մղված մարտերում: Գործող բանակի մարտիկների ու հրամանատարների հանձնարարութեամբ քաղղեկ Խ. Պերեսկովը, ավագ Կ. Բորշչևը, մարտիկ Շուտկինը Կիրովականի կապի բաժանմունքի նվեր-ծանրոցում դրված նամակին պատասխանում են.

«Թանկագին բարեկամներ».

Մեր զորամասին բախտ վիճակվեց պաշտպանելու Սեվաստոպոլը և մաքրելու Ղրիմը գերմանական ֆաշիստներից: Դուք թիկունքում աշխատեցեք է՛լ ավելի լարված, բացառիկ ճշտապահութեամբ ու հստակութեամբ, որպեսզի մոտալուտ դարձնենք հաղթանակը թշնամու դեմ»¹:

Այսպիսի տասնյակ նամակներ էին ստանում Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանի բանվոր-

¹ Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվ, ֆ. 266, դ. 5, ք. 6:

ներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, տնային տնտեսուհիները, Երկաթուղայինները:

Ղրիմի ռազմաճակատի ղորքերի Տ: Գնդի ականանետային մարտկոցի մարտիկների անունից նրանց հրամանատար Կ. Վասիլենկոն գրում է.

«Ստացանք ձեր՝ Կիրովականի կարի գործարանի բանվորների ուղարկած նվեր-ծանրոցները: Ծանրոցներում դրված նամակներով դուք բարձրացնում եք մեր հոգեկան ու բարոյական վիճակը՝ թշնամու դեմ հերոսաբար կռվելու համար: Մենք ձեզնից պահանջում ենք՝ թիկունքում, արտադրական ձեռնարկութուններում բարձրացրեք աշխատանքի արտադրողականութունը, երկրին ու ռազմաճակատին օրավուր տվեք ավելի շատ արտադրանք: Միաժամանակ հոգատարությամբ շրջապատեցեք ճակատայիններին՝ էվակուացիայի ենթարկված ընտանիքներին ու նրանց երեխաներին»¹:

Կարբիդի ցեխի էլեկտրիկ Ն. Անանյանը մինչև բանակ գնալը դերազանց էր աշխատում: Նա մեկնեց ռազմաճակատ և այնտեղից ընկերներին գրում է.

«Քիմգործարանի ընկերնե՛ր, որքան կարող եք, շատ արտադրանք տվեք, մի խնայեք ձեր ուժերը հերոսաբար կռվող Կարմիր Բանակի մարտիկներին օգնելու համար, որպեսզի շուտ ջախջախենք դերմանական ֆաշիստներին, ազատագրենք մեր սրբազան Հայրենիքը: Ես ձեզ խոստանում եմ իմ օգաչու եզրոթը՝ Միշիկի հետ միասին հերոսաբար կռվել, անձնազոհությամբ կատարել տրված մարտական առաջադրանքը»²:

1 ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կարիքների արխիվ, ֆ. 266, դ. 5, թ. 9:

2 ՀամԿ(Բ)Պ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 378, դ. 38, թ. 37:

Կիրովականի աշխատավորները, արձագանքելով Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանի աշխատողների նախաձեռնությանը, կազմակերպեցին տաք հագուստի լրացուցիչ հավաքումը:

Սովետական Բանակի մարտիկների համար Կիրովականի աշխատավորները ռազմաճակատ ուղարկեցին 1080 կիսամուշտակ, 810 կաճյակ (վալենկա), 675 տելեգրեյկա, 4885 ֆուֆայկա, 4166 բրդյա ձեռնոց, 6150 զույգ զուլպա, 1204 տաք գլխարկ և այլ տեսակի տաք հագուստ¹: Բացի այդ, տաք հագուստի ֆոնդը մուծեցին մոտ 400 հազար ռուբլի գումար²:

Հայաստանի, այդ թվում նաև Կիրովականի աշխատավորները, արձագանքելով երկրով մեկ ծավալված համաժողովրդական հայրենասիրական շարժմանը, տամբովցիների օրինակով պաշտպանության ֆոնդը մուծեցին 2 միլիոն 655.223 ռուբլի, իսկ պետական փոխառությանը բաժնեգրվեցին (1941—1945 թթ.) 5 միլիոն ռուբլի³: Երևանի, Լենինականի, Կիրովականի և այլ քաղաքների աշխատավորները մարտական ինքնաթիռների կառուցման ֆոնդը մուծեցին 15 միլիոն ռուբլի, որի համար Ի. Վ. Ստալինը ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար Գր. Հարությունյանին հասցեագրած հեռագրում գրում է.

«Իմ եղբայրական ողջույնը, Կարմիր Բանակի շնորհակալությունը հաղորդեցեք Երևանի, Լենինականի, Կիրովականի և Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի մյուս քաղաքների ու շրջանների աշխատավորներին, որոնք 15 միլիոն ռուբլի են հավաքել «Սովետական Հայաստան» ավիամիավորման կառուցման համար»⁴:

1 ՀամԿ(բ)Պ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 17, դ. 42, թ. 19:

2 Նույն տեղում, թ. 20:

3 Նույն տեղում:

4 «Սովետական Հայաստան», 1942 թ. 30 դեկտեմբերի:

Կիրովականի պարտիական կազմակերպության և սովետական օրգանների ուղղորդության կենտրոնում էին զինծառայողների, ճակատայինների, էվակուացիայի ենթարկվածների ընտանիքներին ցույց տրվող օգնության հարցերը: Այդ ընտանիքները ստանում էին կենսաթոշակ, միանվագ դրամական օգնություն: Ճակատայինների ընտանիքներն ամեն տարի ապահովվում էին հազուստով, վառելիքով և զանազան սննդամթերքներով: Նրանց մի մասին հատկացված էին հողամասեր իրենց բանջարանոցներն ունենալու համար:

Հողամասեր ունեին նաև 29 հիմնարկ-ձեռնարկություններ, որոնց օժանդակ տնտեսության հողային տարածությունը հասնում էր 207 հեկտարի: Քիմիական գործարանն ուներ 45 հեկտար, Հայառը՝ 17, մորթու-մուշտակի ֆաբրիկան՝ 5, տեղարդը՝ 10 հեկտար հողամաս: Բացի այս, 32 հիմնարկ-ձեռնարկությունների բանվոր-ծառայողների կողմից կուլեկտիվ ձևով մշակվող բանջարանոցների համար հատկացված էր 61 հեկտար: Միտժամանակ մոտ 400 անհատ տնտեսությունների բանջարանոցների համար հատկացված էին համապատասխան հողամասեր¹:

Այդ կապակցությամբ կիրովականցի սերժանտ Գ. Բալոյանը նամակ է ուղարկում պարտիական շրջկոմի հասցեով, ուր գրված է.

«Ես պառկած եմ հոսպիտալում, ունեմ երկու վերք: Տանից նամակ ստացա, նրանք գրում են, որ իմ որդիները շրջապատված են հոգատարությունքով և նրանց ցույց է տրվում օգնություն: Այդ նամակը բարձրացրեց իմ հոգեկան վիճակը, դրա համար շնորհակալություն եմ հայտնում և խոստանում, որ երբ լավանան վերբիրս, նորից կմեկնեմ ռազմաճակատ...»²:

¹ ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կարիքների արխիվ, ֆ. 266, գ. 5, թ. 7:

² «Սոցյալիզմ», 1943 թ. 21 սեպտեմբերի:

Քաղաքի պարտիական կազմակերպության և սովետական օրգանների ջանքերով Կիրովականում գործող հոսպիտալներում վիրավոր և հիվանդ մարտիկների ու հրամանատարների համար ստեղծված էին նորմալ պայմաններ՝ լուսավոր, գեղեցիկ ննջարաններ, սարքավորումով հարուստ կաբինետներ, կահավորված հանգստյան սենյակներ: Հոսպիտալները կոմպլեկտավորված էին մասնագիտ կադրերով: Կիրովականում կանայք ու աղջիկներն անձնվեր աշխատանք էին կատարում Սովետական Բանակի վիրավոր մարտիկներին խնամելու գործում: Քաղաքի համարյա բոլոր կուլեկտիվները վերցրել էին հոսպիտալների շփությունը: Այդ կուլեկտիվների ներկայացուցիչներն ամեն օր այցելում էին իրենց շփ պալատի վիրավոր մարտիկներին, նրանց համար տանում զանազան նվերներ՝ պրականություն, երաժշտական գործիքներ, մրգեր, կազմակերպում էին հանդիպումներ, հանգստի և զվարճության երեկոներ: Վիրավոր մարտիկներից շատերը պարտիական շրջկոմին, շրջսովետին և մամուլին ուղարկած բազմաթիվ նամակներում երախտագիտություն են հայտնում իրենց հոգատարությամբ շրջապատելու համար:

Կիրովականի աշխատավորները եղբայրական ռեսուրսիկաներից էվակուացված 400-ից ավելի ընտանիքների շրջապատել էին հոգատարությամբ: Տեղական կազմակերպություններն անում էին ամեն բան, ինչ որ հնարավոր էր պատերազմի տարիներին՝ նրանց բնակարանով, ասրուտտի միջոցով ապահովելու, երեխաների կրթությունը շարունակելու: Նրանց առողջությունը պահպանելու համար: Հայրենական պատերազմի հաղթանակից հետո, էվակուացված ընտանիքների մի ըզդալի մասը, աշխատանքի անցնելով արդյունաբերական ձեռնարկություններում, առողջապահության և լուսավորության հիմնարկներում, մնացին Կիրովականում և դարձան քաղաքի մշտական բնակիչներ:

Մեր փառապանծ Հայրենիքի ազատության ու անկախության համար սովետա-գերմանական ռազմաճակատներում ծավալված մարտական ահեղ դործողություններին ուսաների, ուկրաինացիներին, բելոռուսներին, թաթարներին և այլ ազգերի զավակներին հետ ուս-ուսի տված մասնակցում էին նաև հայ ժողովրդի զավակները: Պատերազմի ընթացքում հայ ռազմիկներին կարելի էր հանդիպել Սովետական Բանակի տարբեր տեսակի զորքերի շարքերում և բոլոր ռազմաճակատներում: Հայ ժողովրդի շատ զավակներ արյունահեղ մարտերում աչքի ընկան իրենց սխրագործություններով և անթառամ փառքով պսակեցին հայ ժողովրդի անունը¹:

«Հայ ժողովուրդը, — գրում էր «Պրավդան», — հաստատապես իր մարտական տեղն է զբաղեցրել իրենց անկախության և ազատության համար Սովետական Միության բոլոր ժողովուրդների միացած ընդհանուր պայքարում: Անվեհեր մարտիկներ՝ օդաչու Գաղազյանի, մայր Ապրեսյանի և հայ ժողովրդի ուրիշ շատ զավակների պանծալի անունները՝ մարտիկներ, որոնք հուշակվեցին Հայրենական պատերազմի ռազմաճակատներում իրենց ցուցարբերած անվեհերությանը և արիությանը, հայտնի են ամբողջ Սովետական Միությանը»²:

Հայ ժողովրդի, այդ թվում Կիրովականի զավակները հերոսարար կռվում էին Մոսկվայի, Լենինգրադի, Ստալինգրադի, Սևաստոպոլի պաշտպանության, ինչպես նաև Ուկրաինայի, Բելոռուսիայի և ղեմկրատական մի շարք երկրների ազատապրման համար մղված մարտերում:

¹ Օգտագործել ենք Մ. Աղաջանի, Ե. Խալեյանի «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության» աշխատության III պրտկը, որը լույս է տեսել 1959 թ. ՀՍՍՌ ԳԱ հրատարակչության մո:

² «Правда», 25 августа 1941 г.

Կիրովականցի էլեկտրատեխնիկ Մ. Գևորգյանը, ավարտելով սակրավորների դպրոցը, ստացավ կրտսեր լեյտենանտի կոչում: Հայրենական պատերազմի առաջին օրերից նա մասնակցեց գերմանական ֆաշիզմի դեմ մղվող մարտերին: Մ. Գևորգյանը Պսկովի—Նովոբորոդի ուղղութեամբ մղվող մարտերին ակտիվ մասնակցութեան ունենալու, թշնամու 16 տասնկերի ջախջախմանը մասնակցելու համար պարգևատրվեց «Արիութեան համար» մեդալով:

Կ. Սարգսյանը 1939 թվականին մեկնել է բանակ, մասնակցել Արևմտյան Ուկրաինայի ազատագրմանը և հետագայում՝ ֆիննական պատերազմին: Երբ սկսվեց Հայրենական պատերազմը, մայր Կ. Սարգսյանը գտնվում էր Լվովում: Նրա ստորաբաժանման մարտիկները հերոսաբար կռիւցին Հարավ-արևմտյան, Ստալինգրադի, Առաջին Ուկրաինական և Լենինգրադի ռազմաճակատներում, իսկ պատերազմի վերջին ամիսներին՝ Հեռավոր Արևելքում Մանջուրիայում ճապոնական զավթիչների դեմ մղված մարտերին: Մայր Կ. Սարգսյանը իր ակտիվ մասնակցութեան համար պարգևատրվեց Կարմիր Դրոշի, Կարմիր Աստղի երկու շքանշաններով և բազմաթիվ մեդալներով:

Երբ սկսվեց Հայրենական պատերազմը, կիրովականցի կապիտան Լ. Թաթյանը նշանակվեց զնդի շտաբի պետ: Այդ գունդը գտնվում էր Բեսարաբիայի Կապուլ բազարում: Մեր զորամասերը, այդ թվում նաև կապիտան Լ. Թաթյանի գլխավորած զորամասը, կենտրոնացված հուժկու հարվածներով դերմանացիներին ետ էին շարտում Պրուտ գետի մյուս ափը: Սրվիտական հրետանին խփում էր տանկերով, հրանոթներով և ավտոմեքենաներով բռնված պոնտոնային կամուրջներին, սրոնք օդն էին թռչում ֆաշիստ զինվորների հետ միասին: Այդպիսով արվելակվում էր թշնամու առաջխաղացումը: Օդեսան պաշարված էր: Նրա մատուցներում տեղի էին ունենում հերոսական մարտեր, Լ. Թաթյանը նշանակվել էր գնդի հրամանատար: Նրա ղեկավարած ստորաբաժանումները ռազմաճակատի զորքերի հետ հերոսաբար պաշտպանում էին Օդեսան:

կապիտան Լ. Թաթյանը իր հմուտ մարտական գործողությունների համար պարգևատրվել էր Կարմիր Դրոշի շքանշանով¹։ Լ. Թաթյանը Օդեսայի պաշտպանության մարտերում հերոսաբար զոհվեց։

Տանկային հրանոթի հրամանատար Ա. Մխիթարյանը Ա. տանկային գումարտակի կազմում իրեն ղրստորել է իրրե կարգապահ և խիզախ հրամանատար։ Հարավային ռազմաճակատում նովորուլակսովկա գյուղի համար մզվող մարտերում Ա. Մխիթարյանն իր տանկով ոչնչացրեց շորս դժօտ, հակատանկային 10 հրանոթ և մոտ 10 հակառակորդի զինվոր։ Դրա համար նա պարգևատրվեց Փառքի երրորդ աստիճանի շքանշանով։ Ա. Մխիթարյանը 1942 թվականի հոկտեմբերին վիրավորվեց, որից և կորցրեց մի ոտը²։

Հայրենական պատերազմի տարիներին Կովկասից հասել է Բեռլին Կիրովականի մեքենաշինական գործարանի ավազվարպետ, գվարդիայի կարմիրբանակային Յ. Զատիկյանը։ Նա իր անձնագրոհ գործողությունների համար պարգևատրվել է Փառքի երկրորդ աստիճանի երկու, երրորդ աստիճանի և Կարմիր Աստղի շքանշաններով, ինչպես նաև բազմաթիվ մեդալներով³։

Գվարդիայի կապիտան Ա. Եղիազարյանի մասին Աճ ղորամասի հրամանատար Լևինը գրում է.

«Թշնամու դեմ մղած բազմաթիվ մատերում Ա. Եղիազարյանը ցույց է տվել կայունություն, մարտը վարելու հմտություն, որի համար հրամանատարությունը նրան ներկայացրել է բարձր պարգևի»⁴։

¹ «Պրավդա», 1942 թ. 11 փետրվարի։

² ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կարիքների արխիվ, ֆ. 266, գ. 6, թ. 16 (տե՛ս փաստաթղթերը ոտացված ղորամասերից)։

³ Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կարիքների արխիվ, ֆ. 266, գ. 6, թ. 9։

⁴ Նույն տեղում։

ՀԿ(Բ)Պ Կիրովականի պարտիական շրջկոմի աշխատակից Գ. Մելքոնյանը ուղղման համար մեկնեց պատերազմի առաջին օրերին, իբրև քաղաշխատող: 1941 թվականի դեկտեմբերին զորային միավորման շարքերում՝ Կերչում առաջին անգամ դեսանտ իջավ, ուր վիրավորվեց: Բուժվելուց հետո Գ. Մելքոնյանը մասնակցեց Օրյոլ-Կուրսկի ուղղութեամբ և ապա Ռժևի տակ մղված մարտերին և կրկին վիրավորվեց՝

Տե՛ր միավորման ստորաբաժանումներից մեկում էր ծառայում ավագ լեյտենանտ Մ. Թումանյանը: Նա խնդրում է, որ իրեն ուղարկեն հետախուզության: Մուժն ընկնելուն պես Մ. Թումանյանը մի խումբ մարտիկների հետ գնում է հետախուզության: Նրանք խույս տալով հակառակորդի կրակից, ձախ թևից մոտենում են թշնամու դիրքերին: Հակառակորդի լայտերների լույսի օգնությամբ որոշում են նրանց հրանոթային և անօդաչուային կրակակետերը: Խիզախ հետախուզիչները վերադառնում և դեկուցում են հրամանատարությանը: Հաջորդ օրը մեր հրետանին ոչնչացնում է թշնամու ամրություններն ու կրակային կետերը և մեծ կորուստ պատճառում հակառակորդին: Ավագ լեյտենանտ Մ. Թումանյանի գլխավորած հետախուզական ջոկատը շուտով դարձավ զորային միավորման սիրելին: Հետախուզության ժամանակ մեծ հմտություն ցուցաբերելով՝ նա իր մարտական ընկերներով ավար է վերցնում երկու հրանոթ, երկու հարյուր հազար փամփուշտ և մեծ քանակությամբ հանդերձանք, ինչպես նաև ուղղմողաշտից հանում է 30-ից ավելի վիրավոր մարտիկների¹:

Հայրենիքի ազատության և անկախության համար մղված մարտերում հերոսաբար զոհվեցին Կիրովականի աշխատավորության ղավակներ՝ կրտսեր լեյտենանտ Ս. Ամիրխանյանը, սերժանտներ Վ. Կարապետյանը, Հ. Ղազարյանը, շարքայիններ Ժ. Ղամբարյանը, Վ. Գրիգորյանը, Ա. Պողոսյանը, Ռ. Աղատյանը և ուրիշներ:

¹ «Սոցարշավ», 1943 թ. 1 հուլիսի

Պատերազմի ռազմաճակատներում հերոսարար են կոչել Վ. Կոռյանը, Գ. Ռաֆայելյանը, Վ. Ղազարխեցյանը: Վերջինս երկու անգամ ծանր վիրավորվել է: Ռ. Ասլանյանը Բեռլինի գրավման մարտերին ակտիվ մասնակցելու համար պարգևատրվել է Կարմիր Աստղի շքանշանով:

Կիրովականցի տանկիստ Վ. Զալինյանն անցել է մարտական փառավոր ուղի: Մարտադաշտում, կովի թեժ պահին, հանկարծ ընդհատվում է կապը: Առաջ են շարժվում գերմանական «Վագր» տիպի տանկերը, իսկ դրանց հետևից դեպի մեր բլինդաժներն ու դռաներն է սողում թշնամու հեռակալը: Այդ պահին խիզախ հրամանատար Վ. Զալինյանն իր ստորաբաժանումով սեպածե խրվում է գերմանացիների դասավորության մեջ և հմուտ մանևրով ջախջախում ու փախուստի է մատնում հիսլերականներին: Երոնք մարտադաշտում թողնում են ութ տանկ և մի քանի տասնյակ ֆաշիստ զինվորների դիակներ: Իր կատարած մի շարք խիզախ գործողությունների համար գվարդիայի մայր Վ. Զալինյանը պարգևատրվում է Կարմիր Դրոշի և Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշաններով¹:

Կիրովականցիներ Ա. Չոբանյանը, Վ. Կոստանյանը պարգևատրվել են «Կովկասի պաշտպանության համար», Ա. Մաթևոսյանը՝ Բեռլինի գրավման, Ա. Մելքոնյանը՝ «Աևաստուպոլի պաշտպանության համար», ծ ո վ ա յ ի ն Ս. Ղամբարյանը՝ «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալներով: Տանկիստ Վ. Ղամբարյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով: Օդաչու Մ. Հովհաննիսյանը, տանկիստ Արծ. Պողոսյանը, զնդայրորդներ Ա. Զոհրաբյանը և Ա. Հարությունյանը պարգևատրվել են բազմաթիվ շքանշաններով և մեդալներով: Վերջինս մասնակցել է նաև Արևելքում Ճասպոնիայի դեմ մղված մարտերին:

¹ «Սոցյալիզմ», 1944 թ. 7 նոյեմբերի, տե՛ս գվարդիայի զնգապետ Կոտովի հոդվածը, ստացված գործող բանակից:



Տպարակի կրտսեկիտսեկան աշխատանքի բլիզարան

Մոսկվայի, Լենինգրադի, Ստալինգրադի և Կովկասի պաշտպանության համար մղված մարտերում Սևծովյան նավատորմում, Ղրիմի ինչպես նաև Սևաստոպոլի և Կերչի հատվածներում, ՍՍՌՄ բազմազգ ժողովուրդների զավակների հետ կողք-կողքի, հերոսաբար կռվում էին քիմիագործ բանվորներ Մ. Ղուկասյանը, Ա. Հովհաննիսյանը, Բ. Առաքելյանը, Շ. Աղարյանը և շատ ուրիշներ:

Գործարանի պարտըյուրոյի նախկին քարտուղար Բ. Սարգըսյանը Կարմիր Բանակի հերոսական միավորումների շարքում անցել է Բեսարաբիա, Ռումինիա, Հունգարիա, Ալստրիա, Զեխոսլովակիա, ապա Գերմանիայի Դրեզդեն քաղաքը: Նա Հայրենական պատերազմին մասնակցել է մինչև 1945 թվականի մայիսի 9-ը՝ Հաղթանակի օրը¹:

Զոդոդ բանվոր Ա. Հովհաննիսյանը կռվել է Մերձբալթյան ապամաճակատում: Նա մասնակցել է Խարկով, Վորոնեժ, Բելգրադ քաղաքների ազատագրման մարտերին և ծանր վիրավորվել: Հոսպիտալում բուժվելուց հետո Ա. Հովհաննիսյանը մեկնել է Արևելք, մասնակցել ճապոնական զավթիչների դեմ մղվող մարտերին: Այդ օրերին նրա ջոկատին հանձնարարվում է գետի վրա կամուրջ գցել: Իր ջոկատով նա կատարում է մարտական առաջադրանքը՝ ապահովելով միավորման անցումը: Դրա համար Ա. Հովհաննիսյանը պարգևատրվում է Կարմիր Աստղի շքանշանով²:

Իրենց մարտական առաջադրանքը կատարելիս հերոսաբար զոհվեցին գործարանի պարտկուժի քարտուղար Պ. Վարդանյանը, հայր և որդի Մ. և Ա. Սամսոնյանները, Ա. Հովհաննիսյանը, Մ. Առաքելյանը, Ա. Մուրադյանը, Ա. Առաքելյանը, է. Մելիքջյանը և ուրիշներ:

Կիրովականի № 6 դպրոցի X դասարանի աշակերտ Սուրեն Ավետիսյանը 18 տարեկան հասակում իբրև կամավոր

¹ ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կարիքների արխիվ, ֆ. 266, գ. 6, թ. 13:

² Նույն տեղում, թ. 15:

մեկնեց բանակ: Մասնակցելով թշնամու դեմ մղվող հերոսական մարտերին, Ստալինգրադից հասել է Բեռլին: Գվարդիական հետախույզ Ս. Ավետիսյանը մարտական առաջադրանքը օրինակելիորեն կատարելու՝ թշնամու բողարկված 2 տանկը և մի մարտկոցը հայտնաբերելու համար պարգևատրվում է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով: Թշնամու կողմից ականապատված դաշտը ականագերծելու և մեր ստորաբաժանումների առաջ շարժվելը անվտանգ դարձնելու համար նա պարգևատրվում է Կարմիր Աստղի շքանշանով, ինչպես նաև բազմաթիվ մեդալներով: Ս. Ավետիսյանը իր հարազատներին գրում է. «Սիրելի հարազատներ, գնում ենք առաջ, արդեն գերմանական հողում ենք և շուտով կլինենք Բեռլինում: Գերմանական հողը մեզ հարկավոր չէ, մենք գնում ենք դատելու ֆաշիստներին, նրանց, որոնք ավերեցին մեր երկրի քաղաքներն ու գյուղերը, գերության տարան մեր կուրայներին ու բույրերին: Սիրելիներս, երգվում եմ Ձեր առաջ, որ ես հայրենի օջախ չեմ վերադառնա մինչև երկրի վրայից չվերացնենք ֆաշիզմին»¹:

Բեռլինում մղվող համառ մարտերում հերոսաբար ընկավ Լենինյան կոմերիտմիության սան Սուրեն Ավետիսյանը:

Այսպիսով, Հայրենական պատերազմի տարիներին ինչպես ազգային, այնպես էլ թիկունքում մեր ամբողջ ժողովրդի հետ միասին հերոսական աշխատանք կատարեցին: Եւ կիրովականի աշխատավորները: Նրանք պատերազմի այդ ծանր տարիներին, հաղթահարելով մեծ դժվարություններ, պատվով կատարեցին իրենց առաջադրված բոլոր պահանջները, աշխատեցին «ամեն ինչ ազգայնացնելու, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով, իրենց լուսնի մայրիկի դերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ տարված հաղթանակում:

¹ ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտ 2ՊՊ կարիքների արխիվ, ֆ. 266, գ. 6, ք. 9:

3. ԿԻՐՈՎԱԿԱՆՐ ՀԵՏՊԱՏԵՐԱԳՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(1945—1960)

Սովետական երկրի բազմազգ ժողովուրդը, ՍՄԿՊ ղեկավարությամբ հաղթականորեն ավաբանելով Հայրենական պատերազմը, ձեռնամուխ եղավ խաղաղ շինարարական աշխատանքի: Զորքերը հնգամյակում վերականգնվեցին պատերազմում ավերված գյուղերն ու բնակավայրերը, արդյունաբերությունը հասավ նախապատերազմյան մակարդակին, ապահովվեց ծանր արդյունաբերության և երկաթուղային տրանսպորտի զարգացումը, առանց սրի անհնար էր արագորեն և հաջողությամբ վերականգնել ու զարգացնել ՍՍՌՄ-ի ամբողջ ժողովրդական տնտեսությունը, ապահովել հետագա տեխնիկական պրոգրեսը:

Զորքերը հնգամյակում միաժամանակ վերականգնվեց տուժած գյուղատնտեսությունը և զգալի շափով գերազանցվեց 1940 թվականի գյուղատնտեսության արտադրանքի մակարդակը: Այդ տարիներին գյուղատնտեսության մեջ արմատավորվեցին Հայրենական և արևմտաօգնության ագրոտեխնիկայի ու գիտության մի շարք կարևոր նվաճումները, ապահովվեց կոլանտեսականների նյութական ու կուլտուրական կյանքի հետագա վերելքը:

Սովետական ժողովուրդը համառ ու հերոսական աշխատանքով ժողովրդական տնտեսության հնգամյա պլանը կա-

տարեց շորս տարի երեք ամսում: 1950 թվականին, 1940 թվականի համեմատությամբ՝ արդյունաբերության համախառն արտադրանքն աճեց 70 տոկոսով:

Մեր երկրի բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների անձնվեր աշխատանքի շնորհիվ ՍՍՌՄ ժողովրդական անտեսության հինգերորդ հնգամյա պլանը արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալի գծով կատարվեց 1955 թվականի մայիսի 1-ին, այսինքն՝ շորս տարի շորս ամսում:

Հետպատերազմյան տարիներին Հայաստանի աշխատավորների ուշադրության կենտրոնում գրվեցին քիմիական և էլեկտրաարդյունաբերության, գունավոր մետալուրգիայի, լեռնահանքային և մեքենաշինական արդյունաբերության, ինչպես նաև սոցիալիստական ինդուստրիայի այլ ձեռնարկությունների կարողությունները ընդարձակելու և տասնյակ նոր խոշոր ձեռնարկություններ կառուցելու հարցերը, Սևանի լճային և Գյումրու ճիգեր էլեկտրակայանները և Երևան—Ախտա երկաթուղին շահագործման հանձնելու խնդիրները:

Ռեսպուբլիկայի աշխատավորները, հետևելով մեր երկրի առաջավոր ձեռնարկությունների բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների օրինակին՝ հնգամյակը շորս տարում կատարելու համար ծավալեցին սոցիալիստական մրցություն և արագացնելով ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացման տեմպերը՝ 1954 թվականին գերազանցեցին հնգամյա պլանով նախատեսված 1955 թվականի մակարդակը: 1954 թվականին Հայկական ՍՍՌ արդյունաբերությունը յուրաքանչյուր շորս օրում այնքան արտադրանք էր տալիս, որքան Հայաստանի արդյունաբերությունը տալիս էր 1913 թվականին¹:

Արտադրական ձեռնարկություններին, կոլտնտեսություններին և սովխոզներին է՛լ ավելի կոնկրետ օգնություն ցույց

¹ «Պարտիական կյանք», 24Պ Կենտկոմի ամսագիր, 1955 թ. հունվար, № 1, էջ 37:

տալու նպատակով 1952 թվականի հունվարին Հայկական ՍՍՌ-ում ստեղծվեցին Երևանի, Լենինականի և Կիրովականի օկրուգները, որոնք գոյություն ունեցան մինչև 1953 թվականի մայիսը: Այդ վարչական միավորներին համապատասխան՝ Երևանում, Լենինականում և Կիրովականում ստեղծվեցին պարտիական ու սովետական օրգաններ: Սակայն կարճ ժամանակից հետո այդ օրգանները լիկվիդացվեցին, որովհետև սկսվեց Կիրովական վարչական բաժանման այդ օրգաններն իրենց շարգարացրին:

Հինգերորդ հնգամյակի վերջում, 1955 թվականին, Հայկական ՍՍՌ արդյունաբերության համախառն արտադրանքի աճը, 1950 թվականի համեմատությամբ, հասավ 189 տոկոսի, իսկ 1946 թվականի համեմատությամբ՝ 458 տոկոսի: Ռեսպուբլիկայի արդյունաբերության մեջ աշխատող բանվորների քանակը 1940 թվականին կազմում էր 65123 մարդ, 1955 թվականին՝ 94551 մարդ: իսկ 1959 թվականին՝ ավելի քան 110 հազար մարդ: Հատուկ ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ հետպատերազմյան 12 տարիներին (1946—1957 թթ.) Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության մեջ ներդրվեց 7,7 միլիարդ ռուբլի, այսինքն՝ 2,4 անգամ՝ ավելի, քան ներդրվել էր մինչպատերազմյան 20 տարիների ընթացքում:

Հետպատերազմյան տարիներին Հայաստանում խոշոր վերելք ապրեց մեքենաշինությունը: Նրա արտադրանքը 1940—1957 թվականների ընթացքում ավելացավ 80 անգամ¹: Երևանում, Լենինականում, Կիրովականում, Հոկտեմբերյանում ստեղծվեցին նոր հաստոցաշինական գործարաններ: Բացի այդ, կազմակերպվեցին կոմպրեսորների, հիդրոտուրբինների, քարհատ, շաղափող և ծակող ինչպիսի նաև ավտոպահեստային մասերի գործարաններ:

Գունավոր մետաղների, սինթետիկ կաուչուկի, մեկուսիչ նյութերի արտադրությունը պայմաններ ստեղծեց սկսվելու

1 Ա. Ջրադացյաևյան, «Պատմությանսիրտիս հանդես», 1959 թ., № 1, էջ 18:

2 Նայն տեղում, էջ 19:

կայում էլեկտրատեխնիկական արդյունաբերության և սարքաշինության արագ զարգացման համար:

Հետպատերազմյան տարիներին Հայաստանում արագ թափով զարգացավ նաև շինանյութերի, սննդի և թեթև արդյունաբերությունը, որոնց արտադրանքն ուղարկվում է Սովետական Միության տարբեր ռեսպուբլիկաներ և արտասահմանյան մի շարք երկրներ:

Սովետական Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը 1958 թվականին, համեմատած 1913 թվականի հետ, աճեց մոտ 54 անգամ, իսկ 1940 թվականի համեմատությամբ՝ մոտ 6 անգամ: Այս հաջողություններն ամենամեծ չափով արդյունք են Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատող բարձրորակ կադրերի, այդ թվում՝ հինգ հազար ինժեներներ և շորս հազար հատուկ մասնագիտական միջնակարգ կրթություն ունեցող տեխնիկներին:

Ռեսպուբլիկայի արդյունաբերության վերելքի համար խոշոր նշանակություն ունեցավ արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումը, որը կատարվեց ՍՄԿՊ Կենտկոմի 1957 թվականի Փետրվարյան պլենումի որոշման և ՍՍՌՄ Գերագույն Սովետի 7-րդ սեսիայում Արդյունաբերության և շինարարության կառավարման կազմակերպումն է՛լ ավելի կատարելագործելու մասին օրենքի ընդունումով: Այդ միջոցառումը բարձրացրեց ռեսպուբլիկաների դերն ու նախաձեռնությունը տնտեսության ղեկավարման, ինչպես նաև կուլտուրական շինարարության բնագավառում, օգնեց հաջողությամբ կատարելու 1957 և 1958 թվականների առաջադրանքը: Մեր ռեսպուբլիկայի Ժողովրդական տնտեսության խորհրդին ենթակա արդյունաբերական ձեռնարկությունները 1958 թվականի տարեկան պլանը կատարեցին գեկտեմբերի 16-ին՝ 103,6 տոկոսով: 1957 թվականի նկատմամբ արտադրանքի աճը կազմեց 12,1 տոկոս¹: Ավելի արագ տեմպե-

¹ Հայկական ՍՍՐ Ժողովրդի տնտեսության, «Հայաստանի արդյունաբերությունը» տեխնիկա-տնտեսական ընդհանուր, 1959 թ., հունվար, № 1, էջ 5:

րով աճեցին արդյունաբերութեան այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են հաստոցաշինութեանը, էլեկտրատեխնիկական, քիմիական, շինանյութերի արդյունաբերութեանը, սարքաշինութեանը և գունավոր մետալուրգիան:

Կառավարման նոր ձևը հնարավորութեան ստեղծեց ավելի լավ օգտագործելու տնտեսութեան ներքին ռեզերվները, ավելի արագ ձևով ու ավելի նպատակահարմար էին կատարվում շենքերի ու սարքավորումների ռացիոնալ օգտագործումը, արտադրութեան մասնագիտացումը, կոտպերացումը և նոր տեխնիկայի արմատավորումը: Խիստ կերպով կրճատվեց ես մնացող ձեռնարկութեանների թիվը: Աշխատանքի արտադրողականութեան բարձրացման առաջադրանքը կատարվեց 102,3 տոկոսով և տրվեց 7,7 տոկոս աճ: 1958 թվականին շահույթները, 1957 թվականի համեմատությամբ, աճեցին 27 տոկոսով, Ժողտնտխորհի ձեռնարկութեանները 1958 թվականին յուրացրին ավելի քան 75 նոր տեսակի արտադրանքի արտադրութեանը:

Հայաստանի արդյունաբերութեանն իր մեջ միավորում է ավելի քան 500 խոշոր ձեռնարկութեան, որոնք հիմնականում էներգետիկայի, գունավոր մետալուրգիայի, քիմիական արդյունաբերութեան, մեքենաշինութեան, մասնավորապես հաստոցաշինութեան, էլեկտրատեխնիկական, շինանյութերի, փայտամշակման և թեթև արդյունաբերութեան ձեռնարկութեաններ են: Սրանք հագեցված են ժամանակակից տեխնիկայով: Ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկութեաններում արտադրանքի աճման շնորհիվ ընդարձակվում են տնտեսական կապերը ՍՍՌՄ բոլոր տնտեսական շրջանների, ինչպիսնաև արտասահմանյան երկրների հետ: Ռեսպուբլիկան մեր հրկրի մյուս տնտեսական շրջաններն է արտահանում մեծ քանակությամբ գունավոր մետաղներ, քիմիական և ռետինատեխնիկական ապրանքներ, հանքային պարարտանյութեր, շինանյութեր, դանազան էլեկտրական մեքենաներ ու սարքավորումներ, մետաղահատ հաստոցներ, սարքեր, ավտոպահեստամասեր, կոշիկեղեն, բրդյա, բամբակյա, մետաքսյա գործ-

վածքներ, պատրաստի հագուստ, զինի, կոնյակ, մրգի պահածոներ, ծխախոտ և բազմաթիվ այլ ապրանքներ:

Տարեցտարի աճում է Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններից արտահանվող ապրանքների ասորտիմենտը՝ Սովետական Հայաստանը ապրանք է արտահանում արտասահմանյան 31 երկրներ, այդ թվում՝ Չինաստան, Չխոսսլովակիա, Լեհաստան, Հունգարիա, Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկա և Ժողովրդական դեմոկրատիայի մյուս երկրները՝ Ինչուես նաև Թուրքիա, Իրան, Միացյալ Արաբական Ռեսպուբլիկա, Լիբանան, Հնդկաստան, Բիրմա, Ինդոնեզիա, Ցեյլոն, Ֆինլանդիա, Բելգիա, Արգենտինա, Մեքսիկա և այլն: Սովետական Հայաստանը այդ երկրներն է արտահանում գեներատորներ, արանսֆորմատորներ, շարժական էլեկտրակայաններ, էլեկտրաշարժիչներ, պոմպեր, ավտոմոբիլային պահեստամասեր, էլեկտրաշարժիչ սարքեր, ժամացույցներ, ալյումին, պղնձարջասուր, կարբիդ, նաիրիտ, զինի, կոնյակ և այլն:

Սովետական Հայաստանի մի շարք գործարաններ ու ֆաբրիկաներ, մասնավորապես մեքենաշինական, էլեկտրատեխնիկական, սարքաշինության, զինու, կոնյակի և ծխախոտի արդյունաբերական ձեռնարկություններ, մասնակցեցին 1958 թվականի Բրյուսելի համաշխարհային և Քարուլում կազմակերպված ցուցահանդեսներին, ինչպես նաև Օսակայի, Լայպցիգի, Վիեննայի, Պուլանի, Պլովդիվի, Ջագրերի, Իգմիրի, Դամասկոսի և Թունիսի տոնավաճառներին¹: Հայաստանի արդյունաբերությունն այժմ իր արտադրանքի լավագույն նմուշներով մասնակցում է Մոսկվայի Համամիութենական արդյունաբերական ցուցահանդեսին:

¹ Աշխատության այս ենթադրույթով օգտագործել ենք Ս. Հ. Մովսիսյանի «Հայաստանի արդյունաբերության զարգացման հասանկարները և Ժողովուրդի խնդիրները» 1959 թ. Հայպետհրատի կողմից լույս բնծայված աշխատությանը:

Բիմիական արդյունաբերություն: *Չորրորդ հնգամյակում վերականգնվեց ՍՍՌՄ ծանր արդյունաբերությունը, այդ թվում նաև քիմիական արդյունաբերությունը, որի աշխատողները կարճ ժամանակամիջոցում ամբողջովին վերականգնեցին քիմիական արդյունաբերության բոլոր ավերված ձեռնարկությունները¹: 1950—1960 թվականներին քիմիական արդյունաբերությունը խոշոր վերելք ապրեց ինչպես ՍՍՌՄ-ում, այնպես էլ ազգային ուսպուրլիկաներում: Հայկական ՍՍՌ-ում եղած էլեկտրաէներգիայի բազայի վրա հետպատերազմյան տարիներին ավելացավ Կիրովականում՝ աղտոտային, Ալավերդում՝ ֆոսֆորային սպարատան յուլիերի, ծմբաթթվի հատուկ արտադրությունը: Երևանում շահագործման հանձնվեցին ավտոգոզերի, «Պոլիվինիլացետատի» և մի քանի այլ քիմիական գործարաններ: Այսպիսով՝ հետպատերազմյան տարիներին Հայկական ՍՍՌ-ում կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին քիմիական արդյունաբերության բազմաթիվ նոր գործարաններ, բացվեցին դիտահետազոտական ինստիտուտներ, ընդարձակվեցին եղած ձեռնարկությունները, նրանցում ներդրվեցին տեխնիկայի վերջին խոսքով արտադրված նոր սարքավորումներ: Աճեց տեխնիկական բարձրորակ ինտելիգենցիայի թիվը արտադրության մեջ, բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը և խոշոր շափով աճեց ուսպուրլիկայի քիմիական արդյունաբերական ձեռնարկությունների համախառն արտադրանքը:*

Հայկական ՍՍՌ քիմիական արդյունաբերության մեջ զգալի զարգացում ստացավ սինթետիկ կաուչուկի, ավտոգոզերի,

¹ Н. Н. Калмиков и С. А. Вайсбейн, «Эконом. сои. химич. промшн.», Москва, 1955, стр. 71.

կառուտիկ սողայի և հանքային պարարտանյութերի արտադրությունը¹։

Հայկական ՍՍՌ քիմիական արդյունաբերությունը երկրին տալիս է այնպիսի արժեքավոր նյութեր, ինչպիսիք են՝ սինթետիկ կաուչուկը, կարբիդը, կառուտիկ սողան, ամոնիակը, ավտոդողերը, ծծմբաթթուն, քացախաթթուն, աղաթթուն, ազոտաթթուն, հանքային պարարտանյութերը, ներկերը, վինիլացետատը, պլաստմասսան, ռետինա-տեխնիկական իրերը և այլ քիմիկատներ։

Ժողովրդական տնտեսության հետագա վերելքն ապահովելու և բնակչության օրեցօր աճող պահանջմունքները բավարարելու համար պարտիան նոր խնդիրներ դրեց քիմիական արդյունաբերության բնագավառում աշխատողների առաջ։

ՄՄԿՊ Կենտկոմի 1958 թվականի Մայիսյան պլենումը ն. Ս. Խրուշչովի ղեկուցման առթիվ նշեց, որ «Պարտիան և Սովետական կառավարությունը մեծ ուշադրություն են նվիրել քիմիական արդյունաբերության զարգացմանը։ Ներկայումս Սովետական Միությունը քիմիական արտադրանքի արտադրության ծավալով աշխարհում գրավում է երկրորդ տեղը։ Սակայն քիմիական արդյունաբերության, առանձնապես սինթետիկ նյութերի արտադրության զույլություն ունեցող մակարդակը և զարգացման տեմպերը դեռևս չեն բավարարում ժողովրդական տնտեսության աճած պահանջները։ Անբավարար ծավալով են արտադրվում պլաստմասսան, սինթետիկ կաուչուկը, արհեստական և սինթետիկ թելը, հանքային պարարտանյութերը և քիմիական արտադրանքի որոշ այլ տեսակներ²։

¹ Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և Վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ 1946—1950 թվականների շրջանի (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», 1951 թ. հունվարի 13։

² «Սովետական Հայաստան», 1958 թ. 10 մայիսի։

Մեր երկրում ծանր արգյունարերութեան հարածուն վերելքի, գիտութեան և տեխնիկայի բնագավառում ձեռք բերված խոշորագույն նվաճումների հիման վրա ՍՄԿՊ Կենտկոմի Մալխոյան պրենումը խնդիր դրեց՝ ամենաարագ անակերով դարգացնել բիմիական արգյունարերութեանը, որը նոր և լայն հնարավորութեաններ կատեղծի ժողովրդական անասութեան բազմաթիվ ճյուղերի դարգացման, ինչպէս նաև բնակչութեան պահանջմունքները բավարարելու համար: ՍՄԿՊ Կենտկոմի Մալխոյան պրենումը բնգունեց բիմիական արգյունարերութեան դարգացման խոշոր ծրագիր, որի իրականացումը համաժողովրդական գործ է դարձել: Ըստ այդ որոշման բիմիական արգյունարերութեանն արագ կերպով դարգանալու է նաև ազգային սեպտուբրիկաներում, այդ թվում՝ Հայկական ՍՍԽ-ում:

* *
*

1945 թվականի մայիսին Ա. Մյասնիկյանի անվան բիմիական գործարանի կուլեկտիվը, քննարկելով Մակեևկայի մետալուրգիական գործարանի բանվորների դիմումը, մտաւ Համամիութենական սոցիալիստական մրցութեան մեջ և մրցման հրավիրեց Երևանի կարբիդի և Ալավերդու բիմիական գործարանների կուլեկտիվներին: 1946 թվականի առաջին կիսամյակում ամփոփվեցին այդ մրցութեան արգյունքները. առաջնութեանը զբաղեց Կիրովականի բիմիական գործարանի կուլեկտիվը, որը 1946 թվականի վեցամսյա պլանը կատարեց 10-ի սուկոսով, ավելց էլեկտրաէներգիայի 0,8 սուկոսի խնայողութեան և զրա համար էլ ստացավ ՀԱՄԿԽ-ի և ՍՍԽՄ Քիմիական արգյունարերութեան մինիստրութեան Փոխանցիկ կարմիր դրոշմը¹:

¹ Ա. Մյասնիկյանի անվան բիմիական գործարանի արհմիութեան գործարանային կոմիտեի գործերում անձ սոցմրցութեան ամփոփումները, Գ. 15, թ. 19:

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսությանը պարարտանյութեր մատակարարելու նպատակով 1948—50 թվականներին քիմիական գործարանում կատարվեցին շինարարական ու մոնտաժային խոշոր աշխատանքներ և շահագործման նախապատրաստվեցին մի շարք նոր ցեխեր: Նորակառույց ազոտային խմբի ցեխերի գործարկման նախօրյակին ՍՍՌՄ Քիմիական արդյունաբերության մինիստրի 1950 թվականի հուլիսի 21-ի № 322 հրամանով միացվեցին թերմիկական և ազոտային ցեխերը, և գործարանն անվանվեց Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատ¹:

1951 թվականի կեսերին ավարտվեցին այդ նորակառույց ցեխերի թե՛ շինարարական և թե՛ մոնտաժային աշխատանքները: Դեռևս 1950 թվականին շահագործման էր հանձնվել գոլորշու ցեխը, իսկ 1951 թվականի հոկտեմբերին շարք մըտան Ա՝ № 5, 3, 1 և մի շարք այլ օժանդակ ցեխեր: ՍՍՌՄ Քիմիական արդյունաբերության մինիստրությանը և Ազոտային արդյունաբերության գլխավոր վարչությանը նշեցին վերոհիշյալ նորակառույց ցեխերի շինարարության և մոնտաժավորման աշխատանքներում բանվորների ու ինժեներատեխնիկական աշխատողների անձնուրաց աշխատանքը: Այդ կապակցությամբ բազմաթիվ աշխատողներ պարգևատրվեցին: Բայց կոմբինատի կոլեկտիվը չկարողացավ կատարել 1950 թվականի տարեկան պլանը: Դրա համար էլ 1951 թվականի մարտին կայացած ՀԿ(բ)Պ XV համագումարը նշեց, որ ռեսպուբլիկայում քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների պլանի թերակատարման հիմնական պատճառը Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի անհամաչափ աշխատանքն է:

Կոմբինատի ղեկավարությունը չկարողացավ բավարար հմտություն ցուցաբերել արտադրական պրոցեսը կազմակերպելու գործում, երբ կոմբինատին անսահմանափակ էներգիա

¹ Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի օրիսիվ, գ. 15, թ. 7, տե՛ս ՍՍՌՄ Քիմիական արդյունաբերության մինիստրի հրամանը:

էր մատակարարվում, գործարանը լրիվ շէր ստանում Հայ-
էներգոյի կողմից բաց թողնվող էլեկտրաէներգիան: Միաժա-
մանակ կոմբինատը, ունենալով բոլոր հնարավորություն-
ները, չկատարեց ցիսնամիդի և նրանից մշակվող այլ նյու-
թերի արտադրության պլանը¹:

Կոմբինատի կոլեկտիվը, վերակառուցելով իր աշխատանք-
ները ՀԿ(բ)Պ համագումարի որոշումների սգով և 1951 թվա-
կանին ավարտելով մի շարք ցեխերի շինարարական աշխա-
տանքները, 1952 տնտեսական տարվա պլանները կատարեց
105,7 տոկոսով, տալով 5.242 հազար կիլովատամ էլեկտրա-
էներգիայի խնայողություն: Այդ կապակցությամբ կոմբի-
նատն արժանացավ ՍՍՌՄ Քիմիակա արդյունաբերության
մինիստրության և արհմիության Կենտկոմի առաջին կարգի
մրցանակին²:

1952 թվականի երրորդ համասցակում սոցիալիստական
մրցության մեջ հաղթող ճանաչվելու և առաջին կարգի մրց-
ցանակի արժանանալու համար կոմբինատի կոլեկտիվը ստա-
ցավ ՍՍՌՄ Քիմիական արդյունաբերության մինիստրության
և ՀԱՄԿԽ-ի Փոխանցիկ կարմիր դրոշը: Ստանալով Փոխանցիկ
կարմիր դրոշը, կոմբինատի աշխատողները մրցության մեջ
մտան Վրացական ՍՍՌ Ռուսթավիի քիմիագործների հետ՝
հինգերորդ հնգամյակի երկրորդ տարվա պլանները ժամկե-
տից շուտ կատարելու համար:

Քիմիական արդյունաբերության մեջ երկարամյա աշխա-
տողների համար Սովետական կառավարության կողմից սահ-
մանված միանվագ վարձատրության կապակցությամբ կոմ-
բինատի բանվոր-ծառայողները 1950 թվականին ստացան
800 հազար, 1953 թվականին՝ ավելի քան մեկ միլիոն, 1959
թվականին՝ մոտ մեկուկես միլիոն ռուբլի միանվագ վար-

¹ Գ. ր. Հ ար ու թ յ ու ն յ ա ն, Հաշվետու ղեկուցում Հայաստանի
Կ(բ)Պ 15-րդ համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատան-
քի մասին, Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 19—20:

² Ա. Մյանսիկյանի անվան քիմիական կոմբինատի արխիվ, դ. 36,
թերթ 18:

ձատրություն¹: Միաժամանակ ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1953 թվականի նոյեմբերի 10-ի Հրամանագրով երկրի քիմիական արդյունաբերության ձեռնարկություններում երկարամյա և անբասիր ծառայության համար պարգևատրվեց բանվորների մի մեծ խումբ: Կիրովականի քիմիական կոմբինատի ցիանամիդի ցեխից Մ. Գրիգորյանը, կարբիդի ցեխի բրիգադավար Ք. Մանուկյանը, էլեկտրոդի ցեխի աղացող Բ. Ղազարյանը և № 27 ցեխի ապարատավար Ա. Մարտիրոսյանը պարգևատրվեցին Լենինի շքանշանով: ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1954 թվականի նոյեմբերի 5-ի Հրամանագրով՝ կարբիդի ցեխից Ա. Ափինյանը, մեխանիկ Ա. Առաքելյանը, բրիգադավար Վ. Գարշինյանը, № 1 ցեխի վարպետ Ա. Լեոնյանը, № 2 ցեխի զոդող Ա. Մալումյանը, բրիգադավար Մ. Քաղեոսյանը և վարպետ Ռ. Ֆեոֆանովը պարգևատրվեցին Լենինի շքանշանով, 17 մարդ՝ Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով, 31 մարդ՝ «Աշխատանքային արիության համար» և 21 մարդ՝ «Աշխատանքային գերազանցության համար» մեդալներով²:

Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի կոլեկտիվի ներկայացուցիչներն այցելեցին Ռուսթավի քիմիական գործարանը՝ մրցույթյան 1955 թվականի արդյունքներն ամփոփելու համար: Հաղթող ճանաչվեց Կիրովականի քիմիական կոմբինատի կոլեկտիվը:

Կոմբինատի բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները 1955 թվականի տարեկան համախառն արտադրանքի պլանը կատարեցին դեկտեմբերի 14-ին և տվեցին մի

¹ Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատ. Բվերը տե՛ս պլանֆինբանում:

² Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի կապերի բաժնում տե՛ս պարգևատրվածների գործը:

քանի միլիոն ուրբու լրացուցիչ արտադրանք, այդ թվում կիր, կարբիդ, քիմիկատներ և այլ արտադրանք¹։

Այդ կապակցությամբ ՀԿՊ 18-րդ համագումարը (1956 թ.) նշեց, որ Կիրավախանի քիմիական կոմբինատն արտադրութեան տեխնոլոգիական պրոցեսները կատարելագործելու, հումքն ու նյութերը խնայողաբար ծախսելու շնորհիվ զգալիորեն ավելացրել է հանքային պարարտանյութերի արտադրանքը և 1955 թվականին տնտեսել մոտ 7 միլիոն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա²։

Չնայած այդ հաջողություններին, կոմբինատում դեռևս գոյություն ունեին մի շարք թերություններ։ Կարբիդի ցեխում սպրանքային կարբիդի ջարգման ու ծրարման աշխատանքները կատարվում էին անհամաչափ։ Եթե ամսվա առաջին տասնօրյակում պլանը կատարվում էր 20—25 տոկոսով, ապա երրորդ տասնօրյակում այդ ցուցանիշները հասնում էին 50—60 տոկոսի։ Արդյունքը չինում էր այն, որ երրորդ տասնօրյակում արտադրական մեկ միավորի վրա ավելի միջոցներ էին ներդրվում, քան առաջին տասնօրյակում, սարքավորումն օգտագործվում էր գերծանրաբեռնվածությամբ։ Կոմբինատին մեծ վնասներ էին պատճառում պատրաստի արտադրանքը ժամանակին չարտահանելը, խոտանի թողարկումը, արտադրանքի տեսակայնության խախտումը, մեքենաների և սարքավորումների կյանքի տեղումնային կրճատումը, վարչական ապարատի հաստիքների ուռճացումը, ինչպես նաև երկաթուղու կամ ավտոտրանսպորտի անկանոն աշխատանքը։

Կոմբինատի բանվոր-ծառայողները, պարտիական կազմակերպության ղեկավարությունում հետևողական պայքար ծա-

¹ Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի արխիվ, տե'ս արհմիությունից գործարանային կոմիտեի 1954 թ. հունվարի 20-ից մինչև 1955 թ. դեկտեմբերի 26-ը ընկած ժամանակաշրջանի հաշվետու գեկուցումը արհմիության կազմակերպության 5-րդ կոնֆերանսում։

² Ս. Թ ո վ մ ա ս յ ա ն , ՀԿՊ Կենտկոմի հաշվետու գեկուցումը ՀԿՊ 18-րդ համագումարին, Երևան, 1956 թ., էջ 23—24։

վալիելով Հոկտեմբերյան Մեծ սեույցուցիայի 40-ամյակի առթիվ, սոցիալիստական մրցությամբ ստանձնած պարտավորությունների կատարման գործում հասան զգալի հաջողությունների: Ամփոփելով արդյունարևրական ձեռնարկությունների, շինարարական և առևտրական կազմակերպությունների 1957 թվականի երկրորդ եռամսյակի սոցիալիստական մրցության արդյունքները, Կիրովականի քաղաքային Սովետի գործկոմին կից ժյուրին որոշեց քաղաքային Սովետի գործկոմի և ՀԿՊ Կիրովականի քաղաքային կոմիտեի Փոխանցիկ կարմիր զրոշը արդյունաբերական ձեռնարկությունների առաջին խմբից հանձնել Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կամրինատի կոլեկտիվին, որը 1957 թվականի երկրորդ եռամսյակի համախառն արտադրանքի սլանը կատարել էր 103 տոկոսով, ապահովել ասորտիմենտի առաջադրանքի կատարումը, աշխատանքի արտադրողականությունը բարձրացրել 3,2 տոկոսով, արտադրանքի խնճհարժեքն իջեցրել 2,71 տոկոսով:

Հաջողությամբ կատարելով 1957 թվականի առաջին կիսամյակի արտադրական սլանները, Մյասնիկյանի անվան քիմիական կամրինատի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները համամիութենական սոցիալիստական մրցության մեջ շահեցին երկրորդ տեղը՝ ստանալով ՍՍՏՔ քիմիական արդյունաբերության մինիստրության և Արհմիության Կենտկոմի Փոխանցիկ զրոշը և 126 հազար ռուբլի¹:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ սեույցուցիայի 40-ամյակի և կամրինատի 25-ամյակի պատվին ծավալված մրցության շնորհիվ Կիրովականի քիմիագործները 1957 թվականի տարեկան սլանը կատարեցին գեկտեմբերի 25-ին և սովին մի քանի հարյուր հազար ռուբլու արտապլանային արտադրանք: Կամրինատի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները վերանորոգեցին կարբիդի № № 1, 2, 3

¹ Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կամրինատի արխիվ, տե՛ս արհմիության գործարանային կոմիտեում 1957 թ. սոցմրցության արդյունքները:



№ 2 բնակավայրում կոստյումները ընկալողների բաղանջում

վառարանները, ինչպես նաև որոշ նախապատրաստական աշխատանք կատարեցին ազոտային խմբի № 3 և № 5 ցեխերում՝ արտադրական պրոցեսների ավտոմատացման համար: Այդ գործին մեծ շափով օգնեցին կոմբինատի ռաջիոնալիզատորներն ու գյուտարարները, որոնք հասանարեբեցին և գործի վրեցին ներքին ձեռքերը: Դրա շնորհիվ 1953 թվականի ծախսերի նորմալ իջեցման հաշվին տնտեսեցին կես միլիոն, իսկ 1955 թվականին՝ մեկուկես միլիոն ռուբլի: 1955 թվականին կարբիդի արտադրության մեջ օգտագործվող թանկարժեք կոքսը փոխարինվեց անարաջիտով, որը սչ մի վնաս չհասցնելով տեխնոլոգիական պրոցեսին, տարեկան տվեց մոտ կես միլիոն ռուբլու խնայողություն: Ծախսվող նորմաների սխտեմատիկ իջեցումը և թանկարժեք հումքը էժան հոմբով փոխարինելը հնարավորություն տվեցին կարբիդի ինքնարժեքն իջեցնելու:

Ինչպես Հայկական ՍՍՌ քիմիական ուղջ արդյունավերություն մեջ, այնպես էլ Կիրովականի քիմիական կոմբինատում արտադրության հիմնական պրոցեսները մեքենայացված են, սակայն օժանդակ պրոցեսների (բեռնումը, բնոնաթափումը, տեղափոխումը և նյութերի նախապատրաստումը) մեքենայացման մակարդակը դեռևս շատ ցածր է:

Կոմբինատի ցեխերում տարեցտարի կատարելագործվում են սարքավորումները՝ մեքենայացվում են որոշ աշխատատար պրոցեսներ, ավելացվում է սարքավորումների հզորությունը, արմատավորվում է նոր, ավելի բարձր տեխնոլոգիա և ըստ այնմ բարձրանում է կոմբինատի աշխատամասերի արտադրողականությունը:

Կրաքարի մեքենայացված մանրացման (շտրգման) շնորհիվ 25 տոկոսով թեթևացավ բանվորների աշխատանքը: Շարավոր բահի ներդրման միջոցով մեքենայացվեց վագոնների մեջ քարածուխ լցնելը: Կրի մեքենայացված պահեստի կառուցումով բարելավվեցին բանվորների աշխատանքային պայմանները, խնայվեցին բանվորական ուժը և ավտոտրանսպորտը:

1953 թվականին լրիվ վերակառուցվեց ցիանամիդի ցեխը, կալցիումի-ցիանամիդի տարեկան արտադրանքը հասցվեց հաղարավոր տոննաների: Ժապավենավոր փոխակրիչը (արբանսպորտորը), որով տեղափոխվում էր կալցիում-ցիանամիդը, փոխարինվեց խողովակային շնիկով:

Կոմբինատի ազոտային ցեխը, որը շահագործման հանձնվեց 1951 թվականին, սարքավորված է կատարելագործված նոր տեխնիկայով, այնտեղ բոլոր պրոցեսները մեքենայացված են: Ցևեքի թողարկման օրից մինչև օրս էլ անընդմեջ կատարվում են նորանոր կատարելագործումներ, արտադրության պրոցեսները դարձվում են ավելի ինտենսիվ, բարձրացվում է արտադրողականությունը, իջեցվում արտադրանքի ինքնարժեքը:

Չնայած կոմբինատում նորագույն տեխնիկայի արմատավորման ուղղությամբ ձեռք բերված հաջողություններին, դեռևս անբավարար են օգտագործվում հղած հնարավորությունները, ոչ միշտ է, որ դիրեկցիայի ուշադրության առարկան են դառնում տեխնիկայի արմատավորման, գործող ցեխերի արտադրական պրոցեսների մեքենայացման, սարքավորումների, տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման և դիտահետազոտական աշխատանքների կազմակերպման հարցերը:

Գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները արտադրության մեջ արմատավորելու նպատակով կոմբինատի տեխնիկական ինժեներացիայի բաժինը 1956 թվականին հրատարակել է 5, իսկ 1957 թվականին՝ 3 տեխնիկական բյուլետեն: 1957 թվականի մայիսից, երբ կոմբինատում սկսեց լույս տեսնել «Կիրովականի քիմիագործ» բազմատիրած շաբաթաթերթը, նրա յուրաքանչյուր համարի մեկ էջը հատկացվեց տեխնիկական պրոգրեսի հարցերին: Ռացիոնալիզատորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացմանը մեծապես օժանդակում է կոմբինատի տեխնիկական գրադարանը, որի գրքային ֆոնդը հասնում է 10 հազարի: Գրադարանում ստացվում են մի շարք տեխնիկական ամսա-

գրեր՝ «Քրիմիան և քրիմիական արդյունաբերությունը», «Քրիմիան և քրիմիական տեխնոլոգիան», «Էլեկտրականություն» և մասնագիտական մոտ 100 այլ ամսագրեր ու թերթեր:

Կոմբինատի ռաջիոնալիզատորներին մեծ օգնություն է ցույց տալիս ձեռնարկության գլխավոր ինժեներ Լ. Հախնազարյանը, որը 1950 թվականից մինչև օրս աշխատում է կոմբինատում նույն պաշտոնով: Ունենալով տեսական անհրաժեշտ պատրաստականություն և աշխատանքի մեծ փորձ, նա իրեն դրսևորում է որպես շնորհալի ինժեներ և հմտորեն գլխավորում է կոմբինատի արտադրական աշխատանքները:

Քրիմիական կոմբինատում տարեցտարի հանդես են գալիս նորանոր ռաջիոնալիզատորներ, որոնք իրենց առաջարկություններով կատարելագործում են հզած սարքավորումը, ավելացնում ձեռնարկության արտադրական կարողությունը: Եթե 1934 թվականին դործարանում հղել են 14 ռաջիոնալիզատորներ, որոնք արել են 19 առաջարկություն, դրանցից արտադրության մեջ արմատավորվել է 11-ը, ներդրումից ստացվել է 54 հազար ռուբլու օգուտ, սպա 1950 թվականին՝ 150 մարդ, արել են 240 առաջարկություն, արմատավորվել է 44-ը, ստացվել է կես միլիոն ռուբլու օգուտ: 1959 թվականին արվել է 835 առաջարկություն, ներդրվել է 496-ը, ստացվել է մոտ երկու միլիոն ռուբլու օգուտ: Այսպիսով, կոմբինատի գոյության 27 տարում մոտ 1000 քրիմիագործներ մտցրել են ռաջիոնալիզատորական 4100 առաջարկություն, դրանցից ստացվել է մոտ 20 միլիոն ռուբլու օգուտ¹:

Կոմբինատի աշխատանքները գլխավորում է 400 հոգուց բաղկացած պարտիական կազմակերպությունը, որը միավորում է 19 սկզբնական պարտիական կազմակերպություն և 21 պարտիական խումբ: Կոմբինատում կա 17 սկզբնական կոմերիտական կազմակերպություն՝ ավելի քան 400 կոմերիտա-

¹ Ա. Մյասնիկյանի անվան քիմկոմբինատի արխիվ, տե՛ս արտադրական-տեխնիկական բաժին, «Գյուտարաններ, նորարարների և ռաջիոնալիզատորների» դործը, էջ 47:

կաննհրով, որոնցից 352-ը արտադրութեան մեջ աշխատողներ են:

Կոմբինատում կոմունիստներն ու կոմերիտականներն անձնըվեր ու ստեղծագործ աշխատանքով, նորանոր նախաձեռնութեաններով ապահովում են իրենց առաջավոր դերը, տոն և ուղղութիւն են տալիս ցեխերում տարվող աշխատանքներին, գլխավորում են բանվորների խանդավառութիւնն ու նախաձեռնութիւնը պլանների կատարման, ինքնարժեքի իջեցման, հումքի, էլեկտրաէներգիայի խնայողութեան և տեխնիկական պրոգրեսի համար մղվող պայքարում:

Արտադրական յուրաքանչյուր հաջողութիւն աշխատանքային նոր վերելք է ստեղծում, բարձրացնում բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների քաղաքական ակտիվութիւնը: Կոմունիստներից շատերը, զերակատարելով իրենց առաջադրանքները, հայտնի դարձան ամբողջ կոմբինատում: Տեխնիկական պրոգրեսի արմատավորման գործում խոշոր դեր է կատարում ձեռնարկութեան պարտիական կազմակերպութիւնը, որն իր նիստերում բազմիցս քննարկել է տեխնիկական պրոգրեսի և տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման հարցերը: Պարտիական կազմակերպութիւնը, գլխավորելով արտադրական ցեխերում բանվորական ուժի ճիշտ տեղաբաշխման, կադրերի նպատակահարմար օգտագործման հարցերը և ամրապնդելով միանձնյա ղեկավարութիւնը, բարձրացնում է ցեխերի, հերթափոխութեան պետերի և մշուս օբյեկտների ղեկավարների պատասխանատվութիւնը պլանների կատարման, ինքնարժեքի իջեցման և հումքի խնայման գործում: Պարտիական կազմակերպութիւնը սիստեմատիկ հակողութիւն սահմանելով արտադրական բոլոր ցեխերի աշխատանքների վրա, բեղմնավոր գործունեութիւն է ծավալել էկոնոմիկայի, տեխնիկայի ուսումնասիրութեան, բանվոր-ծառայողների տեխնիկական մակարդակի բարձրացման ուղղութեամբ:

Պարտիական կազմակերպութեան ձեռնարկած միջոցառումների շնորհիվ կոմբինատի կոլեկտիվը յոթնամյակի ա-

ուաջին տարվա՝ 1959 թվականի տարեկան պլանը կատարեց դեկտեմբերի 19-ին, ժամկետից 12 օր շուտ: Մինչև տարվա վերջը քիմիագործները երկրին տվեցին մի քանի միլիոն սուբյու արտապլանային արտադրանք: Ցեխերը հաջողությամբ են աշխատում նաև 1960 թվականին: Առաջին կիսամյակի պլանները գերակատարեցին գրեթե բոլոր ցեխերը: 1960 թվականը կոմբինատի համար կզառնա քիմիկատներին ու սինթետիկ նյութերի նոր տեսակների թողարկման և արտադրության կատարելագործման տարի: 1960 թվականին շահագործման կհանձնվեն դիցիանդիամիդի և արհեստական մեկամինի, ինչպես նաև կորունդի երկրորդ հերթի ներկայումս կառուցվող ցեխերը, որոնք կոմբինատի արտադրությանը կավելացնեն արտադրանքի նոր տեսակներ:



1959 թվականի սեպտեմբերի 21-ին շաբաթ մտավ յոթնամյակի առաջնեկներից մեկը՝ Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի արհեստական կորունդի ցեխը, որը հումք է տալիս սարքաշինական արդյունաբերության և զարդաքարերի արտադրության համար:

Կորունդի ցեխի շինարարական աշխատանքներն սկսվել էին 1957 թվականի նոյեմբերից: Նախահաշվային արժեքն է 26 միլիոն, ներդրվել է 20 միլիոն ռուբլի: Ցեխի առաջին հերթի շինարարությունը կատարել է Կիրովականի արդյունաբերական շինարարության տրեստը, իսկ մոնտաժային աշխատանքները՝ նույն տրեստի մոնտաժային վարչությունը: Ցեխի մոնտաժավորման շրջանում ստեղծվեցին մի շաբաթ ղեկավարություններ, որոնք լուծվեցին մեր երկրի բազմաթիվ մասնագետների ու բանվորական կոլեկտիվների օգնությամբ: Օրինակ՝ բյուրեղացման ապարատների պատրաստումը երկար ժամանակ չէր հաջողվում, օգնության հասան Երևանի հիդ-

րոհազորդակ գործարանի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, որոնք կարճ ժամկետում պատրաստեցին բոլոր ապարատները: Այդ ապարատներում առաջացած 2100 աստիճան ջերմության մեջ ստացվում է կորունդի գունավառ բյուրեղը, որի հլանյութերն են Երևանի կարելի գործարանի արտադրական մնացուկները՝ ալյումինը և Ալավերդու ծծմբաթթուն: Կորունդի ցեխի մոնտաժավորման աշխատանքներին խոշոր օգնություն ցույց տվեցին Ալոտային արգյունաբերության գիտահետազոտական ինստիտուտի Դենպրոձերժինսկի Ֆիլիալի աշխատողները՝ նախագծի հեղինակ Վլադիմիր Ավիատուխի ղլխավորությամբ: Մոնտաժային աշխատանքներին մասնակցեցին նաև հիդրոհաղորդակ գործարանի մասնագետները, որոնք տեղում լիկվիդացրին իրենց պատրաստած ապարատների թերութունները:

Աբաազրանքի թողարկման, ինչպես նաև բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների որակավորման գործում խոշոր օգնություն ցույց տվեցին Ձերժինակ քաղաքի Կալինինի անվան քիմիական գործարանի կորունդի ցեխի մասնագետները՝ Ն. Շարապանովը, Վ. Զախրայցեքը, Զ. Պիկինան և ուրիշներ: Սրանք վաղօրոք Կիրովականի կորունդի ցեխի համար պատրաստել էին 55 տարբեր մասնագետներ, որոնք 3 ամսում յուրացրին «Ռուբին—2» և «Ռուբին—10» մարկայի արհեստական բյուրեղի արտադրության տեխնոլոգիան:

Կիրովականում շահագործման հանձնված կորունդի արտադրության ցեխը կառուցված է արտադրության տեխնոլոգիայի լրիվ ցիկլով: Այդ ցեխն այժմ ունի շքի թրծման, բյուրեղացման, կերամիկական, ջրածնի և թթվածնի մաքրման ու վերամղման բաժանմունքներ: Դրանցում աշխատում են այն շինարար երիտասարդները, որոնք կառուցեցին ցեխը:

1959 թվականի սեպտեմբերի 21-ին, երբ շահագործման հանձնվեց ցեխը, հրեկոյան ապարատավար Հ. Սարգսյանի ձեռքով ստացվեց առաջին բյուրեղը, որն իր կարծրությամբ զիջում է միայն արմատին և խիստ թանկարժեք հումք է

սարքաշինական արդյունաբերության և զարդարարերի արտա-
դրության համար:

Կորունդի ցեխի կոլեկտիվը, լարելով իր բոլոր ուժերը,
1960 թվականի համար պլանով նախատեսված տեսակա-
վոր կորունդի առաջադրանքը կատարեց առաջին եռս:մսյա-
կում:

1960 թվականին շահագործման է հանձնվելու կորունդի
ցեխի երկրորդ հերթը, գոյություն ունեցող 140 քյուրեղաց-
ման ապարատների թիվը կհասնի մոտ 300-ի. այդ կապակ-
ցությամբ շարունակվում են թե՛ շինարարական, թե՛ մոն-
տաժային աշխատանքները: Շինարարական տրեստը շորս
ամսով ուշացրեց կորունդի ցեխի առաջին հերթը շահագործ-
ման հանձնելու ժամկետը: Միաժամանակ տրեստը ինչպես
շինարարության, նույնպես և մոնտաժային աշխատանքները
կատարեց գրոհայնությամբ: Թույլ տրված սխալները որոշ
ժամանակ արգելակում էին ցեխի նորմալ աշխատանքները:

1957 թվականին սկսվել են կոմբինատի դիցիանդիամիդի
և մեկամինի խմբերի ցեխերի շինարարական աշխատանք-
ները, դրանց առաջին հերթը պետք է շահագործման հանձնվի
1960 թվականի վերջերին: Գլխավոր պլանով նախատեսված
է ցեխի շինարարության և մոնտաժային աշխատանքների մեջ
ներդնել 70 միլիոն ռուբլի, արդեն ներդրված է մոտ 50 մի-
լիոն ռուբլի: Ցեխերի սարքավորումն արդեն ստացվել է,
սկսվել են մոնտաժային եռանդուն աշխատանքներ, որոնք
հիմնականում կավարտվեն 1961 թվականին: Դիցիանդիա-
միդի և մեկամինի ցեխերի նախագիծը մշակել է Ազոտային
արդյունաբերության նախագծային ինստիտուտի Ջերժինսկի
քաղաքի ֆիլիալի կոլեկտիվը:

* * *

*

1954 թվականի հոկտեմբերին Կիրովական ժամանեց Ջի-
նաստանի Դիրին քաղաքում նոր կառուցվող կարբիդ-ցիանա-

միզի գործարանի տեխնիկական անձնակազմը՝ գործարանի գլխավոր ինժեներ, կոմունիստ Յզյան Ֆու-խինի՝ գլխավորու-թյամբ: Նրանք Կիրովական էին եկել մեկ տարի ժամանա-կով՝ սովորելու կարբիզի և ցիանամիզի արտադրության տեխ-նիկան:

Մեկ տարի անընդհատ աշխատելով կրի, կարբիզի, կալ-ցիումի և ցիանամիզի ցեխերում՝ նրանք տիրապետեցին աշ-խատանքի տեխնիկային, տեխնոլոգիական պրոցեսների ղե-կավարման ձևերին: 1955 թվականի հոկտեմբերի 26-ին նը-րանք մեկնեցին Չինաստան՝ նորակառույց քիմիական գոր-ծարանն աշխատեցնելու համար: Նույն թվականի նոյեմբե-րին Կիրովականի քիմիական կոմբինատ ժամանեց մասնա-գետները մի նոր խումբ, կրկին սովորելու կարբիզի և ցիա-նամիզի արտադրության տեխնիկան:

Չինաստանի Գիրլինի գործարանի կառույցմանը և սարքա-վորմանը սեղում մասնագիտական օգնություն ցույց տալու նպատակով Կիրովականի քիմիական կոմբինատի գլխավոր էներգետիկ էռնստ Մալյանը 1955 թվականին մեկնեց Չինաս-տան և մինչև 1958 թվականի մայիս ամիսը մնաց այնտեղ: Չինացի ընկերների ջանքերը հաջողությամբ պսակվեցին: Նրանք 1957 թվականի մայիսին շահագործման հանձնեցին Գիրլինի քիմիական գործարանը: Այդ առթիվ նրանք գրում են:

«Հայկական ՍՍՌ, Կիրովական, քիմիական

կոմբինատի դիրեկտոր ընկ. Ս. Թևոսյանին

Սովետական մասնագետների օգնությամբ 1957 թվա-կանի մայիսի 28-ի ժամը 17-ին շահագործման հանձ-նրվեց մեր գործարանի կարբիզի վառարանը: Դրա հա-մար հայանում ենք մեր խորին շնորհակալությունը Ձեզ՝ մեզ ցույց տրված օգնության համար:

Գործարանի դիրեկտոր՝ Լի-Իմեն

Գլխավոր ինժեներ՝ Յզյան Ֆու-խին»¹:

¹ «Կիրովականի քիմիագործ», 1957 թ. 30 մայիսի:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ղևույուցիայի 40-ամյակի տոնակատարության օրերին կոմրինատում ըստացվեց ՍՍՌՄ-ում Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայի արտակարգ և լիազոր դեսպան կյու Սյայոյի ողջույնի հեռագիրը, ուր գրված է.

«Հայկական ՍՍՌ, քաղաք Կիրովական,

քիմկոմբինատի դիրեկտոր՝ ընկ. Ս. Թևոսյանին

* Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ղևույուցիայի 40-ամյակի տոնակատարության առթիվ թույլ տվեք ՍՍՌՄ-ում Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայի գեսպանության և անձամբ իմ կողմից շնորհավորելու հանձինս Ձեզ՝ բանվորների ու ծառայողների ողջ կոլեկտիվին և ցանկանալ աշխատանքներում հետագա հաջողություններ:

Հոկտեմբերյան ղևույուցիան և սովետական ժողովրդի 40 տարվա փայլուն հաջողությունները չինական ժողովրդին ոգևորեցին ոչ միայն ազգային ազատագրության, այլև հենց այժմ երկրում սոցիալիստական հասարակության կառուցման համար մղվող պայքարում:

Ձեր կոմբինատը մեր երկրում քիմիական արդյունաբերությունը զարգացնելու գործում մեծ օգնություն և աջակցություն ցույց տվեց: Ձեր աշխատանքի առաջավոր փորձն ու ինտերնացիոնալիստական ոգին հրաշալի օրինակ են հանդիսանում մեր ժողովրդի համար:

Թույլ տվեք այս մեծ տոնի օրը սրտանց շնորհակալություն հայտնել Ձեզ՝ Ձեր եղբայրական օգնության համար:

Ցանկանում եմ Ձեզ մեծ հաջողություններ կոմունիզմի կառուցման գործում: Թող սամրապնդվի ու զարգանա շին և սովետական ժողովուրդների մեծ և անխախտ բարեկամությունը»¹:

¹ «Կիրովականի քիմիագործ», 1957 թ. 16 նոյեմբերի:

Գործարանի գործարկման ասթիվ նրա կուլեկտիվը հասուկ նամակով շնորհակալական առաջին խոսքերն ուղղում է սովետական բաղմաթիվ մասնագետներին, այդ թվում նաև է. Մալյանին:

«Թանկագին Մալյան, Ձեր և մեր պետությունները հարազատ եղբայրներ են, մենք բոլորս ապրում ենք սոցիալիստական լազերի համերաշխ ընտանիքում: Սովետական Միությունը մեր ավագ եղբայրն է, իսկ մենք նրա կրասեր եղբայրը: Դուք եկել եք մեր հրկիրը՝ օգնելու մեզ՝ մեր հայրենիքում կատարվող սոցիալիստական շինարարությանը: Դա ամենավառ վկայությունն է եղբայրական ժողովուրդների բարեկամության: Այսօր գործարկվեց մեր Գիրինի քիմիական գործարանը՝ շնորհիվ սովետական մասնագետներին, այդ թվում նաև Ձեր, որի համար շնորհակալական սրտաբուխ խոսքերը ուղղում ենք սովետական մարզկանց»¹:

Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայի կառավարությունը, բարձր գնահատելով հրիտասարդ մասնագետ է. Մալյանի ծառայությունը Չինաստանում քիմիական արդյունաբերության զարգացման գործում, նրան պարգևատրել է «Չինասովետական բարեկամության» մեդալով: Պարգևաթերթիկում գրված է.

«Ընկեր է. Մալյան

Մեր երկրի սոցիալիստական շինարարությանը Ձեր ունեցած ազնիվ ու անձնվեր մասնակցության համար հանձնում եմ Ձեզ «Չին-սովետական բարեկամության» մեդալը:

ՉժՌ Պետական Խորհրդի պրեմիեր՝
Չժոու Էն-լայ»²:

¹ ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 16, թ. 4:

² Նույն տեղում:

Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայում կառուցվող քիմիական արդյունաբերության ձեռնարկութունների շինարարության և մոնտաժավորման աշխատանքներին օգնություն ցույց տալու համար 1958 թվականի սեպտեմբերից մինչև այժմ (1960 թ.) Լան-Չժոու քաղաքում է գտնվում Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի գլխավոր ինժեների տեղակալ, արտադրական բաժնի պետ Իվան Գրիգորիշ Նաուսովը, նա կոնսուլտացիոն մի շարք աշխատանքներ է կատարում Չինաստանում կառուցվող քիմիական գործարաններում: Նրա օգնությամբ շուտով շահագործման կհանձնվի Լան-Չժոուի քիմիական գործարանը:

Լեհական ժողովրդական Ռեսպուբլիկայում կարբիդի արտադրությունը զարգացնելու նպատակով 1949 թվականի նոյեմբերին Հայաստանից մի շարք մասնագետներ մեկնեցին Օսվենցին քաղաքը: Սովետական այդ մասնագետները՝ քիմիկ-տեխնոլոգներ Պ. Շիրակյանը, Վ. Մովսիսյանը, էլեկտրիկ Գ. Հակոբյանը, 4 ամիս մնալով Օսվենցինում, խոշոր օգնություն ցույց տվեցին տեղի մասնագետներին: 1954 թվականի նոյեմբերին Օսվենցինի քիմիական կոմբինատը պատրաստ էր: Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի գլխավոր Ս. Թևոսյանը 5 ամսով մեկնեց Լեհաստան իրրև գործարկող բրիգադայի ղեկավար: Տեղում շահագործման հանձնելով կարբիդի արտադրությունը, այն հասցնում է նախազգծային արտադրողականությանը և ապա վերադառնում:

Կիրովական ժամանեցին Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկայի Տիրնիվին քաղաքի ցիանամիդի գործարանի գլխավոր ինժեներ Կրյանդան և երիտասարդ տեխնոլոգ Ֆորան: Նրանք ծանոթացան կարբիդի և ցիանամիդի արտադրությանը, կատարեցին փորձի փոխանակություն:

Այսպիսով, Կիրովականի քիմիական կոմբինատի ինժեներատեխնիկական աշխատողները խոշոր օգնություն են ցույց տալիս ժողովրդա-դեմոկրատական երկրներից եկած մասնա-

գետների արտագրական-տեխնիկական ուսուցման գործին. ինչպես նաև իրենց մասնագետներին ուղարկելով տեղերը՝ օգնում են նրանց քիմիական արդյունաբերական ձեռնարկությունների շինարարության, սարքավորման տեղագրմանը, մոնտաժավորմանը և գործարանների բարեհաջող գործարկմանը:

1958 թվականի օգոստոսին եղրայրական Չխոսլովակյան Ռեսպուբլիկայի արհմիության խորհուրդը ՀԱՄՆ-ին է ուղարկել ութ կարմիր դրոշ՝ ռեսպուբլիկայի առաջավոր ձեռնարկություններին հանձնելու համար՝ Դրոշներից մեկն ստանալու պատվին արժանացավ քիմիական կոմբինատի կոլեկտիվը: Քիմիագործների կուլտուրայի պալատում ՀԱՄՆ-ի ներկայացուցիչ ընկ. Հ. Նալբանդյանը կոմբինատի դիրեկտոր ընկ. Ս. Թևոսյանին է հանձնում Լիտումիշլ քաղաքի սովետա-չխոսլովակյան բարեկամության օկուպացիան կոմիտեի ալ-կարմիր մետաքսյա դրոշը, որի մի կողմից ասեղնագործված են՝ «Սովետական Միության հետ հավերժ միասին» բառերը՝ Չխոսլովակիայի աշխատավորների այդ նվերը ոգեշնչում է կիրովականի քիմիագործներին և ավելի ամրացնում նրանց կապը իրենց արտասահմանյան բարեկամներին հետ:

Մեքենաշինական և սարքաշինական արդյունաբերություն: Ինչպես ՍՍՌՄ-ում, այնպես էլ մեր ռեսպուբլիկայում արագ կերպով զարգանում են մեքենաշինությունն ու սարքաշինությունը, թողարկվում է ամենատարբեր տեսակների արտագրանք՝ մետաղահատ հաստոցներ, կոմպրեսորներ, պոմպեր, մամլիչներ, ամբարձիչ կոունկներ, ավտոմոբիլային պահեստամասեր, սննդի արդյունաբերության համար անհրաժեշտ սարքավորում, գյուղատնտեսական գործիքներ, զանազան տիպի հաստոցներ, տնային գործածության առարկաներ և այլն:

Այժմ հաստոցաշինական նոր գործարաններ են կառուցվում Երևանում, ինչպես նաև ռեսպուբլիկայի մի շարք այլ քաղաքներում ու քաղաքատիպ ավաններում: Եղած բոլոր

հաստոցաշինական գործարանները կհագեցվեն նորագույն տեխնիկայով, բարձր արտադրողական ագրեգատներով, հավաքման կոնվեյերներով և այլն: Ընդհանուր մեքենաշինության արտադրանքը ռեսպուբլիկայում հիմնականում կաճի գործող ձեռնարկություններն ընդարձակելու և դրանք ավելի բարձր արտադրողական սարքավորումներով հագեցնելու հաշվին: Մեր ռեսպուբլիկայում մեքենաշինությունն ընթանում է փոքր քանակությամբ սև մետաղ պահանջող, բայց աշխատատար ճյուղերի զարգացման ուղղությամբ: Հայաստանը մեքենաշինության արագընթաց տեմպերի հետևանքով դառնում է մեքենաշինական, հատկապես ճշգրիտ մեքենաների ու սարքավորումների արտադրության ռեսպուբլիկա: Հայաստանում մեքենաշինության մեջ ամենից առաջատար ճյուղը էլեկտրատեխնիկական արդյունաբերությունն է, ապա՝ սարքաշինական, հաստոցաշինական և գործիքաշինության արդյունաբերությունը, որոնց արտադրանքը տեսակարար կշռով ռեսպուբլիկայում գրավում է 4-րդ տեղը և տալիս համախառն արտադրանքի 16 տոկոսը, իսկ յոթնամյակի վերջում այն կհասնի մոտ 25 տոկոսի¹:

Ինչպես ռեսպուբլիկայում, այնպես էլ Կիրովականում արագ թափով զարգանում են մեքենաշինությունն ու սարքաշինությունը: Հետպատերազմյան տարիներին Կիրովականում կառուցվեցին մեքենաշինական, «Ալտոմատիկա», ճշգրիտ հաստոցաշինական և ավտոնորոգման գործարաններ, որոնք զգալի քանակությամբ մեքենաներ և սարքեր են տալիս ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսությանը: Արդյունաբերության այդ ճյուղի տարեկան արտադրանքը կազմում է քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների համախառն արտադրանքի զգալի մասը, որը յոթնամյակի վերջում կրկնապատկվելու է:

1948 թվականի հունիսից Հայկական ՍՍՌ Տեղական արդյունաբերության մինիստրության Կիրովականի մեխանիկա-

¹ «Հայաստանի Ժողովրդական տնտեսություն» ամսագիր, 1958 թ. նոյեմբեր-դեկտեմբեր, № 6, էջ 121:

կան գործարանի բաղաչի վրա շահագործման հանձնվեց մեքենաշինական գործարանը, որն ունի մեխանիկական, հավաքման, ձուլման և վերանորոգման ցեխեր: Գործարանն արտադրում է բանջարեղեն ճանրող, կաթի սեր հասունացնող մեքենաներ, խոհանոցային կաթսաներ և կաթի սառնարաններ:

Գործարանի կոլեկտիվի արտադրած երեք նոր տիպի մեքենաները օգտագործվում են սննդի արդյունաբերության ձեռնարկությանն ենթակում: Դրանցից ամենաուշագրավը դադի միջոցով աշխատող խոհանոցային ճաշի կաթսան է: Այստեղ միաժամանակ ձուլման միջոցով թողարկվում են կիրովականի ճշգրիտ հաստոցաշինական գործարանի բոլոր տիպի դետալները: Գործարանը տաքեցտարի աճում է և տեխնիկական կատարելագործվում: 1954 թվականին գործարանի ցեխերում զբաղվել են նոր սարքավորումներ: 1957 թվականին ստեղծվեց տեխնիկական բաժին, 1958 թվականին՝ լաբորատորիա, իսկ 1960 թվականին՝ կոնստրուկտորական բյուրո: Տեղագրված նոր հզոր մամլիչների և այլ սարքավորումների շնորհիվ գործարանում աշխատանքի արտադրողականությանը բարձրացավ 15—20 տոկոսով: 1948 թվականին գործարանն արտադրել է կես միլիոն ուտրլու, 1955 թվականին՝ երկու միլիոն, 1959 թվականին՝ 18 միլիոն ուտրլու արտադրանք, իսկ 1960 թվականին արտադրելու է 15 տեսակի արտադրանք՝ մոտ 22 միլիոն ուտրլու արժողությամբ:

Գործարանում լայն ծավալ են ստացել սոցիալիստական մրցութունն ու առաջավորների փորձի փոխանակումը: Կիրովականի առաջավոր մեքենաշինարարների մի խումբ Բաթումի մեքենաշինական գործարանում ծանոթացավ Վրացական ՍՍԻ Գերագույն Սովետի դեպուտատ, բաղմադազգահային, անվանի խառատ Շ. Վադաչկորիայի, կադապարողներ Մ. Խարայելյանի, Մ. Բարձրվաձեի աշխատանքի առաջավոր փորձին և այն տարածեց իրենց գործարանում: Սոցիալիստական մրցության մեջ առաջավորներ են մեխանիկական ցեխի խառատ է. Ղարաբեշիշյանը, որն իր պլանները կատարում է

140 տոկոսով, խառատներ Հ. Գուրինյանը, Ղ. Ղազարյանը, փակահագործներ Ա. Խառատյանը, Հ. Լալայանը, ձուլողներ Վ. Սողոմոնյանը, Գ. Քալաշյանը, զոդող Հ. Պետրոսյանը և ուրիշներ: Կոմունիստներ Ա. Մելքոնյանը, Վ. Սերոբյանը, Կ. Սաքանյանը, Հ. Ղազարյանը ոչ միայն արտադրության առաջավորներ են, այլև գործարանում ներդրվող ռացիոնալիզատորական բազմաթիվ առաջարկությունների հեղինակ:

Գործարանում կան բազմաթիվ առաջավոր ռացիոնալիզատորներ, որոնց արած առաջարկություններով խնայվում է հումքը, էլեկտրաէներգիան, բարձրացվում աշխատանքի արտադրողականությունը: Հավաքման ցեխի առաջավոր բանվոր Ս. Գրիգորյանը միաժամանակ անվանի ռացիոնալիզատոր դյուտարար է: Նրա արած մոտ 15 առաջարկությունն էլ ընդունվել է: Նա ստեղծել է ինքնուրույն կոնստրուկցիայի երկու մեքենա: 1959 թվականին ռացիոնալիզատորների առաջարկությունների ներդրումից ստացվել է կես միլիոն ռուբլու օգուտ¹:

1960 թվականի Մայիսի մեկից կոլեկտիվն անցել է 7-ժամյա աշխատանքի: 1959 թվականի տարեկան պլանը կատարելով 110,2 տոկոսով, կոլեկտիվը իր ձեռքում է պահում ՀԿՊ Կիրովականի քաղաքային կոմիտեի և քաղաքային Սովետի գործկոմի Փոխանցիկ զրոշը: 1960 թվականի առաջին կիսամյակի պլանը կոլեկտիվը կատարել է 130 տոկոսով:

Մեքենաշինական գործարանի արտադրանքն ուղարկվում է ոչ միայն մեր երկրի տարրեր ռեսպուբլիկաները, այլև արտասահման: Գործարանը պանիր լամպող և «ԿՈՊ» տիպի մեքենաներ է մատակարարում Զինաստանին, Վիետնամին և Մոնղոլական Ժողովրդական Ռեսպուբլիկային: Մեքենաշինարարները 1959 թվականին հատուկ քանակով մեքենաներ ուղարկեցին Աֆղանստան՝ Քարուլի սննդարդյունաբերության

¹ Թվերը տե՛ս Կիրովականի մեքենաշինական գործարանի արտադրական բաժնի գործերում:

ձեռնարկություններին, իսկ 1960 թվականի վերջերին խոհանոցային դազի կաթսաներ կուղարկվեն Բիրմա:

Կիրովականի մեքենաշինական գործարանը մասնագիտացվում է սննդարդյունաբերության՝ պահածոների, կաթի և հասարակական սննդի արդյունաբերության համար մեքենաներ արտադրելու մեջ: Դրա համար նախատեսված է գործարանի վերափոխումն ու ընդլայնումը, այդ նպատակով ներդրվելու է 11 միլիոն սուբլի:

1960 թվականին Միության մեջ առաջին անգամ այս գործարանը արտադրելու է գազային կաթսա, որն իր կառուցվածքի բարդությամբ մեծապես գերազանցելու է գոյություն ունեցող գազային կաթսաներին: Միաժամանակ գործարանը 1960 թվականի վերջերին պահածոների արդյունաբերության համար առաջին անգամ թողարկելու է X տիպի ավտոմատ և ՕՄ տիպի կիսավտոմատ մեքենաներ, ինչպես նաև մրդահյութերի ծծիչ ֆիլար և մրգերի կորիզահան սարքեր, շժանդատվող պողպատի մնայորդներից՝ ճաշի գդալներ: Այս արտադրանքի թողարկումն ապահովելու նպատակով 1959 թվականին արտադրության մեջ տեղադրվել են նորագույն մեխանիզմներով 28 սարքեր, իսկ 1960 թվականին կտեղադրվի ևս 37 սարք:

Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհի էլեկտրատեխնիկական և սարքաշինության արդյունաբերության վարչության Կիրովականի «Ավտոմատիկա» գործարանը, որի շինարարական աշխատանքներն սկսվել են 1956 թվականից, մեր երկրին տալիս է ավտոմատ կարգավորող փոքր չափի էլեկտրոնային սարքեր: Այդ սարքերն օգտագործվում են ժողովրդական տնտեսության մեջ տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատացման համար:

Գործարանի կոլեկտիվի քրտնաջան աշխատանքի շնորհիվ կառուցվել են երկու արտադրական կորպուսներ, որոնց մեջ տեղադրված են հավաքման, մեխանիկական, գործիքային, մեխանիկա-դրոշմման, ձուլման, դալվանապատման, նորոգման ցիխերն ու տեղամասերը: Կորպուսների մոնտաժ-



Կիբրոսականցի մի խումբ զինական աշխատողներ և դասախոսներ

ման և տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել ինժեներներ Հ. Հարությունյանը, Ռ. Հակոբյանը, Ա. Բաղյանը, Ա. Հովսեփյանը և ուրիշներ:

«Ավտոմատիկա» գործարանում արտադրվող սարքերի կոնստրուկցիան մշակել է Լենինգրադի Պետական հատուկ կոնստրուկտորական բյուրոն: Թողարկվող սարքերը կոնստրուկտիվ տեսակետից, համեմատած նախկինում թողարկված և ժողովրդական տնտեսության մեջ օգտագործվող սարքերի հետ, ունեն փոքր չափեր և 12 կիլոգրամ քաշ:

Միայն երկու տիպի սարքերի պատրաստման համար երկրի տարբեր սեպարիտիկաներից Կիրովսկանի «Ավտոմատիկա» գործարանն ստանում է 1000 տեսակից ավելի կոմպլեկտավորող մասեր և նյութեր՝ դետալներ, մոտորներ, էլեկտրոնային լամպեր, կոնդենսատորներ և այլն:

Կիրովսկանում տուաջին անգամ այդպիսի բարդ, նուրբ սարքեր պատրաստելու գործը ձեռնարկության կոլեկտիվի առջև դնում էր լուրջ և դժվարին խնդիրներ: Այդ իսկ պատճառով 1957 թվականին գործարանից 50-ից ավելի աշխատողներ ուղարկվեցին Լվովի նույն տիպի սարքաշինական գործարանը՝ արտադրական որակավորում ձեռք բերելու:

Այժմ գործարանում աշխատում են երիտասարդներ, որոնք որակավորվել են աշխատանքի պրոցեսում: Առանձնապես աչքի են բնկնում մեխանիկական ցեխից՝ Ա. Երիցյանը, հավաքման ցեխից՝ Ռ. Անդրեասյանը, Ռ. Խուզավիերգյանը, գործիքային ցեխից՝ Յու. Ղամբարյանը, էքսպերիմենտալ-փորձարկման տեղամասից՝ Ռ. Ջաղաջյանյանը, հայրենազարձ Բ. Մամջյանը և ուրիշներ:

1959 թվականի հունվարին գործարանն առաջին անգամ ժողովրդական տնտեսությանը տվեց սարքեր, որոնք տարածության վրա շափելու, կարգավորելու են ջերմությանը, ճշնշումը, մակարդակը և այլն:

Գործարանի կոլեկտիվն իր համաչափ աշխատանքի շնորհիվ յուրաքանչյուր ամիս կատարում և գերակատարում է պլան-

ները: 1959 թվականին զգալիորեն գերակատարվել է սարքերի արտադրութձյան պլանը¹:

Տեխնոլոգիական պրոցեսները գործարանում ներդնելու և կիրառելու համար կոլեկտիվն առանձնապես մեծ դժվարութձյունների հանդիպեց ուժեղացուցիչների բաժնում: Լենինգրադի Պետական հատուկ կոնստրուկտորական բյուրոյից հրավիրված ինժեներներ Յ. Խսուպովայի և Վ. Գինդլինայի հետ միասին գործարանի ինժեներատեխնիկական աշխատողները Լ. Այնաշչանի ղեկավարութձյամբ որոշեցին փոխել ուժեղացուցիչների կոնստրուկցիան, որը դժվարացնում էր արտադրութձյան համաչափ աշխատանքը: Այդ ձեռնարկումը տվեց իր գրական արդյունքները: 1960 թվականին գործարանը տալու է մեծ քանակի սարքեր: 1960 թվականի առաջին եռամսյակում յուրացվեցին նոր տիպի սարքեր, որոնք չափելու են ջերմութձյունը և փոքր պոտենցիալները:

Հավաքման ցեխում շահագործման հանձնվեց սարքերի բնդհանուր հավաքման կոնվեյերը, որն աշխատանքի արտագրողականութձյունը բարձրացրեց 1,5 անգամ:

Նախատեսված է յուրացնել նաև ավտոմատ կերպով կարգավորող, ցույց ավող և գրանցող փոքր շափի սարքեր, որոնց առաջին օրինակները գործարանը հավաքեց սարքաշինարանների հմուտ ձեռքերով:

1960 թվականին գործարանը յուրացնելու է նաև օպտիկական օգտագործման սարքեր: Դա գործարանի կոլեկտիվից պահանջում է է՛լ ավելի լարել ուժերը՝ յուրացնելու տեխնոլոգիական առաջնակարգ պրոցեսներ: Արտադրութձյան այս ճյուղը պահանջում է արտադրական բարձր կուլտուրա: Այդ խակ պատճառով էլ գործարանի ցեխերն ու տեղամասերը կոմպլեկտավորվում են որակյալ ինժեներներով, տեխնիկներով, միջնակարգ և մասնագրիտական միջնակարգ կրթութձյուն ունեցող երիտասարդներով:

1 Տվյալները վերցված են Կիրովականի «Ավտոմատիկա» գործարանի արտադրական բաժնից:

Կիրովականի «Ավտոմատիկա» գործարանում ներդրվել է ստամնաանիվների սառը մշակման տեխնոլոգիան, որի կիրառման համար մեծ աշխատանք է կատարել ինժեներ Ե. Ղազարյանը: Այժմ գործարանում միջոցառումներ են ձեռնարկված յուրացնելու առաջնակարգ տեխնոլոգիա սլահանջող, տեխնիկայի վերջին նվաճում հանդիսացող տորիտային տրանսֆորմատորների փաթաթման և հավաքման գործը: Մեծ ջանքեր են գործադրվում արտադրության ռացիոնալիզատորական աշխատանքների բնագավառում: Չնայած գործարանի երիտասարդ լինելուն, այնտեղ արդեն հայտնի են ռացիոնալիզատորներ Մ. Մելիքյանը, Վ. Մելիքսեթյանը, Լենինգրադից եկած ինժեներ-կոնստրուկտոր Մ. Բաթինը, վարպետ Ս. Պետրոսյանը և ուրիշներ:

Կիրովականի «Ավտոմատիկա» գործարանը յոթնամյակի տարիներին է՛լ ավելի է աճելու, լայնանալու՝ ներդրվելու է 15 միլիոն ոտրլի գումար: Կառուցվելու են երեք մեծ արտադրական կորպուսներ, գործարանը երկրին տալու է տարեկան մի քանի տասնյակ միլիոն ոտրլու համախառն արտադրանք:

1957 թվականի ամռանը Մոսկվայից Կիրովական ժամանեց մեքենաշինության-հաստոցաշինության խոշոր մասնագետ, պրոֆեսոր Գ. Ա. Շահումյանը: Նա ծանոթանալով քաղաքի արդյունարևրական ձեռնարկությունների պրոֆիլին, խորհուրդ տվեց Կիրովականում կազմակերպել ճշգրիտ հաստոցաշինական գործարան, որը շատ տարածություն չի բռնի, քիչ հումք կպահանջի և մեծ քանակությամբ բանվորական ուժ կընդգրկի: Գործարանն արտադրելու է փոքր տրամաչափի հաստոցներ տեխնիկայի նոր և առաջավոր ճյուղի՝ սարքաշինության համար: Այդ հաստոցների կարիքը մեր երկրում շատ մեծ է: Դրանք առայժմ ներմուծվում են արտասահմանից՝ մասնավորապես Շվեյցարիայից:

1958 թվականի ապրիլին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը որոշում է ընդունում Կիրովականում ճշգրիտ հաստոցաշինական գործարան հիմնելու մասին: Տեղում ունենալով պատրաստի շենք, գործարանի ղրիեկցիան կարճ ժամա-

նակամիջոցում ավարտում է հատուկ շինարարական աշխատանքները և մոնտաժավորումը: Գործիքաշինական ցեխում սկսվում են «Ս—155» մարկայի հաստոցի չուրացման, ինչպես նաև նրա սերիական թողարկման համար սարքավորումներ պատրաստելու աշխատանքները:

Ճշգրիտ հաստոցներ արտադրելու համար բարձրորակ մասնագետներ պատրաստելու նպատակով գործարանի դիրեկցիան 1958 թվականի նոյեմբերին Մոսկվայի № 2 և № 3 ժամացույցների գործարաններն ուղարկեց 44 մարդ: Այնտեղ մեկնած ընկերները սովորեցին հմուտ վարպետների և ինժեներա-տեխնիկական աշխատողների մոտ: Հինգ ամիս հետո, դառնալով իրենց գործի վարպետներ, վերադարձան Կիրովական և աշխատեցին նոր հաստոցների թողարկման ցեխում: Սովորողներից խառատներ Գ. Կոստանդյանը, փականագործներ Լ. Գրիգորյանը, Լ. Քոչարյանը, Ի. Գլազովը և ուրիշներ, լավ տիրապետելով իրենց աշխատանքի տեխնիկային, մասնագետներ Գ. Գաբրիելյանի և Ա. Տեր-Ղազարյանի ղեկավարութվամբ աշխատում են նոր հաստոցի տեղադրման և մոնտաժավորման վրա:

Միջին որակի, բարձրորակ բանվոր մասնագետներ պատրաստելու նպատակով գործարանի դիրեկցիան միջնակարգ կրթութվուն ունեցող 60 երիտասարդների ուղարկեց Երևանի տեխնիկական ուսումնարան: Նրանք այնտեղ մեկ տարի մասնադիտական կրթութվուն ստանալուց հետո վերադարձան գործարան:

1959 թվականի մայիսին գործարանի կոլեկտիվը տվեց իր տոաշին արտադրանքը: Արտադրված «Ս—155» և «Ս—155/2» մարկայի երկրորդ ճշգրտութվան հաստոցները լայն կիրառում կզանեն ինչպես ճշգրիտ սարքաշինութվան, ժամացույցների արտադրութվան, այնպես էլ սադիոէլեկտրոնային արդյունսուրերութվան մեջ:

Այժմ գործարանում աշխատում են 215 մարդ, որից 41-ը ինժեներա-տեխնիկական աշխատողներ են¹: Այսպես շարք մտած գործարանի մեխանիկական, հավաքման, թերմիկական արտադրական ավելի մեծ կորպուսներում կաշխատեն մի քանի հարյուր նորը աշխատանք կատարող բարձրորակ բանվորներ և ինժեներա-տեխնիկական աշխատողներ: Նրանք երկրին կտան տարեկան 4—5 հազար հատ զանազան տեսակի փոքր տրամաչափի մետաղամշակման ճշգրիտ հաստոցներ: Քողարկվող 15 տեսակի հաստոցներից յուրաքանչյուրը կկշռի 14-ից մինչև 600 կիլոգրամ և կունենա 2600—25.000 ուրլու արժողութուն:

1960 թվականին գործարանը կյուրացնի փոքր տրամաչափի հաստոցների ևս շորս տեսակներ, իսկ չոթնամյակի վերջում՝ 23 տեսակների արտադրության տեխնոլոգիան: 1960 թվականին միաժամանակ իրացվելու է արտադրանքի մի այլ տեսակի՝ բարձր ճշգրտության «Ս—193» մարկայի խառատային հաստոցների սերիական արտադրությունը:

1959 թվականի համեմատությամբ, 1960 թվականին գործարանում ճշգրիտ հաստոցների արտադրությունը կաճի մոտ ութ անգամ, տարեկան կտրվի 5 տեսակի՝ մոտ 5 միլիոն ուրլու համախառն արտադրանք:

Ավտոտրանսպորտի մինիստրության Կիրովականի ավտոնորոգման գործարանը, որը կատարում է ռեսպուբլիկայի հիմնարկ-ձեռնարկությունների պատվերները, հիմնադրվել է 1954 թվականին: Մինչև 1960 թվականը նրա վրա ներդրվել է մոտ 5 միլիոն ուրլու: Ավարտելով գործարանի շինարարական աշխատանքները, կուրիակալը 1958 թվականի սկզբներին շահագործման հանձնեց գործարանի քանդման-հավաքման, մասերի նորոգման և նոր մասերի պատրաստման ցեխերը, որոնք հազեցված են նորագույն սարքավորումով:

1958 թվականի սկզբներից գործարանը ռեսպուբլիկայի հիմնարկ-ձեռնարկություններից ընդունել է «ԶԻՍ» և «ԶԻԷ»

¹ Տվյալները վերցված են Կիրովականի ճշգրիտ հաստոցաշինական գործարանի պրեսկոնսպեկտից:

150 և 585 մարկայի մեքենաների հիմնական վերանորոգման պատվերները Ձեռնարկութունում աշխատող մոտ 100 մարդուց 19-ը ինժեներա-տեխնիկական աշխատողներ են: Հետագայում այստեղ աշխատելու է մոտ 400 բանվոր:

Գործարանում բարձրորակ արտադրանք են տալիս շարժիչի հավաքող Ս. Սարգսյանը, փականագործ Վ. Գրիգորյանը, հայրենադարձ հյուսն Հ. Գուլակյանը, խառատներ Բ. Ուլիխանյանը, Ս. Գրիգորյանը և էլեկտրիկ Հ. Ռաֆայելյանը: Սրանք բոլորն էլ միաժամանակ ռացիոնալիզատորներ են:

Գործարանի կոլեկտիվը շնայած մրցության մեջ է Բուքարյեսիի ավտոնորոգման գործարանի կոլեկտիվի հետ, բայց թերակատարեց 1957 թվականի տարեկան պլանը: Թերակատարման հիմնական պատճառը գործարանի ցեխերի ոչ լրիվ շահագործման հանձնվելն է, մասնավորապես պահեստամասերը ժամանակին չստանալը: Տարեցտարի նոր տեխնիկայով հագեցվում են ավտոնորոգման գործարանի ցեխերը: 1959 թվականին շարժիչների նորոգման տեղամասում, միջցեխային պահեստներում և լվացման բաժանմունքում դրվեցին էլեկտրական տեխնիկներ, որոնք մեխանիզացիայի ենթարկեցին բարձրացման և տեղափոխման աշխատանքները: 1959 թվականի ընթացքում ավտոնորոգողները իրենց մոտ պատրաստեցին և ռեսպուբլիկայում առաջիններից մեկը շահագործման հանձնեցին էլեկտրա-իմպուլսային մակահալքի հարմարանքը, որով մեծ քանակի մաշված մեքենայամասեր վերականգնում են իրենց նախկին շափերը: Նոր սարքավորումներ են դրվել նաև գործարանի մյուս ցեխերում:

1960 թվականին շահագործման կհանձնվեն ներկման, գալվանապատման և ձուլման բաժանմունքները, մեխանիզացիայի կենթարկվեն մի շարք աշխատատար պրոցեսներ:

Գործարանի կոլեկտիվը 1959 թվականի համախառն արտադրանքի պլանը կտտարեց 100 տոկոսով, իսկ ասորտիմենտինը՝ 53 տոկոսով¹. վերջինիս թերակատարման հիմնա-

¹ Տվյալները վերջված են կիրավականի ավտոնորոգման գործարանի արտադրական-պլանային բաժնից:

կան պատճառը նյութա-տեխնիկական մատակարարման վատ կազմակերպումն էր:

Շինանյութերի արդյունաբերություն: Արդյունաբերական ձևոնարկությունների և բնակարանային շինարարության մըշտական ընդարձակման կապակցութեամբ երկրում արագ տեմպերով զարգացավ շինանյութերի արդյունաբերութեանը: Հայկական ՍՍՌ շինանյութերի արտադրութեանը 1959 թվականին, 1913 թվականի համեմատութեամբ, աճել է ավելի քան 200 անգամ, իսկ 1940 թվականի համեմատութեամբ՝ 13 անգամ: Վերջին տարիներին ուսպուրլիկայի շինանյութերի արդյունաբերութեան արտադրանքի ծավալն աճում է տարեկան 20—25 տոկոսով: Ռեսպուրլիկայում շինանյութեր են թողարկում Ժողատխորհի, Շինանյութերի մինիստրութեան և տեղական Սովետների ձևոնարկութեանները: Յոթնամյակում նախատեսվում է ուսպուրլիկայի շինանյութերի արտադրութեան ծավալը, այդ թվում նաև տուֆաքարի, պիմզա-նյութերի, հրակայուն շինվածքների, ապակու և հախճապակու, ցեմենտ-շիֆերի արտադրութեանը, մեծացնել 2,3 անգամ: Կիրովականում ևս արագ կիրպով զարգանում է շինանյութերի արտադրութեանը: Քաղաքում բուռն թափով կատարվող շինարարութեանը շինանյութեր են մատակարարում Կիրովականի կղմինդրի-աղյուսի գործարանը, շինարարական տրեստի շինանյութերի կոմբինատը և Ժողտխորհի շինանյութերի վարչութեան Կիրովականի քարհանքավարչութեանը:

Ռեսպուրլիկայի ժողովրդական տնտեսութեան արագ զարգացումը նախատեսում էր խոշոր չափով ավելացնել շինանյութերի արտադրութեանը: Այդ առաջադրանքից կեննլով՝ Կիրովականի կղմինդրի-աղյուսի գործարանի կուլեկտիվը լարել է իր ուժերը՝ շինանյութերի արտադրութեանն ավելացնելու, ասորտիմենտն ընդլայնելու թողարկվող արտադրանքի որակը բարձրացնելու համար:

1949 թվականին վերակառուցվեց կղմինդրի-աղյուսի գործարանը, կառուցվեցին նոր զիգզազ վառարաններ թունելային

չորանոցներ, մեքենայացվեցին որոշ աշխատատար պրոցեսներ, դրանով իսկ գործարանը դադարեց սեղոնային լինելուց և դարձավ մշտական արտադրանք թողարկող: Հետագա տարիներին գործարանն ընդարձակվեց երկաթբետոնե կառուցվածքների՝ կերամիկայի ու կրի նոր ցեխերով և սկսեց բարգավաճող կիրովականի շինարարությանը մատակարարել աղյուսկղմինդրի հետ միասին երկաթբետոնե շինարարական դետալներ: Ձեռնարկության ընդարձակվելու շնորհիվ նախկին կղմինդրի գործարանը 1955 թվականին դարձավ նրա ցեխերից մեկը: Գործարանի բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները, պարտիական կազմակերպության ղեկավարությամբ ու օգնությամբ, ժամկետից շուտ կատարեցին 1954 թվականի պլանը, իսկ 1955 թվականի առաջին եռամսյակից սկսեցին աշխատել սվեչի բարձր արտադրողականությամբ: Այդ հաջողութունները կոչկոտիվը ձևը է բերել նոր սարքավորումներ սեղադրելու, շինանյութերի արտադրության աշխատատար մի շարք պրոցեսներ մեքենայացնելու, սռաջավորների փորձը արտադրության մեջ արմատավորելու շնորհիվ:

Վառարանների կարողութունը բարձրացնելու գործում մեծ օգնութուն հանդիսացավ Վորոնեժի № 8 աղյուսի գործարանի բանվոր, Ստալինյան մրցանակի լաուրեատ Ա. Դուվա-նովի աշխատանքի առաջավոր մեթոդի կիրառումը: Գործարանի բանվորներն այդ առաջավոր փորձը արմատավորեցին իրենց մոտ: Աշխատանքի առաջավոր փորձի կիրառման շնորհիվ սվեչացավ վառարանում շարվող աղյուսի քանակը, կարգավորվեց սեխնուղղիական սեծիմը, բարելավվեց վառիկանյութի օգտագործման տեխնիկան: Դրա շնորհիվ 1954 թվականին, 1953 թվականի համեմատությամբ, արտադրական միևնույն տարածութունից գործարանը տվեց կրկնակի արտադրանք¹: Ստալինյան մրցանակի լաուրեատ Ա. Դուվա-նովի առաջավոր մեթոդի կիրառմանը առաջինը ձեռնամուխ

¹ Տվյալները տե՛ս կիրովականի կղմինդրի-աղյուսի գործարանի հաշվապահության գործերում:

հղան բանվորներ Լ. Գրիգորյանը և Ա. Գրիգորյանը, որոնք կատարում էին 1,5—2 արտադրական նորմա:

Աշխատանքի կոմպլեքսային մեթոդի կիրառման շնորհիվ Ա. Ղուկասյանի բրիգադան մեկ հերթափոխում այնքան արտադրանք է տալիս, որքան նա տալիս էր 2—3 հերթափոխում: Արտադրության առաջավոր Բ. Մկրտչյանի զեկավարած կիսաֆարրիկատի զերարագ մշակման մեթոդով մամլուղների բրիգադան աշխատանքի արտադրողականությունը բարձրացրեց 50 տոկոսով. նախատեսված 2700 կգ մինդրի փոխարեն տալիս էր 4000 կգ մինդր:

Շինարարական կազմակերպությունների աճող պահանջները բավարարելու նպատակով գործարանի կոլեկտիվը յուրաքանչյուր արտադրանքի նոր տեսակներ՝ 1953 թվականի երկու տեսակի արտադրանքի փոխարեն 1955 թվականին թողարկեց 7—8 տեսակի արտադրանք: 1955 թվականի կեսերից գործարանի կոլեկտիվը ձեռնամուխ եղավ եկաթբետոնե կոնստրուկցիաների ու միջնորմային սալիկների արտադրությանը, ամենաարագ կերպով յուրացվեց դրանց տեխնիկան: Գործարանը 1955 թվականին շինարարական կազմակերպություններին, բացի կգ մինդրից և աղյուսից, տվեց մեծ քանակությամբ միջնորմային սալիկներ, կերամիկական բլոկներ, երկաթբետոնե դետալներ, կիր, հզկված բազալտի զանազան տեսակներ: Գործարանում աշխատանքի կատարելագործման բնագավառում աչքի են ընկնում ուսուցիչներ՝ գործարանի մեխանիկ Կ. Միրիջանյանը, փականագործներ Վ. Մանուկյանը, Լ. Կարենեհոն և ուրիշներ: Արտադրության մեջ աշխատող գործարանի բազմաթիվ զեկավար աշխատողներ նախկինում հղել են շարքային բանվորներ, որոնք աճելով տեղում՝ առաջ են քաշվել: Դրանցից են՝ կերամիկական ցեխի պետ Լ. Ասլիյանը, հերթափոխություն պետ Վ. Դանիելյանը, կերամիկական ցեխում բրիգադավար Ա. Ղուկասյանը: Իրենց շնորհալի աշխատանքով առավել աչքի են ընկնում բանվոր Օ. Մելիտյանը, վառարանի շարող վարպետ Լ. Գրիգորյանը, բետոնագործներ Լ. Մկրտչյանը, հայրե-

նադարձ Մ. Առաքելյանը: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ կղմինդրի գործարանի տարեկան համախառն արտադրանքը 1950 թվականին կազմեց մեկ միլիոն ութըլի, 1958 թվականին՝ մոտ երեք միլիոն ութըլի, իսկ 1960 թվականին՝ կկազմի մոտ 5 միլիոն ութըլի¹: Եթե կղմինդրի գործարանը 1945 թվականին արտադրել է մեկ միլիոն կղմինդր և 300 հազար աղյուս, ապա հաջորդ տարին արտադրել է մոտ երկու միլիոն կղմինդր և մոտ 1,5 միլիոն աղյուս: Յոթնամյակում արագ կերպով կաճի կերամիկական բլոկների և միջնորմային սալիկների արտադրությունը:

Գործարանի կոլեկտիվը բաղկացած է 170 մարդուց, որից 160-ը արտադրող բանվորներ և ինժեներա-տեխնիկական աշխատողներ են:

Սրանք 1960 թվականի առաջին կիսամյակում կատարեցին յոթ ամսվա պլանը, իսկ տարեկան պլանը կկատարեն Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակի օրը:

Կիրովականում կատարվող բուռն շինարարությունը պահանջ առաջադրեց քաղաքում ստեղծելու շինանյութերի նոր բազա: Այդ նպատակով 1956 թվականին № 7 շինարարական տրեստին կից կազմակերպվեց արտադրական կոմբինատ, որն ունի քար տաշող և հղկող, ինչպես նաև հյուսնական, արմատուրային, երկաթբետոնային կոնստրուկցիաների, բետոնի և ասֆալտի ցեխեր: Կոմբինատը քաղաքի շինարարությանը մատակարարում է հղկված քար, սուֆ, բազալտ և ձեվավոր քարեր: Այստեղ բարձրորակ աշխատանք են կատարում հայրենադարձ Կ. Ղասարյանը, բետոնագործ Ա. Սուլթանովը: Երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրության ցեխն իր պլանները կատարում է 140—150 տոկոսով և միշտ բարձր որակի արտադրանք է տալիս: Այս ցեխը տալիս է հավաքովի կոնստրուկցիաներ, հեծաններ, սյուներ, ծածկի պանելներ, կառնիկներ, սանդուղքներ և այլն: Արմատուրային ցեխում

¹ Տվյալները տե՛ս Կիրովականի կղմինդրի-աղյուսի գործարանի հաշվապահության գործերում:

առավել աչքի են ընկնում հայրենադարձ Ա. Գինոսյանը, Մ. Պետրոսյանը, Ա. Աբրահամյանը և ուրիշներ: Արտադրական կոմբինատի փականագործ Վ. Միգոյանը ուսցիտնալիզատոր է, պատրաստել է երկաթբետոնե կոնստրուկցիաների կաղապարներ:

Տարեցտարի ավելացել է կոմբինատի արտադրանքը: Պոլիգոնը 1957 թվականին տվեց 5170 խորանարդ մետր արտադրանք, 1958 թվականին՝ մոտ 11 հազար խորանարդ մետր, այսինքն՝ կրկնակի: Վերջին ժամանակներս տրեստն ստացավ մի շարք սարքավորումներ, որոնք հնարավորություն ստեղծեցին երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաների արտադրությունն ավելացնելու շորս անգամ և պոլիգոնը վերածելու գործարանի, ուր արդյունաբերական և բնակարանային շինարարության համար արտադրվելու են ամեն տեսակի երկաթբետոնե կոնստրուկցիաներ՝ սյուներ, հեծաններ, պատրաստի ծածկեր, սանդղաքներ, տախտակավանդակներ, աստիճաններ և զանազան խոշոր ու մանր էլեմենտներ: Այդ բոլորը հնարավորություն են տալիս արագացնելու շինարարության տեմպերը, բարձրացնելու որակը: Եթե կոմբինատը 1956 թվականին տվել է 2,5 միլիոն ռուբլու արտադրանք, ապա 1958 թվականին տվել է 12 միլիոն ռուբլու: Արտադրական կոմբինատում, որը բռնում է 4,5—5 հեկտար տարածություն, աշխատում են մոտ 600 մարդ:

1960 թվականի սկզբից միացվեցին Կիրովականում գործող № 7 և № 3 տրեստները: Այդ կապակցությամբ նրանց օժանդակ արտադրական և շինանյութերի կոմբինատները: միացվեցին՝ կոչվելով Կիրովականի շինարարական տրեստի արտադրական իրերի կոմբինատ: Այդ կոմբինատի արտադրական կարողությունը բարձրացնելու նպատակով 1960 թվականին հատկացված է 5 միլիոն ռուբլի, որով պետք է կառուցվեն նոր բազաներ, ինչպես նաև վերակառուցվեն և ընդարձակվեն նրանց հին բազաները:

Յոթնամյակում պետք է կառուցվեն շինարարական հզոր բազաներ, ինչպիսիք են՝ երկաթբետոնե հավաքովի կոնս-

տրուկցիաների զործարան՝ տարեկան 30 հազար խորանարդ մետր արտադրողականությամբ, տնաշինարարական կոմբինատ՝ տարեկան 30 շենքերի արտադրողականությամբ և խոշոր միջնորմային պաննոնների արտադրության զործարան՝ տարեկան 500 հազար քառակուսի մետր արտադրողականությամբ: Այս կառուցվող շինարարական հզոր բաղանների ստեղծման անհրաժեշտությունը բխում է պարտիայի և կառավարության վերջին որոշումներից: Պահանջվում է, որ մեր շինարարական հրապարակները վերածվեն մոնտաժային հրապարակների:

Կիրովականի քարհանքվարչությունը գոյություն ունի 1923—24 թվականներից: Մինչև 1940 թվականը այն եղել է սայլի տրանսպորտի (գուժտրանո) վարչություն և սպասարկել է տեղական շինարարությանը: Հետագա տարիներին Կիրովականի քարհանքվարչությունը եղել է Շինանյութերի արդյունաբերության մինիստրության, Շինարարության մինիստրության, իսկ այժմ Ժողատնտխորհի Շինանյութերի արդյունաբերության վարչության ենթակայության օբյեկտը:

1960 թվականի սկզբից Փամբակի դրանիտահատ ֆաբրիկան միավորվել է Կիրովականի քարհանքվարչության հետ և կոչվում է Փամբակի քարհանքվարչություն, որն ունի քարհանքեր Կիրովականում (Յաթաղի, «Դիմաց» թաղամասում), Սարալում, Խնձորուտում, Լեռնապատում, Ծաթերում ու Քուլագիրանում: Կիրովականի քարհանքվարչությունը շինանյութ է մատակարարում քաղաքի շինարարական կազմակերպություններին, ինչպես նաև Դիլիջանի, Իջևանի, Սպիտակի, Ստեփանավանի և Կիրովականի շրջաններին, Ստալինգրադին, Վորոնեժին, Բելգորոդին, Օրյոլ, Կուրսկ քաղաքներին և Մոսկվայի մետրոյին:

Քարհանքվարչության կոլեկտիվը բաղկացած է ավելի քան 600 մարդուց, որից 25-ը ինժեներա-տեխնիկական աշխատողներ են: Նրանք 1958 թվականին ավել են 6,5 միլիոն ռուբլու շինանյութ, իսկ 1960 թվականին տալու են 14 միլիոն ռուբլու Այդ կապակցությամբ ներգրվել է նոր սարքավորում: Օրինակ՝ 1960 թվականից ոկսած Լեռնապատում տուֆի հանույթը կա-

տարվում է կարող մեքենաների օգնութեամբ, որը ոչ միայն կրկնակի շափով բարձրացնում է աշխատանքի արտադրողականութունը և որակը, այլև իջեցնում ինքնարժեքը: Արտադրութեան մեջ ներդրվելու են աղացող մեքենաներ, որոնցով տուֆի մնացորդներից պատրաստվելու է ավադ: Առաջիկայում ներդրվելու են քար տաշող մեքենաներ, որոնց մասսայական օգտագործման համար մեխանիզացված հատուկ քարհանքեր են բացվելու, այն հաշվով, որ յոթնամյակի վերջում շինարարութեանը տրվին տարեկան 100 միլիոն ռուբլու՝ արժեքով՝ տարբեր տեսակի քարեր: Նոր սարքավորում պետք է դրվի նաև նախկին գրանիտահատ ֆաբրիկայում, որի վրա աշխատում են Ալմա-Աթայի լեռնամետալուրգիական գիտահետազոտական ինստիտուտի աշխատակիցները՝ պրոֆեսոր Բրիչկինի ղեկավարութեամբ:

Թեթև և սննդի արդյունաբերություն: Ծանր ինդուստրիայի և սոցիալիստական գյուղատնտեսութեան ասպարեկում ձևաբերած հաջողութունների շնորհիվ մեր երկրում անընդհատ աճում է նաև ժողովրդական սպառման ապրանքների արտադրությունը: «Ներկայումս— ասում է Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ XXI համագումարում տված զեկուցման մեջ,— մեզանում անհրաժեշտ պայմաններ են ստեղծված մոտակա տարիներին է՛լ ավելի մեծացնելու արդյունաբերական ու սարենային սպարանքների, ինչպես նաև տնային գործածութեան առարկաների թողարկումը և դրանով իսկ զգալիորեն առաջ ընթանալու սովետական մարդկանց նյութական ու կուլտուրական անընդհատ աճող պահանջմունքների լրիվ բավարարման խնդրի լուծման ճանապարհով, նկատի ունենալով յոթնամյակի ընթացքում լիովին ապահովելու բնակչության պահանջմունքները գործվածքեղենի, հագուստեղենի, կոշիկեղենի և այլ ապրանքների նկատմամբ»:

Ժողովրդական տնտեսութեան մյուս ճյուղերի հետ միասին արագ տեմպերով է զարգանում Հայկական ՍՍՌ թեթև

1 Տվյալները վերցված են Կիրովականի քարհանքավարչությունից:

արդյունաբերությունը, որի ձեռնարկությունները տարեկան թողարկում են 1,2 միլիարդ ռուբլու ժողովրդական սպառման բազմաթիվ ապրանքներ՝ բամբակյա-բրդյա, մետաքսյա գործվածքներ, տրիկոտաժիզեն, հագուստեղեն, կոշիկեղեն, կաշվե զալանտեբեական ապրանքներ և այլն:

Թեթև արդյունաբերության գործող ձեռնարկությունների ընդարձակումը, նոր գործարանների ու ֆաբրիկաների կառուցումը կատարվելու է այն հաշվով, որ ապահովվի դրանց մասնագիտացումն ու կոոպերացումը, նոր տեխնիկայի և պրոգրեսիվ տեխնոլոգիայի արմատավորումը, ինչպես նաև արտադրանքի տեսակների զգալի ընդլայնումն ու թողարկվող արտադրանքի որակի բարձրացումը:

Հետպատերազմյան տարիներին Կիրովականում արալ կերպով զարգացավ թեթև արդյունաբերությունը: Քաղաքում շահագործման հանձնվեցին Կամոյի անվան տրիկոտաժի, կորդի, Շահումյանի անվան կարի, կոշիկի և փայտամշակման ֆաբրիկաները, վերակառուցվեցին և ընդարձակվեցին դեռևս նախապատերազմյան տարիներին գոյություն ունեցող մորթու-մուշտակի ֆաբրիկան, գորգագործական արտելը, կույրերի ուսումնա-արտադրական արհեստանոցը և այլն:

Հետպատերազմյան տարիներին առանձնապես արագ կերպով զարգացավ Կիրովականի մորթու-մուշտակի ֆաբրիկան: 1946 թվականին, երբ արդեն պատրաստվեց ֆաբրիկայի շենքի լրացուցիչ մասը, դրվեցին միանգամայն նոր սարքավորումներ՝ փափկացնող, սանրող, խուզող մեքենաներ: Դրանով մեքենայացման հնթարկվեցին աշխատանքային որոշ պրոցեսներ: Միաժամանակ որակավորվեցին կադրերը: Դրա շնորհիվ եթե ֆաբրիկան 1945 թվականին տարեկան մշակում էր 100 հազար մորթի, ապա 1955 թվականին մշակեց 200 հազար, այսինքն՝ կրկնակի, տալով 7 միլիոն ռուբլու արտադրանք, իսկ 1959 թվականին այն հասցվեց 11 միլիոնի՝ արտադրվեց 34 հազար կիսամուշտակ, հազար մանկական վերարկու թան-

կարծեք մորթիներին, հազար գլխարկ և 20 հազար զույգ ձեռնոց¹։

Ֆաբրիկայի մշակման ցեխում մշակում են ոչխարի մորթիներ մուշտակի համար։ Սկսած 1957 թվականից ցիսը նուրբ և ազվամազ մորթիներից թողարկում է մուշտակ։ Ֆաբրիկայի կարի ցեխը մշակման ցեխի մշակած մորթիներից թողարկում է մի քանի տեսակի կիսամուշտակներ, ձեռնոցներ։

1960 թվականին ֆաբրիկան թողարկելու է 13 միլիոն ուրբլու համախառն արտադրանք։

Վերջին տարիներին աճել է կիրովականի մորթու-մուշտակի ֆաբրիկայի արտադրական կարողությունը, 25—30 տոկոսով ավելացել է արտադրանքի թողարկումը։ Այս աճը հիմնականում տեղի է ունեցել նոր սարքավորումների ներդրման և առաջավոր մեթոդների արմատավորման շնորհիվ։ Ֆաբրիկայի ինժեներա-տեխնիկական աշխատողների նախաձեռնությամբ 1000-ական լիտրով ավելացվեց պորժոզ բարկասների (վանաների) տարողությունը։ Նախկինում գործող երկու պրիմիտիվ շորանոցները փոխարինվեցին վեց նոր մեխանիզացված շորանոցներով։ Մեքենայացվեցին նախկինում ձեռքով կատարվող մի քանի ծանր պրոցեսներ՝ նոր մեքենաների և սարքավորումների ներդրման և նրանցից մի քանիսի վերափոխման շնորհիվ։ Աշխատանքի արտադրողականության բարձրացմանը մեծ շահով օգնել են նաև ֆաբրիկայի բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների կողմից արված ռապիոնալիզատորական առաջարկությունները։ Միայն 1954—1955 թվականներին ստացվել և ներդրվել է 30-ից ավելի ռապիոնալիզատորական առաջարկություն։

1958 թվականին ֆաբրիկայի ինժեներա-տեխնիկական աշխատողների նախաձեռնությամբ արտադրության մեջ ներդրվեց մորթիները «կարճ ճանապարհով» մշակելու մեթոդը, որը մի քանի օրով կրճատեց արտադրական ցիկլի տևողու-

¹ Տվյալները վերցված են կիրովականի մորթու-մուշտակի ֆաբրիկայի արտադրական բաժնից։

թյունը և զգալիորեն բարձրացրեց աշխատանքի արտադրողականությունը: Այդ մեթոդի ներդրումից ստացված տարեկան, տնտեսական էֆեկտը կազմում է շուրջ 100 հազար ուրլի:

Ֆաբրիկայում աշխատում են շատ հնագույն բանվորներ: Նրանցից Ս. Ռաֆայելյանը, Գ. Քոչարյանը, Ի. Վոլոշկինը, Ա. Կարպոշենկոն, Շ. Ավետյանը և ուրիշներ հանդիսանում են ֆաբրիկայի հիմնադիրները: Հնագույն աշխատողներից են նաև Զ. Փոթինյանը, Ա. Մխիթարյանը, Ա. Դալլաքյանը և ուրիշներ: Ճանաչված, հնագույն բանվորուհի, այժմ թոշակառու Վ. Գալոյանը տիրապետում է մի քանի մասնագիտությունների և նա, ինչպես շատերը, Հայրենական Մեծ պատերազմի տարիներին փոխարինում էր ծանր պրոցեսներում աշխատող տղամարդկանց, որոնք մեկնել էին Սովետական Բանակ: Ֆաբրիկայում հրկարամյա աշխատանք են կատարել բանվոր-բանվորուհիներ Ն. Թորոսյանը, Հ. Տոնոյանը, Հ. Սահակյանը, հայրենազարձ Հ. Խաղարյանը և հին բոլշևիկ է. Մուլթաֆյանը: Լավագույն բանվորներից են նաև հայրենազարձներ Զ. Կոտիկյանը, Գ. Գևորգյանը:

Նախկին փոքր արտելը ներկայումս դարձել է առաջավոր ֆաբրիկա: Մի քանի տասնյակ բանվորների փոխարեն այժմ աշխատում են շուրջ 200 բանվոր-ծառայողներ: Ընդլայնվել է թողարկվող ասորտիմենտը, աճել արտադրանքի ծավալը, բարձրացել կոլեկտիվի կրթական և մասնագիտական մակարդակը: Գործին ոչ լրիվ ծանոթ նախկին պրակտիկ աշխատողների փոխարեն հիմա ֆաբրիկան ունի զործիմաց ինժեներատեխնիկական անձնակազմ, հմուտ մուշտակագործ բանվորներ: Ֆաբրիկայի համար կառուցվում է արտադրական նոր հարմարություններով օժտված շենք: Նոր արտադրական կորպուսում անհամեմատ բարելավվելու են բանվորների աշխատանքի պայմանները, բարձրանալու է աշխատանքի արտադրողականությունը, ներդրվելու են է՛լ ավելի կատարելագործված նոր մեքենաներ և սարքավորումներ, աճելու է արտադրանքի թողարկման ծավալը և ընդլայնվելու է նրա ասորտիմենտը:



Առդշապաբնայն շաղափաթի Մուգոյն և արաջա՛կոր բնիշննէրն տի իւրօր

Կիրովականում թեթև արդյունաբերութեան ամենախոշոր ձեռնարկութեանը Կամոյի անվան արիկոտածի ֆաբրիկան է, որը հիմնվել է մի աննշան արհեստանոցի բաղաչի վրա: Այն շահագործման է հանձնվել 1947 թվականի նոյեմբերին և ունի բամբակեղենի ու մետաքսեղենի գործող և փաթաթող, ներկող կարի, մեխանիկական և այլ օժանդակ ցեխեր:

Մինչև 1955 թվականը հիմնականում կատարվել են ֆաբրիկայի թե՛ շինարարական և թե՛ ցեխերի մոնտաժավորման աշխատանքները: Ավարտվել է մետաքսի գործող և կարող ցեխերի տեղամասում սարքավորման տեղադրումը, իսկ 1956 թվականին նոր սարքավորում է դրվել փաթաթող ցեխում և ավտոմատ գործող մեքենաներ՝ ասեղնագործող տեղամասում: 1955 թվականի վերջերին ներկող և չորացնող տեղամասում արգեն դրվել էին չորացնող և արգուկող մեքենաներ:

1957 թվականի սկզբներին ֆաբրիկայի ցեխերից մեկում տեղադրվեց ԳԴՌ-ից ստացված «ՎԵՔ» մարկայի գործվածք փաթաթող մի հզոր մեքենա, իսկ գործող և փաթաթող ցեխերում շահագործման հանձնվեցին բարձր արտադրողականութեան ունեցող երեք նոր մեքենաներ:

Ֆաբրիկայում կան մեծ թվով հնագույն աշխատողներ, որոնք սևագործ բանվորից աճել ու դարձել են վարպետներ, ցեխի վարիչներ: Դրանցից են ներկող և կարող ցեխերի ավագ վարպետներ Ս. Բաղդասարյանը և Հ. Ասլանյանը, մետաքսի և բամբակի գործող ցեխերի վարիչներ Խ. Մովսիսյանը և Հ. Ղարուղյանը: Վերջինս իր գերազանց աշխատանքի համար 1958 թվականի օգոստոսին Հայկական ՍՍՌ Ժողատնտխորհի կողմից պարգևատրվեց Պատվոգրով, իսկ կարող ցեխի ենթավարպետ Ա. Գևորգյանը 1958 թվականի հուլիսին պարգևատրվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Պատվոգրով:

Ֆաբրիկայում իրենց պլանները զերակատարելու և բարձր որակի արտադրանք տալու գործում առավել աչքի են ընկնում Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի 5-րդ գումարման զեպուտատա է. Ղազումյանը, մետաքսի գործող ցեխից՝ հայրենադարձներ Հ. Ճգնավորյանը և կարող բանվորուհի Ա. Բաս-

մաճյանը: Ֆաբրիկայում կան անվանի ռացիոնալիզատորներ՝ գլխավոր մեխանիկ Հ. Մանուկյանը, կարող ցեխի վերանորոգող Հ. Քոչարյանը, Ա. Ժամհարյանը, Խ. Աղամյանը, գլխավոր ինժեներ Վ. Մանուկյանը և ուրիշներ:

Սոցիալիստական լայն մրցություն է ծավալված Վրացական ՍՍՌ Թբիլիսիի «Գրուզտրիկոտաժ» և Կիրովականի տրիկոտաժի ֆաբրիկաների կոլեկտիվների միջև: Կիրովականի ֆաբրիկայում 21 բրիգադաներ պայքարում են գերազանց որակի համար: Վատարելով փորձի փոխանակութուն, կիրովականցիները «Գրուզտրիկոտաժ» ֆաբրիկային տվին գործող մեքենաների ասեղների ձուլման կադապարը, որի կարիքը շատ մեծ չափով նրանք զգում էին: Իսկ մրցակիցները օգնեցին կիրովականցիներին՝ մեքենաների վրա դնելու ավտոմատ անջատիչներ, սովորեցրին գործվածքների ներկման տեխնոլոգիական նոր պրոցեսներ, ինչպես նաև մետաքսյա գործվածքների սառը եղանակով շորացնելու տարբեր ձևեր:

Ֆաբրիկայի կոլեկտիվը հետադայում մրցության մեջ մտավ ինչպես Բաքվի «Աղտրիկոտաժ», այնպես էլ Բելոռուսիայի Վիտեբսկի «Կիմ» տրիկոտաժի ֆաբրիկաների կոլեկտիվների հետ: Յուրաքանչյուր տարի պատվիրակութուն փոխանակելով՝ նրանք ամփոփում են սոցիալիստական մրցության արդյունքները և կատարում առաջավորների փորձի փոխանակութուն:

Ֆաբրիկայի անվանի բանվորուհիներ Ա. Թադևոսյանը, Ա. Բելոռուսովան, ներկող նորարար Ս. Բաղդասարյանը այցելեցին Մոսկվայի առաջավոր գործարաններն ու ֆաբրիկաները, ծանոթացան նրանց առաջավոր մեթոդներին: Ձեռնարկության գործող ցեխը ետ էր մնում և տալիս էր զգալի չափով խոտան արտադրանք, տեղի էր ունենում հումքի կորուստ: Մանոթանալով Մոսկվայի, Թբիլիսիի և Բաքվի ֆաբրիկաների գործող ցեխերի աշխատանքներին, նրանց փորձի կիրառումով, բանվորների պատասխանատվության բարձրացումով կիրովականցիները բարձրացրին մեքենաների արտադրական կարողութունը, բարելավեցին ցեխերի արտադրանքի որակը:

Ցեխում բամբակյա գործվածքիղենի առաջին տեսակը հասավ 99 տոկոսի: Գործող բանվորուհիներ Շ. Վարդերեսյանը, Լ. Սահակյանը, Օ. Սուլյանը, Ա. Գալստյանը, Ռ. Քալաշյանը և շատ ուրիշներ գերակատարեցին իրենց պլանները:

Կամոյի անվան տրիկոտաժի ֆաբրիկայի կոլեկտիվը կապված է երկրի առաջավոր ֆաբրիկաների կոլեկտիվների հետ: Ֆաբրիկայի դիրեկցիայի հրավերով Կիրովական ժամանեց Սերպուխովի ացետատի գործարանի արտադրական բաժնի վարիչ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Վ. Վեսնովսկին: Նա Կիրովականի տրիկոտաժագործներին ծանոթացրեց ացետատի մետաքսի առանձնահատկութունների և նրա օգուտների հետ:

Հնդամյակի խնդիրները պատվով կատարելու համար ծավալված շարժման մեջ ֆաբրիկայում օրեցօր աճում է առաջավորների թիվը՝ որոնք անձնվեր աշխատանքով բարձրացնում են աշխատանքի արտադրողականութունը, ապահովում ֆաբրիկայի բարձրորակ արտադրանքի թողարկումը:

Այդ ֆաբրիկայում բազմաթիվ են այն աշխատողները (ավելի քան 500 հոգի)¹, որոնք ավարտելով միջնակարգ դպրոցը, աշխատանքի են անցել տարբեր ցեխերում: Դրանցից է Ռ. Սերոբյանը, որը ռեսպուբլիկայում առաջինը կոշ արեց անվարձ աշակերտներ պատրաստելու համար:

Ֆաբրիկայում լավ է կազմակերպված տեխնիկական ուսուցման գործը: Տեխնիկական կաբինետը ամեն ինչով ապահովում է բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների տեխնիկական մակարդակի բարձրացումը՝ առանց արտադրութունից կտրելու:

Հայրենադարձ բանվորուհիներ Մ. Պետիկյանը, Վ. Քարաջյանը ոչ միայն գերակատարում են իրենց պլանները, այլև ստիզժել են աշխատանքի առաջավոր մեթոդներ:

Կարող ցեխի մետաքսյա հագուստիղեն թողարկող № 6 կոնվեյերում Ռ. Մարգարյանը կատարում է տեխնոլոգիական

¹ Տվյալները վերցված են Կիրովականի Կամոյի անվան տրիկոտաժի ֆաբրիկայի արտադրական-պլանային և կադրերի բաժիններից:

ամհնակարևոր պրոցեսներից մեկը: Նա այդ տեխնոլոգիական օպերացիային լավ է տիրապետում, կատարելագործել է իր աշխատանքի մեթոդը և տալիս է դերազանց որակի արտադրանք: Կարող ցեխի առաջավոր բանվորուհի Ս. Հովսեփյանը լավ աշխատանքի համար 1956 թվականին արժանացավ փոխանցիկ վիմպելին¹:

Հատուկ բրոշյուր է լույս ընծայված 1947 թվականին Ֆրանսիայից ներգաղթած, այժմ արիկոտաժի ֆաբրիկայի անվանի բանվորուհի Ա. Պետիկյանի աշխատանքի առաջավոր փորձի մասին²:

Կիրովականի տրիկոտաժագործները, գերակատարելով 1958 թվականի տարեկան պլանը, պլանից դուրս տվեցին 6 միլիոն ռուբլու տրիկոտաժյա հագուստեղեն: Ձեռք բերած այդ հաջողութունների համար նրանք շահեցին աշխատավորների դեպուտատների Կիրովականի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի և ՀԿՊ Կիրովականի քաղկոմի Փոխանցիկ կարմիր դրոշը, ինչպես նաև Համամիութենական սոցմրցության մեջ արժանացան ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՀԱՄԿԽ-ի 3-րդ մրցանակին:

Կարի ցեխում տղամարդկանց վերնաշապիկների արտոդրության առաջին և երկրորդ պրոցեսները կատարելու համար մինչև 1956 թվականի հուլիս ամիսը աշխատում էր 27 բանվոր: Առաջավորների կողմից աշխատանքի պրոգրեսիվ մեթոդների կիրառման շնորհիվ 27-ի փոխարեն այդ տեղամասում այժմ աշխատում են 17 մարդ: Այդ միջոցառումը մեծ շահով նպաստեց ոչ միայն աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, այլև արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը:

Ներկման ցեխում թաց գործվածքը ձևնարկության առաջին հարկից երկրորդ հարկն էր փոխադրվում ձևաքուփ: Դա ոչ

¹ Վ. Հ ա Ր ու թ յ ու ն յ ա ն, Նոր հնգամյալի առաջավորները, Կիրովական, 1956.:

² Զ. Մ ա թ ո ս յ ա ն, Խ. Մ ո վ ս ի ս յ ա ն, Մետաքսի գործվածքների վարպետը, Կիրովական, 1956.:

միայն ձգձղում էր գործը, այլև հաճախ զցում էր արտադրանքի սրակը: Բանվոր Խ. Աղամյանի ռացիոնալիզատորական առաջարկը կիրառելու շնորհիվ մեքենայացվեց այդ աշխատանքը, որը հնարավորություն տվեց բարձրացնելու թաց գործվածքը տեղափոխող բանվորների արտադրական նորմաները: Առաջվա 2,5 տոննայի փոխարեն այժմ մեկ հերթափոխում բանվորներն առաջին հարկից երկրորդ հարկն են տեղափոխում 3.6 տոննա թաց գործվածք:

Յարբրիկայում արտադրական պրոգրեսիվ նորմաների սահմանմանը զգալի շափով օգնեց նաև այն, որ ժամանակավարձով աշխատող բանվորների ու բանվորուհիների մի մասին փոխադրեցին գործավարձային սխեմայի: Օրինակ, գործվածքը ձևորով ներկող բանվորները, անցնելով գործավարձային սխեմայի, սկսեցին աշխատել ավելի բարձր արտադրողականությունով, թողարկել ավելի շատ արտադրանք:

Այս Ֆարբրիկայում շափազանց մեծ է ենթավարպետի դերը՝ մեքենաների և բանվորների բարձր արտադրողական աշխատանքն ապահովելու, արտադրանքի թողարկումն ավելացնելու և սրակը բարձրացնելու գործում: Առաջավոր ենթավարպետներ Ռ. Կիրակոսյանը, Գ. Չիթախյանը, Վ. Գալստյանը, ժամանակին և ճշտորեն տանելով մեքենաների տեխնիկական խնամքը, լարելով իրենց ստեղծագործական միտքը, ձգտում են վերացնել հստոնարքերված թերությունները, որքան հնարավոր է արագորեն կրճատել նորոգումների ժամկետները, խնայողաբար օգտագործել նորոգման համար անհրաժեշտ նյութերը:

Վերջերս տեխնիկական զննման ժամանակ ենթավարպետ Գ. Մխոչյանը նկատեց, որ № 3 ագրեգատի «Օվերլոկ» մեքենայի տրանսպորտորը մաշվել է: Նա մտածեց պատրաստել նոր տրանսպորտոր, իսկ դրա համար անհրաժեշտ էր ագրեգատի աշխատանքն ընդհատել աննվազն երկու ժամով: Սակայն նրան փոխարինող ենթավարպետ Ս. Մանուչարյանն առաջարկեց նորը պատրաստելու փոխարեն նորուկ մաշված տրանսպորտորը՝ նրա վրա նոր «ատամնաշար» պատրաստ-

տելու միջոցով: Այս ճանապարհով տնտեսվեց ոչ միայն մետաղը, այլև աշխատածամանակը: Մեքենան գործի գցելու համար պահանջվեց ընդամենը 30 րոպե:

Կիրովականի Կամոյի անվան տրիկոտաժի ֆաբրիկայի արտադրանքը մեր երկրի տարբեր ուսպուրչիկաներում արժանացել է բարձր գնահատականի: Գեղեցիկ ու ճաշակով պատրաստված մետաքսյա նուրբ սպիտակեղենն ու տղամարդկանց վերնաշապիկները ամենուրեք արժանանում են գնորդի հավանությունը: Այդ պատճառով էլ տարեցատարի ակնառու կերպով աճում է ֆաբրիկայի արտադրանքը: 1954 թվականին արտադրվել է 34 տեսակի սպիտակեղեն, կանացի, տղամարդկանց և երեխաների սպորտային հագուստեղեն: 1955 թվականին թողարկվել է 5,5 միլիոն մետաքսյա և բամբակյա գործվածք՝ 41 միլիոն ռուբլու արժույթվամբ, իսկ 1960 թվականին՝ արտադրվելու է 10 միլիոն գործվածք՝ մոտ 60 միլիոն ռուբլու արժույթվամբ¹:

Ֆաբրիկայում 1947 թվականին աշխատում էին 27 բանվոր՝ յուրաքանչյուրը տալով տարեկան 3630 ռուբլու արտադրանք, իսկ 1958 թվականին՝ 1313 բանվոր, որոնք արտադրել են 7,5 միլիոն գործվածք, դրանից երկու միլիոնը մետաքսից: Համախառն արտադրանքը կլել է 57 միլիոն ռուբլի: Յուրաքանչյուր բանվորի թողարկած տարեկան արտադրանքի արժեքը կազմում էր 46781 ռուբլի: Այսպիսով, տասը տարում ֆաբրիկայի արտադրանքն աճել է ավելի քան 40 անգամ²:

Կիրովականում թեթև արդյունաբերության մյուս կարևոր ձեռնարկությունը կորդի ֆաբրիկան է, որի սարքավորման տեղադրումն սկսվել է 1943 թվականի վերջերին: Այդ սարքավորումը պատերազմի տարիներին էլակուացվել է Տաշքենդ, այնտեղից՝ Լենինական, ապա՝ Կիրովական: Քաղաքում ունեցած հարմար շենքերը վերակառուցելով այդ նպատակի համար, կարճ ժամկետում սարքավորման, մոնտաժավորման աշ-

1 Տվյալները տե՛ս Կամոյի անվան տրիկոտաժի ֆաբրիկայի արտադրական բաժնում:

2 Նույն տեղում:

խտանքներն ավարտվում են: 1945 թվականին ֆաբրիկան սկսում է աշխատել օրական 800 կիլոգրամ բամբակի մշակման կարողությամբ, տալով առաջին արտադրանքը: Ֆաբրիկայի տեղադրման և առաջին արտադրանքն ապահովելու համար Ռուսաստանից կիրովական էին ժամանել գործարանի ղլխավոր ինժեներ Ա. Ժիլեզնին, էներգետիկ Ի. Մարկովը և ցեխի վարպետ Վ. Գալկինը: Սրանց ղեկավարությամբ ֆաբրիկայում ստացվեց առաջին մետր գործված կորզը:

Ֆաբրիկան ունի զոռզ, սանրոզ, նախապատրաստական, մանող, փաթաթող, ոլորող, գործող և մի շարք օժանդակ ցեխեր:

1954—1955 թվականներին սկսվել է ֆաբրիկայի հիմնական վերակառուցումը՝ նախ կառուցվել է նոր գոռզ ցեխը, ուր զրվել է հայրենական արտադրության նոր տեսակի կոմբինացված ավտոմատ սարքավորում, որի արտադրողականությունը նույն արտադրական տեղամասի վրա երկու տոննա բամբակի մշակումից հասնում է 5 տոննայի: Նախապատրաստական ցեխում նախկինում երկու պրոցեսներ անցնող տեխնոլոգիական եղանակը, 50 նոր զրված մեքենաների շնորհիվ, վեր է ածվել տեխնոլոգիական մեկ պրոցեսի, որի շնորհիվ կրկնապատկվել է արտադրական կարողությունը:

Մանարանը, որը ֆաբրիկայի հիմնական ցեխն է, մինչև 1954 թվականը ունեցել է օրական մոտ երկու տոննա թելի արտադրական կարողություն: Այդ ցեխում զրվել են 27 նորագույն ձևի մանող մեքենաներ՝ 4 տոննա թելի արտադրական կարողությամբ:

Փաթաթող և ոլորող ցեխերը ստացված թելը ենթարկում են լրացուցիչ մշակման, փաթաթման, ոլորքի և քլմիական նյութերի միջոցով թելին տալիս լրացուցիչ ամրություն, որից հետո այդ թելը հանձնվում է գործող ցեխին որպես պատրաստի կուսաֆաբրիկատ: Նախկինում գործող ցեխը ուներ 6 մեքենա, որոնք տեղադրված էին ոլորող մեքենաների հետ: 1957 թվականին կառուցվեց և շահագործման հանձնվեց գործող ցեխի կորպուսը, որը կահավորված է նորագույն սարքավորումներ:

րով՝ մինչև 10 հազար քառակուսի մետր կորդի օրական արտադրական կարողությամբ: Ֆարբիկայում աշխատում են մոտ 400 բանվոր-բանվորուհի, որից 52-ը ինժեներա-տեխնիկական աշխատողներ են: Առաջավոր բանվորներից են՝ Վ. Գալստյանը և Ա. Ավետիսյանը (մանարանից): Ֆարբիկայի հիմնադիրներից են ենթավարպետ Ժ. Ադալյանը և գլխավոր ինժեներ Ի. Դանիելյանը, վերջինս ավարտել է տեքստիլ արդյունաբերության ինստիտուտը:

Ֆարբիկայի կուլեկտիվը մրցում է Մոսկվայի Դեզոմսկի կորդի խոշորագույն գործարանի կուլեկտիվի հետ: 1958, 1959 և 1960 թվականներին կիրովականցիները Մոսկվայում՝ իրենց մրցակից ձեռնարկություններում ամփոփել են սոցիալիստական մրցության արդյունքները և ծանոթացել նրանց առաջավոր փորձին: Ամեն տարի երկու անգամ կատարվում են մրցույթաբարիկաների ներկայացուցիչների փոխադարձ այցելություններ:

Ֆարբիկայում նոր դրված սարքավորման, սոցմրցման ծավալման, առաջավորների փորձի փոխանակման շնորհիվ բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը: Ֆարբիկայի 1958 թվականի արտադրանքը, 1957 թվականի համեմատությամբ, աճել է 32 տոկոսով: Ձեռնարկությունն իր արտադրանքն ամբողջապես տրամադրում է Երևանի ավտոդողերի գործարանին:

1950 թվականին ֆարբիկան արտադրել է ավելի քան կես միլիոն քառակուսի մետր կորդ, 1955 թվականին՝ 1,5 միլիոն, իսկ 1958 թվականին՝ երկու միլիոն քառակուսի մետր՝ 22 միլիոն ռուբլի արժեքով¹:

Պլանների կատարմամբ առավել աչքի են ընկնում մանարանից՝ Ս. Հովհաննիսյանը, հայրենագարձ Ա. Կոնսուլյանը, Վ. Գալստյանը, Թ. Սվանիձեն, Գ. Ղամբարյանը, սլորող ցեխից՝ Ա. Գրիգորյանը և շատ ուրիշներ:

¹ Տվյալները վերցված են Կիրովականի կորդի ֆարբիկայի պլանային բաժնից:

Ֆարրիկայի բանվորներին որակավորելու նպատակով կազմակերպված են անհատական և կոլեկտիվ տեխնոլոգման դասընթացներ: Առաջավորների զպրոցում և տեխնոլոգման խմբակներում ընդգրկված են մի քանի տասնյակ բանվորներ: Բազմաթիվ բանվորներ ու բանվորուհիներ սովորում են գիշերային բաներիտ զպրոցներում, հեռակա տեխնիկումներում և Իվանովոյի տեքստիլ արդյունաբերության հեռակա ինստիտուտում:

Կիրովականի կորգի Ֆարրիկան 1957 թվականին վատ էր աշխատում, սինտեմատիկաբար թերակատարում էր արտադրական պլանները, խիստ ցածր էին ձեռնարկության տեխնիկա-տնտեսական ցուցանիշները: Ֆարրիկայի պարտիտական կազմակերպությունն ամենից առաջ կորդագործների ուշադրությունը բեռեց սարքավորումը լրիվ կարողություններ օգտագործելու վրա: Ֆարրիկայում աշխատում են մեծ թվով բանվորներ, որոնք հմտորեն են տիրապետում իրենց գործի տեխնիկային, ունեն արտադրական բարձր որակավորում: Դրանցից են՝ բանվորուհիներ Մ. էլբեկյանը, Ա. Գևորգյանը, Ա. Աբրահամյանը, Մ. Ադալյանը, Ն. Մուսայելյանը և ուրիշներ, որոնք աշխատանքի ուսանելի փորձ են կուտակել: Մանվածքային ցեխի բանվորուհի Ա. Աբրահամյանը, անցնելով մեքենաների բարձր տիպի սպասարկման, նախատեսված 436-ի փոխարեն սպասարկում է 654 իլիկ: Իսկ Լենինականի տեքստիլ ֆաբրիկայում ավարտած Ա. Բաբայանը սպասարկում է հազար իլիկ: Ո՞րն է նրա արտադրական հաջողության «գաղտնիքը»: Այդ «գաղտնիքը» աշխատանքի գերարագ մեթոդի կիրառումն է: Վարժվելով և աշխատանքի իր հիմնական մեթոդը դարձնելով երկու ձևով աշխատելը, նա կրճատում է մանելու առանձին օպերացիաների տեղումնումը և դրանով իսկ ապահովում մեքենաների արտադրական կարողության առավելագույն օգտագործումը: Թեև կտրվածքը միացնելու համար, օրինակ, նրան լիովին բավարարում է 1¹/₂—2 վայրկյանը, մինչդեռ դրա համար սահմանված է 3¹/₂ վայրկյան: Շրջանակի մեջ կոճը փոխելու համար նախատեսված 7 վայրկյանի

փոխարեն նա այդ դործողությունը կատարում է 5—5,5 վայրկյառնում: Ձանազան օպերացիաների տեղողությունը կրճատելու միջոցով նա տնտեսում է օժանդակ աշխատաժամանակի մոտ 15—20 տոկոսը: Պարզ է, որ խնայված ժամանակամիջոցի հաշվին ալելանում է արաադրանքի թողարկումը, ապահովվում մանվածքի բարձր որակը:

Աշխատանքի այս ուսանելի փորձը նա հաղորդել է ցեխի բոլոր մանածագործներին, և այժմ նրանցից շատերը ետ շեն մնում իրենց վարպետից:

Նախամանող ցեխի բանվորուհի Մ. էլբեկյանն իր պլանները կատարում է 120 և ալելի տոկոսով: Նրա փորձի ուսումնասիրությունից պարզվում է, որ նա աշխատում է հմտորեն՝ ձեռքերի բոլոր մատներով: Այսպես, ձախ ձեռքի 2-րդ, 3-րդ և 4-րդ մատներով նա բռնում է կոճի ներքին մասից, իսկ աջ ձեռքի 1-ին և 5-րդ մատներով «սանրում» է թելի մանվածքը: Միաժամանակ նա կատարում է երկու օպերացիա՝ կոճի փոխումը և հյուսվածքի մեջ առաջացած հանգուցյի վերացումը:

Առաջավոր բանվորուհու փորձը լայնորեն տարածվեց ցեխում, շատերն սկսեցին աշխատել նրա մեթոդով:

Ֆաբրիկայի պարտիական ու արհմիութենական կազմակերպությունները լայն աշխատանք են կատարում արտագրությունյան այդ առաջավորի փորձը կորդագործների սեփականությունը դարձնելու, աշխատանքի պրոգրեսիվ մեթոդներն արմատավորելու, տեխնիկայի օգտագործումը բարելավելու ուղղությամբ: 1958 թվականին փորձի փոխանակման կարգով ուսումնասիրվել, զրի է առնվել ու տարածվել է բանվորուհիներ Մ. էլբեկյանի և Ա. Աբրահամյանի աշխատանքի փորձը:

1958—59 թվականներին ֆաբրիկայում լրիվ փոխվեցին մեքենայական սարքերը, դրվեցին հայրենական բարձր արտագրողականությունները նոր մեքենաներ: Նախապատրաստական ցեխում տեղադրված են ժապավենող երկու նոր մեքենա, որոնց օգտագործման շնորհիվ մանվածքային ցեխն այժմ բավարար քանակությամբ նախամանվածք է ստանում: Միջին նախամանող երեք նոր մեքենաների տեղադրմամբ

կրճատվել է բարակ նախամամանման ցիկլը և արագացվել մանելու պրոցեսը, որովհետև այդ մեքենան աշխատանքային երեք պրոցես կատարում է միաժամանակ:

Նախապատրաստական ցեխում տեղադրվել են սանրող հայրենական նոր մեքենաներ: Կորդի որակը բարձրացնելու, գործվածքի թելի անհավասարությունը խստառ լիկվիդացնելու նպատակով ֆարրիկայում արմատավորվել է Յարոսլավլի և Մոսկվայի Դեղովսկի կորդի ֆարրիկաների ուլորող ցեխերի բանվորների առաջավոր փորձը, որը նվազագույնի է հասցնում հանգույցների քանակը, լավացնում է կորդի որակը և թողարկում միայն առաջին տեսակի կորդ:

Կիրովականի կորդի ֆարրիկայի կուլեկտիվն ղգալի աշխատանք է կատարել արտադրություն տեխնոլոգիան կատարելագործելու և դրա հիման վրա արտադրանքի թողարկումն ալելացնելու, նրա որակը բարելավելու ուղղությամբ:

Կորդի ֆարրիկայում ղրված է հայրենական նոր սարքավորում, բայց որակյալ կադրեր չունենալու պատճառով մեքենաներն իրենց արտադրական կարողությամբ աշխատեցնել չեն կարողանում: Ահա ինչու մինչև 1959 թվականի դեկտեմբեր ամիսը ֆարրիկան թերակատարում էր իր պլանները:

1959 թվականի նոյեմբերին Յարոսլավլի «Կրասնի Պերեկոպ» կորդի գործարանից եկան 17 որակյալ մանողներ, այդ թվում Վ. Իֆիմովան, Օ. Յիպլոնկովան, Թ. Կոստոներևան, Թ. Վեդիրսկայան և ուրիշներ: Սրանց աշխատանքի շնորհիվ Կիրովականի կորդի ֆարրիկան սկսեց կատարել ինչպես 1959 թվականի դեկտեմբերի, այնպես էլ 1960 թվականի առաջին եռամսյակի պլանները: Սրանք պարտավորություն են ստանձնել մի քանի տարի մնալ Կիրովականի ֆարրիկայում, տեղում պատրաստել մանողների որակյալ կադրեր, որոնք ընդունակ լինեն ղրված հայրենական սարքավորումը հասցնել արտադրական մաքսիմալ կարողության, որպեսզի 1960 թվականին կորդի ֆարրիկան Յ անգամ ալելացնի իր արտադրանքը 1959 թվականի համեմատությամբ և տարեկան համախառն արտադրանքը հասցնի 63 միլիոն ուրլու:

Հայկական ՍՍՌ Ժողովուրդների Թեմա արդյունաբերության վարչության Կիրովականի Շահումյանի անվան կարի ֆաբրիկան կազմակերպվել է 1927 թվականից գոյություն ունեցող «Նոր տարազ» արտելի բազայի վրա, ուր աշխատում էին 200 անվորներ ու բանվորուհիներ: 1956 թվականի հունիսից այդ արտելը վեր է ածվել ֆաբրիկայի, ուր երկու հերթի աշխատում են 500-ից ավելի բանվորներ: Արտելը ֆաբրիկայի վերածվելու կապակցությամբ ավելացավ աշխատամասային տարածությունը, դրվեց նաև միանրամասն նոր սարքավորում: Նախկինում ձեռքով կատարվող աշխատանքները մեքենայացվեցին: Արտելի ժամանակ տարեկան ստացվում էր մոտ 8—10 միլիոն ռուբլու արտադրանք¹: Ֆաբրիկան հիմնականում արտադրում է տղամարդկանց անդրավարտիքներ, բամբակյա արտահագուստ՝ բամբակած շալվարներ և բաճկոններ, ինչպես նաև Ժողովուրդների պատվերով կարում է խալաթներ, բլուզներ և բանվորական բրդյա կոստյումներ:

Ֆաբրիկան հիմնականում ունի չորս ցեխ՝ մասսայական, նախապատրաստական, ձեռնոց, բաճկոնների և մի քանի օժանդակ ցեխեր: Ֆաբրիկայում առավել աչքի է ընկնում կարող բանվորուհի Թ. Խաչատրյանը, որն իր պլանները կատարում է 140—150 տոկոսով և սալիս բարձրորակ արտադրանք: Սրանից հետ շին մնում նաև Հ. Զուրաբյանը, Վ. Մարտիրոսյանը, Ե. Լիպստովան և ուրիշներ: Կոլեկտիվը մրցության մեջ է Բաթումի Օրջոնիկիձեի անվան կարի ֆաբրիկայի հետ: Երկու մրցակիցները հաճախ են այցելում միմյանց, ստուգում սոցմրցման կատարման ընթացքը, ծանոթանում առաջավորների փորձին:

Ֆաբրիկայի այժմյան շենքը չի բավարարում նրա արտադրական պահանջներին: Մի շարք ցեխեր ձեռնարկության հիմնական տերիտորիայից հեռու են ու ցրված, որը և դժվարություններ է ստեղծում ֆաբրիկայի աշխատանքներում:

Կիրովականի «Նոր ուղի» կոշիկի արտելը տարեցտարի ընդարձակվել է: 1956 թվականի հունիսից այն վեր է ածվել պետական գործարանի և դարձել Ժողովուրդների Թեմա ար-

¹ Տվյալները տե՛ս Կիրովականի Շահումյանի անվան կարի ֆաբրիկայի արտադրական բաժնի գործերում:

գլուխարկերովյան վարչության Կիրովականի կոշիկի Ֆարրիկա, ուր աշխատում են 200-ից ավելի բանվորներ: Ֆարրիկան տարեկան տալիս է 70 հազար գույգ մանկական կոշիկ, իսկ մոդելային ցեխերի միջոցով՝ 9000 զույգ կոշիկ¹: Ֆարրիկայի տարեկան համախառն արտադրանքի արժեքը հասնում է 6,5 միլիոն ուսբլու: Ֆարրիկայում իրենց պլանները բարձր որակով են կատարում Ս. Վարդանյանը, Լ. Սարգսյանը, վերջինս տիրապետում է մի քանի պրոֆեսիաների, իսկ Բ. Մխիթարյանը կոշիկի արտադրության մեջ հղած ամենաբարդ մեքենաներից մեկի աշխատանքներն է դեկավարում: 1960 թվականին հիմնովին շահագործման կհանձնվի Ֆարրիկայի նոր շենքը: Այժմ արդեն ավարտվել է արտադրական կորպուսների շինարարությանը և տեղադրվել են նոր կոնվեյերներ ու սարքավորումներ:

Կիրովականի գորգագործական արտելը 1957 թվականի մայիսին տեղափոխվել է նոր շենք, ուր ավելացել է զազգահների քանակը: Ինչպես նաև տարեկան արտադրանքը, որը 1957 թվականին կազմում էր ըստ արժեքի՝ 1,5 միլիոն, 1959 թվականին՝ 2 միլիոն, իսկ 1960 թվականին կազմելու է մոտ 2,5 միլիոն ուսբլու: Արտելում բարձրորակ գորգագործներից է Բ. Փամհարյանը, որը ոչ միայն արագ է գործում՝ այլև տալիս է առաջին որակի արտադրանք, դրա համար էլ նա Հայարդխորհրդի կողմից ստացավ առաջին կարգի դիպլոմ: Սրտնյից հո շի մնում Ս. Քուչիկյանը, որը 1957 թվականին նախատեսված 15 քառակուսի մետր գորգի փոխարեն ավելց 27 քառակուսի մետր գորգ, բոլորն էլ առաջին տեսակի²:

Գորգագործուհիներ Գ. Բեռնիցյանը և Բ. Մարկոսյանը ոչ միայն գերակատարում են իրենց պլանները, այլև տալիս են առաջին տեսակի գորգ: Քուչրեր Քնարիկ և Ռիտա Հովհաննիսյանները երրորդ տարին էլ, ինչ աշխատում են գորգագործական արտելում: Մրցելով միմյանց հետ, ամենօրյա առաջագրանքները կատարում են 140—150 տոկոսով և թողարկում միայն առաջին տեսակի գորգեր:

¹ Տվյալները վերցված են Կիրովականի կոշիկի Ֆարրիկայի ղեկավարից:

² Տվյալները վերցված են Կիրովականի գորգագործական արտելի վարչությունից:

Գորգագործական արտելը մինչև 1960 թվականը արտադրում էր «Երևան», «Սևան», «Լոռի», «Արագած», «Բայազետ» անուններով գորգեր, իսկ 1960 թվականին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակի կապակցությամբ, կոլեկտիվը պատրաստում է «Կիրովական» անունով գորգեր, ուր արտահայտվելու է Կիրովականի գեղեցիկ բնությունը:

Փայտամշակման արտելի և տեղական արդյունաբերության կահույքի ցեխի բազայի վրա 1957 թվականի հունվարին կազմակերպվեց Կիրովականի կահույքի ֆաբրիկան, որն այժմ ունի կահույքի մասերի պատրաստման և հավաքման ցեխեր, ուր աշխատում են 100-ից ավելի բանվորներ:

Ֆաբրիկան արտադրում է հանդերձապահարաններ, բազմոցներ (ղիվան), մահճակալներ, գրապահարաններ և այլն:

Կահույքագործները 1959 թվականին տվել են մոտ 2,5 միլիոն ռուբլու արտադրանք:

1959 թվականի երկրորդ կիսամյակի արտադրական սլափները բարձր ցուցանիշներով կատարելու համար ֆաբրիկայի կոլեկտիվը շահել է ՀԿՊ Կիրովականի քաղաքային կոմիտեի և քաղաքային Սովետի դործկոմի Փոխանցիկ կարմիր դրոշը, ինչպես նաև Տեղական տնտեսության մինիստրության և արհմիության ռեսպուբլիկական կոմիտեի 2-րդ կարգի մրցանակը:

1960 թվականի հունվարից Կիրովականի կահույքի ֆաբրիկան հանձնվում է Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհի Փայտամշակման և անտառային արդյունաբերության վարչությանը: 1960 թվականի առաջին կիսամյակի պլանը կոլեկտիվը կատարել է 124 տոկոսով՝ իր բոլոր ցուցանիշներով¹:

Ֆաբրիկայում առավել աչքի են ընկնում հավաքող բանվոր Ն. Ղուկասյանը, Հ. Զուրաբյանը, հայրենադարձ Կ. Քարաջյանը, մասեր պատրաստող Լ. Խաչատրյանը: Սրանք ոչ միայն գերակատարում են իրենց պլանները, այլև տալիս են բարձրորակ արտադրանք: Կոլեկտիվը մրցության մեջ է Բա-

¹ Տվյալները տե՛ս Կիրովականի կահույքի ֆաբրիկայի տարեկան պլանների կատարման 1960 թ. գործում:

թումրի տեղական տնտեսության կահույքի ֆարքիկայի կուլեկտիվի հետ: 1960 թվականին լայնացվելու է ֆարքիկայի արտադրական տերիտորիան. կազմակերպվելու են նոր ցեխեր, զրվելու է առաջավոր սարքավորում, որից զուրկ է ֆարքիկան: Յոթնամյակում կիրովականում կառուցվելու է կահույքի խոշոր ֆարքիկա:

Կիրովականի կույրերի միավորումը կազմակերպվել է զիւնես 1933 թվականին Ռ. Հակոբյանի նախաձեռնութեամբ: Արհեստանոցի կուլեկտիվը 1958 թվականից արտադրում է լվացքի շպիլկաներ, գրասենյակային պնդիչներ (սկրեպ), իսկ կարի ցիխն արտադրում է տեխնիկական ձեռնոցներ և անձեռնոցիկներ: Ա. Խաչատրյանը հիմնադրել է շպիլկայի արտադրութեան ցեխը, ուր աշխատում են մոտ 50 հոգի, այդ թվում հնագույն բանվորուհիներ Ն. Անանյանը և Թ. Սարգսյանը: Այժմ շպիլկայի ցեխի վարիչն է Ս. Վեքիլյանը: Ս. Մարանդյանը, որը արհեստանոցի հիմնադիրներից մեկն է, երկաթյա զսպանակներն է փաթաթում. նա ոչ միայն գերակատարում է սլանները, այլև տալիս է բարձրորակ արտադրաք: Արհեստանոցում առավել աչքի են ընկնում զաղզահի բանվորներ Մ. Մելիքսեթյանը, Ս. Մինասյանը, Հ. Հովսեփյանը, Գ. Հովհաննիսյանը: 1955 թվականին արհեստանոցում աշխատում էին 80 բանվոր, որոնցից 47-ը կույրեր: Նրանք տարեկան տվել են 1.300 հազար ռուբլու համախառն արտադրանք: 1959 թվականին աշխատում էին 109 բանվոր, որից 62-ը կույրեր: Նրանք թողարկել են մոտ 4 միլիոն ռուբլու համախառն արտադրանք:

Արհեստանոցի կուլեկտիվը 1960 թվականի առաջին կիսամյակի սլանը կատարեց 127 տոկոսով: Իսկ շպիլկայի ցեխը, ուր աշխատում են բացառապէս կույրեր, սլանը կատարեց 142 տոկոսով¹: Այս արհեստանոցում աշխատողների 60 տոկոսը կույրեր են: Սրանց իրենց աշխատանքներում բարեխիղճ կերպով օգնում են մնացած աշխատողները: Հայաս-

¹ Տվյալները վերցված են Կիրովականի կույրերի ռուսամեա-արտադրական արհեստանոցի վարչութեանից:

տանում սովետական կարգերի հաստատման քառասնամյակը, որը զուգարդիպում է Հայաստանում կուլյրերի միավորման կազմակերպման 30 տարվան, լավագույն ձևով դիմավորեիլու համար կուլեկտիվը ծավալել է սոցիալիստական մըրցություն:

1949 թվականից սկսած կուլյրերի ուսումնա-արտադրական արհեստանոցի վարչության նախագահ է Հայրենական պատերազմի մասնակից, Կարմիր Աստղի շքանշանակիր, կուլյր հաշմանդամ Ռ. Ամիրբեկյանը, որն արտադրության հմուտ կազմակերպիչ է:

Յոթնամյակում ընդարձակվելու է այս արհեստանոցը, որի համար ներդրվելու է մի քանի միլիոն ուրբլի Այժմ կառուցվում են արտադրական կորպուս, բնակելի տներ և կուլսուր-կենցաղային մի շարք օբյեկտներ:

1957 թվականի հոկտեմբերից Կիրովական քաղաքում սկսվել է արհեստական մետաքսաթելի գործարանի շինարարությունը, որի վրա ներդրվել է մի քանի հարյուր միլիոն ուրբլի: Արդեն կառուցված են արտադրական մի շարք կորպուսներ, բանվորների համար բազմահարկ գեղեցիկ բնակելի շենքեր: Երկաթուղագիծը միացվել է արտադրական կորպուսին՝ սարքավորումներն ստանալու և շինմոնտաժային աշխատանքները սկսելու համար: Գործարանի սարքավորումը, որի մի մասը ստացվել է, ամբողջովին կըստացվի Անդլիայից՝ 1960 թվականի ընթացքում: Գործարանի գլխավոր ինժեներ Մ. Բալասանյանը և մի շարք այլ մասնագետներ մեկնել են Անգլիա՝ յուրացնելու արհեստական մետաքսաթելի արտադրության տեխնոլոգիական պրոցեսները:

Մինչև 1960 թվականի վերջը կներդրվի մի քանի տասնյակ միլիոն ուրբլի միայն շինմոնտաժային աշխատանքների վրա:

Երբ գործարկվի Կիրովականի արհեստական մետաքսաթելի գործարանը, այնտեղ կաշխատեն հազարավոր բանվոր-ծառայողներ, որից $\frac{3}{4}$ կանայք, և տարեկան կտան ավելի շատ արտադրանք, քան Կիրովականի արդյունաբերական բոլոր ձեռնարկութունները միասին տալու են 1960 թվականին:



Այն խումբը ինքնակառուցիկ բաղադրիչներ

Գործարանի արտադրանքը որակի տեսակետից դերազանցում է բնական մետաքսաթելին՝ իր ամրությամբ, գույնով, դեղեցկությամբ և մի շարք այլ հատկություններով: Արհեստական մետաքսաթելի գործարանը հումք է տալու ինչպես մեր, այնպես էլ ևզրայրական ռեսպուբլիկաների թեթև արդյունաբերությանը: Մի քանի անգամ ավելանալու է Կիրովականի Կամուլի անվան տրիկոտաժի ֆաբրիկայի տարեկան արտադրանքը և օրական հասնելու է 20 տոննա մետաքսաթելի: Այս գործարանի կառուցման շինարարական աշխատանքները տանում է Կիրովականի շինարարական տրեստի № 2 շինարարական վարչությունը: Շինարարների կուլեկտիվը ջանք չի խնայում այդ գործարանը ժամանակին շահագործման հանձնելու համար:

* * *

*

Հայաստանում արագ տեմպերով զարգանում է սննդի արդյունաբերությունը, որի մեջ ընդգրկվում են մսեղեն-կաթնեղենի, խմիչքեղենի, ծխախոտի, հացաբուլկեղենի արդյունաբերության, պահածոների, ձեթ-օձառի, շաքարի և կթերայուղի արտադրության ձեռնարկությունները:

Յոթնամյա պլանով նախատեսվում է է՛լ ավելի զարգացնել սննդի արդյունաբերությունը՝ 1965 թվականին, 1958 թվականի համեմատությամբ, նրա արտադրանքը ավելանալու է մոտ 75 տոկոսով:

Սննդամթերքների արտադրության ծավալի աճման հետ միասին տարեցտարի միջոցառումներ են ձեռնարկվում սննդամթերքների համայն և սննդարար հատկությունների հետազոտ բարձրացման, կիսաֆաբրիկատների, խոհանոցային մթերքների, մանկական և դիետիկ սննդամթերքների արտադրության ընդլայնման ուղղությամբ:

Կիրովականում եղած սննդարդյունաբերական ձեռնարկություններն են՝ մսի կոմբինատը, կաթի գործարանը, ինչպես նաև տեղական արդյունաբերության ենթակայության հացի և լիմոնազի գործարաններն ու հրուշակեղենի ցեխը:

Սննդարդյունաբերության ամենախոշոր ձեռնարկությունը Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհի Մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության վարչության Կիրովականի մսի կոմբինատն է, որը շահագործման է հանձնվել 1953 թվականի նոյեմբերին: Շինարարական աշխատանքներն սկսվել են 1948—1949 թվականներին: Դրանում ներգրվել է մոտ 8 միլիոն ռուբլի: Կոմբինատն ունի երշիկի, յուղի-հալի, սառեցման, մսի և ելանյութերի վերամշակման, կոմպրեսորային նախասպանդի, ինչպես նաև օժանդակ մի շարք ցեխեր, տալիս է երշիկեղեն և կիսաֆարրիկատներ: Տարեցտարի աճում է նրա տարեկան արտադրանքը: Կոմբինատը 1953 թվականին տվել է 10 միլիոն ռուբլու, 1955 թվականին՝ 23 միլիոն ռուբլու, իսկ 1959 թվականին՝ մոտ 32 միլիոն ռուբլու համախառն արտադրանք¹:

Կոմբինատի կոլեկտիվը բաղկացած է 130 մարդուց, որից 21-ը ինժեներա-տեխնիկական անձնակազմն է: Մրցության մեջ են Բաթումիի մսի կոմբինատի կոլեկտիվի հետ: Կոմբինատը առաջավոր մարդիկ շատ ունի: Նրանցից է մասնագետ վարպետ, հայրենադարձ Եր. Փարչամյանը. նա իր պլանները միշտ գերակատարում է, որի համար էլ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության կողմից 1958 թվականի օգոստոսին պարգևատրվել է Պատվոգրով: Մեխանիկական ցեխի իսառատ Մ. Մելիքսեթյանը ոչ միայն գերակատարում է իր պլանները, այլև ռացիոնալիզատորական մի քանի առաջարկների հեղինակ է: Երշիկի ցեխի բանվորուհի, բաղաբային Սովետի դեպուտատ Յ. Մկոյանը և ուտիլի ցեխի բանվոր Ա. Մանուկյանը իրենց պլանները կատարում են կրկնակի չափով: Հայտնի ռացիոնալիզատոր է գլխավոր մեխանիկ,

¹ Թվերը տե՛ս Կիրովականի մսի կոմբինատի պլանային բաժնի գործերում:

հայրենադարձ Թ. Տեր-Սարգսյանը. նա կոմպրեսորի ցեխու՞ կատարեց սարքավորման կատարելագործում, որի շնորհիվ կոմբինատը տարեկան ստանում է 30 հազար ռուբլու խնայողություն:

1959 թվականին վերակառուցվեց երջիկի ցեխը: Գոյություն ունեցող մակերեսների հաշվին երկու անգամ ավելացավ արտադրական կարողությունը, իսկ սառցարանային տնտեսությունն ավելացավ 700 տոննա միանվագ տարողությամբ: Բացի այս, վերջին երկու տարում տարբեր ցեխերում տեղադրվել են միանգամայն նոր սարքավորումներ՝ որոնց շնորհիվ մեքենայացվել են մի շարք աշխատանքներ, կատարելագործվել տեխնոլոգիական պրոցեսները: Յոթնամյակում վերակառուցվելու է նաև անասունների նախնական մշակման ցեխը, որով և կրկնապատկվելու է ցեխի արտադրական կարողությունը:

Կիրովականի մսի կոմբինատում պլանների թերակատարման հիմնական պատճառը կուտնտեսությունների կողմից անասունների ոչ սխտեմատիկ մատակարարումն է, որը ստեղծում է սեղոնայնություն, խանգարում կոմբինատի համաչափ աշխատանքը և տեղիք տալիս զգալի կորուստների:

Աննդարդյունաբերության մյուս ձևոնարկությունը կաթի զործարանն է, որը գոյություն ունի 1935 թվականից, արտադրական փոքր կարողությամբ: 1951 թվականին նրա վրա ներդրվել է մոտ 2 միլիոն ռուբլի: Գործարանն ունի կաթնամթերքի ու պաղպաղակի արտադրության, կոմպրեսորների ու շոգու կաթսաների և օժանդակ ցեխեր: Այստեղ մեխանիզացված է ամբողջ աշխատանքը: Օրական մշակվում է 9—10 տոննա կաթ, իսկ պաղպաղակ ըստ պահանջի մատակարարում է Դիլիջանին, Սպիտակին, Կիրովականին, Իջևանին:

Տեղական արդյունաբերություն: Լայն սպառման արդյունաբերական ապրանքների արտադրության մեջ իրենց որոշակի մասնակցությունն ունեն Տեղական տնտեսության մինիստրության՝ աշխատավորների ղեկուսատուների քաղա-

քային և շրջանային Սովետների ենթակայության ձեռնարկությունները, որոնք միաժամանակ զրաղվում են բնակչության կենցաղային պահանջմունքների սպասարկման հարցերով:

Տարեցտարի աճում է տեղական արդյունաբերական ձևարկությունների արտադրանքը՝ շնորհիվ շահագործման հանձնվող նոր գործարանների և ցեխերի, ինչպես և հին գործարաններում տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման: Բնակչության կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման հետ աճում են նրան սպասարկելու պահանջները:

Կիրովականի տեղական արդյունաբերության արտադրության մեջ են մտնում կղմինդրի-աղյուսի¹, մեխանիկական, հացի, լիմոնադի գործարանները, կենցաղսպասարկման և կարի արտադրական կոմբինատները, որոնք իրենց մեջ միավորում են մոտ 850 բանվոր: Նրանք 1959 թվականին կատարելով իրենց տարեկան պլանը՝ տվեցին 38 միլիոն ռուբլու համախառն արտադրանք, իսկ 1960 թվականին այն հասնելու է մոտ 40 միլիոնի:

Կիրովականի քաղաքային Սովետի տեղական արդյունաբերության բաժնի մեխանիկական գործարանը կազմակերպվել է 1957 թվականին, նախկին տեղարդկոմբինատի մեխանիկական ցեխի բաղադրված: Դառնալով ինքնուրույն գործարան՝ 1955 թվականին տեղափոխվել է նոր շենք, ուր ստեղծված են բոլոր հարմարությունները՝ նոր շենքում տեղադրված են նոր սարքավորումներ: Գործարանի հիմնական արտադրանքը մահճակալներն են: Միաժամանակ արտադրվում են մեխ և ձուլածո շինարարական դետալներ: 1960 թվականին գործարանում աշխատում են 175 բանվորներ, որոնց մեջ իրենց աշխատանքի բարձր արտադրողականությամբ առավել աչքի են ընկնում ձուլող Մ. Բալայանը, ցանցագործ Վ. Գերգելը, հղկող Վ. Օհանյանը, փականագործ Մ. Չաստնիկովը և ուրիշներ: 1960 թվականի կեսերից գործարանն արտադրում է

¹ Կղմինդրի-աղյուսի գործարանի մասին տե՛ս «Շինանյութերի արդյունաբերություն» ենթաղվածում:

մակափակիչներ, որոնք կօգտագործվեն առանձին տնտեսություններում և ընտանիքներում՝ տանը պատրաստվող պահածոների ամանները փակելու համար: Բացի այդ, մեխանիկական գործարանի կոլեկտիվը ձեռնամուխ է եղել նաև նոր տեսակի մահճակալների արտադրության տեխնոլոգիայի շուրջամանր: Քողարկվելու են նաև ծանր տեսակի արդուկներ, որոնք կօգտագործվեն կարի տաղավարներում և ֆաբրիկաներում: 1960 թվականին շահագործման կհանձնվի ձուլման ցեխը, որի շնորհիվ կավելանա ձուլված մասերի և արտադրանքի առանձին տեսակների արտադրությունը և գործարանի համախառն արտադրանքը կհասնի 6,5 միլիոն ռուբլու:

Տեղական արդյունաբերության կարի արտադրական կոմբինատը կազմակերպվել է 1959 թվականի կեսերից՝ անհատական պատվերների և տրիկոտաժի արտելի բազայի վրա: Կոմբինատը քաղաքի տարբեր մասերում ունի 9 անհատական պատվերների տաղավարներ, ուր ընդունվում են պատվերներ: 1959 թվականին կատարելով տարեկան պլանները, կոմբինատի կոլեկտիվը (132 մարդ) տվել է մեկուկես միլիոն ռուբլու համախառն արտադրանք, իսկ 1960 թվականին կտա երկու միլիոն ռուբլու: Կոմբինատում աշխատող երեք վարպետներ Տեղական արդյունաբերության մինիստրության կողմից սրժանացել են վարպետի կոչման:

Տեղական արդյունաբերության կենցաղսպասարկման կոմբինատը կազմակերպվել է 1957 թվականի հունվարին: Կոմբինատը քաղաքի տարբեր մասերում և շրջանի որոշ գյուղերում ունի վերանորոգման և պատվերների 50-ից ավելի արհեստանոցներ ու տաղավարներ, ուր կատարվում են կոշիկի, ժամացույցների, ռադիոընդունիչների, կարի, լվացքի մեքենաների և տնային էլեկտրասարքավորումների վերանորոգումներ, ինչպես նաև հագուստի քիմիական մաքրման, գործվածքեղևի և թելերի ներկման, կահույքի, ավտոմեքենաների վերանորոգման, կենդանազրական և լուսանկարչական աշխատանքներ: 1959 թվականին կազմակերպվել են սառցարանների, փոշեծծիչ մեքենաների, հայելիների վերանորոգման ցեխեր:

կոմբինատի 175 աշխատողներ, կատարելով համախառն արտադրանքի պլանը, 1957 թվականի 2 միլիոնի դիմաց 1959 թվականին տվել են մոտ 3 միլիոն ռուբլու համախառն արտադրանք¹:

1960 թվականին կոմբինատում կազմակերպվել են նաև բնակարաններ վերանորոգող շրջիկ խմբեր, որոնց մի մասը բնակարաններ է վերանորոգելու, իսկ մի մասն էլ բնակարաններում կատարելու է կահույքի վերանորոգումներ: 1960 թվականի վերջերին շահագործման կհանձնվի կոմբինատի անագապատման ցեխը, ուր կարտադրվեն մանկական զանազան խաղալիքներ:

Կիրովականի հացի գործարանը շահագործման է հանձնել 1953 թվականի վերջերին: Նրանում ներդրվել է մոտ 3 միլիոն ռուբլի: Գործարանում տեղադրված նոր սարքավորման շնորհիվ մեքենայացվել են աշխատանքային պրոցեսները: Չորս վառարաններն ունեն 37 տոննա կարողութուն: Գործարանը օրական տալիս է հրեք տեսակի մոտ 30 տոննա, իսկ ամառները՝ 35—37 տոննա հաց: Գործարանում աշխատում են 175 մարդ, որից 3-ը ինժեներա-տեխնիկական աշխատողներ են: Սրանք հատուկ ուշադրութուն են դարձնում տեխնոլոգիական պրոցեսների ճիշտ կատարմանը:

Հացի գործարանին կից կառուցված է հրուշակեղենի ցեխ: Նորակառույց ցեխի շենքում ամբողջապես նոր սարքավորում է դրված: Օրական ստացվելու է երկու տոննա հրուշակեղեն՝ նախկին կես տոննայի փոխարեն:

Տեղական արդյունաբերութայն լիմոնադի գործարանը, իբրև առանձին միավոր, գոյութայն ունի 1951 թվականից: Մինչ այդ համարվել է նախկին սնունդկոմբինատի մի ցեխը և տարեկան տվել է 17 հազար գեկալիտր լիմոնադ: 1955 թվականին գործարանում դրվել է նոր սարքավորում, որի շնորհիվ

¹ Տվյալները վերցված են կենցաղապատարկման կոմբինատի հաշվապահութայնից:

տճել է գործարանի արտադրանքը՝ հասնելով 45 հազար դեկալիտրի, իսկ 1959 թվականին՝ 65 հազար դեկալիտրի¹։

1960 թվականի ամռանից գործարանի կոլեկտիվը արտադրելու է վանաղան տեսակի մրգահյութեր։ Գործարանում աշխատում են 25 հոգի։ Սակայն ներկա արտադրանքը չի բավարարում բնակչության օրեցօր աճող պահանջները, իսկ եղած շենքում ընդարձակվելու և ոչ մի հնարավորություն չկա, դրա համար էլ յոթնամյա պլանում նախատեսված է Կիրովականում կառուցել լիմոնադի նոր գործարան, որի վրա ծախսվելու է մեկուկես միլիոն ռուբլի։

Հետպատերազմյան տարիներին Կիրովականում արագ կերպով զարգացավ տպարանը²։ 1952 թվականին տպարանում տեղադրվեցին երեք լինոտիպ մեքենաներ, 1953—1954 թվականներին կազմակերպվեց ցինկոգրաֆիայի նոր ցեխ՝ հագեցված նորագույն սարքավորումներով և ամբողջովին վերափոխվեց պոլիգրաֆիական սարքավորումը։ Այժմ տպարանն ունի վեց հատ մեծ ծավալի և երկու այլ տիպի տպագրական մեքենաներ, կազմարարական թուղթ ու գիրք կտրող երկու ավտոմատ և մի քանի կիսաավտոմատ մեքենաներ։ Նախկինում ունեցած 30 հազար ռուբլու տարեկան պլանի դիմաց տպարանն այժմ տալիս է մեկ միլիոն 130 հազար ռուբլու արտադրանք, իսկ 1960 թվականին տալու է մեկուկես միլիոն ռուբլու արտադրանք։

Տպարանն այժմ ունի թվով յոթնասուն բանվոր-ծառայող. այդ երիտասարդ մասնագետները աճել են նույն տպարանում։ Նրանք մինչև 1960 թվականը տպագրում էին «Կայծ», «Կիրովականի կոլտնտեսական», «Դիլիջան», «Կիրովականի քիմիագործ», «Ճակնդեղագործ», «Պարնիի կոլտնտեսական» թերթերը, իսկ 1960 թվականին մնացել են միայն «Կայծ»-ն

¹ Տվյալները վերցված են Կիրովականի տեղադրամեծի լիմոնադի գործարանի գիրեկցիայից։

² Չնայած տպարանը չի մտնում տեղական արդյունարևրության մեջ, բայց մենք նպատակահարմար գտանք նրա մասին գրածը տեղավորել այս ենթագլխում։

ու «Կիրովականի քիմիագործ»-ը: Տպարանի նորագույն տեխնիկայով հագեցված ցինկոգրաֆիայի ցիխն սպասարկում է 18 շրջանային թերթերի՝ Ալավերդու, Սպիտակի, Ստեփանավանի, Սեանի, Հրազդանի, Շամշադինի, Մարտունու և այլն: Այդ ցեխը ղեկավարում է հրիտասարդ մասնագետ, նրա կազմակերպիչ Ա. Դեմիրխանյանը: Տպարանի շենքը կառուցված է Կիրովական քաղաքի Սոճինների պուրակից ներքև, Մյասնիկյան և Տպագրիչների փողոցների անկյունում: Շենքում ստեղծված են անհրաժեշտ բոլոր հարմարությունները:

Անտառային տնտեսություն: Դեռևս ցարական կառավարության ժամանակ գոյություն է ունեցել Լոռու-Փամբակի անտառապետությունը, որի տնօրինության տակ են եղել Ստեփանավանի, Կիրովականի, Ալավերդու և Դիլիջանի անտառները: Սովետական իշխանության առաջին օրերից անտառներն ամբողջովին պետականացվել են: Անտառտնտեսության աշխատողների առջև խնդիր է դրվում՝ տեղերում դադարեցնել անկանոն հատումները, պաշտպանել անտառային ֆոնդը, բարձրացնել նրա նյութատվությունը, ջրապաշտպան, հողապաշտպան, կուրորտային և էսթետիկ հատկությունները: Նախկին անտառապետությունը գոյություն ուներ մինչև 1929 թվականը, երբ ժողկոմսովետը անտառապետությունները խոշորացրեց և դրանք վերանվանեց անտառային արդյունաբերական տնտեսություններ, որոնք իրենց հերթին բաժանվում էին շրջանային անտառային արդյունաբերական տնտեսությունների: Կիրովականի անտառային արդյունաբերական տնտեսության մեջ են մտնում Նոյնմբերյանի, Ալավերդու, Ստեփանավանի, Սադախլիի և Կիրովականի անտառային շրջանները: Կիրովականի անտառային շրջանը բռնում է 8.000 հեկտար տարածություն:

1930-ական թվականներից սկսած հատուկ աշխատանքներ են սկսվում Կիրովականի անտառային շրջանում: Խնամքով վերցվում էին ցցաշորերը, թափուկները և որոշ տարածությունների վրա ծառատնկումներ էին կատարվում: 1936 թվականին



Ռաբունդիները մրցության փոխանցիկ դրոշմ հանձնում են Կյուոյականցյաներին

զգալիորեն լայնացավ Կիրովականի անտառային տնտեսությունը, ընդարձակվեցին անտառ-կուլտուրական աշխատանքները. Կիրովականի «Թագավորանիստ» կոշվող բարձունքում 70 հեկտար, Սուլեյման սարի մյուս կողմում՝ «Փաշիգեղ» կոշվող վայրում 25 հեկտար և «Բաղնիզներ» կոշվող վայրում 15 հեկտար տարածության վրա անկվեցին սոճենու և հացենու ծառեր: Պատերազմի տարիներին զաղարեցին անտառատրեկումները (մինչև 1947 թվականը): 1948 թվականին վերսկսվեց մերկ տարածությունների անտառոտպատումը: 1948—1960 թվականներին Կիրովականի շրջակայքում տարեկան միջին հաշվով կատարվում է 50 հեկտար անտառոտպատում: Այսպես՝ անտառոտպատված են երկաթուղային կայարանի դիմացի սարալանջը, ուր գտնվում է Մենավոր (կենտ) ծառը, մոտ 129 հեկտար տարածության վրա, նույնպես անտառի ներքին մասերը՝ Վանաձորից սկսած, «Բոլոր քար»-ի մոտերքը՝ գետի երկու ափը, Սահրատ, Կավահանք, Բեղլուտ-թալա և քաղաքի շրջակայքի այլ վայրեր՝ մոտ 500 հեկտար տարածությամբ: 1936—1960 թվականներին նոր այգի է տնկված Պապանի գյուղում և հաշի թալում՝ 8 հեկտար տարածության վրա, որից 5 հեկտարը այժմ բերքատու է:

1947 թվականի հոկտեմբերից անտառարդյունաբերությունը և անտառտնտեսությունը անջատվեցին իրարից: Այդ կապակցությամբ Կիրովականում ստեղծվեց երկու կազմակերպություն՝ անտառարդյունաբերության և անտառտնտեսության Կիրովականի բաժանմունքներ: 1952 թվականին լուծարքի ենթարկվեց անտառարդյունաբերության բաժանմունքը Կիրովականում, մնաց միայն անտառտնտեսությունը, որն ունի 5 անտառապետություն (Կիրովականի, Խնձորուտի, Համզաչիմանի, Փամբակի, Շահալուի), որոնք ունեն 20 հազար հեկտար անտառային տարածություն: Գրանից անտառով ծածկված է 18 հազար հեկտար տարածություն: Կիրովականի անտառածածկ տարածությունը շրջանի վարչական տերիտորիայի 25 տոկոսն է կազմում:

1960 թվականի սկզբից Կիրովականի արտադրական ցուցադրական անտառտնտեսությունը վերակառուցվել է որպես անտառարդյունաբերական տնտեսություն:

Կիրովականի անտառային տնտեսության փորձակայանը հիմնվել է 1926 թվականին, նպատակ դնելով ուսումնասիրել մեր ռեսպուբլիկայի անտառային հարստությունները, անտառահատման եղանակները և անտառային կուլտուրաները: Գոյության տարիներին փորձակայանի աշխատակիցները հրատարակել են բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ՝ բրոշյուրներ և հոդվածներ: Այժմ փորձակայանում գիտական ուսումնասիրություններ են կատարում գյուղատնտեսական գիտությունների թեկնածուներ Ռ. Աբրահամյանը, Ս. Միրզոյանը և Գ. Ադամյանցն ու Հ. Հախինյանը:

* *
*

1926 թվականից գոյություն ունեցող տեկարանի բազայի վրա 1934 թվականին կազմակերպվում է Դենդրոպարկը՝ նպատակ ունենալով մեր ռեսպուբլիկայի կլիմայական պայմաններում աճեցնել զանազան տեսակի ծառեր և ծաղիկներ: Ինչպես Սովետական Միության, այնպես էլ արտասահմանյան երկրների պարկերից ստացվել են բազմաթիվ ծառերի և ծաղիկների սերմեր, որոնք բազմացվել են Կիրովականի Դենդրոպարկում, Այս պարկն իր գոյության տարիներին ռեսպուբլիկայի անտառտնտեսությանը սովել է մի քանի տասնյակ տեսակի ծառեր՝ ռեսպուբլիկայի կլիմայական տարբեր գոտիներում աճեցնելու համար:

Պարկի երկուսուկես հեկտար տարածության վրա աճում են 200 տեսակի ծառեր ու թփեր և մի քանի տասնյակ տեսակի ծաղիկներ: Բացի այդ, պարկում կան մի քանի տեսակի պլուդատու ծառեր, որոնք այդտեղ փորձարկվում են՝ ռեսպուբլիկայի տարբեր վայրերում աճեցնելու համար: Դենդրոպարկի

հիմնական նպատակն է փորձարկել թանկարժեք և արագաճ տեսակների ծառեր և թփեր իրենց անտառներում աճեցնելու համար, ինչպես նաև կատարել պատմաստումների պտղատու վայրի ծառերի վրա:

Դեղնդրոպարկում երկարամյա ու բեղմնավոր աշխատանք է կատարել Գյուրգի Դենիսովիչ Յարոշենկոն. որը 1924 թվականից սկսած երկար տարիներ Կիրովականում աշխատել է իբրև անտառագետ: Նա ղրեց բազմաթիվ փորձեր, բազմացրեց ծառերի ու ծաղիկների նոր տեսակներ և երեք վայրերում աճեցրեց սոճու ծառեր: Դրանց հիման վրա էլ նա սովեց մի շարք կարևոր գիտական աշխատություններ: Այդ պարկում երկարամյա և օգտակար աշխատանք են կատարել Ի. և Ն. Դանիելյանները, փորձված այգեսպան Լ. Աբելյանը, որը վերջին տարիներին հանդիսանում է Դեղնդրոպարկի վարիչը:

* *

*

Կիրովականի Վանաձորի գեղատեսիլ լանջերին տարածվել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի բուսաբանական այգին, որը հիմնադրվել է 1936 թվականին՝ Գյուրգի և Պավել Յարոշենկո եղբայրների և Կ. Մախաթաձևի կողմից:

Գիտական աշխատողների անձնակր աշխատանքի շնորհիվ տարեցտարի ընդարձակվում է այգին և դասվում է մեր երկրի լավագույն այգիների շարքը: Այգին զբաղեցնում է մոտ 11 հեկտար տարածություն և ունի մոտ 700 ծառատեսակներ, ուր կարելի է տեսնել փշատերև ծառերի բազմաթիվ տեսակներ՝ ամերիկյան սեկվոյա, հիմալայան կետրը, չինական արմավենի, մանջուրական կաղնի, Լենքորանի ակացիա, Ղրիմի եղևնիների տեսակները:

Այգում մի քանի տարի փորձարկումներ են տարվում հունական, մանջուրական, սև կաղնու, շագանակի և նշի տեսակների ստացման ուղղությամբ, որը մեր ուսպուրիկայում դարգացման մեծ հեռանկարներ ունի:

Կիրովականի բուսաբանական այգին գտնվում է 1400 մետր բարձրության վրա, դա ՍՍՌՄ առաջին բարձր լեռնային այգի-

ներից մեկն է: Կիրովականի բուսաբանական այգին խոշոր դեր է խաղում քաղաքի շրջապատի Ֆլորայի բաղմազանության ու անտառային տնտեսության զարգացման գործում, միաժամանակ կոնսուլտացիոն դեր է կատարում ռեսպուբլիկայի քաղաքների կանաչապատման աշխատանքներում:

Այստեղ աճեցվում են մի քանի հարյուր ծառեր, դեկորատիվ թփեր և մոտ 300 ծաղկատեսակներ: որոնց մեծ մասը բերվել է ՍՍՌՄ տարբեր մասերից: Բուսաբանական այգում աճեցրած ուսասկան եղևնիները, զրիմյան սոճիները, կովկասյան և սիրիական պիխտա փշատերևը, շինական վարդենին, գեորգինաների տեսակները լայն շափով տարածվել են քաղաքում և նրա շրջակա գյուղերում: Գեորգինաների նոր տեսակներ աճեցնելու համար բուսաբանական այգին 1954 թվականին պարզատրվել է հատուկ մեղալով ժողովրդական տնտեսության հաջողությունների ցուցահանդեսի ղեկավարության կողմից: Այժմ էլ շարունակվում են ինչպես գեորգինաների նոր տեսակների ստացման, այնպես էլ նրա տարածման աշխատանքները, Կիրովականի բուսաբանական այգին դարձել է քաղաքի հրապուրիչ տեսարժան վայրերից մեկը, ուր հաճախում են հաղարավոր այցելուներ:

Երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտ: Տրանսպորտի բոլոր տեսակների մեջ երկաթուղին դեռևս հանդիսանում է քաղաքի և գյուղի ժողովրդական տրնտեսության տարբեր ճյուղերի, տնտեսական տարբեր շրջանների միջև հաղորդակցության և փոխադրումների հիմնական միջոցը: Բեռների և ուղևորների փոխադրումների $\frac{4}{5}$ մասից ալելին դեռևս կատարվում է երկաթուղային տրանսպորտով: Մեր ռեսպուբլիկայի երկաթուղային ցանցը 1956 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, բնդլայնվել է 27 տոկոսով, մինչդեռ բեռների առաքումն աճել է 21 անգամ, իսկ ստացումը՝ 19 անգամ¹: Մի քանի անգամ ալելացել է նաև մարդա-

¹ «Հայաստանի ժողովրդական տնտեսություն» ամսագիր, 1958 թ. նոյեմբեր-դեկտեմբեր, № 6, էջ 39:

տար գնացքների երթևեկությունը, ղգալի շափով բարելավվել է երկաթուղու տեխնիկական հագեցվածությունը: Ռեսպուբլիկայի երկաթուղայինների ջանասեր աշխատանքի շնորհիվ տվելացել են ծանրաբաշ գնացքների քանակը, ուղարկվող գնացքների միջին բաշը, գնացքների արագությունը, շահույթները, իջել է նաև փոխադրումների ինքնարժեքը:

Դեռևս 1953 թվականին հիմնականում ավարտվեցին 113 կիլոմետր երկարությամբ Սանահին—Լենինական ուղեմասի էլեկտրիֆիկացման աշխատանքները: 1958 թվականին շահագործման հանձնվեց Երևան—Ախտա ուղեմասը՝ 60 կիլոմետր երկարությամբ¹, որը կազմում է Երևան—Աղստաֆա երկաթուղային գծի մի մասը: Երկաթուղու այդ գիծը ոչ միայն կրճատում է դեպի հյուսիս՝ Թբիլիսի—Աղստաֆա—Բաքու ճանապարհները և տալիս հսկայական գումարների խնայում, այլև խոշոր նշանակություն ունի ռեսպուբլիկայի արտադրողական ուժերի հետագա զարգացման ու ճիշտ տեղաբաշխման տեսակետից:

Կիրովականի երկաթուղային կայարանում կան մի քանի ծառայությունների պատկանող ձեռնարկություններ և ցեխեր՝ գծի և կոնտակտային ցանցի ուղեմասեր, երթևեկության բաժին, քարշայիններ, կապավորներ, վագոնագործներ (վագոնիկներ) և այլն: Այս բոլոր ցեխերը միասին վերցրած ծառայում են գնացքների անխափան երթևեկության ապահովման, ուղևորների և ժողովրդական տնտեսության բազմապիսի բեռների փոխադրման նպատակին: Այդ ծառայություններից ամենախոշորը հանդիսանում է գծի 11-րդ ուղեմասը, որը սպասարկում է Այրում—Նալբանդ ուղեմասը:

Կիրովականի գծի ուղեմասը Միության դժվարագույն ուղեմասերից մեկն է համարվում: Այստեղ երկաթուղին անցնում է Լոռու խոր, վիհանման կիրճերով, Դեբեդ, Փամբակ և Չիչխան գետերի ոլորապատույտ ավերով, որի հետևանքով

¹ Տվյալները վերցված են Կիրովականի երկաթուղային կայարանում գտնվող համապատասխան ծառայության օրյեկտների պետերից:

ուղեմասի հիմնական մասը ձգվում է կորույթներով, հարյուրավոր բազմապիսի արհեստական կառուցվածքներով, դժվարին թեքություններով և քարքարոտ սարալանջերով: Գծի հողապաստառը ուղեմասում ենթակա է մի կողմից լեռնային գետերի հորդ ջրերի քայքայիչ ավղեցությանը, մյուս կողմից՝ լեռնալանջերի ապառաժ զանգվածների ու առանձին քարերի փլուզումների վտանգին: Այս դժվարին պայմաններում ուղեմասի կոլեկտիվն ապահովում է գծի, արհեստական կառուցվածքների, հողապաստառի, գծային շենքերի հիմնական և ընթացիկ վերանորոգման աշխատանքները և, որ ամենագլխավորն է, միշտ գիծը պահում է առողջ վիճակում՝ գնացքների սնընդմեջ երթևեկությունն ապահովելու համար: Աղետների կանխման համար ուղեմասի տարբեր տեղամասերում ստեղծվեցին հատուկ լեռնային հակափլվածքային բրիգադաներ, սահմանվեցին փլվածքային պահակակետեր և կոմպլեկտավորվեցին մագլցողների խմբեր: Բացի այս միջոցառումներից, ուղեմաս ուղարկվեցին հատուկ շինարարական կազմակերպություններ, որոնք կառուցում են հակափլվածքային արհեստական բազմապիսի լուրջ կառուցվածքներ, որոնց համար պետությունը բաց է թողնում տարեկան մի քանի տասնյակ միլիոն ռուբլի գումար: Ուրախալի է այն փաստը, որ հակափլվածքային միջոցառումների, կառուցվածքների տեսակների ընտրման և գիտական հաշվարկումների գործում Թբիլիսիի երկաթուղային ինստիտուտի գիտական աշխատողներին մեծ օգնություն են ցույց տալիս ուղեմասի մասնագետները:

Ժողովրդական տնտեսության զարգացման հետ զուգահեռ ուժեղանում է երկաթգծի տեխնիկական հագեցվածությունը: Ուղեմասում բոլոր թևթև տիպի ուղիները փոխարինված են ծանր տիպի ուղիներով: Ուղեմասի մի ղգալի մասում գիծը դրվել է խճաքարի վրա: Անհամեմատ ուժեղացել է սլաքային տնտեսությունը և այլն: Գծի էլեկտրիֆիկացման կապակցությամբ բարդացել են նաև գծային տնտեսության պահպանման ընթացիկ աշխատանքները: Այդպիսի բարդ ուղեմասում գնացքների անխափան երթևեկության ապահովումը շատ դժվարին և

լարված աշխատանք է պահանջում: Այդ պատասխանատվութիւնը լավ է հասկացել ուղեմասի՝ մոտ հազար մարդուց բաղկացած կոլեկտիվը: Շնորհիվ բարձր կազմակերպվածութեան և նրա անդամների բարեխիղճ աշխատանքի, ծավալելով սոցիալիստական գործարար մրցութիւն, կոլեկտիվը սխտեմատիկաբար գերակատարում է արտադրական պլանները, գիծը պահում է գերազանց վիճակում և ապահովում զնացքների անվտանգ, անխափան երթևեկութիւնը: Լավագույն աշխատանքի համար ուղեմասի կոլեկտիվը բազմիցս շահել է Երևանի բաժանմունքի և Անդրերկաթուղու վարչութեան Փոխանցիկ կարմիր դրոշները:

Կոլեկտիվն այդ հաջողութիւններին հասել է իր լավագույն կադրերի ժրջան աշխատանքի շնորհիվ: Իրենց երկարամյա քաջարի աշխատանքով հատկապես աչքի են ընկնում՝ հին բոլշևիկ, Լենինի շքանշանակիր, գծի վարպետ Խ. Մարությանը, որի մասին միշտ հարգանքով ու սիրով են խոսում ուղեմասի կոլեկտիվում, նա բազմիցս ընտրվել է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ, Լենինի շքանշանակիր, գծի վարպետ Ա. Ղարաբաղյանը, գծի առաջավոր վարպետ Կ. Հոբոսյանը, գծի ավագ բանվորներ Գ. Անթառանյանը, Ա. Գրիգորյանը, Լենինի շքանշանակիր, ավագ մագլցող Մ. Օհանյանը¹, որի աշխատանքի առաջավոր փորձին նվիրված մի առանձին բրոշյուր է լույս ընծայվել, գծի կապիտալ վերանորոգման վարպետ Ա. Թամազյանը և շատ ուրիշներ:

Կիրովականի ուղեմասի պայմաններում աշխատանքի ուսցիոնալ կազմակերպումը պահանջում է ունենալ գրագետ, փորձված, տեխնիկապես լավ զինված մասնագետներ: Ուղեմասի բարդ աշխատանքների կազմակերպման, կոլեկտիվի տեխնիկական, ստեղծագործական մտքի զարգացման ասպարեզում լուրջ գործ են կատարում ինժեներ-առաջիկայի զատորեներ՝ ուղեմասի պետ Լ. Բեժանյանը, պետի արհեստական կա-

¹ Անդրերկաթուղու Կիրովականի ուղեմասի լավագույն մագլցող Մկրտաիշ Օհանյանի աշխատանքի փորձը, Անդրերկաթուղու վարչութեան հրատարակչութիւն, 1953, Քրիլիսի:

ուղեցվածքների գծով տեղակալ է. Դանիելյանը և ուրիշները Ուղեմասը տարեցտարի ապահովվում է տարրեր տխուր գծային, շինարարական մեխանիզմներով և փոխադրական միջոցներով, որոնք մեծ չափով օժանդակում են գծի նորմալ աշխատանքներին:


Ուղեմասում լայն ծավալ է ստացել դյուտարարական և ռացիոնալիզատորական շարժումը: Ամեն տարի ուղեմասի տեխնիկական խորհուրդը քննարկում և գծային տնտեսության մեջ ներդնում է մի քանի տասնյակ առաջարկություններ: Դրանց ներդրման և առաջավոր մեթոդների արմատավորման շնորհիվ ուղեմասի կոլեկտիվը ամեն տարի սիստեմատիկաբար տալիս է պետական միջոցների 3—4 հարյուր հազար ռուբլու տնտեսում:

Լավագույն ռացիոնալիզատորներից հիշատակության արժանի են կամրջային վարպետ Վ. Հարությունյանը, փականապործ Վ. Փոթինյանը և շատ ուրիշները:

Կիրովականի երկաթուղային կայարանի երթևեկության բաժինը, որը բաղկացած է երթևեկության կայարանից և ապրանքային բակի ցեխերից, ապահովում է զնացքների անվտանգ ղվացուցակով երթևեկությունը, զնացքների վերակազմումը և վագոնների առաքումը համապատասխան կազմակերպություններին: Կայարանի կոլեկտիվը ապահովում է ուղևորների կուլտուրական սպասարկումը, իսկ ապրանքային բակը հիմնականում կատարում է բեռների բարձման և բեռնաթափման աշխատանքները:

Կայարանի քարշայինները ապահովում են վագոնների տնտեսափոխումը համապատասխան հիմնարկ-ձեռնարկությունների փակուղիները՝ բեռնման և բեռնաթափման համար, կատարում են մանևրային աշխատանք՝ կայարանում վագոնների վերադասավորման ուղղությամբ:

Վագոնագործները զննում են զնացքների վագոնները և արգելակող հարմարանքները, կատարում պահանջվող հրատապ մանր վերանորոգումներ, որը մեծ չափով նպաստում է զնացքների անվտանգ երթևեկությանը:



«Ավտոմատիկա» իւրնորոյն կողմէն ընտրուած կան ընտրուած

Կապալվորները ապահովում են երկաթգծի տարբեր ծառայությունների կապը միմյանց հետ և ազդանշանային տրնտեսության անխափան աշխատանքը:

Կոնտակտային ցանցի ուղեմասը, որին էլեկտրաէներգիա է մատակարարում մասնավորապես Կիրովականի էլեկտրաենթակայանը, ապահովում է կոնտակտային ցանցի ընթացիկ պահպանումը՝ էլեկտրաքարշերին անընդմեջ էներգիա հասցնելու համար:

Հատկապես վերջին 10—15 տարիներին շատ է փոխվել ինչպես Կիրովական կայարանի, այնպես էլ երթևեկող զնացքների տեխնիկական հագեցվածությունը:

Կայարանի նախկին 5 գծի և մի քանի փոքր փակուղիների փոխարեն 16 ձեռնարկություններում ստեղծվեցին 60 կիլոմետր ընդհանուր երկարություն ունեցող նոր գծեր և փակուղիներ, որոնք արգյունաբերական տարբեր կազմակերպությունների կապում են երկաթուղային կայարանի հետ: Իրենց առանձին երկաթուղագլխի ունեն քրմիական և մսի կոմբինատները, տրիկոտաժի, կորգի ֆաբրիկաները և այլն: Այս բոլորը նպաստում են վազոնների շրջապտույտի արագացմանը և տալիս են միջոցների խոշոր տնտեսում:

Վերջին տարիներին կայարանի վազոնների բարձումն ու բեռնաթափումը աճել է մի քանի անգամ. առաջվա 5—10 վազոնի փոխարեն Կիրովականում, հետապտերազմյան տարիներին սկսած, օրական բարձվում և բեռնաթափվում է 150—200 վազոն: Եթե 1955 թվականին Կիրովականի երկաթուղային կայարանում բարձել են 11 հազար և դատարկել մոտ 20 հազար վազոն, ապա 1959 թվականին բարձել են մոտ 16 հազար և դատարկել 30 հազար վազոն: 1959 թվականին վազոնների բարձումն ու դատարկումը, 1945 թվականի համեմատությամբ, աճել է չորս անգամ, իսկ 1940 թվականի համեմատությամբ՝ 12 անգամ: Այս զործին մեծ չափով նպաստեց 1956 թվականին ապրանքային բակին կից շահազործման հանձնված բեռնարկղային (կոնտեյներային) հրապարակը, որի շնորհիվ բարձման և բեռնաթափման ձևերի ֆիզիկական ծանր աշխատ-

տանքը փոխարինվեց վերամբարձ մեխանիզմներով և բարելավվեց հատկապես լայն սպառման ապրանքների անկորուստ փոխադրումը:

1950 թվականին կայարանում տեղադրվեց նոր սարքավորում, որը յուրահատուկ ձևով հսկում է հերթապահի և սլաքավարի գործունեությանը՝ գնացքների ճիշտ ընդունման և ուղարկման ասպարեղում:

Վերջին տասնամյակում ավելի բարեկարգվեցին կայարանը և նրա շրջակայքը, կառուցվեցին մանկապարտեզի, մսուրի, գիշերօթիկ դպրոցի, ակումբի և բազմաթիվ բնակելի շենքեր: Շինարարության այդպիսի ծավալ չի եղել երկաթուղու ստեղծման օրից մինչև 1950 թվականն ընկած ամբողջ 50 տարվա ժամանակաշրջանում:

Շեշտակի կերպով փոխվեց նաև գնացքների տեխնիկական կազմը: Առաջվա հնամաշ փայտյա մարդատար վագոնների փոխարեն այժմ երթևեկում են լրիվ մետաղե հարմար վագոններ: Սանահին—Լենինական գծամասի էլեկտրիֆիկացման շնորհիվ շոգեքարշերի փոխարեն գնացքները տանում են մեծ լենինի անունը կրող հզոր էլեկտրաքարշերը: Վագոնների պտուտակավոր կցումների փոխարեն տեղադրվել է ավտոկցումը: Սանահին—Լենինական տեղամասում անընդմեջ երթևեկում են այդ հիանալի էլեկտրասեկցիայի մարդատար գնացքները:

Այս բոլոր տեխնիկական նորությունները տեղադրելու համար մեծ ջանք են գործ դնում Կիրովական կայարանի բոլոր երկաթուղայինները:

Երթևեկության բաժնում իրենց երկարամյա լավագույն աշխատանքով աչքի են ընկնում՝ կայարանապետ Մ. Տեր-Հարությունյանը, կայարանի հերթապահ Ա. Գևորգյանը, գնացք կազմող Շ. Փաշինյանը, սլաքավար Ա. Նալբանդյանը, որոնք պարգևատրվել են Սովետական Միության շքանշաններով, մեդալներով և երկաթուղային կրծքանշաններով:

Իրենց անձնուրաց աշխատանքով հո շին մնում քարշայինները, որոնք աշխատելով Միության առաջավոր մեքենավար-

ների օրինակով, սիտանձափկաբար դերակատարում են շո-
ղեքարշի վազբի նորմաները և անտեսում մեծ քանակությամբ
վառելանյութ: Առավել բարձր ցուցանիշների է հասել մեքե-
նավար Լ. Ղազարխանյանը: Երկաթուղային կոլեկտիվում հար-
գանքով են խոսում հերթապահ, Լենինի շքանշանակիր Ն. Բաբ-
լումյանի, տեղկոմի նախագահ Ս. Բագարյանի մասին, որոնք
իրենց երկարամյա աշխատանքում շատ ու շատ երիտասարդ
կադրեր են դաստիարակել:

Կոնտակտային ցանցի ուղեմասի կոլեկտիվում առավել
աչքի են բնկնում՝ կոնտակտային ցանցի վարպետ Դ. Գալստ-
տյանը, մոնտյորներ Ա. Մկրտչյանը՝ Մ. Մալխասյանը և ու-
րիշներ: Կայարանում աշխատանքի կոմունիստական բրիգա-
դայի կոչման համար պայքարողների առաջին շարքում են
գտնվում ցանցի ուղեմասի լավագույն աշխատողները:

Կիրովական կայարանի երկաթուղայինները այժմ պայքար
են ծավալել ժողովրդական անտեսություն զարգացման 7-ամյա
պլանը ժամկետից շուտ կատարելու համար:

* *
*

Հայտրանսի Կիրովականի բաժանմունքի բազայի վրա 1943
թվականին կազմակերպվել է Հայկական ՍՍՌ Ավտոմոբիլիստ-
րություն Կիրովականի ավտոգրասենյակը, որն ունի 173
բևեռատար մեքենաներ: Ավտոգրասենյակը սպասարկում
է քաղաքի շինարարական կազմակերպություններին, տեղա-
կան արդյունաբերության ձեռնարկություններին, ինչպես նաև
առողջապահության և լուսավորության ցանցի օբյեկտներին:

1958 թվականի հոկտեմբերից կազմակերպվեց Հայկական
ՍՍՌ Ժողատնտխորհի բեռնատար ավտոների Կիրովականի գրա-
սենյակը, որն ունի մոտ 200 մեքենա և սպասարկում է Ժող-
ատնտխորհին պատկանող մոտ 20 արդյունաբերական ձեռնար-

կուսթյունների, մասնավորապես նրանց կողմից կատարվող շինարարութեանը: 1958 թվականի ապրիլից քաղաքի աշխատավորութեանն է սպասարկում ավտոբուսային և տաքսամոտորային Կիրովականի պարկը, որն ունի 59 ավտոբուս և 60-ից ավելի մարդատար մեքենաներ: Պարկն սպասարկում է միջքաղաքային և միջըրջանային երթևեկութեանը՝ Կիրովական—Նրևվան, Կիրովական—Ստեփանավան, Կիրովական—Սպիտակ, Կիրովական—Դիլիջան—Իջևան, ինչպես նաև քաղաքը կապում է Բլուրգալ, Լեռնապատ, Համզաչիման, Ֆիոլետովո, Փղանով, Շահումյան և այլ գյուղերի հետ:

Կիրովականում գործող ավտոպարկերի աշխատանքներին արգելակում է այն, որ ճանապարհները անբարեկարգ են, այդ պատճառով էլ դանդաղում են տրանսպորտի աշխատանքները և արագանում է մեքենաների մաշվածութեանը: Պարկերում ինչպես լվացման, այնպես էլ այլ նպատակներով օգտագործելու համար ջուր չկա: Ավտոնորոգման գործարանը բարձր որակով և ժամանակին չի կատարում նորոգումները: Պարկերում չկան պրոֆիլակտիկ միջոցառումների հարմարութեաներ:

Կիրովականում է գտնվում Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Գլխավոր խճուղային վարչութեան № 2 ճանապարհաշինական շրջանը, ինչպես նաև ռեսուրսային ճանապարհաշինական № 3 տեղամասը: Դրանցից առաջինը կառուցում է ճանապարհներ, իսկ երկրորդը ստանձնում է շահագործման հանձնված ճանապարհների սպասարկման գործը և կատարում է նորոգումներ: № 2 ճանապարհը կազմակերպվել է 1952 թվականին և ճանապարհներ է կառուցում Կիրովականից մինչև Այրում:

1955—1959 թվականներին ընթացքում ճանապարհների կուրսերի վրա շահագործման է հանձնել Կիրովական—Այրում միջըրջանային ճանապարհից 21 կիլոմետրը, որի շնորհիվ շրջակա բոլոր գյուղերը, ինչպես նաև Թումանյանի հրակայուն այգուտի, Այրումի պահածոների գործարանները, Ալավերդու և Կիրովականի արդյունաբերական ձեռնարկութեանները այդ խճու-

դով իրար հետ են կապվում: Ճանապարհաշինարարների կու-
լեկտիվն այժմ շարունակում է իր աշխատանքները մինչև Այ-
րում: Նա միաժամանակ կառուցել է 5 կիլոմետր երկարու-
թյամբ Արշուտ—Լեոնապատ ճանապարհը: Դրանով այդ ենթա-
շրջանի գյուղերը, ինչպես նաև Լեոնապատի հարուստ քար-
հանքերը կապվում են Կիրովականի հետ: 1958 և 1959 թվա-
կաններին կառուցվել է նաև Դիլիջան քաղաքում 5 կիլոմետր
և Բզովզալում երկու կիլոմետր երկարությամբ խճուղի:

1957—1960 թվականներին № 2 ճանշինշրջանի կուլեկտիվը
նաև կամուրջներ է կառուցել Չիչխան, Փամբակ գետերի վրա,
Մարցի, Դիլիջանի, Շնողի մոտերքում և մի շարք ուրիշ վայրե-
րում: 1960 թվականից կուլեկտիվը շարունակում է իր աշխա-
տանքները Շահալի—Այրում խճուղու վրա:

№ 2 ճանապարհաշինական շրջանի կուլեկտիվը բաղկացած
է 700 մարդուց, որոնք, իրենց ձեռքի տակ ունենալով անհրա-
ժեշտ քանակի մեխանիզմներ և սարքավորումներ, գերակա-
տարում են տրված պլանները:

Կիրովականում գտնվող Հաչկական ՍՍՌ ճանապարհա-
շինական № 3 տեղամասում աշխատում են մոտ 300 մարդ:
Այդ կուլեկտիվը զբաղված է միութենական և ռեսպուբլիկական
ճանապարհների շահագործման ու վերանորոգման հարցերով,
սպասարկում է Դիլիջանից մինչև Զաջուռ կայարանի 83 կիլո-
մետր երկարությամբ միութենական և ռեսպուբլիկական նշա-
նակություն ունեցող շորս ճանապարհները՝ Կիրովական—Թու-
մանյան, Սպիտակի բարձունքով—Ալագյալ:

Ճանապարհաշինական № 3 տեղամասի կուլեկտիվը մրցու-
թյան մեջ է Ստեփանավանի և Էջմիածնի ճանապարհաշինա-
կան տեղամասերի կուլեկտիվների հետ: Կիրովականի կուլեկ-
տիվն իր 1959 թվականի պլանները գերակատարել է՝ հասցնե-
լով 120 տոկոսի և արժանացել ռեսպուբլիկայի Խճուղային
դիսավոր վարչության և Արհմիության ռեսպուբլիկական կո-
միտեի երկրորդ կարգի մրցանակին ու 10 հազար ռուբլի դրա-
մական պարգևին:

Ճանշինի № 3 տեղամասի կոլեկտիվը 1960 թվականին կառուցելու և շահագործման է հանձնելու Սպիտակի կամուրջը և Դիլիջանի գետափնյա հենապատերը՝ Տարբեր ճանապարհներում կատարելու է 10 կիլոմետր երկարությամբ մակերեսային վերամշակում ինչպես տաք, այնպես էլ սառը ասֆալտով: Այս երկու կոլեկտիվները պարտավորություն են ըստանձնել 1960 թվականի տարեկան պլանները կատարել Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյա հոբելյանի օրը՝ նոյեմբերի 29-ին:

Այս երկու կոլեկտիվներում աշխատում են ավելի քան 1.000 մարդ: Սրանց աշխատանքն ավելի արդյունավետ կլինի, եթե ունենան համապատասխան տեխնիկա. հղածը հին է և երբեք չի բավարարում նրանց աշխօրվա պահանջները:

* *

*

Սրեցօր բարգավաճող արդյունաբերական այդ կարևոր կենտրոնին՝ Կիրովականին սպասարկելու համար քաղաքում ստեղծվել է կապի լայն ցանց: Մինչև 1940 թվականը քաղաքում կար 165 հեռախոսային կետ, որը մինչև 1952 թվականը հասավ մոտ 500-ի: 1952 թվականին, երբ ավտոմատացվեց հեռախոսային ցանցը, կետերի քանակը կրկնապատկվեց և դարձավ 1000, որից 400-ը տրված է բնակարաններին¹:

Մինչև 1957 թվականը Կիրովականի կապի զրուսենյակը երևանի հետ ունեցել է մեկ դժուր կապ, իսկ 1958 թվականի հունվարից արդեն ունի վեց դժուր կապ: Կատարելագործվել են նաև հեռադրային կապի սարքավորումները, 1958 թվականի սկզբից հեռադրատանը զրվել է նոր սարքավորում, որն արագացնում է հեռազրերի հաղորդումն ու ընդունումը:

¹ Տվյալները վերցված են Հայկական ՍՍՌ Կապի մինիստրության Կիրովականի զրուսենյակից:

Քաղաքում մինչև 1950 թվականը եղել է կապի երեք բաժանմունք, իսկ 1960 թվականին քաղաքի տարբեր մասերում գործում են յոթ բաժանմունք:

Աշխատավորների բնակարաններում կան 3100 ռադիոկետեր և 4900 ռադիոընդունիչներ¹: Բացի քաղաքի կենտրոնական հեռախոսային կայանից, արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններ ունեն ավտոմատ հեռախոսային կայաններ: Ա.լ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատում, երկաթուղային կայարանում, կորդի և տրիկոտաժի ֆաբրիկաներում, ինչպես նաև «Ավտոմատիկա» զիտահետազոտական ինստիտուտում կան 1000-ից ավելի հեռախոսային կետեր:

1960 թվականին Կիրովականում ստացվում են 716 անուն թերթեր և ամսագրեր՝ մոտ քսան հազար օրինակով:

Եղբայրական մրցությունը և սլաքար կոմունիստական աշխատանքի բրիգադայի կոչման համար: «Սոցիալիզմը, — գրում է Վ. Ի. Լենինը, — ոչ միայն չի մարում մրցությունը, այլ, ընդհակառակը, առաջինն է հնարավորություն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական շափով, իրոք աշխատավորների մեծամասնությունը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզ, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով: Այժմ, երբ իշխանություն գլուխ է անցել սոցիալիստական կառավարությունը, մեր խնդիրն է կազմակերպել մրցությունը»²:

Կենսագործելով Վ. Ի. Լենինի ցուցումը, ինչպես ողջ երկրի, այնպես էլ Կիրովականի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողները լայնորեն ծավալել են սոցիալիստա-


¹ Տվյալները վերցված են ՀՍՍՌ Կապի մինիստրության Կիրովականի գրասենյակից:

² Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 26, էջ 493—494:

կան մրցություն: Կիրովականի աշխատավորները 1956 թվականին սոցիալիստական մրցության մեջ մտան Աջարական ԱՍՍՌ Բաթումի քաղաքի աշխատավորների հետ: Այս մրցությանը 1958 թվականին միացան Աբխազական ԱՍՍՌ Սուխումի, իսկ 1960 թվականին՝ Սոմդագյիթ քաղաքի աշխատավորները: Ծավալված սոցիալիստական մրցությունը նպաստում է այդ քաղաքների արտադրության առաջընթացին, բարեկարգմանը, կոմունալ տնտեսության զարգացմանը, ժողկրթության, առողջապահության և կուլտուր-լուսավորական աշխատանքների բարելավմանը:

Կիրովականի արդյունաբերական ձեռնարկությունների բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները 1956 թվականի տարեկան պլանը կատարեցին 13 օր շուտ՝ 104,4 տոկոսով, լրացուցիչ թողարկեցին 12 միլիոն ուրբու արտադրանք: Սոցիալիստական մրցությունը գլխավորող Կիրովականի պարտիական կազմակերպությունները անընդհատ կատարելագործում են իրենց աշխատանքի ձևերը: Նրանք ուսանելի փորձ են ձեռք բերել իրենց մրցակից քաղաքների պարտիական կազմակերպություններից՝ արդյունաբերության ղեկավարման, կադրերի մարքսիստական-լենինյան դաստիարակության, քաղաքական-մասսայական աշխատանքի ծավալման, քաղաքաշինության և այլ բնագավառներում:

Կիրովականի աշխատավորների ներկայացուցիչները ՀԿՊ Կիրովականի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար Ց. Բադալյանի գլխավորությամբ եղան Բաթումի արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարական օբյեկտներում, կոմունալ-կենցաղային, կուլտուր-լուսավորական հիմնարկներում և տեսարժան վայրերում, ծանոթացան նրանց առաջավոր փորձի հետ: Բաթումի մրցակից գործարանները նրանց վրա թողին լավ տպավորություն: Գործարանների բակերում և նրանց շրջակայքում ամենուրեք դեկորատիվ և պտղատու ծառեր, կանաչ թփեր և ծաղիկներ են: Ծանոթանալով արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքներին, պատվիրակության անդամները համոզվեցին, որ դորձ ունեն



Կանի սննան սրիկուտաժի ֆաբրիկայում

լուրջ մրցակիցների հետ, սր պետք է մոբիլիզացնեն իրենց ուժերը ստանձնած պարտավորությունները պատվով կատարելու համար:

1957 թվականին Կիրովական, Բաթումի և Սուխումի քաղաքների միջև սկսված սոցիալիստական մրցությունն ավելի ամրապնդեց եղբայրական երեք քաղաքների աշխատավորների բարեկամությունը, փոխադարձ օգնությունն ու համագործակցությունը: Գործի վերածելով սոցիալիստական մրցությամբ ստանձնած պարտավորությունները, մրցակից քաղաքների աշխատավորները լուրջ հաջողությունների հասան: Ժամկետից շուտ կատարելով պիտական առաջադրանքները, նրանք լրացուցիչ կարգով թողարկեցին մեծ քանակությամբ արդյունաբերական ապրանքներ: Բարձր զնահատելով այդ մրցությունը, Կիրովական, Բաթումի և Սուխումի քաղաքների աշխատավորները որոշեցին մրցությունը դարձնել տրադիցիոն: Երեք քաղաքների աշխատավորները, ստանձնելով լուրջ պարտավորություններ, ձգտում են պատվով կատարել Կոմունիստական պարտիայի և Սովիետական կառավարության կողմից առաջադրված խնդիրները՝ տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառներում ավելի լուրջ հաջողությունների հասնելու համար:

Այսպիսով, Կիրովականի բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները, մոբիլիզացնելով իրենց բոլոր ուժերը, պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ՝ արդյունաբերական ձեռնարկությունների 1958 թվականի համախառն արտադրանքի պլանը կատարեցին 107,3 տոկոսով, այդ թվում ժողտնտխորհի ձեռնարկությունները՝ 103 տոկոսով, իսկ տեղական արդյունաբերությունը՝ 103,8 տոկոսով: Լրացուցիչ կերպով թողարկվեց 20,5 միլիոն ռուբլու արտադրանք, աշխատանքի արտադրողականությունը բարձ-

րացվեց 102 տոկոսով, շինմոնտաժային աշխատանքները կատարվեցին 97,2 տոկոսով¹։

1958 թվականի օգոստոսին Կիրովականում էին հավաքվել մրցող երեք քաղաքների պարտիական, սովետական և արհմիութինական կազմակերպությունների ներկայացուցիչները. արդյունաբերական ձեռնարկությունների ղրեկավորներ և աչլն: Բաթումիի և Սուխումիի ներկայացուցիչները եղան Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատում, Կամոյի անվան տրիկոտաժի ֆաբրիկայում, մեքենաշինական գործարանում, «Ալտոմատիկա» զիտահետադոտական ինստիտուտում, ծանոթացան նրանց առաջավորների փորձին ու ներդրվող նորագույն տեխնիկային: Նրանք տեսան, թի ինչպես քաղաքում կառուցված և շահագործման հանձնված բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների զարգացման հետ աճել ու տարեցտարի որակավորվել են հիմնարկ-ձեռնարկություններում աշխատող կազրերը, բարձրացել է նրանց հանրակրթական և տեխնիկական զլտելլրքների մակարդակը: Եթե 1940 թվականին քաղաքի բանվոր-ծառայողների թիվը եղել է 4956, 1955 թվականին՝ 13.389 մարդ, ապա 1960 թվականին այն հասավ 20.200 մարդու²: Կիրովականի արդյունաբերական ձեռնարկություններում և երկաթուղային տրանսպորտում աճեցին տեխնիկական ինտելլիգենցիայի բարձր և միջին որակի կազրեր:

Քաղաքային Սովետին կից ժյուրին, ամփոփելով Կիրովականի արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարական և առևտրական կազմակերպությունների 1959 թվականի տարեկան սլանների կատարողականը, Կիրովական—Բաթումի և Սուխումի սոցմրցության Փոխանցիկ կարմիր դրոշը հանձնեց Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի

¹ Նյութերը տե ս Կիրովականի քաղաքային Սովետի գործկոմի սլանրամենում, քաղաքային ժյուրիի արձանագրությունները:

² Թվերը վերցված են Կիրովականի քաղաքային Սովետի գործազիր կոմիտեի վիճակագրական տեսչությունից:

կոլեկտիվին, որը 1959 թվականի տարեկան պլանը կատարել էր 104,4 տոկոսով, ասորտիմենտինը՝ 100 տոկոսով, աշխատանքի արտադրողականությանը՝ 104,7 տոկոսով, ինքնարժեքը պլանի դիմաց իջեցրել էր 3,5 տոկոսով: ՀԿՊ քաղկամի և քաղաքային Սովետի Փոխանցիկ կարմիր դրոշը հանձնվեց մեքենաշինական գործարանի կոլեկտիվին, որը 1959 թվականի տարեկան համախառն արտադրանքի պլանը կատարել էր 110,2 տոկոսով, ասորտիմենտինը՝ 100 տոկոսով, աշխատանքի արտադրողականությանը՝ 112,6 տոկոսով, ինքնարժեքը պլանի դիմաց իջեցրել էր 10,3 տոկոսով: Արդյունաբերական ձեռնարկությունների երկրորդ խմբի Փոխանցիկ կարմիր դրոշը մնաց կահույքի ֆաբրիկայի կոլեկտիվի ձեռքում, որը բոլոր ցուցանիշներով գերակատարել էր 1959 թվականի պլանները: Ժյուրին նշեց նաև մորթու-մուշտակի, կոշիկի ֆաբրիկաների «Ավտոմատիկա», ճշգրիտ հաստոցաշինական, կղմինդրի-աղյուսի գործարանների, տղարանի, կինցաղսպասարկման կոմբինատի, գորգագործական արտելի կոլեկտիվների լավագույն աշխատանքը, որոնք գերակատարել էին 1959 թվականի պլանները: Շինարարական կազմակերպություններից Փոխանցիկ կարմիր դրոշը ստացավ արդշինարեստի կոլեկտիվը, որը շինմոնտաժային աշխատանքների տարեկան պլանը կատարել էր 108,8 տոկոսով¹:

1960 թվականի սկզբներին Բաթումի արդյունաբերական ձեռնարկությունների առաջավորների հավաքում հանրագումարի բերվեցին մրցող քաղաքների 1959 թվականի մրցության արդյունքները: Այդ կապակցությամբ Բաթումի քաղկամի րարտուղար Լ. Ուկլեբան ասաց, որ Կիրովականի աշխատավորները, կինսագործելով սոցիալիստական մրցությամբ ըստանձնած իրենց պարտավորությունները, արդյունաբերության համախառն արտադրանքի տարեկան պլանը կատարեցին 108,7 տոկոսով և երկրին սվին 26 միլիոն ռուբլու արտապլանային արտադրանք: Կիրովականցիները աշխատանքի արտա-

¹ Նյութերը վերցված են Կիրովականի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեից:

գրողականությունը բարձրացրին 6,8, ինքնարժեքն իջեցրին մոտ 2 տոկոսով, չուրացրին 30 նոր տեսակի սարքերի, հաստոցների, արտադրանքի այլ նոր տեսակների արտադրությունը: Ներդրված 1035 ռացիոնալիզատորական առաջարկությունները տվել են մոտ 5 միլիոն ռուբլու խնայողություն: Կիրովականի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները ակներև հաջողություններ են ձևոք բերել նաև նոր տեխնոլոգիայի արմատավորման, արտադրական սրբոցեանների ավտոմատացման ու մեքենայացման, նորանոր ռեսուրսների օգտագործման, բանվորների հանրակրթական և տեխնիկական գիտելիքների բարձրացման բնագավառներում:

Կիրովականի աշխատավորները սոցիալիստական մրցություն են ծավալել Բաթումի, Սուխումի և Սումգայիթի աշխատավորների հետ՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակը արտադրական բարձր ցուցանիշներով դիմավորելու նշանաբանով: Դրա համար էլ քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները 1960 թվականի առաջին կիսամյակի պլանը կատարեցին 105,5 տոկոսով, երկրին տվին մոտ 10 միլիոն ռուբլու արտապլանային արտադրանք¹:

Այսպիսով, տարեցուտարի աճեց Կիրովականի արդյունաբերության ու տրանսպորտի համախառն արտադրանքը: Եթե 1940 թվականին քաղաքի արդյունաբերության տարեկան համախառն արտադրանքը 31 միլիոն ռուբլի էր, ապա 1950 թվականին այն հասավ 95 միլիոն, 1955 թվականին՝ 285 միլիոն, 1959 թվականին՝ 361 միլիոն ռուբլու², իսկ 1960 թվականին այն կհասնի մոտ կես միլիարդ ռուբլու:

Սոցիալիստական մրցության մեջ իր լավագույն տրադիցիաներն ունի Կիրովականի կոմերիտական կազմակերպությունը:

¹ Նյութերը վերցված են Կիրովականի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի պլանային բաժնից:

² Թվերը տե՛ս Կիրովականի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի վիճակագրական տեսչությունում:

ՀամԼԿԵՄ XIII համագումարից հետո, 1958 թվականին, Կիրովականի կոմերիտական կազմակերպությունը վերցրեց քիմիական նորակառույց ձեռնարկությունների շեֆությունը: Այդ կազմակերպությունը, դեռևս 1930-ական թվականներից ունենալով իր լավագույն տրադիցիաները՝ պատվով կատարեց շեֆական պարտավորությունները: 1958—1960 թվականներին մոտ 1000 կոմերիտականներ և երիտասարդներ աշխատանքի ուղարկվեցին քիմիական կոմբինատի կորուզի և դիցիանոզ դիամիդի ու մելամինի ցեխերի, ինչպես նաև արհեստական մետաքսաթելի գործարանի շինարարությունը, Կորուզի ցեխի շինարարությանն աւելի մասնակցություն ունենալու համար այն հայտարարեցին կոմերիտական հարվածային նորակառույց, որի շինարարությանը սկզբից մասնակցեցին մոտ 200 կոմերիտականներ ու երիտասարդներ: Դրանցից 140-ը մասամբ զբոսում, մասամբ էլ տեղում որակավորվեցին և անցան արտադրություն: Ցևխում աշխատող 200 բանվորից 160-ը կոմերիտականներ և արտամիութենական երիտասարդներ են: Կոմերիտական Լ. Մուրադյանի օրինակով իրենց պլանները դերակատարեցին նաև Ա. Բաղեյանի, Ա. Կաղակովայի և Կ. Պետրոսյանի հերթափոխությունները: Իսկ կոմերիտականներ Ռ. Օհանյանը, Ռ. Հովհաննիսյանը, Հ. Սարգսյանը, Գ. Օզանեզովան և շատ ուրիշներ արտադրության մեջ հանդես են գալիս ավանդարդային դերում, սխտեմատիկաբար դերակատարում իրենց պլանները: Կիրովականի կոմերիտականների և արտամիութենական երիտասարդների համար տրադիցիա է դարձել մասնակցել նորակառույցի շինարարությանը և ապա մտնել արտադրություն ու մասնագիտանալ: Այդպես կատարվեց ոչ միայն քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների, այլև «Ավտոմատիկա», մեքենաշինական, ճշգրիտ հաստոցաշինական, արհեստական մետաքսաթելի և այլ արդյունաբերական ձեռնարկություններում: Կիրովականի կոմերիտական կազմակերպության 6 հազար անդամից 3500-ն արտադրության, շինարարության և արանսպորտի աշխատողներ են: Շինարարության վրա աշխատող բանվորները նույնպես մտան արտադրություն: Արտադրության տարբեր ճյուղերում աշխա-

տանքի անցնող երիտասարդներին տեխնիկական գիտելիքներ տալու, նրանց իրենց ընտրած մասնագիտութեան մեջ հմտացնելու նպատակով. ՀԼԿԵՄ Կիրովականի քաղաքային կոմիտեն նախաձեռնեց և 1959/60 ուսումնական տարվանից կազմակերպեց երիտասարդ նորարարների և ուսցիտնալիզատորների ինստիտուտ: Այդ ինստիտուտի մեխանիկական, շինարարական և թեթև արդյունաբերության երեք ֆակուլտետներում սովորում են մոտ 200 երիտասարդներ, որոնք մեծ սեր ունեն դեպի տեխնիկական և նրա նորութեանները: Նրանց ուսուցումը տարվում է հասարակական կարգով: Ինստիտուտի 35 դասախոսներն էլ երիտասարդ ինժեներներ են: Գրանցից ինժեներ-մեխանիկ Մ. Շահնազարյանը, ավագ ինժեներ Մ. Գրիգորյանը, Լ. Խաչատրյանը, Յա. և Վ. Մելիքսեթյանները, է. Գրիգորյանը, շինարար ինժեներներ Ռ. Բաղդասարյանը և Ս. Շաբոյանը մեծ սիրով են պարապում և իրենց գիտելիքները հաղորդում երիտասարդ ուսցիտնալիզատորներին ու նորարարներին: Սովորողները այժմ պարապում են իրենց պրոֆիլին համապատասխան օբյեկտներում, ուր անց են կացնում պրակտիկ պարապմունքները: «Երևաննախագիծ» ինստիտուտի կոլեկտիվը, հավանության արժանացնելով և քաջալերելով ՀԼԿԵՄ Կիրովականի քաղկոմի (քարտուղար՝ Հ. Օհանյան) նախաձեռնությունը, հասարակական կարգով նախագծել է Կիրովականում գործող երիտասարդ նորարարների և ուսցիտնալիզատորների ինստիտուտի համար հատուկ շենք: Վերջինս կառուցվելու է տեղի երիտասարդության ուժերով: Ինստիտուտի գրեկտորն է մսի կոմբինատի գլխավոր ինժեներ Կ. Մամյանը, տեղակալը՝ Ս. Շահնազարովը:

Արտագրության մեջ աշխատող այս երիտասարդները արտադրական պլանների կատարմանն ու գերակատարմանը դուզընթաց ակտիվ մասնակցություն կունենան արտագրության մեթոդների կատարելագործմանը և իրենց ուսցիտնալիզատորական առաջարկություններով կխթանեն տեխնիկական առաջագիմությունը՝ մեր երկրին տալով միլիոնավոր ուրբիներ ինստիտուտներ:

Ինչպես ամբողջ սևասուբլիկայի, այնպես էլ Կիրովականի արդյունաբերական ձեռնարկություններում խոշոր դեր են կատարում կանաչք: Նրանք ուժ ու կուսակցական խնայում արտադրական պլանները կատարելու, տեխնիկական և առաջավորների փորձը արտադրութայն մեջ արմատավորելու համար:


1960 թվականի մարտի ութի 50-ամյա հոբելյանի առթիվ ՍՍՌՄ կառավարութայն կողմից պարգևատրվեց Կիրովականի առաջավոր կանանց մի խումբ: Լենինի շքանշանով պարգևատրվեցին Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի № 27 ցեխի պետի տեղակալ, քիմիկ-ինժեներ Գ. Մեծատունյանը և Կամոյի անվան տրիկոտաժի ֆաբրիկայի կարող բանվորուհի Գ. Իսրայելյանը՝ «Պատվո նշան» շքանշանով պարգևատրվեց ՀԿՊ Կիրովականի քաղկոմի քարտուղար Մ. Բախչինյանը: «Աշխատանքային արիութայն համար» մեդալով պարգևատրվեցին մորթու-մուշտակի ֆաբրիկայի ցեխի վարպետ Ռ. Գյուլզադյանը և ուրիշներ:

Կոմունիստական ծավալուն շինարարությունը կյանքի կոչեց մասսաների նոր նախաձեռնությունը՝ կոմունիստական աշխատանքի բրիգադաների ու հարվածայինների շարժումը, որն իր մեջ մարմնավորում է այն ամբողջ լավագույնը, ինչ մշակված է սոցիալիստական մրցութայն՝ հրկար տարիների պրակտիկայով: Այդ շարժման նպատակն է իրագործել կոմունիստարար աշխատելու ու ապրելու և սովորելու լենինյան պատգամը: Այդ շարժումը արագ կերպով տարածվեց ամբողջ հրկրում, ինչպես նաև մեր սևասուբլիկայի, այդ թվում Կիրովականի արդյունաբերական ձեռնարկություններում և երկաթուղային ցանցում: Այդ հայրենասիրական շարժումը բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների մեջ առաջացրեց նոր ուժ, նոր եռանդ՝ արտադրական ուղերվների մոբիլիզացման, աշխատավորների կոմունիստական դաստիարակութայն համար:

Անդրերկաթուղու էլեկտրամատակարարման Կիրովականի դժամասի վթարավերանորոգման պարկի աշխատողների

ճնշող մեծամասնությունը երիտասարդներ են: 1958 թվականի նոյեմբերից Մ. Մալխասյանի ղեկավարութեամբ նրանց բրիգադան սկսեց պայքարել կոմունիստական աշխատանքի բրիգադայի կոչման արժանանալու համար: Նրանք պատվով կատարեցին իրենց խոստումը: Բրիգադան յոթնամյակի առաջին տարվա, այսինքն՝ 1959 թվականի, էլեկտրագծերի կապիտալ նորոգման պլանները կատարեց 140 տոկոսով, աշխատանքի արտադրողականությունը բարձրացրեց 9,6 տոկոսով, խնայեց մի քանի հազար ռուբլու դանադան նյութեր: Բրիգադայի անդամները իրենց ուժերով կազմակերպեցին ու սարքավորեցին մի արհեստանոց, որտեղ էլեկտրագծերի նորոգման մասեր են պատրաստում: Դրա շնորհիվ ունեցան խոշոր տնտեսում: Միաժամանակ նրանք կրճատեցին նորոգման աշխատանքների ժամկետները: 1960 թվականի առաջին կիսամյակում ևս նրանք ապահովեցին գնացքների անվթադերթեկությունը: Միաժամանակ բրիգադայի յուրաքանչյուր անդամ պարտավորվեց տիրապետել երկրորդ մասնագիտության, ձեռք բերել բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն: Բրիգադայի անդամներ Գ. Պետրոսյանի, Խ. Խաչատրյանի, Վ. Բաղրամյանի մոտ տրագիցիա է դարձել միասին կինո, թատրոն և կուլտուրական այլ վայրեր հաճախելը, բնկերներին օգնելը, «Մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար» կանոնը դարձել է սրանց նշանաբանը:

Կիրովականի մեքենաշինական գործարանի ձուլող ցեխի Բ. Սարգսյանի ղեկավարած կոմունիստական աշխատանքի բրիգադան ոչ միայն միշտ գերակատարում է իր պլանները, այլև տալիս է բարձր որակի արտադրանք: Բրիգադայի անդամները սովորում են, որպեսզի ստանան մասնագիտական կրթություն: Նրանցից Ֆ. Զիլավյանը և Խ. Միլբոնյանը սովորում են փականագործի, իսկ Հ. Փիրումյանը և Մ. Նղիազարյանը՝ իսառափ երկրորդ մասնագիտությունը: Սրանք ընտանիքներում ստեղծել են անձնական դրագարաններ: Իր լավագույն աշխատանքի համար Բ. Սարգսյանը մասնակցեց 1960 թվականի հունիսին Մոսկվայում կայացած կոմունիստ-



«Բլկտեմա տիկա» գործարանի կոմունիստական աշխատանքի քրիզադան

տական աշխատանքի բրիգադաների ու հարվածայինները կոչման մրցության առաջավորների համամիութենական խորհրդակցությանը, ուր պարզեցանք «Աշխատանքային արևության համար» մեղալուծ:

Տղարանի ձևերի շարվածքային ցեխը ևս արժանացավ կոմունիստական աշխատանքի բրիգադայի կոչման: Բրիգադավարն է ԼԿՍՄ կոմիտեի բարատուղար Ընկ. Ռ. Գևորգյանը, անդամները՝ Վ. Մելիքջանյանը, Բ. Իսահակյանը, Ց. Մարիկյանը, Ռ. Բարսեղյանը, որոնք իրենց առաջադրանքները կատարում են 130—160 տոկոսով:

Կղմինդրի-աղյուսի զործարանի միջնորմային սալիկներ պատրաստող Հ. Մկրտչյանի բրիգադան, մանկուղի կոմունիստական աշխատանքի բրիգադայի կոչման մրցության մեջ, մեկուկես տարում կատարեց չօթնամյակի երկու տարվա պլանը: Շինարարների շրջանում կոմունիստական աշխատանքի բրիգադայի կոչման ևս արժանացել անվանի որմնադիր Ա. Առաքելյանի, Հ. Սարգսյանի և Հ. Քոչարյանի ղեկավարած բրիգադաները:

Ինչպես ռեսպուբլիկայի այնպես էլ Կիրովականի արդյունաբերական մի շարք ձեռնարկություններում տարածվել է Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Վալենտինա Գաղանովայի հայրենասիրական նախաձեռնությունը: Շատ բանվորներ, վարպետներ, բրիգադավարներ, ելնելով արտադրության շահերից, թողնում են իրենց առաջավոր տեղամասերը, դնում են աշխատելու հետ մնացող տեղամասերում: Այսպես, օրինակ, Կիրովականի կարի ֆաբրիկայում 7-րդ ագրեգատը վատ էր աշխատում և շէր կարողանում կատարել արտադրական պլանները, որը և բացասաբար էր անդրադառնում ամբողջ ֆաբրիկայի պլանների կատարման վրա: Առաջավոր բանվոր Գ. Մանուկյանը իր ցանկությամբ փոխադրվեց հա մնացող ագրեգատը: Նա աշխատանքները դասավորեց այնպես, որ

այդ ազրեգատը ոչ միայն կատարում, այլև գերակատարում է ամենօրյա առաջադրանքները, ըստ որում պլանով նախատեսված 96-ի փոխարեն ազրեգատը տալիս է 98 տոկոս առաջին տեսակի արտադրանք:

Կամոյի անվան տրիկոտաժի ֆաբրիկայի բանվորուհիներ Թ. Փիլոսյանը, Ռ. Կիրակոսյանը, Ք. Ղազարյանը (վերջինս իր լավ աշխատանքի համար պարգևատրվել է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Պատվոգրով) օգնում են ետ մնացող հերթափոխութուններին: Ֆաբրիկայի 80 լավագույն ասեղնագործող վարպետներ՝ կոմերիտուհի Ռ. Սերոբյանի կոչով պարտավորութուն են ստանձնել առանց վարձատրության պատրաստել աշակերտներ, բարձրացնել նրանց որակը: Տրիկոտաժի ֆաբրիկայում այժմ կոմունիստական աշխատանքի բրիգադայի կոչման է արժանացել Ա. Դավթյանի ղեկավարած բրիգադան, իսկ Խ. Մուխսյանի ցեխը պայքար է ծավալել այդ կոչմանն արժանանալու համար:

Կոմունիստական աշխատանքի բրիգադայի և հարվածայինի կոչման համար պայքարը առաջինը սկսեց քիմիական կոմբինատի № 1 ցեխի Մ. Պապիկյանի ղեկավարած հերթափոխութունը: Սրան արձագանքեցին կոմբինատում 8 ցեխեր, 2 հերթափոխութուն և երկու բրիգադա, որոնցում ընդգրկված են մոտ 800 մարդ: Դրանցից մոտ երկու հարյուրը ձեռք են բերել երկրորդ մասնագիտութունը, իսկ 134-ը հանդես են եկել ռացիոնալիզատորական առաջարկութուններով:

Կոմբինատի № 1 ցեխի կոլեկտիվը գերակատարեց 1959 թվականի տարեկան պլանը, իջեցրեց ինքնարժեքը, խնայեց էլեկտրաէներգիան: Այդ ցեխի բանվորների 75 տոկոսը ձեռք բերեց կրկնակի, իսկ մի շարք ընկերներ եռակի մասնագիտութուն: № 1 ցեխի կոլեկտիվին 13 անգամ է, որ հանձնվում է կոմբինատի Փոխանցիկ դրոշը:

Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի կոլեկտիվը 1960 թվականի երկրորդ եռամսյակի պլանները բոլոր ցուցանիշներով գերակատարելու համար շահեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի ու ՀԱՄԽ-ի Փոխանցիկ կարմիր

դրոշմը և 220 հազար ուրբլի դրամական պարգև: Ստանալով Փոխանցիկ դրոշմը, Կիրովականի քիմիագործները պարտավորություն ստանձնեցին պայքարել կոմունիստական աշխատանքի կոմբինատի կոշման համար և միաժամանակ խոստացան 1960 թվականի տարեկան պլանը կատարել դեկտեմբերի 24-ին:

1960 թվականի սեպտեմբերին քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարական և տրանսպորտի կազմակերպություններում կոմունիստական աշխատանքի բրիգադայի և հարվածայինի կոշման համար պայքարում են 49 բրիգադաներ, 7 ագրեգատ, 13 հերթափոխություն, 9 ցեխ, որոնցում ընդգրկված են 2350 բանվորներ և ինժեներատեխնիկական աշխատողներ: 12 կոլեկտիվներ արգեն արժանացել են կոմունիստական աշխատանքի բրիգադայի, իսկ 200-ը՝ հարվածայինի կոշման:

Հատկանշականն այն է, որ այդ շարժման մեջ ընդգրկվածներից 1000-ից ավելին ձեռք են բերել հրկրորդ մասնագիտություն, իսկ մոտ 450-ը սովորում են հանրակրթական և մասնավորապես միջնակարգ մասնագիտական դպրոցներում: Քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում ստեղծված կոմունիստական աշխատանքի բրիգադաների նպատակն այն է, որ անդուլ կերպով բարձրացնեն աշխատանքի արտադրողականությունը, օրեցօր տան ավելի ու ավելի շատ արտադրանք, իջեցնեն նրա ինքնարժեքը և բարձրացնեն որակը, միաժամանակ կենցաղում արմատավորեն կոմունիստական բարոյականությունը:

Կիրովականը տեխնիկական առաջադիմության քաղաք: Սովետական իշխանության պայմաններում, մասնավորապես հետպատերազմյան տարիներին Կիրովականում ստեղծվեցին ոչ միայն արդյունաբերական Կոշոր ձեռնարկություն-

ներ, այլև գիտահետազոտական ինստիտուտներ և կոնստրուկտորական բյուրո՝ որոնք զբաղվում են ինչպես ռեսպուբլիկայի, այնպես էլ միութենական տարրեր ձևոնարկությունների արտադրական պրոցեսների ավտոմատացման հարցերով:

Կիրովականում են գտնվում ՍՍՌՄ Քիմիական արդյունաբերութեան և գունավոր մետալուրգիայի արտադրական պրոցեսների ավտոմատացման և Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհի Քիմիայի նախագծային ու գիտահետազոտական ինստիտուտները, ինչպես նաև «Ավտոմատիկա» ինքնուրույն կոնստրուկտորական բյուրոն, որոնց ներառաբար կոլեկտիվները բեղմնավոր աշխատանք են կատարում քիմիական արդյունաբերութեան և գունավոր մետալուրգիայի ձևոնարկությունների տեխնիկական պրոգրեսի աճման, արտադրական կարողությունների բարձրացման համար:

ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1956 թվականի հունիսի 28-ի որոշմամբ՝ 1957 թվականին ստեղծված ՍՍՌՄ Քիմիական արդյունաբերութեան և գունավոր մետալուրգիայի արտադրական պրոցեսների ավտոմատացման Կիրովականի գիտահետազոտական ինստիտուտի կոլեկտիվը արդեն զգալի աշխատանք է կատարել: Ավտոմատացման ուղղութեամբ կատարվող աշխատանքներին ծանոթանալու նպատակով 1958 թվականի ամռանը ինստիտուտի նախաձեռնութեամբ Կիրովականում գումարվեց քիմիական արդյունաբերութեան և գունավոր մետալուրգիայի ձևոնարկությունների արտադրական պրոցեսների ավտոմատացման հարցերին նվիրված համամիութենական գիտական կոնֆերանս, որին մասնակցեցին երկրի խոշոր քաղաքներից ու տարբեր տնտեսական շրջաններից եկած ավելի քան 80 գիտական աշխատողներ ու ավտոմատացման գործի մասնագետներ: Կոնֆերանսում կարգացված ավելի քան 35 գիտական ու մասնագիտական զեկուցումները երիտասարդ ինժեներներին հնարավորութեան տվեցին հաղորդակից լինել երկրի տարբեր գիտական հիմնարկների փորձերին ու աշխատանքի մեթոդներին: Այնուհետև ինստիտուտում մեծ աշխատանք կատարվեց գի-

տական նոր բաժիններ և լաբորատորիաներ ստեղծելու, դրանք պահանջվող սարքավորումներով հարստացնելու, ինչպես նաև ինստիտուտը որակյալ մասնագիտական կադրերով ապահովելու ուղղությամբ:

Ինստիտուտի կոլեկտիվի գիտահետազոտական աշխատանքն ուղղվեց արտադրության պրոցեսների ուսումնասիրման և դրանց ավտոմատացման նպատակին: Այսպես, օրինակ, արդյունավետ աշխատանք կատարվեց էլեմենտար ծծմբից ծծմբաթթվի արտադրության պրոցեսները ավտոմատացնելու բնագավառում: Որոշակի աշխատանք է կատարվել նաև էթիլբենզոլի և ստիրոլի արտադրության ավտոմատացման արդյունավետ սիստեմ մշակելու ուղղությամբ, որովհետև երկրում նախատեսվում է ստիրոլի՝ որպես պլաստմասսաների և հատկապես սինթետիկ կաուչուկի արժեքավոր հումքի արտադրության բուռն զարգացում: Այդ ուղղությամբ Գորլովկայի ազոտային գործարանում կատարված աշխատանքը տվեց իր գոհացուցիչ արդյունքները:

Ինստիտուտը դեռ 1958 թվականին մշակել է Կիրովականի քիմիական կոմբինատի № 3 և № 5 ցեխերի կոմպլեքսային ավտոմատացման տեխնիկական փաստաթղթերն ու համապատասխան նախագծերը:

Կոլեկտիվը քիչ աշխատանք չի կատարել նաև գունավոր մետալուրգիայի ձևնարկությունների համար: Այսպես, Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի ֆլոտացիոն ֆարրիկայի համար մշակել է արտադրության կոմպլեքսային ավտոմատացման մի ամբողջական սխեմա, ինչպես նաև հիմնավորել ու կազմել է գունավոր մետալուրգիայի ձևնարկությունների արտադրության ավտոմատացման հնարավորությունների գիտական-տեխնիկական տեսությունը:

Կիրովականի «Ավտոմատիկա» ինստիտուտը աշխատանքներ է ծավալել ոչ միայն Հայաստանի քիմիական արդյունաբերության, գունավոր մետալուրգիայի արտադրության, այլև միութենական բազմաթիվ ձևնարկությունների (սկսած Հյուսիսային Ղազախստանից, Բաշկիրիայից, Ուկրաինական

ՍՍՌ-ից մինչև Ռուսաստանի Ֆեդերացիայի բազմաթիվ մար-
զեր ու շրջաններ) ավտոմատացման ուղղութիւնով:

Ժողովրդական տնտեսութեան զարգացման յոթնամյա պլ-
անը մեծ խնդիրներ է դրել ինչպէս երկրի բոլոր գիտական
հիմնարկները, այնպէս էլ Կիրովականի «Ավտոմատիկա» գի-
տահետազոտական ինստիտուտի առջև: Ինստիտուտի աշխա-
տանքի հեռանկարային պլանները հարուստ են արդյունաբե-
րութեան անշեղ զարգացման համար կարևորագույն նախա-
գծումներով: Կիրովականի «Ավտոմատիկա» գիտահետազո-
տական ինստիտուտը 1958—1959 թվականներին պատրաս-
տել է վեց սարքեր (պրիբոր), որոնք այժմ ցուցադրված են
ՍՍՌՄ Ժողովրդական տնտեսութեան նվաճումների ցուցահան-
դեսում: Ինժեներներ է. Արզումանովը, Մ. Կորոտեկչովը, Ա.
Սաֆարյանը, Ա. Մակարյանը, Լ. Պալագինան, Պ. Ծրոխինը
գործուն մասնակցութիւն ունեցան այդ պրիբորներն ստեղծե-
լու գործում, ՍՍՌՄ Ժողովրդական տնտեսութեան նվաճում-
ների ցուցահանդեսում ներկայացված վեց նոր սարքերի փորձ-
նական նմուշները գերազանց դնահատականի արժանացան:

ՍՍՌՄ Մինիստրների Սովետի հանձնարարութեամբ ինստի-
տուտն ստեղծելու է մաթեմատիկական ավտոմատ հաշվար-
կող և կառավարող մեքենաներ՝ քիմիական արդյունաբերու-
թեան արտադրական պրոցեսների կառավարման համար: Ինս-
տիտուտում տեղակայված «Ռերալ» տիպի խոշոր էլեկտրո-
նային հաշվարկող մեքենան կօգնի տեխնոլոգիական պրո-
ցեսների մաթեմատիկական բարդ հաշվարկներ կատարելուն և
նոր հաշվարկող մեքենաներ ստեղծելուն:

Ինստիտուտի ավտոմատացման միջոցների բաժնի կատա-
րողական մեխանիզմների և կարգավորիչ փականների լաբո-
րատորիան ՍՍՌՄ կառավարութեան հանձնարարութեամբ կա-
տարողական մեխանիզմներ է ստեղծում Կրասնոյարսկի երկ-
րամասի Նորիլսկ քաղաքի լեռնամետալուրգիական կոմբինա-
տի համար: Այդ աշխատանքները ղեկավարում են ինժեներներ
է. Արզումանովը, Ա. Իսկանդարյանը և ուրիշներ: Ստեղծվող
պնևմատիկ և հիդրավլիկ կատարողական մեխանիզմները

կօզտագործվեն մեր Միության տարրեր նախագծային կազմակերպությունների կողմից: Ստեղծված մեխանիզմների արդյունաբերական փորձարկումները նորիլսկի կոմբինատում սվեցին զրական արդյունքներ և այժմ այդ մեխանիզմները նախապատրաստվում են մասսայական թողարկման:

Ինստիտուտը 1960 թվականի առաջին կիսամյակում հաջողությամբ կատարեց կառավարական հատուկ հանձնարարությունը, այն է՝ Կալինինի արհեստական մետաքսթելի կոմբինատի համար պատրաստեց արտադրական պրոցեսների ավտոմատացման մի շարք սարքեր: Այդ սարքերի ստեղծմանը ակտիվ մասնակցություն ունեցան ինժեներներ Կ. Սարգսյանը, Ա. Կարգանովը և ուրիշներ:

Տեսական խոր ուսումնասիրություններից և լաբորատոր փորձերի արդյունքների ամփոփումից ելնելով, ինժեներ Ա. Կազեկը մշակել է փականների հաշվարկման և ընտրման մեթոդիկա, առանց որոնց տվյալ կոնկրետ պայմանների համար փական ընտրելը հնարավոր չէ: Ինստիտուտը կարգավորիչ փականների փորձարկումների և ուսումնասիրությունների համար Կիրովականի քիմիական կոմբինատի տեխնոլոգյում կառուցում է մի փորձակայան, որն ամենահզորն է լինելու մեծ Միության մեջ և հնարավորություն կտա փորձարկելու արտադրվող փականների համարյա բոլոր տեսակները:

Կիրովականի «Ավտոմատիկա» գիտահետազոտական ինստիտուտն այժմ զբաղված է Միության մի շարք գործարանների զանազան ցեխերի ավտոմատացման հարցերով: Այսպես, նախատեսված է ավտոմատացնել Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանում № 5, 7, 8, 9 և 30 ցեխերը, Ղազախական ՍՍՌ Բալխաշի լեռնամետալուրգիական կոմբինատի հանքաքարի ջարդման, մանրացման, ֆլոտացման և մետալուրգիական պրոցեսները, ինչպես նաև Երևանի «Պոլիվինիլացետատ» գործարանում՝ քացախաթթվի ստացման պրոցեսը և այլ աշխատանքներ: Բացի սրանից, ինստիտուտը զբաղվում է նաև զանազան այլ գործիքների ու սարքերի կատարելագործման և ստեղծման հարցերով:

Ինստիտուտն ունի մոտ 360 աշխատակից, որի կեսից ավելին ինժեներա-տեխնիկական աշխատողներ են: Սրանք աշխատում են 13 բաժինների լաբորատորիաներում:

Ինստիտուտն ունի գիտատեխնիկական գրադարան՝ 8 հազար անուն գրքային ֆոնդով: Ստացվում են լույս բնծայվող հայրենական և արտասահմանյան տեխնիկական գրականություն և ավտոմատիկային վերաբերող 200 օրինակ զանազան թերթեր ու ամսագրեր: Ինստիտուտն ունի իր քառահարկ շենքը, իսկ կողքին՝ լաբորատորիաների կորպուսը: Աշխատակիցների համար արդեն շահագործման է հանձնված բնակելի շորս շենք: Ինստիտուտի 1958 թվականի տարեկան բյուջեն կազմում էր 4,5 միլիոն ռուբլի, 1959 թվականին՝ մոտ 6,5 միլիոն, 1960 թվականին կազմում է մոտ 10 միլիոն ռուբլի: Յոթնամյակի վերջում, այսինքն՝ 1965 թվականին, այդ ինստիտուտում աշխատելու են ավելի քան 1000 մարդ:

Հայաստանի քիմիական արդյունաբերության հետազարգացման ուղղութեամբ գիտահետազոտական և նախագծային համապատասխան աշխատանքներ տանելու նպատակով ՀԿՊ Կենտկոմի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի որոշմամբ 1958 թվականի վերջերին Կիրովականում կազմակերպվեց Քիմիայի նախագծային և գիտահետազոտական ինստիտուտը:

Ինստիտուտի փորձարարական բազայում՝ լաբորատորիաներում ու փորձնական գործարանում, հետազոտություններ են կատարվում նոր արտադրությունների տեխնոլոգիայի մշակման ուղղությամբ: Ինստիտուտի նախագծային մասն զբաղվում է Հայկական ՍՍՌ քիմիական արդյունաբերության նոր կառուցվող ցեխերի ու գործարանների, ինչպես նաև հների բնղլլայնման ու կատարելագործման աշխատանքները տեխնիկական փաստաթղթերով ապահովելու գործով:

Պետական բյուջեով ինստիտուտին 1952 թվականին հատկացվել է 10 միլիոն ռուբլի՝ բնակելի շենքերի, լաբորատորիաների և էքսպերիմենտալ գործարանի շինարարության համար: 1960 թվականին հատկացվելու է 15 միլիոն ռուբլի: Ինստի-



« զխաբեռապտտակսն ինտիւստի լաբորատորիայիւմ

սուտան այժմ ունի 500 աշխատող, որոնց թվում կան գիտության 3 զոկտորներ, տեխնիկական և քիմիական գիտությունների 11 թեկնածուներ: Հետագայում աշխատակիցների թիվն ինստիտուտում հասնելու է 650-ի: Եստիագծային բաժինն արդեն հաջողությամբ իրականացնում է սեպտեբրիկայի քիմիական արդյունաբերության նոր ձևոնարկությունների կառուցման և հների վերականգնման նախագծերը: Ավարտվել են Երևանի Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի, խրամպիկի և «Պոլիվինիլացետատ» զործարանների, ինչպես նաև Կիրովականի Ա. Մ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի մի շարք ցեխերի վերականգնման նախագծային աշխատանքները: Բեղմնավոր գործունեություն են ծավալել ինստիտուտի գիտահետազոտական բաժնի աշխատողները: Նրանք զբաղված են քիմիկատների սինթեզման ու սինթետիկ նյութերի արտադրության նոր մեթոդների ու եղանակների մշակմամբ:

Մեծ ներդրում է պոլիվինիլային սպիրտից արհեստական մետաքսաթելի և էլեկտրամեկուսիչ թաղանթի ստացման ուղղությամբ Հ. Հակոբջանի կողմից կատարված օգտավետ աշխատանքը: Արդեն կիսագործարանային մասշտաբով արտադրվում է այդ սինթետիկ մետաքսաթելը: Ինստիտուտի կազմակերպիչ և առաջին ղրեկտոր է. Տեր-Ղազարյանի նախաձեռնությամբ մշակվում են գազային բենզինից քացախաթթու, ացետոն և էթիլեն ստանալու եղանակները: Շ. Հովհաննիսյանի կողմից ղեկավարվող լաբորատորիան կարճ ժամկետում լաբորատոր եղանակով արդեն լուծեց քացախաթթու ստանալու հարցը և մոնտաժեց կիսագործարանային սխեման: Ինստիտուտի լաբորատորիաներից մեկում քիմիկ-ինժեներ Փ. Ղազարյանի ղեկավարությամբ լաբորատոր մասշտաբով լուծվեց կալցիում-ցիանամիդի ստացման հարցը, առանց կալցիումկարբիդի ցիկլի: Այս նախաձեռնությունը մեծ համանություն է ստացել: Այժմ հանձնարարվել է մշակել կիսագործարանային և գործարանային սխեմաները: Ինստիտուտի կոլեկտիվի կողմից լուծված վերահիշյալ հարցերը խոշոր նշանակություն ու-

նեն Միության բիմիական արդյունաբերության զարգացման համար:

Նկատի ունենալով արդյունաբերության բուռն զարգացումը մեր երկրում, ավտոմատացման դերն աշխատանքի արտադրողականության բարձրացման ու շահավետության մեջ և ինժեներա-տեխնիկական կադրերի ուսցիտնալ տեղաբաշխումը, ՍՍՌՄ Մինիստրների Սովետը 1956 թվականի հունիսին որոշում էնդունեց Կիրովականում կազմակերպել «Ավտոմատիկա» ինքնուրույն կոնստրուկտորական բյուրո՝ բիմիական արդյունաբերության և զուեալոր մետալուրգիայի արտադրական պրոցեսների ավտոմատացման, սարքերի նախագծման և փորձնական նմուշների պատրաստման համար:

Բյուրոյի կազմակերպման համար հատկացվեցին համապատասխան գումարներ, և 1957 թվականի գարնանից քաղաքի Գետափնյա թաղամասում սկսվեցին նրա արտադրական շենքերի կառուցման աշխատանքները:

Բյուրոն սկզբնական շրջանում գործում էր «Ավտոմատիկա» գիտահետազոտական ինստիտուտի շենքում: Կոնստրուկտորական բյուրոյում աշխատելու համար Միության տարբեր քաղաքներից հրավիրվեցին բազմաթիվ մասնագետներ, որոնց մեծ մասը Երևանի Կարլ Մարքսի անվան Պոլիտեխնիկական ինստիտուտի սաներից են: Այն խնդիրները, որոնք լուծելու էին այդ երիտասարդ մասնագետները, մեծ մասամբ նոր էին և անծանոթ:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, բյուրոյի երիտասարդ մասնագետների մի մեծ խումբ՝ շուրջ 40 ինժեներներ, ուղարկվեց Մոսկվա «Ավտոմատիկա և հեռուստամեխանիկա» մասնագիտությանը որակավորվելու: Այդ միջոցառումից հետո բյուրոյի ինժեներների մեծ մասը ստացավ երկրորդ մասնագիտությունը:

Բյուրոյի երիտասարդ կոլեկտիվը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ հերթական կարևոր առաջադրանքների կատարմանը: 1957 թվականին նրա ջանքերով ավարտվեցին էլեկտրական կատարողական մեխանիզմների 5 տիպերի տեխնիկական նա-

խաղժումները և օդի մաքրման փականների շարքի բանվորական զծագրերը: Այդ աշխատանքների կատարման ժամանակ աչքի ընկան կոնստրուկտորական խմբի ղեկավար Շ. Վալեսյանը, ավագ կոնստրուկտորներ Մ. Շահնազարյանը, Մ. Գրիգորյանը, Կ. Մարտիրոսյանը, Ա. Եղիազարյանը, ինժեներ-կոնստրուկտոր Ս. Պողոսյանը և Ռ. Աթուր:

1957 թվականի օգոստոսին գործարկվեց փորձնական արտադրութայն բազան, որի շահագործման համար մեծ աշխատանք կատարեց բազայի վարիչ՝ անվանի վարպետ ու գյուտարար Ս. Ղարազյուզյանը: Արտադրական բազայի աշխատակիցների ջանքերի շնորհիվ բյուրոն հնարավորութուն ունեցավ արդեն 1957 թվականի վերջերից ձեռնամուխ լինելու փորձնական նմուշների պատրաստմանը:

1957 թվականին հիմնականում բնորոշվեց բյուրոյի աշխատանքի ուղղութունը՝ էլեկտրական կատարողական մեխանիզմների նախագծումը և փորձարկման նմուշների պատրաստումը: Այդ մեխանիզմների կարիքը շատ մեծ էր մեր Միությունում, իսկ եղած մեխանիզմները վատորակ են և չեն բավարարում առաջադրված պահանջները:

1958—1959 թվականներին կատարած հետազոտական աշխատանքների շնորհիվ որոշվեցին կատարողական մեխանիզմների ախտերը և պահանջները:

Նույն ժամանակաշրջանում կատարած աշխատանքները հնարավորութուն տվեցին ընտրելու մեխանիզմների ռացիոնալ սխեմաներ, որոնց շնորհիվ մեխանիզմների քաշը պակասեց միջին հաշվով 2 անգամ, իսկ շափերը՝ մոտ 1,5 անգամ, անհամեմատ ավելացան դրանց տեխնիկական ցուցանիշները և անվթարութայն աստիճանը: Թե ինչ են նշանակում այդ հաջողութունները, կարելի է եզրակացնել հետևյալ թվերից. մինչև 1965 թվականը մեխանիզմների տարեկան միջին պահանջը հասնելու է մոտ 120—150 հազար հատի: Մի մեխանիզմի քաշը 80-ից հասցված է 40 կիլոգրամի, օգտակար գործողութայն գործակիցն ավելանալու է մոտ 5 անգամ: Եթե նկատի ունենանք, որ շարժիչի միջին հզորութունը 80—100

վատ է, ապա տարեկան տնտեսվելու է մոտավորապես 5—6 հազար տոննա որակյալ մետաղ, 500—600 հազար կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա:

Այդ տարիներին բյուրոյի երիտասարդ կուլեկտիվն իր համար պարզեց այն բոլոր հարցերը, որոնք կապված էին ընթացիկ և ապագա աշխատանքների հետ, և այժմ նրա նախագծերն աչքի են ընկնում բարձր որակով և տեխնիկական ու գիտական հարցերի լուծման հասունությամբ:

Երիտասարդ ինժեներներից աճեց բյուրոյի արտադրական ճյուղերի հրամանատարների մի ստվար խումբ: Խմբի ղեկավար Շ. Վալեսյանը այժմ կոնստրուկտորական բաժնի վարիչն է, ավագ ինժեներ Մ. Շահնազարյանը՝ կոնստրուկտորական բաժնի վարիչի տեղակալը, ավագ ինժեներ Լ. Խաչատրյանը, Կ. Մարտիրոսյանը, Ս. Բերգերը կոնստրուկտորական խմբի ղեկավարներն են: Էլեկտրոնիկայի և էլեկտրատվտումատիկայի լաբորատորիայի վարիչ զարձավ ավագ ինժեներ Լ. Աթուհան, կոմպլեքսային փորձարկումների լաբորատորիայի վարիչ՝ ինժեներ Ս. Մանուկյանը: Խմբի ղեկավար Մ. Սեդրակյանը այժմ բյուրոյի գլխավոր ինժեներն է: Հիշված բոլոր երիտասարդ մասնագետները արգարացնում են իրենց թե՛ պրակտիկ և թե՛ տեսական աշխատանքներում:

Կոնստրուկտորական բյուրոն 1959 թվականին հիմնականում ավարտեց արտադրական կորպուսների շինարարությունը և 1960 թվականի հունվարին շահագործման հանձնեց ինժեներական կորպուսը:

Բյուրոն այժմ ունի մոտ 225 աշխատակից: Յոթնամյակի ընթացքում նախատեսվում է այդ թիվը հասցնել մոտ 600-ի: Աշխատողների թվի աճման հետ մեկտեղ աճում և բարդանում են այն խնդիրները, որոնք պետք է լուծի կոնստրուկտորական բյուրոն:

1960 թվականին նախագծվելու են փոփոխական և հաստատուն արագության կատարողական մեխանիզմների մի ամբողջ շարք, ջերմային պրոցեսներ կարգավորող երկրորդական սարքեր և մի շարք կարգավորող օրգաններ: Բյուրոն այժմ՝

գրեթէ ամբողջովին լուծել է փոփոխական արագութեան էլեկտրական անկոնտակտ շարժարերների նախագծման սկզբունքային հարցերը՝ առաջին հերթին այդ շարժարերները կատարողական մեխանիզմներում կիրառելու համար՝ վերջինս նորութիւն է հայրենական արդյունաբերութեան մեջ: Այն լիովին վերացնում է վթարների բուն պատճառը՝ ղեկավարման կոնտակտային սիստեմները և զգալիորեն լավացնում ավտոմատ ղեկավարման որակը: Այդ սիստեմի երեք շափի մեխանիզմներ հանձնվել են պատվիրատուին և արժանացել բարձր գնահատականի:

Կիրովականի կոնստրուկտորական բյուրոյի հիմնադիրն ու ղեկավարը Փ. Փյուսկուլչանն է, որն ունենալով տեսական անհրաժեշտ պատրաստութիւն, աշխատանքի հարուստ փորձ, իրեն դրսևորում է որպես շնորհալի ինժեներ-կոնստրուկտոր: Նա ամեն ջանք թափում է այդ կարևոր ձեռնարկութեան աշխատանքները պատշաճ բարձրութեան վրա դնելու, կուլեկտիվի ստեղծագործական միտքը զարգացնելու համար:

Բյուրոյում կատարված աշխատանքները հնարավորութիւն կտան առաջիկա 2—3 տարում Հայաստանի վարչատնտեսական շրջանում հղած գործարանների հիման վրա կազմակերպելու արտադրական պրոցեսների ավտոմատացման սիստեմի համար պահանջվող բոլոր սարքերի արտադրութիւնը:

Այսպիսով, Կիրովականում ունեցած տեխնիկական ինտելիգենցիայի բեղմնավոր աշխատանքի շնորհիվ քաղաքը դարձել է բիմիական արդյունաբերութեան, գունավոր մետալուրգիայի արտադրական պրոցեսների ավտոմատացման, տեխնիկական առաջադիմութեան և զիտական մտքի զարգացման օջախներից մեկը:





Գ Լ ՈՒ Խ Ե Ր Ր Ո Ր Դ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ (1920—1960)

Մանր արդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ ՍՍՌՄ-ում գյուղատնտեսական մթերքների և ժողովրդական լայն սպառման առարկաների արտադրության մեծ հնարավորություններ ստեղծվեցին:

Մեր երկրում արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման բարձր տեմպը աշխատավորության նյութական բարեկեցության ու կուլտուրայի անընդհատ վերելքի նախապայմանն է, իսկ աշխատավորության պահանջմունքների աճումն ու ընդլայնումն իր հերթին սոցիալիստական արտադրության հետագա վերելքի անհրաժեշտ գործոնն է: Այդ կապակցությամբ ՍՄԿՊ-ն խոշորագույն միջոցառումներ է ձևափակում ժողովրդական սպառման ապրանքների առատության ստեղծելու համար:

Աճում են մեր քաղաքների բարեկարգման, բնակարանային շինարարության, ժողովրդական լուսավորության և առողջապահության համար ֆինանսական հատկացումները: Դրա լավագույն օրինակներից մեկը Կիրովական քաղաքն է, 1925 թվականին քաղաքի բարեկարգման նպատակին հատկացված

գումարը կազմում էր մի քանի հարյուր հազար ուրբլի, 1940 թվականին այն հասավ շորս միլիոն ուրբլու:

1950 թվականին Կիրովականի քաղաքային Սովետի բյուջեն կազմեց ավելի քան 10 միլիոն, 1955 թվականին՝ 24 միլիոն ուրբլի, իսկ 1960 թվականին հասավ ավելի քան 68 միլիոն ուրբլու: Այդ թվում ժողովրդական կրթության վրա ծախսվող գումարը հասավ մոտ 13 միլիոն, առողջապահությանը՝ 12,5 միլիոն, կոմունալ տնտեսությանը՝ ավելի քան 31 միլիոն ուրբլով¹:

Կիրովականում ստեղծվել է ժողովրդական կրթության, կուլտուր-լուսավորական և գիտահետազոտական հիմնարկների, մասնագիտական դպրոցների, տեխնիկումների լայն ցանց, ուր տարեցտարի աճում են երիտասարդ, խոստումնալից կադրեր:

1959—60 ուսումնական տարում Կիրովականում գործում էին 9 միջնակարգ, 4 ութամյա, 6 բաներիտ և 2 գիշերօթիկ դպրոցներ, ուր սովորում էին 8.393 պատանիներ ու աղջիկներ, որից բաներիտ դպրոցներում՝ 881: Եթե 1940 թվականին միջնակարգ դպրոցների 8—10-րդ դասարաններում սովորում էին 542 աշակերտ, ապա 1960 թվականին սովորում են 794 աշակերտ: Բացի այդ, Կիրովականի ժողկրթության ցանցում կան երեք սպորտի դպրոց, պիոներների և ուսուցիչների տներ, պատանի բնասերների կայան և 14 մանկապարտեզ²:

Կիրովականի դպրոցներում աշխատում են 518 ուսուցիչներ, որոնցից 293-ն ունեն բարձրագույն, 51-ը թերի բարձրագույն կրթություն³: Նրանցից շատերն իրենց երկարամյա և անբասիր աշխատանքի համար արժանացել են կառավարական զանազան պարգևների: Դրանցից է վաստակավոր ուսուցիչ Գ. Հախումյանը, որի ծննդյան 80-ամյակը նշվեց 1957 թվակա-

¹ Տվյալները վերցված են Կիրովականի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի ֆինանսական բաժնից:

² Տվյալները վերցված են Կիրովականի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի ժողկրթության բաժնից:

³ Նույն տեղում:

նին: Բեզմնավոր է մաթեմատիկայի գասատու Գ. Հախումյանի մանկավարժական գործունեությունը: Նա իր անբասիր աշխատանքի համար պարգևատրվել է Աշխատանքային Հերոսի կոչումով, ինչպես նաև Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի և Լուսավորության մինիստրության պատվոգրերով:


Հայկական ՍՍՌ վաստակավոր ուսուցիչ Վ. Զաքարյանը ֆիզիկայի և մաթեմատիկայի հմուտ գասատու է: Նա իր մանկավարժական-մեթոդական ցուցումներով մեծ օգնություն է ցույց տալիս բազմաթիվ երիտասարդ գասատուններին: Կիրովականում երկարամյա ծառայություն ունեն Հայկական ՍՍՌ վաստակավոր ուսուցիչներ՝ (հանգուցյալներ) Գ. Միսկարյանը և Հ. Զալադյանը, որոնք իրենց ուսանելի փորձը սիրով հաղորդում էին երիտասարդ ուսուցիչներին:

Հայկական ՍՍՌ վաստակավոր ուսուցչուհի Ս. Մատինյանը իր երկարամյա աշխատանքի համար պարգևատրվել է Լենինի շքանշանով: Կենսաթոշակի են անցել Հայկական ՍՍՌ վաստակավոր ուսուցիչներ Մ. Մովսիսյանը, Ա. Բայադյանը, Ա. Միրզոյանը, Ս. Թումանյանը և ուրիշներ:

Կիրովականի տարբեր դպրոցներում են աշխատում Հայկական ՍՍՌ վաստակավոր ուսուցիչներ Ս. Մելիքյանը, Հ. Թաթևյանը, Ն. Սարգսյանը, Ա. Ստեփանյանը և ուրիշներ:

Չնայած սովետական դպրոցը իր գոյության տարիներին գաստիարակել է սոցիալիստական շինարարության ակտիվ կառուցողներ, բայց այժմ նա մասամբ ետ է մնում կոմունիստական շինարարության արդի պահանջներից: Այդ խմաստով էլ յոթնամյակի կարևոր խնդիրներից մեկը կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման հարցն է: Ինչպես ՍՍՌՄ, այնպես էլ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետների սեսիաները հատուկ օրհնքներ բնդունեցին «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և երկրում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին»: Այդ որոշումները բխում են Վ. Ի. Լենինի ցուցումից: Այդ առթիվ Վ. Ի. Լենինը գրում է.

«...Չի կարելի պատկերացնել առաջա հասարակության իդեալը՝ առանց ուսուցումը միացնելու երիտասարդ



Աշխարհի չեմպիոն Ա. Ազարյան

սերնդի արտադրողական աշխատանքի հետ. ոչ ուսուցումն ու կրթությունն առանց արտադրողական աշխատանքի, ոչ արտադրողական աշխատանքն առանց զուգահեռ ուսուցման ու կրթության չեն կարող դրվել այն բարձրության վրա, որ պահանջում են տեխնիկայի արդի մակարդակը և գիտական իմացության վիճակը»¹:

Ելնելով այս պատմական ցուցումից, ՍՍՌՄ Գերագույն Սովետի և Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի՝ դպրոցի մասին ընդունած օրենքները պահանջում են, որ ուսման սերակապը կյանքի, արտադրության հետ կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ դառնա դպրոցում գիտությունների ուսումնասիրման հիմնական սկզբունքը, աճող սերնդի կոմունիստական դաստիարակության հիմքը:

Այդ նոր օրենքով Հայկական ՍՍՌ-ում ամենուրեք մըտցրվում է ընդհանուր պարտադիր ութամյա կրթություն՝ մինչև այժմ գոյություն ունեցող պարտադիր չոթնամյա կրթության փոխարեն: Դպրոցի մասին ընդունված նոր օրենքը կյանքում կիրառելու համար ինչպես ուսպուրվիկայում, այնպես էլ Կիրովականում գործնական աշխատանք է ծավալվում: Ուսուցմանը գործնական բնույթ տալու ուղղությամբ ակներև աշխատանք է կատարված քաղաքի մի շարք դպրոցներում, որոնց մեծ օգնություն են ցույց տալիս շեֆ գործարաններն ու ֆարրիկաները:

Ինչպես մեր երկրի տարբեր քաղաքներում, այնպես էլ Կիրովականում բացվել են գիշերօթիկ դպրոցներ: Հայկական ՍՍՌ կուսակցության մինխատրության Կիրովականի № 3 գիշերօթիկ դպրոցը կազմակերպվել է 1956—57 ուսումնական տարում, ուր առաջին տարում I—VII դասարաններում սովորում էին 210, 1959—60 ուսումնական տարում I—X դասարաններում՝ 280 աշակերտներ, իսկ 1960—61 ուսումնական տարում սովորում են 300 երեխաներ:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր II, էջ 610:

Կիրովականի գիշերօթիկ դպրոցն ունի սևփական քառահարկ շենք, որի առաջին և երկրորդ հարկերում տեղավորված են դասասենյակները, ֆիզիկայի, քիմիայի և բնագիտության լաբորատորիաները, կոշիկի, փայտամշակման, կարի մետաղամշակման արհեստանոցները, իսկ երրորդ և չորրորդ հարկերում՝ երեխաների ննջարանները: Դպրոցն ունի ուսումնա-փորձնական 10 հեկտար հողամաս, որի մի մասը պտղատու այգի է: Հողամասը մշակում են սաները: Երեխաները մասնագիտությունների մեջ այնքան են հմտացել, որ իրենց դպրոցի արհեստանոցներում պատրաստում են կոշիկեղեն և գյուղատնտեսական զանազան գործիքներ, իսկ մետաղամշակման և փայտամշակման արհեստանոցներում կատարում են դպրոցական գույքի վերանորոգումներ: Երեխաների ժրաջան աշխատանքի շնորհիվ օժանդակ տնտեսությունը մեծ հիամուտներ է ստեղծում դպրոցի համար:

1957 թվականին դպրոցի բյուջեն եղել է 1.5 միլիոն, իսկ 1960 թվականին՝ ավելի քան երկու միլիոն ռուբլի:

1960 թվականին Կիրովականի գիշերօթիկ դպրոցն առաջին անգամ ռեսպուբլիկայում սվեյց 14 շրջանավարտ:

1957—58 ուսումնական տարվանից բացվեց Անդրերկաթուղու Կիրովական կայարանի № 1 գիշերօթիկ դպրոցը, ուր սովորում են երկաթուղայինների երեխաները: Առաջին տարում դպրոցի I—VII դասարաններում սովորում էին 120 աշակերտներ, իսկ 1960—61 ուսումնական տարում I—X դասարաններում սովորում են 270 աշակերտ: 1960 թվականին շահագործման կհանձնվի 300 տեղանոց հանրակացարանի շենքը: ուսումնական կորպուսն իր բոլոր հարմարություններով: Այստեղ կգործեն նաև մեքենայացված մեխանիկական, կարի, փայտամշակման և այլ արհեստանոցներ, ուր կաշխատեն գիշերօթիկ դպրոցի երեխաները:

1934 թվականի սեպտեմբերին Կիրովականում բացվեց երաժշտական դպրոց՝ դաշնամուրի, ջութակի և թավջութակի բաժիններով: Երաժշտական դպրոց ընդունվեցին 8—14 տարեկան 80 երեխաներ: Մանկավարժական կազմը հրավիրվեց

Երևանի, Բրիլլիսիի, Մոսկվայի և Լենինգրադի կոնսերվատորիաներից:

1935 թվականի հունվարի 6-ին Կիրովականի թատրոնի շենքում կապացավ երաժշտական դպրոցի բացման հանդիսավոր երեկոն: Դպրոցում արդեն սովորում էին 120 աշակերտներ: Դասատուներն էին Ա. Աբովյանը, Ն. Տեր-Մինասյանը, Է. Խունունցը, Ն. Գրիվնան, Ս. Զաքարյանը, Գ. Ղափանցյանը, Ա. Բուշը, Բ. Զևյզլիցը, Ի. Զերքեսովը: 1945 թվականին, երբ նշվեց դպրոցի տասնամյակը, դպրոցում արդեն սովորում էին 250 աշակերտներ, աշխատում էին 20-ից ավելի դասատուներ: Դպրոցում գործում են կվարտետ, երգեցիկ խումբ, լարային նվագախումբ, իսկ հետագայում, փողային բաժին բացվելուց հետո, նաև փողային նվագախումբ:

1941—42 ուսումնական տարվանից երաժշտական դպրոցին կից բացվեց հունրակրթական բաժին՝ հայկական և ռուսական սեկտորներով:

1952 թվականին դպրոցի բազայի վրա հիմնադրվեց Կիրովականի երաժշտական ուսումնարանը, որն ունի դաշնամուրային, լարային, խմբավարական, փողային և վոկալ բաժիններ, որտեղ սովորում են մոտ 100 ուսանող Հայաստանի և Վրաստանի տարբեր քաղաքներից ու շրջաններից:

Ուսումնարանը տվել է մի շարք շրջանավարտներ, որոնք ավարտելով Լենինգրադի, Օդեսայի, Բրիլլիսիի և Երևանի կոնսերվատորիաները, հաջողությամբ աշխատում են ռեսպուբլիկայի քաղաքներում ու շրջանային դպրոցներում: Լենինյան մրցանակի լաուրեատ, ականավոր կոմպոզիտոր Ա. Խաչատրյանը այցելելով Կիրովական, իր տպավորություններում գրել է.

«Ես ամենից հոյակապ տպավորությունը ստացա երաժշտական դպրոցում. այդ՝ Սովետական Հայաստանի կուլտուրական օջախներից մեկին է»:

Երաժշտական դպրոցի և ուսումնարանի աշխատանքներում ղգալի ներդրումներ են կատարում ջութակահար Ա. Դադ-

յանը, ԹավչուՅակահար Ե. Ավագյանը, ուսուցչուհիներ Ն. Ղազանջյանը, Զ. Անտոնյանը, Վ. Պլենսկայան և ուրիշներ:

Երաժշտական դպրոցի և ուսումնարանի հիմնադրման օրվանից դիրեկտորի պաշտոնը վարում է Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր է. Կզարթմյանը, որի երախտիքը մեծ է Կիրովականում երաժշտական կուլտուրա տարածելու, մասնագետ կադրեր պատրաստելու բնագավառում:

1957—58 ուսումնական տարվանից Կիրովականում գործում է նկարչական դպրոց, որի երեք դասարաններում սովորում են 102 երեխաներ, նկարչական դպրոցի կոնտինգենտը կոմպլեկտավորված է 4—7 դասարանների այն աշակերտներից, որոնք առանձին հետաքրքրություն, հմտություն, ունակություն են ցուցաբերում դեպի նկարչությունը: Դպրոցում աշխատում են մասնագետ դասատուներ:

Մասոսայական, գիշերօթիկ և երաժշտական դպրոցներից բացի, Կիրովականում գործում են նաև մի շարք մասնագիտական միջնակարգ դպրոցներ: Մանկավարժական ուսումնարանը իր գոյություն տարիներին ուսուցիչիկայի մասոսայական դպրոցներին տվել է 1.152 շրջանավարտ: Մանկավարժական ուսումնարանը, բացի ուսումնական շենքից, ուներ նաև հանրակացարան, Ֆիզիկայի, բիմիայի, բնագիտություն, աշխարհագրություն և մանկավարժական կաբինետներ: Ուսումնարանը մինչև 1952 թվականն ուներ միայն հայկական խմբեր, 1952—1954 թվականներին՝ հայկական և ռուսական խմբեր, իսկ 1954—55 ուստարվանից՝ միայն ռուսական խմբեր:

Ռեսպուբլիկայի առողջապահության ցանցին միջին որակի մասնագետներ էր տալիս Կիրովականի քույրական-մանկաբարձական դպրոցը, որը բացվել էր 1936—37 ուսումնական տարվանից: Այդ դպրոցն իր գոյություն տարիներին առողջապահության ցանցի համար պատրաստել է 1.000-ից ավելի միջին որակի բուժաշխատողներ:

1955—56 ուսումնական տարում դպրոցը վերակառուցվել է և կոչվել Կիրովականի բժշկական ուսումնարան, որի քույրա-

կան, մանկաբարձական և ֆեղզեցիկական բաժինների 14 խմբարում սովորել են 440 ուսանողներ: Գարոցը 1956—57 ուսումնական տարում տվել է մոտ 200 շրջանավարտ: Ինչպես Կիրովականի բժշկական, այնպես էլ մանկավարժական ուսումնարանները 1958—1959 ուսումնական տարում տվին իրենց վերջին շրջանավարտները, որից հետո փակվեցին՝ նկատի ունենալով այն, որ ինչպես լուսավորության, այնպես էլ ռեսպուբլիկայի առողջապահության ցանցում միջին որակի կադրերի կարիքը այլևս չի դադարում:

Գյուղատնտեսությանը միջին որակի կադրեր է տվել 1923 թվականից մինչև 1930 թվականը Ղարաքիլիսայում գործող գյուղատնտեսական դպրոցը: 1930—31 ուստարվանից այդ դպրոցի բազայի վրա կազմակերպվեց գյուղատնտեսական տեխնիկումը՝ որն իր գոյության տարիներին ռեսպուբլիկայի գյուղատնտեսությանը տվել է 1.489 միջին որակի մասնագետներ՝ պտղաբանջարաբույժներ, զոտտեխնիկներ, ագրոնոմներ, անասնաբույժներ, մեղվաբույժներ, հաշվապահներ և այլն: 1959—60 ուսումնական տարում տեխնիկումում սովորում էին 322 ուսանողներ՝ ուսման շորս տարվա տևողությամբ: Տեխնիկումն ունի իր սեփական շենքը, երկրագործության, անասնապահության, բուսաբանության, պտղաբուծության և մեխանիզացիայի հարուստ կաբինետներ, ինչպես նաև ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաներ: Պտղաբանջարաբուծական և ագրոնոմիական բաժնի վերջին տարիների շրջանավարտները ստանում են լրացուցիչ մասնագիտություն՝ կոմբայնավարի, տրակտորիստի և ավտովարորդի: 1955—56 ուսումնական տարվանից տեխնիկումը տալիս է շրջանավարտներ տասնամյակի բազայի վրա: Նրանք տեխնիկումում սովորում են 2,5 տարի: Գյուղատնտեսության բնագավառում միջին որակի աշխատողների կատարելագործման նպատակով 1959—60 ուստարվանից Կիրովականի գյուղատնտեսական տեխնիկումին կից կազմակերպված է հեռակա բաժին՝ ագրոնոմիական և պտղաբանջարաբուծական մասնագիտությամբ:

Երկար տարիներ նույն տեխնիկումում են աշխատում Հայկական ՍՍՌ վաստակավոր ուսուցիչ Ա. Սահակյանը, ուսուցիչներ Ս. Սարգսյանը, Բ. Հակոբյանը, Կ. Գյուզալյանը, Խ. Մորյանը և ուրիշներ: Տեխնիկումի հիմնադրման առաջին տարիներից սրպես ուսմասվար, իսկ ապա գիրեկտոր է աշխատում Հայկական ՍՍՌ վաստակավոր ուսուցիչ Ս. Մուրադյանը:

Ռեսպուբլիկայում առաջին կին անտառագետ Մ. Դանիելյանի նախաձեռնությամբ 1948 թվականին հիմնվեց Կիրովականի անտառային դպրոցը: Մինչև 1955—56 ուսումնական տարին դպրոցը ղեկավարելու անտառային տնտեսություններից ավել է ավելի քան 300 միջին որակի մասնագետներ:

Պատրաստվող կադրերի որակը բարձրացնելու նպատակով 1960—61 ուստարվանից Կիրովականի գյուղատնտեսական տեխնիկումում բացվել է անտառային հատուկ բաժին՝ նախկին անտառային դպրոցի փոխարեն:

Կիրովականի արդյունաբերական ձեռնարկությունների համար միջին որակի կադրեր է պատրաստել Ֆաբրիկագործարանային ուսումնարանը՝ որը Կիրովականում կազմակերպվել է 1940 թվականին: Ուսումնարանն իր գոյության տարիներին, այսինքն՝ մինչև 1945 թվականը, տվել է 1240 միջին որակի մասնագետներ՝ հյուաններ, քարտաշներ, փականագործներ, խառատներ, զոդողներ, էլեկտրամոնտյորներ և այլն: Քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող ուսումնարանի շրջանավարաններից շատերը առաջավոր բանվորներ են և անվանի վարպետներ: Կիրովականում կառուցվող արհեստական մետաքսաթելի խոշոր գործարանի համար միջին որակի կադրեր պատրաստելու նպատակով 1960 թվականի սեպտեմբերից Կիրովականում բացվեց պրոֆտեխնիկական ուսումնարան, ուր սովորում են 200 պատանիներ ու աղջիկներ:

Ռեսպուբլիկայի էլեկտրաարդյունաբերության և գործիքաշինության ձեռնարկությունների համար միջին որակի կադրեր է պատրաստում Կիրովականի սարքաշինության տեխնիկումը, սրը բացվել է 1957—58 ուսումնական տարվանից: Տեխնի-

կումն ունի ռադիոապարատաշինության, ստուգող, շափող և կարգավորող գործիքների, իսկ 1959—60 ուստարվանից՝ նաև էլեկտրասարքաշինության բաժիններ:

1959—60 ուստարում տեխնիկումում սովորում էին 260 ուսանողներ: Տեխնիկումը ընդունվում են միայն միջնակարգ կրթություն ունեցողները, որոնք սովորում են 3 տարի: Տեխնիկումն ունի փականագործական-մեխանիկական արհեստանոց, ռադիոյի և էլեկտրատեխնիկայի ստուգող և շափող գործիքների կաթինետներ: Ուսանողները սրակտիկ աշխատանքներն անց են կացնում քիմիական կոմբինատում, մեքենաշինական «Ավտոմատիկա» գործարաններում, ինչպես նաև ռեսպուբլիկայի և Միության համապատասխան գործարաններում: Տեխնիկումի դասախոսական անձնակազմը մոտ 30 հոգի է: Դրանց մեծ մասը արտագրության մեջ աշխատող ինժեներներ են:

1960 թվականի մարտին տեխնիկումը տվեց իր առաջին շրջանավարտները՝ 100 մարդ, որից 69-ը ստուգող, շափող և կարգավորող սարքերի, իսկ 31-ը ռադիոապարատաշինության բաժնի գծով: Շրջանավարտների մեծ մասն աշխատանքի է անցել «Ավտոմատիկա» և «Հայքիմնախագիծ» գիտահետազոտական ինստիտուտներում, ինքնուրույն կոնստրուկտորական բյուրոյում և «Ավտոմատիկա» գործարանում: Տեխնիկումի ուսանողներն իրենց մասնագիտության մեջ այնքան են հրմտացել, որ շրջանավարտները, դիպլոմային աշխատանքների ղեկավար ինժեներ Գ. Թումանովի ղեկավարությամբ, նախագծեցին ու մոնտաժեցին տեխնիկումի ավտոմատ կարգավորման լաբորատորիան, որը տեխնիկումի ուսանողների համար ունի ուսումնական և գործնական լուրջ նշանակություն, նրանց կատարած աշխատանքի տնտեսական էֆեկտը կազմում է ավելի քան 100 հազար ռուբլի: Տեխնիկումի ուսումնական բազան ընդարձակելու նպատակով նախատեսված է 1961 թվականին կառուցել ուսումնական կորպուս բոլոր հարմարություններով:

1958—59 ուստարում կիրովականում բացվեց Երևանի շինարարական տեխնիկումի ֆիլիալը, որտեղ սուսանց արտա-

դրությունից կտրվելու սովորում են 120 շինարար բանվորներ և ծառայողներ: Դրանցից 60-ը յոթնամյա կրթության բազայի վրա՝ ուսման 5 տարվա տեղումթյամբ, իսկ մյուս 60-ը՝ տասնամյա կրթության բազայի վրա՝ ուսման 3 տարվա տեղումթյամբ:

1959 թվականի սեպտեմբերից Կիրովականում բացվեց Երևանի Կարլ Մարքսի անվան Պոլիտեխնիկական ինստիտուտի երեկոյան ֆիլիալը՝ անօրգանական նյութերի տեխնոլոգիայի և մեքենաշինության տեխնոլոգիայի մասնագիտությամբ: Ֆիլիալի երկու ֆակուլտետի երկու առաջին կուրսերում սովորում են 64 ուսանող: Սովորողները հիմնականում Ա. Մյասնիկյանի անվան կոմբինատի, «Ավտոմատիկա» և մեքենաշինական գործարանների, Քիմիայի և «Ավտոմատիկա» գիտահետազոտական ինստիտուտների, կորդի, տրիկոտաժի ֆաբրիկաների բանվորներ, ցեխերի և հերթափոխության պետերն են: Դասախոսները մեծ մասամբ տեղի ինստիտուտներից, արտագրության մեջ աշխատող օրակյալ մասնագետներից, մասամբ էլ Պոլիտեխնիկական ինստիտուտից են: Ֆիլիալի պարասմունքները տեղի են ունենում երեկոյան, շաբաթական 4 օր:

1960—61 ուսումնական տարվանից ֆիլիալում ավելացել է մի նոր՝ քաղաքացիական և արդյունաբերական շինարարության ֆակուլտետ: Ֆիլիալին կից գործում են նախապատրաստական կուրսեր, որոնց շորս խմբերում ընդգրկված են 160 սովորողներ: Ինչպես ֆիլիալում, այնպես էլ նախապատրաստական կուրսերում կան նաև ռուսական խմբեր:

Բացի միջնակարգ մասնագիտական դպրոցներից և Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիլիալից, Կիրովականում գործում են գիտահետազոտական ինստիտուտներ, որոնց մեջ աչքի է ընկնում ՍՍՈՄ Քիմիական և զուսավոր մետալուրգիայի արտադրական պրոցեսների ավտոմատացման գիտահետազոտական ինստիտուտը, որը երկու տարվա ընթացքում աճել ու դարձել է գիտական խոշոր հիմնարկություն: Մինչև յոթնամյակը «Ավտոմատիկա» գիտահետազոտական ինստիտուտան զբաղվում էր միայն արտադրության առանձին պրոցես-

ների, ազրեզատների և հանգույցների ավտոմատացման գործով, իսկ այժմ զբաղվում է ամբողջ ձեռնարկութունների տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատացման, ինչպես նաև ավտոմատացված գործարաններ հիմնելու հարցերով:

1958 թվականի ամռանը կազմակերպվեց Հայկական ՍՍՌ Ժողովատնտեսական ֆիմիական արդյունաբերութւյան վարչութւյան Կիրովականի ֆիմիայի գիտահետազոտական և նախագծային ինստիտուտը, որի խնդիրն է՝ նպաստել քիմիական արդյունաբերութւյան ձեռնարկութւյունների հետագա զարգացմանը, մշակել հաշվարկային ու նախագծային փաստաթղթեր՝ ընդարձակվող և կառուցվող քիմիական արդյունաբերական ձեռնարկութւյունների համար, ինչպես նաև ստեղծել նոր տիպի քիմիական արտադրութւյուններ: Այս ինստիտուտներում աշխատող 1200-ից ավելի ինժեներներ, քիմիկոսներ ու գիտական աշխատողներ իրենց տեղամասերում բեղմնավոր աշխատանքներ են կատարում քիմիական և մետալուրգիական արդյունաբերութւյան արտադրական պրոցեսների ավտոմատացման համար:

Կիրովականում ստեղծված է կուլտուր-լուսավորական հիմնարկների լայն ցանց: Քաղաքում գործում են կուլտուրայի բաժնի, գերատեսչական, այդ թվում նաև դպրոցական և արհմիութենական 49 գրադարաններ, Գրադարանների գրքային ֆոնդը հասնում է մոտ 400 հազարի:

Մ. Գորկու անվան քաղաքային գրադարան-ընթերցարանն ստանում է 243 անուն թերթեր, ամսագրեր, ունի 50 հազար գիրք, մի շարք գործարաններում՝ շրջիկ ֆոնդեր:

Քաղաքում գործում են կինոթատրոններ, այդ թվում քաղաքային «Երևան» կինոթատրոնը, որը 1939 թվականին շահեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Կինոֆիլկացիայի վարչութւյան Փոխանցիկ դրոշը՝ քաղաքի աշխատավորութւյանը լավ սպասարկելու համար: 1954 թվականին Կիրովականում հիմնվեց կինոպրոկատի բաղա, որն սպասարկում է բացի քաղաքից նաև 11 շրջանների:

Կիրովականում կան ակումբային հիմնարկներ: Բացի այդ, ակումբներ կան նաև արդյունաբերական ձեռնարկութւյուններ

րին կից: Դրանցից ամենամեծը Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի կուլտուրայի պալատն է, այնուհետև երկաթուղայինների ակումբը և Ղ. Ղուկասյանի անվան քաղաքային կուլտուրայի տունը:

Քաղաքի տարբեր ակումբներին կից գործում են 33 ինքնագործ խմբեր, որոնք սիստեմատիկաբար հանդես են գալիս քաղաքի աշխատավորության առաջ: Այդ թվում՝ Կիրովականի Ղ. Ղուկասյանի անվան քաղաքային կուլտուրայի տունը կազմակերպվել է 1951 թվականին: Նրան կից գործում են ինքնագործ թատերական խմբակ և ժողգործիքային անսամբլ, որոնք բազմաթիվ ելույթներ են ունեցել Կիրովականում, Ստեփանավանում, Ալավերդում, Նոյեմբերյանում, Շամշադինում և Լեոնային Ղարաբաղի մի շարք շրջաններում: Քաղաքում լավագույն ինքնագործ խմբերից մեկին էլ տրիկոտաժի ֆաբրիկայի երգի-պարի անսամբլն է:

Դրանք բազմիցս ղեկավարելիական օլիմպիադաներում և ստուգատեսներին շահել են առաջնությունը: Արհմիութենական գեղարվեստական ինքնագործունեության համամիութենական ստուգատեսի եղրափակիչ համերգին մասնակցեց նաև Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի երգի-պարի անսամբլը, որը ելույթներ ունեցավ Մոսկվայի բանվորական ակումբներում, կուլտուրայի սրահատներում և Արվեստի աշխատողների կենտրոնական տանը:

Կիրովականում գործող կուլտուր-լուսավորական կարևոր օբյեկտներից մեկը գավառագիտական թանգարանն է, որը կազմակերպվել է 1938 թվականի սեպտեմբերին: Թանգարանում նյութեր են հավաքվում Ալավերդու, Ստեփանավանի, Կալինինոյի, Նոյեմբերյանի, Սպիտակի, Կիրովականի շրջաններից և քաղաքից: Թանգարանը 1944 թվականին տեղավորվեց Մարքսի փողոցի վրա գտնվող կուլտուրայի տան շենքում: Թանգարանն սկզբում ուներ միայն հնէաբանական բաժին, ուր կային նախնադարյան և ուրարտական ժամանակաշրջանի զենքեր, զարդեր, բրոնզյա, երկաթյա զանազան իրեր: 1959—60 թվականներին թանգարանին հատկացվեցին բազմաթիվ

նոր սենյակներ: Այդ կապակցութեամբ ամբողջովին վերակա-
ռուցվեցին նրա աշխատանքները, բացվեցին նոր՝ բնագիտա-
կան ազգագրական, ռեոլոցիոն շարժումների և սոցիալիս-
տական շինարարութեան նվաճումների բաժիններ: Վերջին
բաժնում ցուցադրվելու են արդյունաբերական ձեռնարկու-
թյունների արտադրանքի նմուշները: Թանգարանի կազմա-
կերպման, մասնավորապես հնագիտական բաժնի նյութերի
հավաքման գործում զգալի ծառայութեան ունի Ե. Մոմջյանը,
որն իր բեղմնավոր աշխատանքով ամեն կերպ հարստացնում է
Թանգարանի նյութերը: Թանգարանի աշխատակիցները այժմ
ծավալուն աշխատանք են տանում նոր նյութեր ձեռք բերելու և
Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամ-
յակի օրերին այդ նյութերը ցուցադրելու ուղղութեամբ:

Կիրովականում խոշոր իրադարձութեան էր կուլտուրական
օջախներից մեկի՝ Թատրոնի կազմակերպումը: Մինչև Թատե-
րախմբի կազմակերպվելը, Կիրովականի աշխատավորութեան
սպասարկում էր շրջիկ Թատերախումբը, ինչպես նաև քաղա-
քում կազմակերպված սիրողների խումբը:

1930 թվականի վերջերին Կիրովականում կազմակերպվեց
մշտական Թատերախումբ: Խմբի մեջ էին դերասաններ Գ. Նալ-
բանդյանը, Ա. Խուդանյանը, Ա. Փաշայանը, Ժ. Էլոյանը, Ա.
Նալչաջյանը, Ա. Գևորգյանը, Ա. Շադաֆյանը, Ծաղիկ-Վրույրը
և Մ. Գյոզակյանը: Այդ խումբը 1931 թվականի հունվարի 28-ին
բեմադրեց Յանովսկու «Ցասում» պիեսը¹:

Տարեցուտարի մեծացավ Կիրովականի Թատրոնի կոլեկտիվը,
նրան օգնութեան եկան շնորհալի ռեժիսյորներ Ա. Արմենյանը,
Վ. Աճեմյանը, Տ. Շամիրխանյանը, Ա. Բուրջալյանը: Կիրովա-
կանի Թատրոնի կոլեկտիվի ստեղծագործական աշխատանք-
ներում անգնահատելի դեր կատարեց հայ ժողովրդի տաղան-
դավոր արտիստներից մեկը՝ Հովհաննես Աբելյանը, որը միշտ
սերտ կապերի մեջ գտնվելով Թատրոնի կոլեկտիվի հետ, խո-
շոր աշխատանք է կատարել ոչ միայն առանձին դերասան-

¹ Բեմխայտը՝ Աշմաթ, նկարիչ՝ Կ. Մինասյան:

ղերասանուհիները աճման գործում, այլև ամբողջ թատրոնի կուլեկտիվի ստեղծագործական ունակութունների կատարելագործման բնագավառում: Հովհ. Աբելյանի խաղը, պրոֆեսիոնալ արվեստագետի մեծ և բարձր վարպետութունը, նրա ճշմարիտ խոսքն ու ցուցումները օրինակ էին երիտասարդ դերասանների և ղերասանուհիների համար: Բարձր զնահատելով Հովհ. Աբելյանի մեծ ծառայութունը մասնավորապես Կիրովականի թատրոնի կուլեկտիվի համար, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահութունը 1940 թվականի սեպտեմբերին բավարարեց թատրոնի կուլեկտիվի միջնորդութունը և սրռչեց Կիրովականի պետական դրամատիկական թատրոնը կոչել Հովհաննես Աբելյանի անվամբ¹:

Մինչև 1940 թվականը թատրոնի կուլեկտիվը բեմադրել է 51 անուն պիես, այդ թվում՝ հայկական, ռուսական և եվրոպական կլասիկ դրամատուրգիայի գործերը, ինչպես նաև ժամանակակից կյանքը պատկերող պիեսներ: 1939 թվականին կայացած շրջանային թատրոնների ուսուցաբերական ստուգատեսում բեմադրելով Ա. Գուլակյանի «Արշալույս» և Լ. Միքայելյանի «Գոշ» պիեսները, թատրոնը առաջնութուն շահեց, իսկ Համամիութենական ստուգատեսում գրավեց երկրորդ տեղը:

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահութունը 1940 թվականին հատուկ հրամանագրով վաստակավոր արտիստի կոչում շնորհեց Գ. Նալբանդյանին, Ա. Խուզանյանին, Ա. Սարգսյանին և ուժիսյուր Զ. Ժամհարյանին:

Հայրենական պատերազմի տարիներին ինչպես մեր մեծ երկրի թատրոնների ստեղծագործ կուլեկտիվները, այնպես էլ Կիրովականի թատրոնի կուլեկտիվը իր աշխատանքները վերականգնեց մեր երկրի շահերին, ուղղմաճակատի պահանջներին համապատասխան՝ բեմադրելով հայրենասիրական պիեսներ:

Այդ տարիներին թատրոնի կուլեկտիվը բեմադրեց Մուրացյանի «Ռուզան», «Գևորգ Մարգարիտունի», Մելիք-Քոչարյանի

¹ «Սոցիալիստական արշավ», օրվան 24^{րդ} Կիրովականի շրջումի և աշխատավորների ղեկավարների շրջավետի, 1940 թ. 14 սեպտեմբերի:

«Կամո», Ն. Զարյանի «Վրեժ», Գեղամ Սարյանի «Անտառի խորրում», Գ. Յաղջյանի «Զոյա», Կ. Սիմոնովի «Ռուս մարդիկ» և այլ պիեսներ:

Սովետական Միության Կոմունիստական պարտիան հետպատերազմյան տարիներին նորանոր խնդիրներ դրեց արվեստի և գրականության աշխատողների առաջ: Հովհ. Աբելյանի անվան պետական թատրոնի կոլեկտիվը միշտ ձգտել է պատվով կատարել այդ խնդիրները, տալ մեր սոցիալիստական առօրյան արտացոլող գաղափարապես նպատակասլաց, բարձրարժեք գեղարվեստական ստեղծագործություններ, որոնք բավարարեն մեր ժամանակակից հանդիսատեսների օրավուր աճող պահանջները:

Թատրոնում բեմադրված գործերից հիշատակության արժանի են Ա. Շիրվանզադեի «Չար ոգին», Գ. Սունդուկյանի «Նաթարալա», Գ. Մդիվանու «Բարի կամբի տեր մարդիկ», Ն. Զարյանի «Փորձադաշտ», Վ. Ռոզովի «Նրա բարեկամները», Վ. Մինկուչի «Առանց անունները տալու», Մովզոնի «Կոնստանտին Զասլոնով» և այլ պիեսներ:

1956 թվականի հունվարին լրացավ Կիրովականի Հովհ. Աբելյանի անվան թատրոնի 25-ամյակը: Այդ առթիվ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահությանը Կիրովականի թատրոնի արտիստուհի Ա. Խուդանյանին շնորհեց Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստուհու պատվավոր կոչում, իսկ նույն թատրոնի 5 դերասանների շնորհեց Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստի պատվավոր կոչում: Մի շարք աշխատողներ պարգևատրվեցին Գերագույն Սովետի պատվոգրերով:

Կիրովականի Հովհ. Աբելյանի անվան թատրոնի կոլեկտիվը իր գոյության տարիներին սպասարկել է 12 շրջանների, այդ թվում Ստեփանավանի, Սպիտակի, Նոյեմբերյանի, Շամշադինի, Դիլիջանի և այլ շրջանների ու քաղաքների աշխատավորներին: Նրանց խաղացանկում հավասար տեղ են դասել հայ, ռուս և արևմտակարգական կլասիկների ստեղծագործությունները, ինչպես նաև սովետահայ հեղինակների գործերը:

1956 թվականի ամռանը Կիրովականի թատերախումբը Երևանի աշխատավորության առաջ հանդես հկալ Շեքսպիրի «Ձմեռոյան հեքիաթ»-ը, Ա. Գուլակյանի «Արշալույսին» և Ս. Վարդունի «Վագիֆ» գործերի բեմադրություններով:

Թատրոնի կոլեկտիվը 1957 թվականի ստուգատեսին մասնակցեց առաջին անգամ Գ. Բորյանի «Նույն հարկի տակ» պիեսով, որը անցավ մեծ հաջողությամբ:

1958 թվականին կոլեկտիվը խաղացել է Ա. Շիրվանզադեի «Զար ոգին», Պ. Պոռչյանի «Սոս և Վարդիթեր» (Լ. Աբրահամյանի մշակմամբ), Ժ. Հարութչյունյանի «Սրտի արատ», Բ. Նուշիշի «Փրկսոփայության դոկտոր», Հովհ. Թումանյանի «Գիրքորը» (Գ. Գաբրիելյանի մշակմամբ) պիեսները:

1959 թվականի խաղացանկում ավելացել են Ցառ-յուրի «Փոթորիկ», Տ. Հախումյանի «Մղձավանջ», Հ. Բեյլերյանի «Հապարան բլբուլ» և Գ. Տեր-Գրիգորյանի «Սոֆիկի սխալը», իսկ 1960 թվականին՝ նույն հեղինակի «Գարնանային անձրև» պիեսները¹:

1957 թվականին կազմակերպվեց Հայաստանի Սովետական դրողների միության Կիրովականի երիտասարդ դրողների միավորումը, որի նախագահ ընտրվեց գրող Նոր-Այրը:

Գրական միավորման հիմնադրման կապակցությամբ րստացվել էր բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ողջույնը, որի մեջ գրված էր.

«Սրտանց սղջունում եմ Թումանյանի հայրենիքում՝
չքնաղ Լոռիում գրական միավորման ստեղծումը: Փոքրիկ
մարդիկ, մանր, ճղճիմ ղգացմունքների և մտքերի տեր
մարդիկ չեն կարող ստեղծել մեծ գրականություն, սա-
կայն փոքր ժողովուրդները իրենց վեհ իղեալներով, և-
րազներով, ազատության տենչերով կարող են ստեղծել

¹ Թատրոնի ունիտարի աշխատանքը վարել են Ա. Մաթևոսյանը (Աշ-
մաթ), Յ. Նիկողոսյանը, Զ. Ժամհարյանը, Բ. Արմենյանը, Յ. Սողոմոնյանը,
Ա. Մարտիրոսյանը, Տ. Վարդանյանը, Ա. Ալայանը, Օ. Կարապետյանը, Ս.
Աթմաբչյանը:

մեծ գրականություն: Գրականությունը մեր օրոք ժողովրդի հոգու արտահայտությունն է: Միավորման երիտասարդ գրողները ոչ միայն պետք է ձգտեն վերարտադրել կյանքն ու հոգին, այլև պիտի կրթեն նրան, բարձրացնել, ավելացնել և սիրել տան Հայրենիքը և ժողովուրդը: Ցանկանում եմ, սիրելի ընկերներ՝, ձեզ հաջողություն, եռանդ և տոկունություն»¹:

Կիրովականի գրողների միավորման մեջ ընդգրկված են 27 շնորհալի երիտասարդ գրողներ, որոնցից 11-ը արտագրության մեջ աշխատող բանվորներ են:

1958 թվականին Հայպեհահրատը հրատարակեց «Լոռի» գրական ամսանախը, ուր զետեղված են Կիրովականի երիտասարդ գրողների միավորման անդամների ստեղծագործությունները:

Գրական միավորումից դեռ շատ առաջ, 1950 թվականին Կիրովականում կազմակերպվեց Հայկական ՍՍՌ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության Կիրովականի բաժանմունքը: Տարեցտարի աճեց ընկերության անդամների թիվը՝ հասնելով 112-ի, որոնց մեծ մասը արտագրության մեջ աշխատող ինժեներներ են, ապա ուսուցիչներ, բժիշկներ, գյուղատնտեսներ և այլ մասնագետներ: Նրանք աշխատավորների առաջ սիրտեմատիկաբար հանդես են գալիս զեկուցումներով՝ տարբեր թեմաների շուրջը: Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության Կիրովականի բաժանմունքը քաղաքում տարեկան կազմակերպում է տարբեր թեմաներով 1000-ից ավելի դասախոսություններ: Բացի վերոհիշյալ բաժանմունքներից, Կիրովականում գործում են ճարտարապետների, գյուղատարար-ուսուցիչների, կառուցիչների, երգչախումբային, նկարիչների, բնության պաշտպանություն, աշխարհագրական, կրթության ընկերություններ, որոնք ծավալուն մասսայական աշխատանք են տանում:

Կիրովականի աշխատավորությունը իր շարքերից սովել է ընդունակ, ձեռներեց, ականավոր մարդիկ գիտություն, արվեստ-

¹ «Կայծ», 1957 թ. հուլիսի 31:

տի և գրականութեան բնագավառներում, պարտիական ու պետական գործիչներ:

Գրանցից են՝ Հայկական ՍՍՌ Գիտութեանների ակադեմիայի թղթակից-անդամներ Հ. Ազատյանը և Ա. Նալբանդյանը, մեծանուն գրող, հայ արձակի ականավոր վարպետ Ս. Զորյանը, գրաքննադատ Յ. Խանդազյանը: Սովետական իշխանութեան տարիներին Կիրովականից աճեցին երիտասարդ կադրեր, բազմաթիվ գիտական աշխատողներ, բարձրագույն դրսերոցների դասախոսներ, այդ թվում դոկտոր-պրոֆեսորներ՝ Ստալինյան մրցանակի լաուրեատ Շ. Աղաբաբյանը, Գ. Բոշյանը, դոկտատետեսական գիտութեանների թեկնածու Ա. Ազատյանը, ֆիլոլոգիական գիտութեանների թեկնածուներ Հ. Մամիկոնյանը, Ս. Աղաբաբյանը, մանկավարժական գիտութեանների թեկնածու Ա. Ղազարխանյանը, տեխնիկական գիտութեանների թեկնածուներ Ա. Ազատյանը և Ս. Իսահակյանը, քիմիական գիտութեանների թեկնածու Լ. Մելքոնյանը, իրավաբանական գիտութեանների թեկնածու Ա. Գևորգյանը¹, պատմական գիտութեանների թեկնածու Վ. Ղազարխանյանը, բարձրագույն դպրոցների դասախոսներ Մ. Աղաբաբյանը, Ա. Մնացականյանը, Հ. Զաքարյանը, Ա. Կոստանյանը, Ռ. Մանուկյանը, Ս. Իսահակյանը, Կ. Ռոստոմյանը, կոմպոզիտոր Գ. Հախինյանը, Պոլիտեխնիկական ինստիտուտի ղիրեկտոր Պ. Մելքոնյանը և շատ ուրիշներ:

Նախասովետական տարիներին Կիրովականում ոչ մի տրւպագիր թերթ չի եղել: Սովետական իշխանութեան տարիներին լույս են տեսել տպագիր մի շարք թերթեր: 1921 թվականի մայիսի 18-ից լույս տեսավ ՀԿ(Բ)⁴ Լոռու գավառային կոմիտեի և խորհուրդների գործադիր կոմիտեի օրգան «Կարմիր Լոռի» թերթը, իսկ 1922 թվականի սեպտեմբերից՝ «Դեպի լույս» անունը կրող շաբաթաթերթը: 1924 թվականին լույս տեսավ «Պատկան» թերթի առաջին համարը: 1931 թվականի հունիսի 15-ին լույս տեսավ ՀԿ(Բ)⁴ Կիրովականի շրջ-

¹ Ա. Գևորգյանն այժմ Հայկական ՍՍՌ դատախազն է:



Բնակիչ շենքեր Ստալինյան պողոտայում

կոմի և աշխատավորների ղեկուսատաների շրջսովետի օրգան «Սոցիալիստական արշավ» թերթի¹ առաջին համարը: 1941 թվականին «Սոցարշավ» թերթը մասնակցեց Համամիութենական դյուզատնտեսական ցույցահանդեսին և արժանացավ մամուլի պավիլիոնի պատվոգրին՝ սոցիալիստական մրցությունը և առաջավորների փորձը լավագույն ձևով պրոպագանդելու համար:

Ռեսպուբլիկայում օկրուգներ կազմակերպվելու կապակցությամբ 1952 թվականի մայիսից «Սոցարշավը» վերածվեց Կիրովականի օկրուգային թերթի՝ «Կայծ» անունով: Ռեսպուբլիկայում օկրուգների լիկվիդացումից հետո, 1953 թվականի սեպտեմբերին, «Կայծ» թերթը² դարձավ ՀԿՊ Կիրովականի քաղկոմի և աշխատավորների ղեկուսատաների քաղաքային Սովետի օրգան և սկսեց լույս տեսնել օրընդմեջ, իսկ «Կիրովականի կոլտնտեսական» նոր ստեղծված թերթը դարձավ ՀԿՊ Կիրովականի շրջկոմի և աշխատավորների ղեկուսատաների շրջսովետի օրգան:

1932 թվականի հունիսին լույս տեսավ Ալ. Մյասնիկյանի՝ անվան քիմիական գործարանի «Քիմշեն» տասնօրյա բազմատիրաժ թերթի առաջին համարը: 1934 թվականին, երբ արդեն գործարանի որոշ ցեխեր գործարկվեցին, թերթը լույս տեսավ «Քիմիայի ֆրոնտում» անունով: 1936 թվականի վերջին թերթը դադարեց լույս տեսնելուց: 1957 թվականի մայիսի 5-ին կրկին լույս տեսավ կոմբինատի բազմատիրաժ շաբաթաթերթը «Կիրովականի քիմիագործ»³ անունով:

¹ Թերթի խմբագիրներ են եղել Օ. Սեմերջյանը, Պ. Կորյունը, Ա. Ասաբեկյանը, Ս. Հարությունյանը, Վ. Պողոսյանը, Հ. Վանունին, Հ. Բաղրամյանը, Ա. Խաչատրյանը:

² Թերթի խմբագիրներ են եղել Արշ. Սիմոնյանը, Ս. Վանեսյանը և Բ. Բաղդասարյանը:

³ Թերթի խմբագիրներ են եղել Օ. Սեմերջյանը, Գ. Զուլհալյանը, Ա. Հակոբյանը, Պ. Վարդանյանը, Ս. Հարությունյանը, Պ. Պողոսյանը և Ա. Մատուրյանը:

1960 թվականի հունվարին դադարեց ՀԿՊ Կիրովականի շրջկոմի¹ և աշխատավորների դեպուտատների շրջանային Սովետի օրդան «Կիրովականի կոլտնտեսական» թերթի տպագրությունը: Շրջանի կյանքի լուսաբանման հարցերը զրվեցին «Կայծ» թերթի վրա, որը 1958 թվականի հուլիսից լույս է տեսնում շաբաթական 5 անգամ:

Այս թերթերը, իրենց էջերում լուսաբանելով Սովետական Միության Կոմունիստական սրարտիայի և Սովետական կառավարության առաջադրած խնդիրները, մոբիլիզացրել են քաղաքի աշխատավորության ուժերը՝ արդյունաբերական ձեռնարկույթյունների և երկաթուղային տրանսպորտի օբյեկտների պլանները կատարելու, բանվոր-ծառայողների բարեկեցությունը բարձրացնելու, քաղաքում շինարարական և բարեկարգման աշխատանքներ ծավալելու, ինչպես նաև սոցիալիստական դյուղին օգնելու հարցերը: Միաժամանակ այդ թերթերը լուսաբանում են իդեոլոգիական հարցերը և աշխատավորներին դաստիարակում ժողովուրդների բարեկամության ու ջերմ հայրենասիրության ոգով, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և կոմունիզմի վեհ գաղափարներով:

* *

*

Սովետական իշխանության տարիներին բժշկա-սանիտարական գործն ի սպաս զրվեց աշխատավորական լայն խավերին: Մեր երկրում բժշկական օգնությունն ամենուրեք ձրի է: Ինչպես Հայկական ՍՍՌ-ում, այնպես էլ Կիրովական քաղաքում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին բուժսպա-

¹ ՀԿՊ Կիրովականի շրջկոմի բարտուղարներ են աշխատել Ն. Կուրդինյանը, Գ. Քալանթարյանը, Լ. Բարսեղյանը, Բ. Ներսիսյանը, Լ. Մելրոնյանը, Ա. Բաղդյանը, Վ. Էվոյանը, Ա. Մկրտչյանը, Հ. Հարությունյանը, Հ. Մելրոնյանը և Գ. Ստեփանյանը, իսկ ՀԿՊ Կիրովականի օկրուդկոմի բարտուղար է աշխատել Լ. Վարդանյանը:

սարկման բազմաթիվ հիմնարկներ: Տարեկան Բարձրագույն աշխատավորների ցույց տրվող բժշկական օգնութ-
յունը: Բժշկական անձնակազմը հնարավորություն
ստացավ իր պրակտիկ աշխատանքներում օգտա-
գործելու ժամանակակից գիտությունների: Կիրովա-
կանի տարբեր մասերում կառուցվեցին մեկը մյուսից խոշոր,
մեկը մյուսից ավելի հարմար հիվանդանոցներ՝ լուսավոր և
ընդարձակ պալատներով ու կարիներներով, վերջիններս կա-
հավորված են տեխնիկական լավագույն սարքավորումներով:
Կիրովականում գործում են երկու բուժմիավորում՝ 250 մահճա-
կալով, երկու մանկական բուժմիավորում՝ 135 մահճակալով,
քաղաքային ծննդատուն՝ 100 մահճակալով, հակատուբերկու-
լյոզային դիսպանսեր, ինֆեկցիոն հիվանդանոց և մաշկա-
վեներական դիսպանսեր՝ 50-ական մահճակալներով: Բուժ-
միավորումներն ունեն իրենց պոլիկլինիկաները, մանկական
բուժմիավորումները՝ մանկական կոնսուլտացիաներ, իսկ
ծննդատունը՝ կանանց քաղաքային կոնսուլտացիա:

1958 թվականին Քիմիագործների թաղամասից հարավ,
անտառի փեշին շահագործման հանձնվեց № 2 բուժմիավորու-
մը, որը բաղկացած է 5 կորպուսից, ունի թերապևտիկ, վիրա-
բուժական, քիթ-կոկորդի և ականջի բաժանմունքներ, պոլի-
կլինիկա և այլ հարմարություններ: Հիվանդանոցի վրա ծախս-
վել է 5,5 միլիոն ռուբլի:

Բացի վերոհիշյալից, Կիրովականում գործում են ներո-հոգե-
բուժական, օնկոլոգիական և ֆիզիոլոգիայի դիսպանսերներ,
արյան փոխներարկման, շտապ օգնություն, սանէպիդ կայան-
ներ, վեց մանկամսուր և այլն:

Կիրովականի նորակառույց արտադրական ձեռնարկու-
թյունների բանվոր-ծառայողներին բժշկական անմիջական օգ-
նություն ցույց տալու համար արտադրական երեք օբյեկտնե-
րում ստեղծված է շարք բժշկական և ինը բուժական կայան:

Այժմ Կիրովականի առողջապահության ցանցն ունի
1200 մարդուց բաղկացած բուժաշխատողների մի պատ-
կառուի կոլեկտիվ, որից 168-ը բժիշկներ են, իսկ 450-ը՝ միջին

որակի բուժաշխատողները Առողջապահության ասպարեզում անբասիր աշխատանք է կատարել սանէպիդիոլոգիայի լաբորատորիայի վարիչ Վ. Հակոբյանը, որը 1920 թվականից մինչև իր կյանքի վերջը (1959 թ.) աշխատում էր Կիրովականում իբրև բակտերիոլոգ։ Նա հմուտ մասնագետ էր, որի համար արժանացավ Հայկական ՍՍՌ վաստակավոր բժշկուհու կոչման։ Բժշկուհի Վ. Հակոբյանը ակտիվ մասնակցություն է ունեցել Կիրովականում առողջապահական հիմնարկների կազմակերպման և կադրերի պատրաստման գործին։ Սովետական կառավարությունը բարձր գնահատելով նրա մատուցած ծառայությունները, նրան պարգևատրել է Լենինի շքանշանով։

Կիրովականում անբասիր աշխատանք է կատարում առաջին բուժմիավորման թերապևտիկ բաժնի վարիչ, Հայկական ՍՍՌ վաստակավոր բժիշկ Մ. Գյոզակյանը, որը Կիրովականում աշխատում է 1930 թվականից։ Իր կատարած բեղմնավոր աշխատանքի համար նա պարգևատրվել է Լենինի շքանշանով։

Երկաթգծի բուժմասի պետ, Հայկական ՍՍՌ վաստակավոր բժիշկ Լ. Արեշյանը երկար տարիներ աշխատում է Կիրովականում։ 1957 թվականի հունիսին Կիրովականի աշխատավորների նշեցին նրա ծննդյան 70-ամյակը և աշխատանքային բեղմնավոր կյանքի 45-ամյակը։ Այդ առթիվ նրան ուղղված ուղերձներից մեկում գրված է. «Թանկագին Լ. Արեշյան։ Մեծ են Ձեր ծառայությունները մարդկային կյանքի փրկելու գործում։ Հիվանդների նկատմամբ Ձեր ունեցած հոգատարության շնորհիվ Դուք վայելում եք աշխատավորության սերն ու հարգանքը»։ Կիրովականի երկաթուղային տեղամասում հն աշխատել և օգտավետ ծառայություն մատուցել հնագույն բուշեիկ բժիշկ Գ. Մելիք-Գրիգորյանը և Հայկական ՍՍՌ դիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ռ. Գյանջուեցյանը։

Կիրովականի № 2 բուժմիավորման գլխավոր բժիշկն է Հայկական ՍՍՌ վաստակավոր բժշկուհի Մ. Կոոյանը, իսկ շրջանային հիվանդանոցի գլխավոր բժիշկը՝ Հայկական ՍՍՌ վաստակավոր բժիշկ Ա. Մելրուսյանը։ Կիրովականի առողջա-

պահական ցանցում իրենց մասնագիտության մեջ հմտացել և տեսական ու պրակտիկ աշխատանքի ղգալի փորձ ունեն Ն: 1 բուժմիավորման վիրարուժական բաժնի վարիչ Ս. Դավթյանը, գլխավոր բժիշկ Հ. Չևրքեղյանը, Ն: 1 մանկական բուժմիավորման գլխավոր բժշկուհի, Հայկական ՍՍՄ վաստակավոր բժշկուհի Ա. Ծառուկյանը, կանանց կոնսուլտացիայի վարիչ Ա. Բոյաջյանը, Ն: 2 մանկական բուժմիավորման գլխավոր բժիշկ Ա. Կիկիջյանը և շատ ուրիշներ:

Կիրովական բաղաբում խոշոր հաջողութուններ կան մայրության և մանկության առողջության պահպանման բնագավառում:

1960 թվականի օգոստոսին Կիրովականում կային 1352 բազմազավակ մայրեր, որոնցից 16-ն ունեն տասը և ավելի երեխաներ, արժանացել են «Հերոսուհի մայր» պատվավոր կոչման, իսկ 257 մայրեր ունեն 7—9 երեխաներ և արժանացել են «Մայրական փառք» շքանշանների: Եթե Կիրովականում բազմազավակ մայրերին 1955 թվականին տրվել է 895 հազար ռուբլի պետական նպաստ, ապա 1960 թվականին այն հասավ մեկուկես միլիոն ռուբլու¹: Ինչպես մեր մեծ երկրում, այնպես էլ Կիրովականում հոգատարությամբ են շրջապատված ծերերը, հաշմանդամներն ու հիվանդները, տարեցտարի ավելանում է նրանց տրվող նպաստների գումարը: Եթե Կիրովականում 1955 թվականին վճարվում էր 5 միլիոն ռուբլի կենսաթոշակ, ապա կենսաթոշակների մասին կառավարության 1956 թվականի որոշումից հետո, 1958 թվականին տրվել է 18 միլիոն, իսկ 1960 թվականին կկազմի ավելի քան 20 միլիոն ռուբլի²: Կենսաթոշակների հետ նրանց տրվում են սանատորիական ուղեգրեր՝ Քաղաքում ինչպես խուլ-համբերի, կույրերի, այնպես էլ հաշմանդամների համար ստեղծված են արտադրական արհեստանոցներ, դպրոցներ, ակումբներ, գրադարան-ընթերցարաններ և այլն:

¹ Տվյալները վերցված են Կիրովականի բաղաբային Սովետի գործկոմի սոցապրամից:

² Նույն տեղում:

Հայկական ՍՍՌ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի 1922 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ Կիրովականում գտնվող Թախրովի, Ղարադյոզյանի և Օհանյանի ամառանոցների շինքերը տրամադրվեցին համապատասխան կազմակերպությունների՝ Կիրովականում հանգստյան տուն կազմակերպելու համար: 1925 թվականի մայիսի 15-ին բացվեց հանգստյան տունը¹, ուր առաջին ամիսներին հանգստանում էին 50—60 բնավոր-ծառայողներ: Հետզհետե ընդարձակվեց հանգստյան տունը. ստեղծվեցին նոր հարմարություններ: 1929—30-ական թվականներին այդտեղ արդեն հանգստանում էին 400 հոգի: Հանգստյան տան կորպուսներից մեկը 1935 թվականին դարձավ մոր և մանկան:

Հայրենական պատերազմի տարիներին այդ հանգստյան տունը դարձվեց հոսպիտալ², ուր բուժվում էին վիրավոր մարտիկները: Հայրենական պատերազմից հետո, 1946 թվականին այն վերածվեց սանատորիայի: Սանատորիան հիմնականում բուժում է ներվային և սոմատիկ հիվանդներ, ունի ֆիզիոթերապևտիկ և այլ կաբինետներ: 1957 թվականից Հայաստանում առաջին անգամ Կիրովականի «Հայաստան» սանատորիայում գործում է տորֆացեխաբուժարան: 1957 թվականին հիմնվեց նաև քիթ-կոկորդի կաբինետ, իսկ 1958 թվականին՝ զիննկոլոգիական կաբինետներ: Սանատորիան ունի ջրաբուժարան, ուր հիվանդներն ընդունում են տարբեր տեսակի վաննաներ: Մինչև 1956 թվականը սանատորիան տարեկան ընդունել է 500 հիվանդ, 1958 թվականին՝ 2175, իսկ 1960 թվականին ընդունելու է 2500 հիվանդ: 1959 թվականից սանատորիան անցել է տարեկան գործունեության: Այդ նպատակով շինքում տեղադրվել է ջեռուցման սիստեմ, կառուցվել է ձմեռային ճաշարան, իսկ մինչև այդ կառուցված էին բաղնիք,

¹ Հանգստյան տան առաջին դիրեկտորը և կազմակերպիչը եղել է Հ. Առաքելյանը, իսկ հետագայում՝ Կ. Կարապետյանը, Գ. Ղազարյանը, Մ. Իսկանյարյանը, Վ. Ջրաղացյանյանը, Մ. Ստեփանյանը:

² Հոսպիտալի պետն է եղել Գ. Հարությունյանը, իսկ կոմիսարը՝ Ե. Խալիյանը:

բուժարան և ակումբ: Սանատորիան ունի 16 հեկտար տն-
րածություն, որից 6 հեկտարը անտառապատ է: Կորպուսները:
շրջակայքում են ծաղկանոցները, ասֆալտապատ ծառուղի-
ները, լողարանն ու խաղերի հրապարակը:

ՀԱՄԿԽ-ի «Հայաստան» սանատորիան անտառային առող-
ջարար օղի, հարուստ բնության և լավ բուժումների լայն ճա-
նաչում է դտել մեր Միության մեջ՝ «Հայաստան» սանատո-
րիան դարձել է աշխատավորների առողջությունը վերականգ-
նելու կարևոր օջախներից մեկը¹, տարեցտարի ավելանում է
բուժվողների թիվը: Սանատորիական բուժման են գալիս Հե-
ռավոր Արևելքից, Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից, Տաշ-
քենից և մեր երկրի այլ քաղաքներից: 1961 թվականից սա-
նատորիան ընդլայնվելու է. կառուցվելու են մի շարք նոր բնա-
կելի կորպուսներ: Բացի սանատորիայից, Կիրովականում կան
նաև մի շարք մանկական առողջարաններ: Վանաձորը վերած-
վել է մանկապարտեզների, պիոներ-դպրոցականների հան-
պրատյան կարևոր վայրի:

Կիրովականում հատուկ ուշադրության առարկա է երի-
տասարդության ֆիզիկական կուլտուրայի զարգացման գործը:
Այդ նպատակի համար արդյունաբերական ձեռնարկություն-
ները և քաղաքային Սուլետը տարեկան հատկացնում են մեկ
միլիոն ռուբլուց ավելի գումար: Այդ գումարով վերջին տարի-
ներին քաղաքում կառուցվել են երկու ստադիոն՝ 10 հազար
տեղով, որից մեկը քիմիական կոմբինատի տերիտորիայում, եր-
կու սպորտային դահլիճ, որոնք ունեն բավականին հարուստ
կահավորում, դահուկային կայան, բժշկական ֆիզկուլտուրայի
դիսպանսեր, ինչպես նաև սպորտային կոմպլեքսային հրապար-
ակներ՝ երկաթուղու ու քաղաքային զբոսայգիներում և մի
շարք դպրոցներում:


Մարմնամարզիկ Ա. Աղարյանը մեծացել ու սովորել է Կիրո-
վականում: 1945 թվականից նա աշխատել է բազմարտելում

¹ Որպես գլխավոր բժիշկներ սանատորիայում աշխատել են Ա. Մել-
բումյանը, Գ. Առաքելյանը, Բ. Տատինովը, Կ. Աֆրիկյանը, Ռ. Մելիքյանը և
Գ. Ժամհարյանը:

իբրև դարբնի աշակերտ և ապա տեղարդկոմբինատում՝ իբրև փակահանագործ: 1952 թվականին նա ավարտեց Նրևանի ֆիզիկուլտուրայի տեխնիկումը, իսկ 1956 թվականին՝ ֆիզիկուլտ ինստիտուտը: Ա. Աղարյանը մասնակցելով մրցություններին՝ 1950 թվականին արժանացավ սպորտի վարպետի, իսկ 1954 թվականին՝ սպորտի վաստակավեր վարպետի կոչման: 1952 թվականին Սվերդլովսկում կայացած մրցությունում գրավեց առաջին տեղը, դարձավ ՍՍՌՄ շեմպիոն և արժանացավ ոսկե մեդալի: Այնուհետև Ա. Աղարյանը տարեցտարի կատարելագործելով իր վարպետութունը՝ 1954 թվականին Հոտմում առաջին անգամ, իսկ 1958 թվականին Մոսկվայում երկրորդ անգամ արժանացավ մարմնամարզության համաշխարհային շեմպիոնի կոչման: 1956 թվականին Մեյբուռն, 1960 թվականին Հոտմ քաղաքներում 16—17-րդ օլիմպիական խաղերում Ա. Աղարյանը մարմնամարզության դժուր նվաճեց օլիմպիական խաղերի ոսկե մեդալներ: Դրա համար Սովետական կառավարությունը բազմաթիվ սպորտսմենների թվում Ա. Աղարյանին պարգևատրեց Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով: Այսպիսով, անվանի սպորտսմեն Ա. Աղարյանը վեց անգամ արժանացել է ՍՍՌՄ, երկու անգամ համաշխարհային և երկու անգամ օլիմպիական խաղերի շեմպիոնի պատվավոր կոչման:

Կիրովականի ֆիզիկուլտուրնիկները մի քանի տարի շարունակ առաջնություն են շահել դահուկային վազքի գծով: Ըմբշամարտությունից ռեսպուբլիկայում առաջնություն են շահել սպորտի վարպետներ Գ. Շեկոյանը, Ս. Ավետյանը, Ա. Խանդադյանը: Թեթև ատլետիկայի գծով ռեսպուբլիկայի շեմպիոններ են սպորտի վարպետ Փ. Արզումանյանը, Մ. Քոչարյանը, Փ. Մխոյանը: Մարաթոնյան վազքի ռեսպուբլիկական շեմպիոնն է Ս. Գևորգյանը:

Կիրովականում գործում են ֆուտբոլային 10 խումբ: Նրանցից քիմիագործների և արիկոտաժագործների թիմերը մի քանի անգամ առաջնություն են շահել, դարձել ռեսպուբլիկայի շեմպիոն և երեք անգամ դավաթ են նվաճել: Տրիկոտաժագործների ֆուտբոլային թիմը առաջնություն շահեց նաև 1957 թը-



«Հայաստան» սանատորիայի շենքերից մեկը

վականի մրցություններում: 1960 թվականի Երկրի ֆուտբոլի «Բ» խմբի առաջնության մրցումներին հաջողությամբ մասնակցում է նաև Կիրովականի «Լուր» թիմը:

Կիրովականում ֆիզիկուլտուրայի բարձրագույն կրթություն ունեն 46 մարդ: Սրանք ֆիզիկուլակազմակերպություններում պրազվում են դպրոցականների և արտադրության մեջ աշխատող բանվոր-ծառայողների ֆիզիկական դաստիարակության հարցերով: Ուսումնական բոլոր հաստատություններում և դպրոցներում կան ֆիզիկական կուլտուրայի կոլեկտիվներ, ուր գործում են տարբեր ձևերի սեկցիաներ: Ստեղծված են ֆիզիկուլտոզաճիճներ, սպորտային հրապարակներ, բակեր՝ իրենց համապատասխան կահավորումներով: Դրանցից է Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի ֆիզիկուլտուրայի կոլեկտիվը, որն ունի հատուկ ֆիզիկուլտուրնիկի տուն՝ գեղեցիկ դրոսայգում: Նրա ընդարձակ դահլիճը հասկացված է մարմնամարզության և սպորտային, շախմատային խաղերի:

Այսպիսով, Սովետական իշխանության տարիներին Կիրովականում ստեղծված առողջապահական լայն ցանցի և նրանում աշխատող պատկառելի կոլեկտիվի բեղմնավոր աշխատանքի շնորհիվ բնակչության միջից նվազեցին հիվանդությունները, խոշոր չափով իջավ մահացության տոկոսը:

* *
*

Հետևելով մեր երկրի մի շարք քաղաքների օրինակին, Կիրովականի աշխատավորները ռեսպուբլիկայում առաջինը անցկացրին երգի տոներ: 1955 թվականի սեպտեմբերի 18-ին, կիրակի օրը, բազմահազար աշխատավորներ Սոճիների պուրակում, Հայկական ՍՍՄ արվեստի վաստակավոր գործիչ է:

Կզարթոյանի ղեկավարութեամբ, կատարեցին Հայկական ՍՍՌ Պետական հիմնը, ապա Լենինին և Հայրենիքին նվիրւած երգեր:

Երգի տոնի մասնակիցները դուրսդեցին իրենց բարգաւաճող սոցիալիստական քաղաքը՝ նրա հիասքանչ բնությունը, նրա ստեղծագործ մարդկանց:

Կ Ի Ր Ո Վ Ա Կ Ա Ն 1

Մայմիս սարի կանաչ փեշին
Փովելի ես դու լայն, անպարփակ.
Ջուրդ զուլալ, օղբոյ մառուր,
Կիրովական, իմ նօր ֆաղաֆ:

Մաղկի ֆաղաֆ, երգի ֆաղաֆ,
Գործի ֆաղաֆ կիրովական,
Ջանել, շֆենաղ ու շինարար,
Հայոց ֆաղաֆ կիրովական:

Թավ անտառն էլ փեշն է փռել,
Մեջքիդ կապել կանաչ գոտի,
Աղշիկ-տղա սերն Էն առել,
Սեր են տալիս անմարելի:

Մաղկի ֆաղաֆ, երգի ֆաղաֆ...

Ժսլտում Էն, տես, զեղեցկարով
Քանի փողոց, ֆանի շենֆեր,
Քո մեջ ասրոդ մարդու ձեռնով
Կառուցվում էս օր ու զիշեր:

Մաղկի ֆաղաֆ, երգի ֆաղաֆ...

Գործարաններ, ֆարրիկաներ
Գործում են միշտ սրտի նման.
Քո նօր, ջանել կյանքը կոում
Ու լուսաշող քո ապագան:

Մաղկի ֆաղաֆ, երգի ֆաղաֆ...

¹ Խոսք՝ Ս. Ոսկունու, Երաժշտութիւն՝ Կ. Մելիք-Վրթանեսյանի:

Վերջում՝ այդ հոծ բազմությունը կատարեց Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայից «Ամպի տակից ջուր է գալիս» խմբերգը:

Բեմ բարձրացան Կամոյի անվան տրիկոտաժի ֆաբրիկայի երգի- սյարի անսամբլը՝ ազգային գունեղ տարազներով, դրպորոցականների համաքաղաքային երգեցիկ խումբը, Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի սյարի անսամբլը: Մանկավարժական ուսումնարանի երգեցիկ խմբերը կատարեցին հայկական, ռուսական, ադրբեջանական, վրացական, շխսական, լեհական ժողովրդական երգեր ու պարեր:

Կիրովականի աշխատավորները կատարեցին ևս մի քաջալերելի նախաձեռնություն: Դա 1957 թվականի օգոստոսի 4-ի կիրակի օրվա՝ երկաթուղայինների զոոսայգում ռեսպուբլիկայում առաջին անգամ կազմակերպված ծաղկի տոն-ցուցահանդեսն էր: Պարկի գլխավոր մուտքում կարմիր կտորի վրա գրված էր՝ «Ծաղիկները բարձր տրամադրություն, հաճույք և ուրախություն են սրտճառում մարդկանց», «Քաղաքացիներ՝, աճեցրեք ու բազմացրեք ծաղկի նոր տեսակներ»: Ծաղկի տոնին ներկայացված էին 200 տեսակից ավելի ծաղկաբույսեր, թփեր, ծառեր, մասնավորապես Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի բուսաբանական այգու ծաղկատեսակներից: Այդտեղ գրված էին ֆիկուսի, արմավենու բեզոնիայի 25 տեսակ, զանազան վարդերի թաղարներ, մորուսարբեր տեսակներ, գեորգինայի թփեր և պտուղներով լիմոնի ծառեր: Կիրովականի աշխատավորները ամեն տարի օգոստոսի սկզբներին տոնում են տրադիցիա դարձած ծաղկի տոնը:

Այսպիսով, Սովետական իշխանության տարիներին Կիրովականում ստեղծվել է ժողկրթության, առողջապահության, կուլտուր-լուսավորական հիմնարկների լայն ցանց: Քաղաքում ստեղծված տեղական, ռեսպուբլիկական և միութենական նշանակություն ունեցող արդյունաբերական ձեռնարկությունների հետ զուգահեռաբար ստեղծվել են միջնակարգ մասնագիտական դպրոցներ, տեխնիկումներ, գիտահետազոտական ինստիտուտներ, ժամանակակից տեխնիկայի պահանջներին հա-

մապատասխան կոնստրուկտորական բյուրոներ, ուր աշխատում են հազարավոր ինժեներներ, տեխնոլոգներ, գիտնականներ, որոնք օրավուր կատարելագործում են մեր հայրենի արդյունաբերությունը:

Այդ բանի լավագույն վկայությունն է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակին նվիրված «Կիրովականը 40 տարում» ցուցահանդեսը, ուր դրված են տեխնիկական բարձր կարողություն ունեցող սարքեր, որոնք արտադրվել են Կիրովականի արդյունաբերական ձեռնարկություններում: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Կարինյանը, դիտելով ցուցահանդեսում զբրված սարքավորումը, բարձր գնահատեց Կիրովականի աշխատավորների ձեռք բերած հաջողությունները կուլտուրական և քաղաքային շինարարության, արդյունաբերական ձեռնարկությունները նորագույն սարքավորումով հագեցնելու, բանավորների և ինժեներատեխնիկական աշխատողների տեխնիկական գիտելիքների աճման և մասնավորապես երիտասարդ տեխնիկական կադրեր դաստիարակելու ասպարեկում:





Գ Լ Ո Ւ Խ Զ Ո Ր Ր Ո Ր Դ

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՃԸ
ԵՎ ԶԱՂԱՔԻ ԲԱՐԳԱՎԱՃՈՒՄԸ

(1920—1960)

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ղեկավարության արմատապես փոխեց մեր երկրի քաղաքների ու գյուղերի վիճակը և պայմաններ ստեղծեց նրանց վերականգնման, վերակառուցման, հետագա զարգացման, ինչպես նաև սոցիալիստական նոր քաղաքների ու քաղաքատիպ ավանների առաջացման համար:

Սովետական իշխանության տարիներին ինչպես արտադրության միջոցները, այնպես էլ քաղաքային տնտեսությունը դարձան համաժողովրդական սեփականություն. որը օրենսդրական ձևակերպում ստացավ ՍՍՌՄ Կոնստիտուցիայում, ուր սալված է. «Կոմունալ ձեռնարկությունները և բնակարանային հիմնական ֆոնդը քաղաքներում և արդյունաբերական վայրերում պետական սեփականություն են, այսինքն՝ համաժողովրդական ունեցվածք են»¹:

¹ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Կոնստիտուցիա (Հիմնական օրենք,) Հայպետհրատ, Երևան, 1953, հոդված 6, էջ 4:

Մեր Երկրում ժողովրդական անտեսության զարգացմանը ղուգընթաց զարգացավ քաղաքային տնտեսությունը, մասնավորապես լայն ծավալ ստացավ ինչպես պետական-հասարակական շենքերի շինարարությունը, այնպես էլ պետական վարկի օգնությամբ անհատական բնակարանների կառուցումը:

Սոցիալիստական շինարարության տարիներին ձեռք բերված խոշոր հաջողությունները մեծ շափով բարձրացրին քաղաքային բնակչության նյութական-կուլտուրական մակարդակը: Այդ իր արտահայտությունը գտավ ազգային եկամտի անընդհատ աճի, մասսայական սպառման ապրանքների առատություն ստեղծելու, գների սիստեմատիկ իջեցման, բանվոր-ծառայողների ուսալ աշխատավարձի բարձրացման, պետական բյուջեով քաղաքների ու քաղաքատիպ ավանների կոմունալ ու բնակարանային շինարարության, ժողովրդական առողջապահության, գիտության, արվեստի և կուլտուրայի զարգացման համար կատարվող և շարունակ աճող ֆինանսական հատկացումների մեջ:

Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ XXI համագումարում իր զեկուցման մեջ ասաց, որ մեր երկրում կա աշխատավորների բարեկեցության բարձրացման, ամբողջ հասարակության, այդ թվում նաև յուրաքանչյուր մարդու համար կյանքի լավագույն պայմանների ստեղծման իսկական կոմունիստական ուղի: Մեզ մոտ յուրաքանչյուր մարդու անհատական պահանջները բավարարվում են ոչ միայն աշխատավարձի բարձրացման, այլև հասարակական ֆոնդերի միջոցով, որոնց դերն ու նշանակությունը զնալով ավելի ու ավելի է մեծանում: Մեր երկրի աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացման նկատմամբ ՍՄԿՊ-ի և Սովետական պետության հոգատարությունը բխում է սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքից, որի գլխավոր խնդիրը հանդիսանում է ամբողջ հասարակության նյութական ու կուլտուրական հարաճուն սրահանջների բավարարումը՝ բարձրագույն տեխ-

նիկայի բազայի վրա սոցիալիստական արտադրության ան-
ընդհատ աճման ու կատարելագործման միջոցով:

Մեր երկրի աշխատավորների նյութական բարեկեցությունն է՝ ալիլի բարելավվելու նպատակով ՍՄԿՊ Կենտկոմը, ՍՍՌՄ Մինիստրների Սովետը վերջին տարիներին մի շարք միջոցա-
ռումներ իրականացրին: Ընդունվեց և կենսագործվեց օրենք պետական կենսաթոշակների մասին, բարձրացվեց ցածր վար-
ձատրվող կատեգորիաների բանվորների ու ծառայողների աշխատավարձը, նախատեսական և նախահանգստյան օրե-
րին կրճատվեցին աշխատանքային ժամերը: Կենսագործվում է և մոտ է իր ավարտին պարտիայի ու կառավարության որո-
շումը յոթժամյա, իսկ ժողովրդական տնտեսության որոշ ճյուղերում՝ վեցժամյա աշխատանքային օրվա անցնելու մա-
սին: Տարեցտարի աճում են սոցիալիստական ապահովու-
թյան, ձրի ուսման, առողջապահության և աշխատավորների մյուս կարիքների համար կատարվող հատկացումները: Վեր-
ջին տարիներին խոշոր շափով աճել է լայն սպառման ապ-
րանքների արտադրությունը:

«Կոմունիստական շինարարության արդի պայման-
ներում նյութական բարիքների բաշխման հիմքում ղե-
կավար սկզբունք է մնում յուրաքանչյուրից՝ ըստ իր ըն-
դունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր աշխա-
տանքի: Ըստ աշխատանքի բաշխումը ապահովում է
մարդկանց նյութական շահագրգռվածությունը արտա-
դրության արդյունքներով, խթանում աշխատանքի ար-
տադրողականությունն աճը, աշխատողների որակավոր-
ման բարձրացումը, արտադրության տեխնիկայի կատա-
րելագործումը, այն նաև դաստիարակչական մեծ դեր է
խաղում, մարդկանց սովորեցնում է սոցիալիստական
կարգապահություն, աշխատանքը դարձնում է ընդհա-
նուր և պարտադիր»¹:

¹ Տե՛ս ՍՄԿՊ XX1 համագումարի բանաձևը, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 28:


Աշխատանքը մեր երկրում դարձել է փառքի ու պատվի, արիության ու հերոսության դորձ, դրա համար էլ սովետական քաղաքացիների հոգևոր կյանքի բնորոշ գծերը դարձել են աշխատասիրությանը, գիտակցական կարգապահությանը, ինտերնացիոնալիզմը և սովետական կենսատու հայրենասիրությանը: Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում կար շորս քաղաք՝ հարյուր հազար բնակչով, իսկ այժմ կա 14 քաղաք¹ և 24 քաղաքային ավան՝ 884 հազար բնակչով, որը կազմում է ռեսպուբլիկայի բնակչության կեսը: Քաղաքային բնակչության աճմանը որոշ շափով նպաստեց սփյուռքահայության մի մասի վերադարձը Սովետական Հայաստան:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո սփյուռքի հազարավոր հայ աշխատավորներ ցանկություն հայտնեցին վերադառնալ Սովետական Հայաստան: Այդ կապակցությամբ ՍՍՌՄ կառավարությունը 1945 թվականի նոյեմբերին որոշում ընդունեց՝ արտասահմանում ապրող հայերին թույլատրել վերադառնալու Սովետական Հայաստան՝ սահմանելով խոշոր արտոնություններ նրանց ընդունման, տեղավորման, ապրուստի և աշխատանքի կազմակերպման գործում:

1946—1948 թվականներին արտասահմանից Սովետական Հայաստան վերադարձան 100 հազար հայեր, նրանք տեղավորվեցին Հայաստանի քաղաքներում ու շրջաններում: Դրանցից հազարից ավելի ընտանիքներ տեղավորվեցին Կիրովականում, որտեղ այդ կապակցությամբ կատարվեցին շինարարական լայն աշխատանքներ:

Սովետական իշխանության տարիներին քաղաքներում և քաղաքատիպ ավաններում կառուցվել է 3,3 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն: Միայն հետպատերազմյան տարիներին սեփական միջոցներով և սլետական վարկի օգնությամբ քաղաքներում կառուցվել է 1,8 միլիոն քառակու-

¹ Երևան, Լենինական, Կիրովական, Գիլիջան, Ալավերդի, Ղափան, Հոկտեմբերյան, Կամո (Քայտղետ), Գորիս, Արթիկ, Էջմիածին (Վաղարշապատ), Ստեփանավան, Հրազդան (Ախտա), Քաջարան:



Բնակելի շենք Ս. Մ. Կիրովի հրապարակի վրա

սի մետր բնակիչի տարածություն: Ռեսպուբլիկայի քաղաքներն ու քաղաքատիպ ավանները ծածկված են միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունների, կինոթատրոնների, գրադարանների, լիանդարանների և կուլտուր-լուսավորական հիմնարկների լայն ցանցով: Կառուցվել են և շարունակում են կառուցվել ջրմուղներ, կոյուղիներ, հյուրանոցներ, լադնիրներ, լվացքատներ և կոմունալ-կենցաղային այլ օբյեկտներ: Տարեցտարի է՛լ ավելի են բարեկարգվում ու կանաչապատվում փողոցներն ու հրապարակները:

1959 թվականին ռեսպուբլիկայում բնակիչի տների, կոմունալ-կենցաղային և կուլտուր-լուսավորական օբյեկտների վրա ծախսվել է 530 միլիոն ռուբլի, մի գումար, որը վեց անգամ դերազանցում է 1940 թվականին նույն նպատակով կատարված ծախսերը, իսկ 1960 թվականին ներդրվելու է 581 միլիոն ռուբլի, գրեթե 2,5 անգամ ավելի, քան 1955 թվականին¹: 1960 թվականի փետրվարին Երևանը հզբայրական Ազրբեջանից ստացած բնական գազ, որը մեծ դեր է կատարելու ինչպես արդյունաբերության, այնպես էլ կոմունալ տնտեսության մեջ:

* *
*

Կոմունիստական պարտիայի կողմից լենինյան գլխավոր գծի անշեղ ու հետևողական իրագործումով մեր երկրում սկսեց արագ կիրառվող դարձանալ արդյունաբերությունը, որը սովետական քաղաքաշինության առջև դրեց նոր խնդիրներ՝ քաղաքների ու ավանների հատակագծման և կառուցապատման աշխատանքներ ծավալելու, նոր զարգացող արդյունաբերական կենտրոններ նախագծելու համար: 1928 թվականին հայտարարվեց կոնկրետ Կիրովական քաղաքի գլխավոր հա-

¹ «Սովետական Հայաստան», 1959 թ. 25 մարտի:

տակագծի համար: Այդ կապակցութեամբ կազմվեցին մի շարք նախագծեր, որոնց մեջ համեմատաբար հաջող էր ճարտարապետներ Կ. Հալարյանի և Գ. Քոչարի (1929—30 թթ.) կազմած գլխավոր հատակագծի նախնական սխեման, իսկ 1934—36 թվականներին Կիրովական քաղաքի գլխավոր հատակագծի նախնական օրինակը կազմեց ճարտարապետ Մ. Մազմանյանը¹: Ղեկավարվելով այդ նախնական հատակագծով, քաղաքում կատարվեցին նախապատրաստական լայն աշխատանքներ² նոր փողոցներ բացելու և նոր թաղամասեր ստեղծելու համար:

1939 թվականին ռեսպուբլիկայի նախագծային օրգանները ձեռնարկեցին Կիրովական քաղաքի գլխավոր հատակագծի վերամշակման աշխատանքները (ճարտարապետներ՝ Հ. Զարգարյան, Ա. Մինասյան): Հատակագծի տեխնիկատնտեսական հարցերի հիմնավորումը կատարեցին տնտեսագետ Ս. Հակոբջանյանը և ճարտարապետ Կ. Յուզբաշյանը: Այդ հատակագիծը, որը կազմվել էր 15 տարվա համար, հաստատվեց աշխատավորների դեպուտատների Կիրովականի քաղաքային Սովետի 1940 թվականի ամռանը կայացած սեսիայում: Հատակագծի համաձայն հաղիվ սկսվել էին մի շարք ձեռնարկումների՝ քաղաքը² բարեկարգելու և ընդարձակելու համար, երբ սկսվեց Հայրենական պատերազմը: Հայրենական պատերազմից հետո սովետական քաղաքացիների առջև դրվեցին նոր խնդիրներ: Այդ իմաստով էլ 1940 թվականին հաստատված քաղաքի հատակագիծը ռեսպուբլիկայի նախագծային կազմակերպությունների կողմից վերանայվեց, վերամշակվեց և կատարվեցին նոր լրացումներ (ճարտարապետներ՝ Ռ. Գրիգորյան և Հ.

¹ А. Г. Григорян, «Градостроительная культура Советской Армении 1920—1930 гг.», «Известия», АН Арм. ССР, 1960, № 3, стр. 28—29.

² Հայաստանի Կենտրոնականի նախագահության 1924 թ. ապրիլի 8-ի որոշմամբ ռեսպուբլիկայում քաղաքների համարվեցին՝ Երևանը, Լենինականը, Ղարաբաղիսան (այժմ Կիրովական), Բայազետը (այժմ Կոմո), Գլխիջանը, Գորիսը և Վաղարշապատը (այժմ Էջմիածին):

Դավթյան)։ Այդ հատակագծերի տեխնիկատնտեսական հար-
ցերի հիմնավորումը կատարել է տնտեսագիտական գիտու-
թյունների թեկնածու, հանգուցյալ Ս. Խրիմլյանը։ Քաղաքի
նոր հատակագիծը հավանության արժանացավ քաղաքա-
լին Սովետի գործկոմի 1950 թվականի դեկտեմբերի 14-ի նիս-
տում և 1953 թվականին հաստատվեց Հայկական ՍՍՌ Մինիս-
տրների Սովետի կողմից։

Ըստ այդ հատակագծի, Կիրովական քաղաքի բնած հո-
ղային տարածությունը 1940 թվականին կազմում էր 369 հեկ-
տար, 1950 թվականին՝ մոտ 800 հեկտար, իսկ 1959 թվակա-
նին այն հասավ 1.300 հեկտարի։ Դրանից բնակելի տերիտո-
րիան կազմում է 830 հեկտար։ Քաղաքի օգտավետ հողային
տարածությունն է 295 հեկտար, իսկ կանաչադարձ տարածու-
թյունը՝ 205 հեկտար, որից 108 հեկտարն այգիներ ու պու-
րակներ են¹։ Կիրովական քաղաքը աճել է, արդեն նրան են
միացվել Խնձորուտ և Ժղանով գյուղերը։ Այժմ Կիրովականի
տարածությունը՝ Խնձորուտից մինչև Ժղանով գյուղը, կազմում
է 8 կիլոմետր, իսկ Վանաձորից մինչև Առափնյա փողոցը՝
մոտ չորս կիլոմետր։

Կիրովականում միմյանց հետևից սկսեցին կառուցվել և
շահագործման հանձնվել արդյունաբերական մի շարք նոր
ձևոնարկություններ, բնդարձակվեցին ևղած գործարաններն
ու ֆաբրիկաները։ Բացվեցին նոր փողոցներ, նոր պողո-
տաներ ու հրապարակներ։ «Դիմաց», Առափնյա, Քիմիագործ-
ների և Սանատորիական թաղամասերում կառուցված բնակե-
լի տներն ու հասարակական շենքերը նոր տեսք տվին աննախ-
ընթաց թափով բարգավաճող սոցիալիստական քաղաքին՝ Կի-
րովականին։ Նախասովետական շրջանի համեմատությամբ
քաղաքում արագ թափով աճեց բնակչության թիվը.

1826 թ. 500—600 շունչ²

1873 թ. 2017 »

¹ Տվյալները վերցված են Կիրովականի քաղաքային Սովետի գործկոմի
գիճակագրական տեսչությունից։

² Արովյան, Երկիր, հատ. 8, էջ 57։

1886 թ.	2686	շունչ ¹
1897 թ.	3917	» 2
1914 թ.	3865	»
1922 թ.	6427	»
1932 թ.	14020	» 3
1936 թ.	15420	» 4
1950 թ.	36311	»
1955 թ.	41619	»
1959 թ.	49000	»
1960 թ.	55000	» 5

Սովետական իշխանության հենց առաջին տարիներից քաղաքում սկսվեցին շինարարական ու բարեկարգման աշխատանքները: 1922—1923 թվականներին կառուցվեցին էլեկտրակայանի, հետագայում՝ հիվանդանոցի, Պետական բանկի բաժանմունքի, ինչպես նաև մի քանի բնակելի հասարակական շենքեր՝ քաղաքի կենտրոնական փողոցների վրա, իսկ նրանց շրջակայքում սկսեցին կառուցել անհատական բնակելի տներ:

1928 թվականին, քիմիական գործարանի հիմնադրումից հետո, շինարարական ծավալուն աշխատանքներ սկսվեցին Տատալու կոչված դաշտում: Իրար հետևից կառուցվեցին ժամանակավոր փայտյա բարաքներ, որոնց շուտով փոխարինեցին վարդազույն տուֆով կառուցված 3—4 հարկանի զեյեցիկ բնակելի և հասարակական շենքերը, ինչպես նաև գործարանի կորպուսները: Դրանով էլ հիմնադրվեց Քիմիագործների նոր բանվորական թաղամասը:

Կիրովականում կատարվող քաղաքաշինության մեջ հետպատերազմյան տարիներին խոշոր նշանակություն ունեցող՝ ՀԿ(Բ)Պ Կենտկոմի բյուրոյի 1946 թվականի սրոշումը՝ Կիրով-

¹ «Մուրճ» ամսագիր, 1893 թ., № 10, էջ 1585:

² Первая всеобщая перепись населения русск. импер., 1827, Эриванской губернии. 1905. стр. 6.

³ Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով, Երևան, 1935 թ., էջ 22:

⁴ Կիրովականի քաղաքային Սովետի գործկոմի վիճակագրական տեսչություն:

⁵ Նույն տեղում:

վական քաղաքի ընդարձակման, ընակարանային շինարարության և կոմունալ ձեռնարկությունների աշխատանքների մասին: Կիրովականում կատարվող քաղաքաշինությունն տեմպերն արագացնելու նպատակով ՀԿ(բ)¹ Կենտկոմը սպարտիական, սովետական, արհմիութենական և հասարակական այլ կազմակերպությունների ուշադրությունը բեռեց քաղաքի բարեկարգման և կոմունալ ձեռնարկությունների ցանցի ընդարձակման հարցերի վրա: Քաղաքի շինարարությունն է՛լ ավելի մեծ թափ ստացավ, երբ Հայկական ՍՍՄ Գերագույն Սովետի նախագահության 1952 թվականի հունիսի 11-ի Հրամանագրով Կիրովական քաղաքը դարձավ ռեսպուբլիկական ենթակայության քաղաք¹:

Մինչև 1948 թվականը Կիրովականում գործել է շինարարական դրասենյակ, որը կատարել է հիմնականում շինարարական աշխատանքները: Հետագայում սրան է միացվել էվակուբազայի շինարարությունը և կազմակերպվել քաղաքային շինարարական տրեստը: Քաղաքային շինարարական տրեստը 1950 թվականին կատարել է 2,5 միլիոն ռուբլու կապիտալ շինարարություն, 1955 թվականին՝ 10,5 միլիոն, 1958 թվականին՝ 73 միլիոն ռուբլու²:

Վերջին մի քանի տարիների ընթացքում մեր երկրում ստեղծվեց սեփական շինարարական ինդուստրիա, որը հագեցված է ժամանակակից առաջնակարգ տեխնիկայով և ունի հզոր բազա շինարարական նյութերի արտադրության համար: Այժմ շինարարության մեջ աշխատում են մեծ քանակությամբ էքսկավատորներ, շարժական կոունկներ և շատ ուրիշ մեխանիզմներ: Կառույցները շինարարական մեխանիզմներով հագեցնելը անհամեմատ բարձրացրեց աշխատանքի արտադրողականությունը: Աշխատավորների ընակարանային պայմանները լարելավելու նպատակով Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ընդունեցին բնակա-

¹ «Սովետական Հայաստան», 1952 թ., հունիսի 16:

² Տվյալները վերցված են № 7 շինարարական տրեստի արտադրական բաժնից:

րանային շինարարության զարգացման մասին շատ կարևոր որոշումներ, որոնք լայն կերպով կենսագործվում են ինչպես երկրի բոլոր սեպտորիկաների քաղաքներում, այնպես էլ Կիրովականում: 1955 թվականին Կիրովականում կառուցվել է 1.000 քառակուսի մետր, 1957 թվականին՝ 9 հազար, իսկ 1959 թվականին՝ մոտ 20.000 քառակուսի մետր բնակելի տարածություն: Քաղաքում կատարվող շինարարական աշխատանքների տեմպերն արագացնելու, շինարարությունն էժանացնելու և աշխատանքի որակը բարձրացնելու գործում կարևոր նշանակություն ունեցավ շինարարության մեջ մասսայական կարգով երկաթբետոնե կոնստրուկցիաների օգտագործումը: 1956 թվականին Կիրովականի շինարարական տրեստին կից կազմակերպվեց երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաների արտադրությունը: 1958 թվականին քաղաքի շինարարությունը ղգալի շափով հագեցվեց շինարարական մեխանիզմներով և ավտոտրանսպորտով: Այժմ քաղաքի նորակառույցներում գործում են 2—5 տոննա կարողությամբ 22 վերամբարձ աշտարակային կունկ, 20 բուլդոզեր, 15 ավտոբեռնամբարձիչ, 10—25 տոննա կարողությամբ 12 հզոր ամբարձիչներ, 18-ից ավելի փորող էքսկավատորներ և այլն: Քաղաքում շինարարական կազմակերպությունների կողմից 1958 թվականին կատարվել է 102 միլիոն ռուբլու շին-մոնտաժային աշխատանք, որից 73 միլիոնը կատարել է Հայկական ՍՍՌ Շինարարության մինիստրության շինարարական № 7 տրեստը: Այդ թվում կառուցվել են մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, կուլտուր-կենցաղային օբյեկտներ, մասնավորապես, բնակելի և հասարակական բազմահարկ շենքեր:

Արդյունաբերության դժով միայն 1959 թվականին կառուցվել են Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի կորունդի ցեխը, «Ալտոմատիկա» ինքնուրույն կոնստրուկտորական բյուրոյի ինժեներական կորպուսը, «Ալտոմատիկա» գործարանի ձուլման ցեխը, մսի կոմբինատի սառնարանը, Քիմիայի նախագծային և գիտահետազոտական ինստիտուտի օժանդակ շենքը և արհեստական մետաքսաթելի գործարանի

բազմաթիվ կորսուածները: Միաժամանակ 1959 թվականին շահագործման են հանձնվել 17 բնակելի շենքեր՝ 520 բնակարանով¹, կենցաղսպասարկման տաղավարներ, դպրոցներ, հիվանդանոցներ, ակումբներ և այլն:

Կիրովականում կատարվող թե՛ արդյունաբերական, թե՛ բաղաբացիական շինարարությունը նպաստեց շինարարական նոր տեխնիկայի ներդրումը: Երեսպատման քարերի անկյունային, ձևավոր, ուղղաձիգ և կորագիծ տաշքի մեքենայացումը, տանիքների և պատշգամբների միջհարկային ծածկերի երկաթբետոնե կոնստրուկցիաների ստեղծումը և արմատավորումը նպաստեցին Ն² 7 շինարարական տրեստի ոչ միայն կատարվող աշխատանքների արագացմանը, այլև որակի բարձրացմանը: Այդ նպատակով երեք տարի է, ինչ Կիրովականում ստեղծվել է շինարարական կոմբինատը՝ որը երկաթբետոնե կոնստրուկցիաներ և զանազան շինանյութեր է մատակարարում շինարարական տրեստի օբյեկտներին:

Գովելի աշխատանք են կատարում Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի դիրեկցիան, պարտիական և արհմիութենական կազմակերպությունները, որոնց օգնությամբ քիմիադործների 300 ընտանիքներ կառուցել են երկհարկանի գեղեցիկ բնակելի շենքեր: Բայց այստեղ հարկեղած ուշադրություն չի դարձվում ավանի փողոցների բարեկարգման աշխատանքներին:

Բանվոր-ծառայողներին կենցաղային պայմանները բարելավելու նպատակով քիմիական կոմբինատի դիրեկցիան բնակարանային շինարարության խոշոր տեմպեր վերցրեց հատկապես հետադարձացման տարիներին: Կոմբինատի գոյության տարիներին (մինչև 1959 թվականի դեկտեմբերը) կառուցվել է 136 շենք՝ 45.539 քառակուսի մետր բնակելի տարածությամբ²: Պետական այդ բնակելի շենքերի կառուցման համար մինչև 1959 թվականի դեկտեմբերը ներդրվել է մոտ 63 միլիոն ռուբլի:

¹ «Կայծ», 1960 թ. փետրվարի 19:

² Ա. Մյասնիկյանի անվան քիմկոմբինատի արխիվ, գ. 36, թ. 11:

Ճարտարապետներ Շ. Ազատյանի և Մ. Ալավերդյանի նախագծով կառուցվեց և 1957 թվականի օգոստոսին շահագործման հանձնվեց կոմբինատի բանվոր-ծառայողների կուլտուրայի պալատը, որի վրա ծախսվել է 5,5 միլիոն ուրբլի: Պալատն ունի երեք դահլիճ, գրադարան, ընթերցարան, մի քանի տասնյակ սենյակներ ինքնագործ խմբերի համար: Կուլտուրայի պալատն արժանացել է Հայկական ՍՍՌ Ճարտարապետության վարչության առաջին կարգի մրցանակին:

Ստալինի պողոտայի երկու կողմերում, քիմկոմբինատից սկսած մինչև Կիրովի հրապարակը, հիմնականում Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի բնակելի շենքերն են: Միայն 1956—1957 թվականներին կոմբինատի այն բանվորներին և ինժեներատեխնիկական աշխատողներին, որոնք սևիական բնակարաններ են կառուցում, տրված է մոտ երկու միլիոն ուրբլի պետական վարկ, իսկ կոմբինատի դիրեկցիան այդ նույն ժամանակաշրջանում տվել է 1000 խորանարդ մետր շինափայտ, 5.000 քառակուսի մետր տուֆ քար, 50 տոննա թիթեղ, մեծ քանակությամբ ցեմենտ, կիր և այլ շինանյութեր¹:

Կիրովական քաղաքը բաղկացած է վեց թաղամասերից՝ Կենտրոնական, Սանատորիական (վերջինում հիմնականում հայրենադարձ հայերն են բնակվում), «Դիմաց», Առափնյա, Վանաձորի և Քիմիագործների:

Մի քանի տարի առաջ Փամբակ գետի ձախ ափի ժայռոտ սարալանջը ծածկված էր տատասկով ու թփուտներով: Այժմ այնտեղ կառուցվել են ավտոնորոգման գործարանի, «Ավտոմատիկա» ինքնուրույն կոնստրուկտորական բյուրոյի, ավտոգրասենյակի տուֆաշեն կորպուսները, երկաթուղայինների և քաղաքի բանվոր-ծառայողների տասնյակ բնակելի երկհարկանի շենքերը, ինչպես նաև բաղամթիվ հասարակական շենքեր: Այդ թաղամասում սկսվեց յոթնամյակի առաջնեկներից մեկի՝ Կիրովականի արհեստական մետաքսաթելի խոշոր գոր-

1 Ալ. Մյասնիկյանի անվան քիմկոմբինատի տրիսիվ, դ. 36, թ. 11:

ծարանի արտադրական կորպուսների կառուցումը: Այդ կառույցները և թաղամասը հեղեղումներից պահպանելու նպատակով Առափնյա փողոցի ղետեղերբին կառուցվեց 2,5 կիլոմետր երկարությամբ բազալտե հենապատ:

Մի բանի տարվա պատմություն ունի «Դիմաց» թաղամասը: Նախկին խորդուբորդ, անանցանելի տարածությունը վերածվեց ասֆալտապատ փողոցների, ծառերով և էլեկտրական սյուններով ծածկված մայթերի: «Դիմաց» թաղամասի ներքևում բարձրացել են մերենաշինական գործարանի և կուհույքի ֆարֆեկայի արտադրական կորպուսները: Կղմինդրի-ազյուսի գործարանի հյուսիսային բլրալանջին, դեպի Մեղրուտ տանող ճանապարհի երկարությամբ տարածվել են տուֆակերտ անհատական բնակելի բազմաթիվ շենքեր: «Դիմաց»-ը դարձել է քաղաքի ամենախոշոր թաղամասերից մեկը, ուր գործում են յոթնամյա և միջնակարգ դպրոցներ, բուժհիմնարկներ, խանութներ և կենցաղային սպասարկման մի շարք արհեստանոցներ: Խոշոր շինարարական աշխատանքներ են տարվում «Նանդակ» կոչվող տեղամասում, ինչպես նաև Քիմիագործների նորակառույց թաղամասում, ուր բարձրացել են տուֆաքարից մեկ և երկհարկանի մենատներ՝ իրենց գեղեցիկ պարտեզներով ու ծաղկանոցներով: Վանաձոր տանող Քլիսավոր փողոցը կոչվում է հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անունով: Նա ունի մոտ երեք կիլոմետր երկարություն: Այդ ասֆալտապատ փողոցի կողքերին բարձրացել են երկհարկանի գեղեցիկ տներ՝ շրջապատված պտղատու այգիներով ու ծաղկանոցներով: Խ. Աբովյանի անվան փողոցի վերջավորություներից սկսվում է Վանաձորը, որը Կիրովականի ամենագեղեցիկ վայրերից մեկն է: Այնտեղ, բուսաբանական այգուն կից իշխող բարձունքի վրա տեղ են գտել ռեսպուբլիկայի անտառային և թղթի արդյունաբերության աշխատողների արհմիության պիոներական ճամբարի կորպուսները, որոնց վրա ծախսվել է 8 միլիոն ուսրլի: Դրանից մի փոքր հեռու, «Բուրբ քարի» մոտ, անտառի մեջ իշխող բարձունքի վրա բարձրացել են ուսուցիչ-

ների, բարձրագույն դպրոցների և գիտական աշխատողների արհմիութեան պիտներական ճամբարի կորպուսները: Այս և մյուս ճամբարներում երկխոսների հանգստի համար ստեղծված են բոլոր հարմարությունները: Տուֆաքարից են պատրաստված այս ճամբարների բոլոր շենքերը, որոնք ունեն լուսավոր ու գեղեցիկ ննջարաններ: Նույն վայրում պիտներական ճամբարների մշտական շենքեր են կառուցում Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատը, Լենինականի տրիկոտաժի ֆաբրիկան, կուլտուրայի աշխատողների արհմիութեան ռեսպուբլիկական կոմիտեն և այլ հիմնարկներ: Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատը Վանաձորում կառուցում է բանվոր-ծառայողների միօրյա հանգստյան սունո:

Քարեկարգվել են երկաթուղային կայարանն ու կառամատույցը, Լնդարձակվել ու կանաչադարձվել է կայարանի շրջակայքը: Երկաթուղայինների համար կառուցվել են ինչպես հասարակական, այնպես էլ անհատական բնակելի շենքեր:

Երկաթուղային կայարանին կից է Ղրոսայգին՝ 4—5 հեկտար տարածությամբ: Զբոսայգում կան ակումբ, կինոթատրոն, պարերի և սպորտային հրապարակներ:

Կիրովականի երկաթուղայինների կոլեկտիվը բաղկացած է մոտ 1000 մարդուց, որանց մի մասը տեղավորված է պետական շենքերում, իսկ 35—40 տոկոսը ունեն սեփական բնակարաններ: Վերջին երեք տարում 61 երկաթուղայիններ կառուցել են սեփական մեծատներ:

Քաղաքում բազմաթիվ բնակելի շենքեր ունեն տրիկոտաժի, կորդի, մորթու-մուշտակի ֆաբրիկաներն ու մեքենաշինական, կլմինդրի-աղյուսի գործարանները, մսի կոմբինատը, տպարանը և այլն: Այդ բնակելի շենքերի շրջակայքում՝ գործարանների ու ֆաբրիկաների վարչական շենքերում են տեղավորված բանվորներին և ինժեներատեխնիկական աշխատողներին սպասարկող գրասրահան-ընթերցարանները, բուժկայանները, ճաշարանները և հասարակական այլ հիմնարկները: Ինչպես քաղաքի մյուս արդյունաբերական ձևոնարկությունները, այնպես էլ տրիկոտաժի ֆաբրիկան իր արտադրական շենքում

ունի մտուր, մանկապարտեզ, ակումբ, դահլիճ, բուժկայան և ճաշարան: Ֆարրիկայի բակը բարեկարգված ու կանաչապատված է: 1960 թվականին ֆարրիկայի բակում դրվելու է լեզենդար հերոս Կամոյի արձանը, որի անունով է կոչվում արիկոտաժի ֆարրիկան¹: Տրիկոտաժի ֆարրիկան քաղաքում ունի մի քանի բնակելի շենքեր: 1959 թվականին կառուցվել է երկու բնակելի մեծ շենք, որոնց կառուցմանը հատկացվել է մոտ երկու միլիոն ուսուրլի: Ֆարրիկայի բանվոր-ծառայողների մի մասը պետական վարկի օգնությամբ կառուցում է սեփական բնակարաններ, այդ գործի հաջողությունը մասամբ նըպաստում է ֆարրիկայի դիրեկցիան:

Կորդի ֆարրիկան քաղաքում ունի բազմահարկ բնակելի յոթ շենք: Այդ շենքերում տեղավորված է բանվորների մոտ 40 տոկոսը: Ֆարրիկայում կան զգալի թվով բանվոր-ծառայողներ, որոնք պետական վարկի օգնությամբ կառուցել են սեփական բնակարաններ:

Այսպիսով, քաղաքում 1950 թվականին² եղել է պետական և անհատական պատկանելության 139.000 քառակուսի մետր բնակելի տարածություն (որից անհատական՝ 85700 քառակուսի մետր), 1955 թվականին՝ 163400 քառ. մետր (որից անհատական՝ 102.300 քառակուսի մետր), 1960 թվականին կա ընդամենը 250 հազար քառ. մետր բնակելի տարածություն³ (որից անհատական՝ 133.200):

Հայ ճարտարապետության լավագույն արագիցիաների ըստ տեղծագործական մշակումով սովետական ճարտարապետների սերունդը զարդարել է Կիրովական քաղաքը հասարակական և արտադրական աչքի ընկնող բազմաթիվ կառուցումներով: Կիրովականցիների աչքի առաջ օրեցօր փոխվում է

¹ Տվյալները վերցված են համապատասխան արտադրական ձեռնարկություններից:

² Մինչև սովետական կարգերը Ղարաբիլիսայի բնակելի տարածությունը կազմում էր 9.500 քառ. մետր, 1932 թվականին այն հասավ 25.200-ի, 1940 թվականին՝ 90.900 քառակուսի մետրի:

³ Տվյալները վերցված են Կիրովականի քաղսովետի գործկոմի վիճակագրական տեսչությանից և պլանային բաժնից:

քաղաքի ճարտարապետական տեսքը: Մեկը մյուսի հետևից կառուցվում են արտադրական ձևոնարկությունների, դպրոցական և գիտահետազոտական ինստիտուտների, հիվանդասնոցների, հյուրանոցների, հասարակական այլ հիմնարկների մոնումենտալ շենքեր:

Կիրովականի գեղեցկությունը կազմում է Ս. Մ. Կիրովի անվան ընդարձակ հրապարակը, որը գտնվում է քաղաքի կենտրոնում: Այնտեղ վեհորեն բարձրանում է ՍՄԿՊ և Սովետական պետության ականավոր գործիչ Ս. Մ. Կիրովի գրանիտե հուշարձանը, որը կերտել է քանդակագործ Արա Սարգսյանը¹. հրապարակի տարբեր կողմերից բարձրացել են բազմահարկ գեղեցիկ շենքեր: Կիրովի հրապարակը զարդարում են Ա. Մյասնիկյանի անվան բիմիական կոմբինատի բնակելի շենքերը (գործ՝ ՍՍՌՄ Շինարարության և ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ Հ. Մարգարյանի), ինչպես նաև աշխատավորների գեպուտատներին Կիրովականի քաղաքային Սովետի, հյուրանոցի (ճարտարապետներ՝ Հ. Մարգարյան, Բ. Արզումանյան) և ՀԿՊ Կիրովականի քաղաքային կոմիտեի (ճարտարապետ՝ Զ. Բախշինյան) շենքերը:

Հրապարակի վրա գտնվող հինգ շենքերն էլ գեղեցիկ են, գողարիկ, հարմարավետ: Սրանք կազմում են մի վերջավորված անոամբլ և իրենց մեջ մարմնավորում են սովետահայ ճարտարապետության ստեղծագործող միտքը:

Կիրովի հրապարակի վրա Հ. Մարգարյանի նախագծով կառուցված Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի բնակելի շենքը (կառուցող աշխղեկ՝ Ս. Ենոբյան) ճարտարապետության վարչության կողմից հայտարարված 1957 թվականի կոնկուրսում ստացավ առաջին կարգի մրցանակ:

Ակադեմիկոս Հ. Մարգարյանի նախագծերով Կիրովի հրապարակի վրա կառուցված շենքերից իացի մի շարք բնակելի շենքեր են կառուցված նաև քաղաքի տարբեր մասերում: Հ. Մարգարյանը միաժամանակ Կիրովականում կատարվող շի-

¹ «Архитектура Советской Армении» (1920—1950), 1951, Москва, стр. 29.

նարարութեան կոնսուլտանտն է: Աննախընթաց տեմպով ընթացող Կիրովականի բազաբաշինութեան մեջ իրենց համեստ լուման ունեն բազաբի նախկին զլխավոր ճարտարապետներ՝ Ա. Փոստոյանը, Ի. Բուռնազյանը և մի շարք այլ ճարտարապետներ: Ճարտարապետ Գ. Քոչարի նախագծով կառուցվել է «Երևան» կինոթատրոնը, ՍՍՌՄ Շինարարութեան և ճարտարապետութեան ակադեմիայի թղթակից-անդամ Գ. Աղաբաբյանի նախագծով՝ դպրոցական, Ա. Կանայանի նախագծով՝ պիոներական ճամբարների շէնքերը: Ճարտարապետներ Կ. Հովհաննիսյանի, Խ. Ռոստոմբեկյանի, Ն. Բարանովայի, Բ. Արզումանյանի, Ռ. Գևորգյանի, Վ. Բելուբեկյանի նախագծերով կառուցված են մի շարք հասարակական և բնակելի շէնքեր:

Կիրովականում կառուցվող շէնքերի վրա երկարամյա ու անբասիր աշխատանք են կատարել անվանի վարպետներ՝ քարտաշ-որմնադիրներ Գ. և Մ. Գանիկեյանները, Մ. Ասլանյանը (զլխավորապես երկաթուղային կայարանի շէնքերի վրա), Մ. և Ա. Փահլևանյանները, Մ. Պողոսյանը (զլխավորապես քիմիական կոմբինատի կառուցների վրա), Բ. Հարությունյանը, Հ. Գրիգորյանը, Ա. Բեղլարյանը, Թ. Թորոսյանը՝ և շնորհալի քարագործ վարպետ Մ. Միրզախանյանը՝ Ուստա Մեհրաբը: Վերջինս իր լավ աշխատանքի համար բազմիցս ընտրվել է տեղական Սովետի և Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ղեկավարատ: Վարպետ Մ. Միրզախանյանը 1959 թրվականի մայիսի 1-ին կիրովականցիներին նվեր հանձնեց՝ Վանաձորի Պապանի գլուղի տեղում, գետափին, ծառերի տակ իր կառուցած սղրջուր-հուշարձանը:

Կիրովականում կառուցողական աշխատանքներում առավել զգալի դործ են կատարել սրմնադիր-բրիգադավարներ Ա. Առաքելյանը, Հ. Սարգսյանը, Մ. Գանիկեյանը, Վ. Առաքելյանը, հյուան բրիգադավարներ, Լենինի շքանշանակիր Վ. Միրզախանյանը, Ա. Կոռյանը, Բ. Լոռեցյանը, մոնտաժողներ Գալոսյանը, Տկաչկը, բանվորներ Վ. Մեղվեղևը, Ա. Մարգարյանը, մեխանիկատոր, հայրենադարձ է. Խաչիկյանը՝ իր եր-

կու որդիներով, Ա. Չոբանյանը և ուրիշներ: Սրանք ոչ միայն գերակատարում են ամենօրյա առաջադրանքները, այլև հայտնի են իրենց աշխատանքի բարձր որակով:

Գ. Թասլախչյանը եղել է Կիրովականում կազմակերպված շինարարական տրեստի առաջին կառավարիչը և մինչև իր կյանքի վերջին օրերը զգալի ծառայութուն է մատուցել քաղաքի շինարարական աշխատանքներին: Քաղաքի շինարարության բնագավառում զգալի ծառայութուն ունի ճարտարապետ-շինարար Լ. Սիմոնյանը, որը 1937—1944 թվականներին եղել է քաղաքի գլխավոր ճարտարապետը, իսկ 1949 թվականից շինարարական № 7 տրեստի գլխավոր ճարտարապետն է: Նա ոչ միայն ղեկավարում է քաղաքում կատարվող շինարարութունը, այլև պատրաստել է շինարարների մի ամբողջ սերունդ, զրա համար էլ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահութունը Լ. Սիմոնյանին շնորհեց Հայկական ՍՍՌ վաստակավոր շինարարի պատվավոր կոչում:

1960 թվականի սկզբից ռեսպուբլիկայի շինարարական կազմակերպութունները խոշորացվեցին: Իրար միացվեցին նաև Կիրովականում գոյություն ունեցող Շինարարության մինիստրության № 7 և Ժողովատիրոհի № 3 տրեստները: Այժմ այն կոչվում է Կիրովականի արդյունաբերական-շինարարական տրեստ, որն զբաղվում է թե՛ արդյունաբերական, թե՛ բնակելի ու կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարության հարցերով:

Կիրովականի արդյունաբերական-շինարարական տրեստը 1960 թվականին կատարելու է 103 միլիոն ռուբլու շինարարական և մոնտաժային աշխատանքներ: Այդ աշխատանքները քաղաքում ղեկավարելու համար 1959 թվականի հունվարից Կիրովականի քաղաքային Սովետի գործկոմին կից ստեղծվեց կապիտալ շինարարության և տեխնիկական վերահսկողության բաժին:



Կիրովականում տարեցտարի զարգանում է կոմունալ տնտեսությունը, այդ թվում՝ ջրմուղի-կոյուղու ցանցը: Կիրովականի աշխատավորները 1935 թվականի սեպտեմբերին ձեռնարկեցին Մայմեխ սարի բարձունքից՝ 11 կիլոմետր հեռավորությանից խմելու ջուր բերելու գործը: Մեծ ոգևորությամբ աշխատելով՝ նրանք հաղթահարեցին բոլոր դժվարությունները: Ձմռան սառնամանիքի պայմաններում կիրովականցիները շղագարեցին ջրմուղի նոր դժի վրա աշխատելուց: Ջրի ստացումն արագացնելու համար քաղաքի աշխատավորները կազմակերպեցին բազմամարդ շարաթորյակներ: Կառավարությունը այդ նպատակի համար հատկացրել էր 300 հազար ուրլի գումար: Ճարտարապետներ Կ. Կարապետյանը և Տ. Եղիազարյանը հմտությամբ ղեկավարեցին Մայմեխի ջրմուղի ահունքային կառուցվածքների և ջրատարի շինարարությունը: Մայմեխ սարից խմելու ջուր բերելու կապակցությունում 1936 թվականի մայիսի 12-ին կայացավ թուրքիկ միտինգ, ուր հանդես եկան պարտիայի ու կառավարության ղեկավարները: Նրանք սղջունեցին Կիրովականի աշխատավորությանը, որ նրանց տասնյակ տարիների երազանքը Սովետական իշխանության օրոք իրականություն դարձավ: Այդ օրվանից Կիրովականի բնակիչներն ստացան Մայմեխի մաքուր և սառը խմելու ջուրը¹: 1951 թվականին քաղաքի բնակիչներն ստացան նաև Ալդրբուլաղից եկող խմելու ջուրը:

Քաղաքում ջրմուղի միադիմ երկարությունը 1960 թվականին հասավ 40 կիլոմետրի: Բայց գոյություն ունեցող ջրմուղը այսօր նորից միանգամայն հեռու է քաղաքի բնակչության կարիքները բավարարելուց:

Կիրովական քաղաքի բնակչությանը ջրով բավարարելու նպատակով Լեռնապատ գյուղի մոտ գտնվող Կարա-շոբան

¹ Ջրմուղի կառուցման աշխատանքներին խոշոր օգնություն էր ցույց տալիս անվանի ինժեներ Գ. Շիրմազանյանը:

ձորակի աղբյուրներից ջուր բերելու համար կառուցվում է 15 կիլոմետր երկարութեամբ ջրմուղի նոր գիծ, որը շահագործման կհանձնվի Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակի օրը:

Քաղաքի կոմունալ տնտեսութեան մեջ կարևոր տեղ ունի կոյուղին, որի միագիծ երկարութեունը Կիրովականում 1960 թվականին հասավ 7 կիլոմետրի:


Նորաստեղծ թաղամասերում բնակարանային շինարարութեան աճման հետ ստեղծվել է կոմունալ ձեռնարկութեունների լայն ցանց: Քիմիագործների բանվորական ավանի ամբողջ տերիտորիան պատած է ջրմուղի-կոյուղու և ջեռուցման սիստեմով: Զրմուղի ցանցը կազմում է 25.591 գծային մետր, կոյուղունը՝ 21.673 մետր, ջեռուցմանը՝ 30.533 մետր¹:

Կոմբինատի տերիտորիայում կան շորա էլեկտրասնթակայան, հյուրանոց, բաղնիք (լողարաններ կան նաև կոմբինատի գրեթե բոլոր ցեխերում), երկու ճաշարան, լվացքատուն, բուֆետ, ինչպես նաև հեռախոսային երկու կոմունտատորներ և բազաթիւլ խանութներ: Բոլոր շենքերը էլեկտրիֆիկացված ու ռադիոֆիկացված են: Այս տեսակետից միևնույն վիճակի մեջ շեն գտնվում «Դիմաց», Առափնյա և Սանատորիական թաղամասերը:

Սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին բազաբում էլեկտրական լուսավորութեուն չկար: Փողոցներում գոյութեուն ունեցող նավթի լապտերներն աղոտ էին լուսավորում իրենց շրջակայքը: Կիրովականի աշխատավորները Տանձուտ գետի վրա կառուցեցին էլեկտրակայան, որը շահագործման հանձնվեց 1924 թվականին, իսկ 1925—1930 թվականներին 50 հազար² ռուբլի հատկացվեց այդ էլեկտրակայանն ընդարձակելու համար: 1932 թվականի նոյեմբերին Կիրովականն էլեկտրաէներգիա ստացավ Ջորագէսից: Քաղա-

1 Տվյալները վերցված են Ա. Մյասնիկյանի անվան բիմիական կոմբինատի կոմունալ բաժնից:

2 «Խորհրդային Հայաստան», շինդ տարի (1920—1926 թ.թ.), Երևան, 1926, էջ 43:



ՀԿՊ Կիրովականի ընդհանուր շենքը

բում լուսավորվող փողոցների միագլիծ երկարությունը 1960 թվականին կազմում է 60 կիլոմետր:

Խոշոր աշխատանքներ են կատարված փողոցների բարեկարգման՝ ասֆալտապատման, ծառատնկման ուղղությամբ: Հիմնականում ավարտված է Ստալինի պողոտայի, Մարքսի, Կիրովի, Շահումյան, Աբովյան, Ֆրունզեի, Նալբանդյան, Տերյան, Աղայան, Երևանյան, 26 կոմիսարների, Մյասնիկյան, Հոկտեմբերյան և այլ փողոցների բարեկարգումը: Ավարտվել են նաև Կամոյի, Տպագրիչների, Սվիրդլովի, Թումանյան և Գյուրջի փողոցների բարեկարգման աշխատանքները: Խոշոր աշխատանքներ են տարվում Լենինի փողոցի վերափոխման համար, որը առաջիկայում կդառնա քաղաքի ամենագեղեցիկ փողոցներից մեկը: Մտառանկված ու ծաղկապատված են բազմաթիվ փողոցների մայթերը, մասնավորապես Կիրովի փողոցը և Ստալինի պողոտան: Մինչև 1960 թվականի կեսերը ասֆալտապատված է 574 հազար քառակուսի մետր տարածություն:

Քաղաքի բարեկարգման, ծառադարդման ու կանաչապատման աշխատանքները միշտ էլ եղել են պարտիական, սովետական, կոմերիտական, արհմիութենական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Այդ կապակցությամբ ամեն տարի կազմակերպվում են բազմաթիվ մասսայական շաբաթօրյակներ, որին մասնակցում են հազարավոր բանվորներ, ինժեներներ, ծառայողներ, աշակերտներ: Յուրաքանչյուր կիրովականցի իր լուման է մտցնում իր աչքի առաջ օրեցօր բարգավաճող քաղաքի բարեկարգման գործի մեջ: Ռեսպուբլիկայի քաղաքների ու շրջանների բարեկարգման համար ծավալված մրցության մեջ 1950 թվականին Կի-

¹ Ա. Կիրովական, «Կիրովական», ՀՍՍՌ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության հրատարակչություն, Երևան, 1957, էջ 21:

բովակահանի քաղաքային Սովետը՝ այդ ուղղութիւնով կատարած իր լավագույն աշխատանքի համար շահեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Փոխանցիկ կարմիր դրոշը:

Աննախընթաց վերելք են ապրում մեր ռեսուրսային ժողովրդական տնտեսութիւնը, կուլտուրան և արվեստը: Ծաղկել բարգաւաճել ու անճանաչիլի են դարձել մեր քաղաքներն ու ավանները: Մեր երկիրը թեւակոխել է իր զարգացման նոր ժամառակաշրջանը: Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման հետ այդ ժամանակաշրջանի խնդիրներէն մեկը նոր կոմունիստական կենցաղի, մարզու նոր ապրելակերպի, աշխատանքի ու հասարակական պարտքի նկատմամբ նրա բարձր գիտակցութեան ապահովումն է: Այժմւն մեր խնդիրն է՝ արտադրութեան բարձրացման հետ միասին մարդկանց ավելի բարեկեցիկ ու կուլտուրական կյանքի համար ստեղծել բոլոր պայմանները: Այդ իմաստով ուշադրութեան արժանի է Կիրովականի Ստալինի պողոտայի № 24 տան բնակիչների նախաձեռնութիւնը: Այդ տան բնակիչները, որոնք ճնշող մեծամասնութեամբ աշխատում են Կիրովականի «Ավտոմատիկա» գործարանում, որոշել են ոչ միայն լավ աշխատել արտադրութեան մեջ, այլև բարելավել իրենց կենցաղը, ապրել կոմունիստաբար: Նրանք մաքրել ու կանաչապատել են իրենց շէնքի բակը, կատարել են նորոգման աշխատանքներ, բակում երեխաների զբոսանքի համար քանդակ են մի շարք միջոցառումներ: Ստեղծված են կուլտմաստակական, հասարակական կարգ ու կանոնի պահպանման, սանիտարական և երեխաների հետ տարվող աշխատանքների գծով հանձնաժողովներ: Շինքն ունի 3—4 սենյակից բաղկացած ակումբ, ուր գործում են տնային տնտեսու-

¹ 1940 թվականից աշխատավորների ղեկուսատնների Կիրովականի քաղաքային Սովետի գործկոմի նախագահներն են եղել Ա. Տոնոյանը, Տ. Միրալեյլյանը, Ա. Բաղդյանը, որոնք միաժամանակ եղել են շրջափակի գործկոմի նախագահ: 1948 թ. հունվարի 4-ին քաղաքային Սովետի սեփան քաղսովետի գործկոմի նախագահ է ընտրում Ս. Ամիրխանյանին, այնուհետև՝ Ալլչյանին և Ա. Շովգարյանին:

հիների համար ձեռագործի, կար ու ձևի խմբակներ: Հատուկ սենյակ է հատկացված ձերերին, թոշակառուներին: Ակումբում կան խաղասենյակ և բնթերցարան: Տան բնակիչները սիստեմատիկաբար դասախոսություններ են լսում տարբեր թեմաների շուրջը:

Կիրովականցիների այս արժեքավոր նախաձեռնությունը հավանություն արժանացավ ռեսպուբլիկայի պարտիական, սովետական և արհմիութենական օրգանների կողմից: Դրա համար էլ ՀԱՄԽ-ի նախագահությունը 1960 թվականի մարտի 21-ին քննարկեց կիրովականցիների նախաձեռնությունը և հավանություն տվեց: Միաժամանակ ՀԱՄԽ-ը պարտավորեցրեց արհմիութենական կազմակերպություններին՝ աջակցելու այդ նախաձեռնության տարածմանը՝ «Սովորել, աշխատել և ապրել կոմունիստաբար» նշանաբանի ներքո ծնունդ առած՝ կիրովականցիների նախաձեռնությունը լայն արձագանք է դոսել ինչպես տեղում, այնպես էլ ռեսպուբլիկայի մյուս քաղաքներում և ավաններում:

Կիրովականի աշխատավորությունը սպասարկում է քաղաքում ստեղծված առևտրական լայն ցանցը: Քաղաքի տարրերը թաղամասերում բացվել են 268 առևտրական կետեր՝ պարենամթերքի, արդյունաբերական ապրանքների և մասնագիտացված այլ բազմաթիվ խանութներ, ճաշարաններ, բուֆետներ, որոնցում 1000-ից ավելի մարդիկ են աշխատում: Տարեցտարի բարձրանում է քաղաքի բնակչության գնողունակությունը: Եթե մինչև 1940 թվականը քաղաքում տարեկան կատարվում էր մի քանի տասնյակ միլիոն ռուբլու ապրանքաշրջանառություն, ապա 1958 թվականին այն հասավ ավելի քան 180 միլիոն ռուբլու, իսկ 1960 թվականին կհասնի մոտ 220 միլիոն ռուբլու¹:

Կիրովականում էլ ավելի է լայնանալու առևտրի ցանցը: Յոթնամյակում քաղաքում կազմակերպվելու են առևտրական

¹ Տվյալները վերցված են Կիրովականի քաղաքային Առևտրի գործադիր կոմիտեի առևտրի բաժնից:

մի շարք կազմակերպություններ¹ սննդառ, արդառ, էաշարանների տրեստ և այլն: Քաղաքում կառուցվելու է ծածկած շուկա: 1960 թվականին շահագործման կհանձնվեն հասարակական սննդի օբյեկտներ և մի շարք առևտրական կետեր, որոնց շնորհիվ յոթնամյակի վերջում առևտրական շրջանառությունը քաղաքում կանցնի 300 միլիոն ռուբլուց:

Սովետական իշխանության տարիներին խոշոր աշխատանքներ են կատարված քաղաքի կանաչ դոտին ընդարձակելու ուղղությամբ:

Կանաչ տարածությունները, որոնք կարևոր տեղ են գրավում սոցիալիստական քաղաքաշինության մեջ, ունեն ոչ միայն ճարտարապետական-գեղագիտական, այլև առողջապահական մեծ նշանակություն: Դրանք իրենց տեսքով ու ծավալով նպաստավոր դեր են խաղում քաղաքի ընդհանուր անսամբլը լրացնելու գործում¹ աշխատավորների համար ստեղծելով հանգստի վայրեր: Բացի այդ, դրանք պահպանում են օդի խոնավությունը, կանխում են փոշիների, ծխի, գործարանային գազերի, ուժեղ բամբակների ներխուժումը քաղաք:

Կիրովականում տարեցտարի ընդարձակվում են կանաչապատ տարածությունները, այդ թվում զբոսայգիներն ու պուրակները, որոնք զարձեղ են կիրովականյիների հանգստի ու զվարճալիքի վայրը: Դրանցից են Կիրովի անվան քաղաքային, Երկաթուղայիների, քիմիադործների և բուսաբանական այգիները, «Քաղաքալորանիստ» կոշվող բարձունքի վրա բուսեղծված սոճիների պուրակը և բազմաթիվ ուրիշ փոքր այգիներ ու ծաղկանոցներ, որոնք շուք ու գեղեցկություն են տալիս քաղաքին: Կիրովականում ծառատնկված և կանաչապատված տարածությունը 1940 թվականին կազմում էր 65 հեկտար, 1950 թվականին՝ 169 հեկտար, իսկ 1960 թվականին՝ 210 հեկտար, որից 110 հեկտարն այգիներ ու պուրակներ են¹:

¹ Տվյալները վերցված են Կիրովականի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի կոմսուպ կամնից:



Մի սիուսյան բուսաբանական այգուց

Կենտրոնական զբոսայգին, որը բռնում է մի քանի հեկտար տարածություն, ունի մանկական և սպորտային խաղերի հարստարակներ, կարուսել և ջրային կարուսել, ծիծաղի սենյակ, էստրադա և այլն: 1960 թվականի կեսերից կենտրոնական զբոսայգուն են միացվել շրջապատի պողատու այգիները: Զբոսայգին ավելի է բարեկարգվել:

Ցավոք սրտի Կիրովականի զբոսայգիներն ու ծառուղիները լավ չեն ձևավորված, նրանցում չկան տաղավարներ, շատերվաններ, արձաններ: Հրապարակների, փողոցների և բակերի ծաղկանոցների ձևավորումը հաջող չի կատարվում, նրանցում չի զգացվում ձևերի նորություն, թարմություն: Այս ուղղությամբ քաղաքային Սովետի գործկոմի համապատասխան բաժինները և ղերատեսչական հիմնարկները պետք է հասուկ աշխատանք կատարեն:

Կիրովականը համարվում է երկաթուղային և ավտոբուսային երթևեկության հանգույց: Այստեղով է անցնում Թբիլիսի—Լենինական—Նրևան երկաթուղին: Կիրովական—Դիլիջան—Նրևան, Կիրովական—Ստեփանավան, Կիրովական—Լենինական խճուղիներով քաղաքը կապվում է ոչ միայն ռեսպուբլիկայի քաղաքների ու շրջանների, այլև Անդրկովկասի եղբայրական ռեսպուբլիկաների՝ Վրաստանի ու Ադրբեջանի հետ:

Քաղաքի թաղամասերը կենտրոնական մասերին միացնելու նպատակով 1947 թվականից Կիրովականում սկսվեց քաղաքային ավտոերթվեկություն՝ մի քանի ուղղություններով: Քաղաքում կա տաքսա-մոտորային կայան, որն ունի մոտ 100 ավտոմեքենա, որից 50-ը ավտոբուսներ են, զրանք սպասարկում են քաղաքի աշխատավորությունը:

Այսպիսով, հատկապես վերջին տարիներին շատ բան է արվել քաղաքի բարգավաճման և նրա կոմունալ տնտեսության զարգացման ուղղությամբ: Կառուցվել են ինչպես գիտահետազոտական ինստիտուտների և մի շարք հասարակական հիմնարկների, այնպես էլ անհատական բնակելի

բաղմաթիւ շենքեր: Բացվել են նոր փողոցներ ու հրապարակներ, ասֆալտապատվել, ծառատնկվել և կանաչապատվել են մայթերը և բակերը, կառուցվել ու շահագործման են հանձնու-վել ջրատար ուղիները, կոյուղու գծերը: Ստեղծվել են միան-դամայն նոր թաղամասեր՝ իրենց հասարակական, կուլտուր-կրթական և բուժսպասարկման հիմնարկներով:

Կիրովական քաղաքի բարեկարգման աշխատանքները է՛լ ավելի բարձր միճակում կգտնվեն, եթե այդ ուղղութեամբ շկատարվեն մի շարք սխալներ:

1. Կիրովականի հետագա զարգացմանը լուրջ խոչընդոտ է հանդիսանում քաղաքի գլխավոր հատակագծի բացակայու-թյունը: Այդ պատճառով էլ «Դիմաց», Սանատորիական և Քի-միագործների թաղամասերը կառուցվել են առանց ուղղահա-յաց պլանավորման, որը հետագայում լուրջ խոչընդոտ է ըս-տեղծելու (մասամբ և արդեն ստեղծել է) այդ թաղամասերը բարեկարգելուն և կոմունիկացիաներով ապահովելուն:

2. Այն հողամասերը, որոնք պիտանի են պետական շի-նարարութեանը, հատկացվել են անհատ կառուցողներին: Այդ պատճառով էլ քաղաքի կենտրոնական մասը շենքերով կա-ռուցապատելու համար հարկ է լինում քանդել մասնավոր բաղմաթիւ տներ:

3. Խնձորուտ և Ժգանով գյուղերը, որոնք փաստորեն մը-տել են քաղաքի տերիտորիայի մեջ, դեռևս իրավական ձևա-կերպում չեն ստացել և այժմ այնտեղ մասնավոր մարդկանց կողմից կառուցումներ են կատարվում՝ առանց գլխավոր հա-տակագծի, որը և հետագայում խոշոր խոչընդոտներ է ստեղ-ծելու քաղաքի կառուցապատման աշխատանքներում:

4. Դեռևս չի լուծված քաղաքի ջրերի հեռացման խնդիրը, որը ամեն տարի հսկայական վնասներ է պատճառում ասֆալ-տապատ տարածութեանը և միաժամանակ քաղաքը ողողում կեղտաջրերով:

5. Նախագծող կազմակերպութեանները շատ հաճախ քա-ղաքը և արտադրական օբյեկտները նախագծելիս հաշվի չեն առնում նրա զարգացման հեռանկարները, քաղաքի վար-

զացման կոմպլեքսային միջոցառումների իրականացումը: Այդ պատճառով էլ մի նախագծով պլանավորում, կառուցում ու ասֆալտապատում են փողոցը, իսկ մի ուրիշ նախագծով՝ ջրմուղի, կոյուղու կապի համար քանդում են հենց նոր կառուցված փողոցը:

6. Բն ընդ որ դեպքերում է, որ նպատակահարմար կերպով են օգտագործվում քաղաքի բարեկարգման համար նախատեսված գումարները, իսկ առանձին դեպքերում էլ ցածր է շինարարության և բարեկարգման աշխատանքների որակը:

7. Քիչ ուղղորդվում է դարձվում կանաչապատմանը և հատկապես եղած ծառ ու ծաղիկը խնամելուն:

8. Անմխիթար վիճակում է գտնվում շահագործման հանձնարված շենքերի պահպանման ու խնամքի գործը:

9. Չնայած Կիրովականում լայն ծավալ է ստացել անհատական բնակարանային շինարարությունը, բայց մեծ դժվարություններ են ստեղծվել թաղամասերի բարեկարգման և բնակչության կոմունալ ու կուլտուրական սպասարկման գործում: Այդ թաղամասերը շունեն ջրմուղ, կոյուղի, բարեկարգ փողոցներ և բակեր, կանաչապատ տարածություններ, կուլտուր-կենցաղային և առևտրական օբյեկտներ:

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ բարեկարգման աշխատանքները Կիրովականում հարատև, սխտեմատիկ կերպով չեն կատարվում և ետ են մնում բնակարանային ու արդյունաբերական շինարարության տեմպերից:

Միանգամայն անբավարար է աշխատավորների մասնակցությունը քաղաքի սանիտարական դրություն բարելավմանը: Այդ կապակցությամբ քաղաքաշինությունը նվիրված Համամիութենական խորհրդակցության մասնակիցները ՍՍՌԾ բոլոր աշխատավորներին կոչ արին՝ մշտական հոգատարություն հանդես բերել քաղաքների ու գյուղերի կառուցապատման, բարեկարգման ու կանաչապատման, շենքերի ու կանաչ անկիների պահպանման նկատմամբ: Սա պիտի լինի Կիրովականի չորաքանչյուր աշխատավորի անելիքը:



Գ Լ ՈՒ Խ Ն Զ Ի Ն Գ Ե Ր ՈՐ Դ

ԿԻՐՈՎԱԿԱՆԸ ՅՈԹՆԱՄՅԱԿՈՒՄ

(1959—1965)

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ունլյուցիայի 40-ամյակի առթիվ ՍՍՌՄ Գերագույն Սովետի Դիմումում ասված է. «Նայեցեք Սովետական Միության քարտեզին, թե ինչպես անճանաչելիորեն կերպարանափոխվել է մեր Հայրենիքը: Սովետական իշխանության տարիներին երկիրը ծածկվել է գործարանների, ֆարրիկաների, էլեկտրակայանների, երկաթուղային և ավտոմոբիլային մագիստրալների, հանքերի, կոլանտեսուբյուրների, ՄՏԿ-ների ու սովխոզների խիտ ցանցով: Սիբիրյան թավուտ տալգայում, Միջին Ասիայի արևակեղ ավազուտներում, Անդրբևեռային տունդրայում, Կովկասի լեռնահովիտներում առաջացել են արդյունաբերական խոշոր կենտրոններ և նոր քաղաքներ, Վոլգայի և Դնեպրի վրա, Սիբիրի հզոր գետերի վրա կառուցված են ու կառուցվում են խոշորագույն էլեկտրակայաններ, Ղազախստանի և Ալթայի անմարդաբնակ, տատասկոտ տափաստաններում ծփացին ցորենի ծով արտերը: Չտեսնված կերպով ծաղկեցին Սովետական Միության ժողովուրդների նոր սոցիալիստական կուլտուրան, նրանց արվեստն ու գրականությունը»¹: ՍՍՌՄ բաղմազգ ժո-

¹ «Սովետական Հայաստան», 1957 թ. նոյեմբերի 7:

ղտվորդների ձևոք բերած այս վիթխարի հաջողությունները նոր կրաշխիք են տալիս մեր հետագա խոշոր առաջընթացի համար, որ նախատեսվում է ՍՄԿՊ XXI արտահերթ համագումարում «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին» ընդունված որոշման մեջ:

1959—1965 թվականների ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի պատմական նշանակությունը կայանում է նրանում, որ այն կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման առաջին պլանն է:

«Սովետական ժողովուրդը՝ համախմբված իր կոմունիստական պարտիայի շուրջը, հասել է այնպիսի բարձունքների, կատարել այնպիսի վիթխարի վերափոխումներ, որոնք մեր երկրին հնարավորություն են տալիս այժմ թևակոխելու իր զարգացման նոր, կարևորագույն ժամանակաշրջանը՝ կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը»¹:

Այդ ժամանակաշրջանի գլխավոր խնդիրներն են՝ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի համակողմանի ստեղծումը, մեր Հայրենիքի տնտեսական ու պաշտպանական հզորության հետագա ամրապնդումը և սովետական ժողովրդի նյութական ու հոգևոր հարաճուն պահանջմունքների ավելի ու ավելի լրիվ բավարարումը: Այդ կապակցությամբ Ն. Ս. Խրուշչովի զեկուցման թեղիսներում ասվում է.

«ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների յոթնամյա պլանի գլխավոր խնդիրն է՝ էկոնոմիկայի բոլոր ճյուղերի հետագա հզոր վերելքը՝ ծանր ինդուստրիայի առավել աճման բազայի վրա, երկրի տնտեսության պոտենցիալի ղգալի ուժե-

¹ «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. կոնտրոլ թվերը՝ «ՍՄԿՊ XXI համագումարին ընկ. Ն. Ս. Խրուշչովի զեկուցման թեղիսները», Հայպետհրատ, Երևան, 1958, էջ 5:

դացումն այն հաշվով, որպեսզի ապահովենք ժողովրդի կենսամակարդակի անընդհատ բարձրացումը¹ :

Այս պահանջը վերաբերում է նաև Հայկական ՍՍՌ արդյունաբերութեան զարգացմանը, որի համար առհասարակ արագ տեմպեր են սահմանված:

Ելնելով ՀԿՊ XX համագումարի պահանջից, արդյունաբերական ձեռնարկությունները ռեսպուրլիկայում ավելի ուսուցիտնալ ձևով տեղադրելու նպատակով խոշոր գործարաններ ու ֆաբրիկաներ կկառուցվեն Հրազդանում (նախկին Ախտայում), Աշտարակում, Սևանում, Իջևանում, Բասորգեշարում, Գորիսում և այլ շրջաններում ու քաղաքներում: Առաջիկա տարիներին Հրազդանը կդառնա ռեսպուրլիկայի կարևոր արդյունաբերություն ունեցող քաղաքներից մեկը, երբ ավարտվի լեռնաքիմիական խոշոր կոմբինատի և մի շարք այլ գործարանների կառուցումը: Յոթնամյակի կենսագործումով ավելի կբարձրանա ռեսպուրլիկայի ինդուստրացման աստիճանը, արդյունաբերության մեջ տեղի կունենան քանակական և որակական փոփոխություններ: Դրանով ռեսպուրլիկան իր ավանդը կմտցնի կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ըստեղծման, մեր երկրի տնտեսական ու պաշտպանական կարողությունների ուժեղացման և ժողովրդի նյութական ու կուլտուրական մակարդակի հետագա բարձրացման գործի մեջ:

Յոթնամյա պլանի հիմնական խնդիրներից մեկն էլ սովետական ժողովրդի նյութական և կուլտուրական մակարդակի զգալի բարձրացումն է: 1965 թվականին, 1958 թվականի համեմատությամբ, Հայկական ՍՍՌ-ում բանվոր-ծառայողների թիվը կաճի 35,1 տոկոսով, աշխատավարձը՝ 44,7 տոկոսով, կենսաթոշակներն ու նպաստները՝ 71,1 տոկոսով: Մեծ շահերով կկառուցվեն բնակելի տներ, խոշոր միջոցներ կհատ-

¹ «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. կոնտրոլ թվերը՝ «ՍՄԿՊ XXI համագումարին բնկ. նշ. Խ. Խրուշչովի ղեկուցման թեզի սեղանը», Հայպետհրատ, Երևան, 1958 թ., էջ 5:

² Գ. Ս ա հ ա կ յ ա ն, «Հայկական ՍՍՌ կոնստիտուցիոնալ յոթնամյակում», Տեղեկագիր (հաս. դիտ.) 1959, № 3, էջ 11:

կացվեն կոմունալ շինարարության, առողջապահության, կուլ-
տուրայի, գիտության հետագա զարգացման համար:

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—
1965 թվականների յոթնամյա պլանով նախատեսված է Հայ-
կական ՍՍՌ-ում արդյունաբերության համախառն արտա-
դրանքն ավելացնել 2,2 անգամ: Հատկապես արագ տեմպե-
րով կաճեն ծանր ինդուստրիայի ճյուղերը՝ մետալուրգիան,
քիմիական արդյունաբերությունը, ճշգրիտ մեքենաշինու-
թյունն ու հաստոցաշինությունը, գործիքաշինությունն ու
սարքաշինությունը և շինանյութերի արդյունաբերությունը:
Ռեսպուբլիկայում մեծ չափով կզարգանա նաև թեթև ու սննդի
արդյունաբերությունը: Այսպես, օրինակ, 1958 թվականի հա-
մեմատությամբ թեթև արդյունաբերության արտադրանքը
կաճի 80 տոկոսով, իսկ սննդի արդյունաբերությանը՝ 70 տո-
կոսով:

* *
*

Յոթնամյակում զարգացման խոշոր հեռանկարներ են բաց-
վում Կիրովականի արդյունաբերության զարգացման, մաս-
նավորապես քիմիական, մեքենաշինության և սարքաշինու-
թյան արդյունաբերության համար:

Կիրովականում ստեղծվելու են սինթետիկ և քիմիական
ալյ նյութերի արտադրության նոր ցեխեր: Արտադրվելու են
դիցիանդիամիդը և մելամին: Դիցիանդիամիդը արժեքավոր
քիմիկատ է, որը գլխավորապես օգտագործվում է պլաստ-
մասսաների արտադրության մեջ և իբրև հումք օգտագործ-
վելու է մելամինի ստացման համար: Դիցիանդիամիդի և մե-
լամինի ցեխերի շինարարությունը արագ թափով ընթանում է
այն հաշվով, որ նրանք 1961 թվականին երկրին տան իրենց
առաջին արտադրանքը:

Կիրովականում քիմիական արդյունաբերության զարգաց-
ման համար խոշոր հեռանկար է բաց անում Ղարադաղից


ստացվող բնական գազը, որը կոմբինատին տարեկան կտատասնյակ միլիոն կիլոլատոժամ էլեկտրական էներգիայի տընտեսում: Ղարադաղից ստացվող գազի շնորհիվ քիմիական կոմբինատում մոտ երեք անգամ կընդլայնվի ամրակի և ամրակային պարարտանյութերի արտադրությունը, որով հնարավոր կլինի սոցիալիստական գյուղատնտեսությունը տալ ավելի շատ բարձրորակ քիմիկատներ:

Կոմբինատի զարգացման հեռանկարային պլանով նախատեսվում է կազմակերպել միզանյութի (մոչևինա) արտադրությունը: Դա կարևոր ելանյութ կծառայի բարձրորակ պլաստմասսաների ու լայն սպառման առարկաների արտադրությունը կազմակերպելու համար: Բացի այդ, միզանյութը հանդիսանում է շատ բարձրորակ ազոտային պարարտանյութ, որը ամրակային սելիտրայի համեմատությամբ ունի զգալի առավելություններ:

Քիմիական կոմբինատին կից ստեղծվող մի քանի նոր ցեխերից բացի, յոթնամյակի տարիներին լուրջ վերափոխումներ կկատարվեն կոմբինատի գոյություն ունեցող ցեխերում: Մեքենայացման ու կոմպլեքսային ավտոմատացման են ենթարկվելու սշխատատար մի շարք պրոցեսներ, ինչպես, օրինակ, լրիվ ավտոմատացվելու է ազոտաթթվի և ամրակային սելիտրայի ստացման արտադրությունը: Ավտոմատացման է ենթարկվելու № 1 ցեխը: Ելնելով դրանից, ներկայումս կառուցվող ցեխերի նախագծերում լրիվ հաշվի են առնված ավտոմատացման հնարավորությունները: Կարբիդի ցեխում արտադրանքի թողարկումը 15—20 տոկոսով ավելացնելու նպատակով շահագործման կհանձնվեն կարբիդի նոր հզոր, կրի հրկու նոր վառարաններ: Միաժամանակ կարբիդի ցեխի պահեստային տնտեսությունը մինչև 1961 թվականը կենթարկվի¹ լրիվ մեքենայացման:

Ինչպես ռեսուրսների կայն էլ կիրուվականի արդյունաբերության զարգացման լայն հեռանկարներ ունեցող

¹ Տվյալները վերցված են Կիրուվականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի պլանային բաժնից:



Վարպետ Մենրաբ Միրզախանյանը կիրովականցիներին
նվիրված աղբյուր-նուշարձանի մոտ

Ճյուղերից են մեքենաշինությունը և սարքաշինությունը: Քաղաքում գործող մեքենաշինական և սարքաշինական ձեռնարկությունների համախառն արտադրանքը յոթնամյակում կապվելանա 3—4 անգամ: Նրանք արդյունաբերության առանձին ճյուղերի համար կարտադրեն ավտոմատացման միջոցներ: Սրինակ՝ ճշգրիտ հաստոցների գործարանը ժամացույցի գործարանների և զանազան լաբորատորիաների համար թողարկելու է մոտ 30 տեսակի սուաջին կարգի ճշգրտության հաստոցներ:

Յոթնամյակի տարիներին կիրովականում շահագործման կհանձնվի արհեստական մետաքսաթելի խոշոր գործարանը, որը նշանակալից շափով կավելացնի քաղաքի արդյունաբերության 1960 թվականի համախառն արտադրանքը:

Մեքենաշինական գործարանի վերակառուցման համար յոթնամյա պլանում նախատեսված է 59 միլիոն ռուբլի, ըստ որի ընդարձակվելու է գործարանի արտադրական տեղիտորիան, բացվելու են մի շարք նոր ցեխեր, դրվելու են նոր, ավելի կատարելագործված սարքավորումներ: Գործարանում յոթնամյակի վերջում աշխատելու են մոտ 1000 բանվոր-ծառայողներ, մի քանի անգամ ավելանալու է տարեկան արտադրանքը:

Յոթնամյա պլանով նախատեսված է ընդարձակել կիրովականի մսի կոմբինատի եղած ցեխերը, մեքենայացման ենթարկել աշխատանքային պրոցեսները, տարեկան համախառն արտադրանքը 1960 թվականին հասցնել 35 միլիոն, իսկ 1965 թվականին՝ 50 միլիոն ռուբլու:

Կիրովականի ացետատային մետաքսի բազայի վրա, յոթնամյա պլանով Կամոչի անվան տրիկոտաժի ֆաբրիկայում համախառն արտադրանքը ավելանալու է 3—4 անգամ: 1965 թվականին ֆաբրիկան տալու է 15 միլիոն հատ գործվածք՝ բացառապես մետաքսից: Ֆաբրիկան օրական 1,5 տոննա թելի փոխարեն 1965 թվականին օրական կիրացնի 20

տոննա թել: Ֆաբրիկայում ավելանում են գործող մեքենաները, այդ կապակցությամբ կառուցվելու են արտադրական նոր կորպուս և վարչական նոր շենք: Վարչական հին շենքը ամբողջապես հատակացվելու է արտադրութանը: Ֆաբրիկայի նոր կառուցվելիք ցեխերի և հին ցեխերում դրվելիք նոր սարքավորման մասին կազմված նախագծային աշխատանքներն արդեն ավարտված են, 1960 թվականին կսկսվեն նրանց շինարարական և մոնտաժային անմիջական աշխատանքները:

Յոթնամյա պլանով կառուցվում է մորթու-մուշտակի ֆաբրիկայի նոր արտադրական շենքը, որը պետք է շահագործման հանձնվի 1960 թվականի վերջերին: Ֆաբրիկայում դրվելու են ժամանակակից բարձր արտադրողականություն ունեցող սարքավորումներ, միանգամայն փոխվելու են ֆաբրիկայի արտադրանքի տեսակները: Այդ նորակառույց արտադրական կորպուսն ունենալու է նոր հարմարություններ: Նոր կորպուսի վրա նախատեսված է ծախսել 2 միլիոն ռուբլի:

1959—1965 թվականներին արագ տեմպերով զարգանալու է նաև տեղական արդյունաբերությունը, ընդարձակվելու է հզած ձեռնարկությունների արտադրական կարողությունը, միաժամանակ կառուցվելու են զարեջրի, լիմոնադի, հացի նոր գործարաններ, հրուշակեղենի և կահույքի ֆաբրիկաներ, իսկ կղմինդրի-աղյուսի գործարանի արտադրանքի բազայի վրա՝ շինանյութերի նոր կոմբինատ: Յոթնամյակի վերջում տեղական արդյունաբերության համախառն արտադրանքը հասնելու է մոտ 50 միլիոն ռուբլու, այսինքն՝ 1958 թվականի համեմատությամբ կրկնապատկվելու է:

Յոթնամյակի տարիներին Կիրովականում կկառուցվեն մոտ 15 արդյունաբերական ձեռնարկություններ, այդ թվում՝ վերահիշյալներից բացի, կկառուցվեն երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաների, ասֆալտբետոնի, բազալտի և անդեզիտի գործարանները: Ընդարձակվելու են մեխանիկա-

¹ Տվյալները վերցված են Կամոյի անվան տրիկոտաժի ֆաբրիկայի արտադրական և պլանային բաժիններից:

կան գործարանը և կոշիկի ֆաբրիկան: Դրա հետ միասին զգալիորեն կընդլայնվի թողարկվող արտադրանքի ասորտի- մենտը, կրարելիավի նրա որակը: Մինչև յոթնամյակի վերջը բաղաբի արդյունաբերական ձևնարկութունները կթողարկեն արտադրանքի ավելի քան 50 նոր տեսակներ:

Յոթնամյակի տարիներին կընդլայնվի Անդրերկաթուղու Կիրովական կայարանի ապրանքային բակը, որը կընդարձակվի մինչև Փղանով գյուղի արևելյան մասը: Միաժամանակ վերահառուցման կենթարկվի մարդատար կայարանը:

Կիրովականը Միության տարբեր վայրերն է ուղարկում 65 տեսակի արտադրանք: Ընթացիկ յոթնամյակում է՛լ ավելի է մեծանում Միության և արտասահմանյան շուկաներն ուղարկ- վող արտադրանքի ծավալը: Կիրովականը արտահանելու է բիմիկատներ, ինչպես նաև ավտոմատ սարքեր, առաջին և երկրորդ ճշգրտության հաստոցներ, անդարդյունաբերության համար անհրաժեշտ տեխնոլոգիական սարքավորում, կորդ, արհեստական բուրդ, տրիկոտաժե գործվածքներ, ացետատա- յին մետաքս մուշտակներ, պահածոներ և այլն:

Յոթնամյակի տարիներին խոշոր հնարավորություններ կստեղծվեն բիմիական և գունավոր մետալուրգիայի արտա- գրական պրոցեսների ավտոմատացման, Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհրդի Քիմիական արդյունաբերության վար- յության կից Քիմիայի գիտահետազոտական ինստիտուտ- ների, ինչպես նաև «Ավտոմատիկա» ինքնուրույն կոնստ- րուկտորական բյուրոյի համար: Շարք կմտնեն այդ ինստի- տուտների համար կառուցվող բազմաթիվ լաբորատորիաներն ու նախագծային սրահները, ինչպես նաև փորձնական գործա- բանների կորպուսները: Ինստիտուտների աշխատողների հա- մար կկառուցվեն բնակելի և հասարակական տասնյակ շեն- քեր, տարեցտարի ինստիտուտներում աշխատող մասնագետ- ների և գիտական աշխատողների կազմը կհամալրվի գիտու- թյան թեկնածուներով, դոկտորներով: Կիրովականը կզառնա մեր երկրի բիմիական, մետալուրգիական, սարքաշինական,

գործիքաշինական արդյունաբերության արտադրական պրո-
ցեսների ավտոմատացմանը օգնող կենտրոններից մեկը¹։

Կիրովականի արդյունաբերական ձեռնարկությունների տա-
րեկան համախառն արտադրանքի քանակը, 1955 թվականի
համեմատությամբ, 1960 թվականին կավելանա 2,5 անգամ,
իսկ 1965 թվականին՝ յոթնամյակի վերջում՝ ավելի քան 5 ան-
գամ։

Յոթնամյակում բնակարանաշինության համար նախատես-
ված բարձր տեմպերը ամբողջովին ապահովում են «ՍՍՌՄ-ում
բնակարանային շինարարությունը զարգացնելու մասին»
ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1957 թվա-
կանի հուլիսի 31-ի որոշման կենսագործումը, որի նպատակն է
լուծել համաժողովրդական կարևորագույն մի խնդիր՝ բավա-
րարել աշխատավորներին բարեկարգ բնակարաններով։

Կենսագործելով ՀԿՊ Կենտկոմի և Հայկական ՍՍՌ Մի-
նիստրների Սովետի բնակարանային շինարարությունը զար-
գացնելու մասին որոշումները, 1959—1965 թվականներին
Կիրովականում կատարվելու է 242 միլիոն ռուբլու բնակարա-
նային շինարարություն՝ 200 հազար քառակուսի մետր տարա-
ծությամբ (անցած 7 տարում կառուցվել է միայն 45 հազար
քառակուսի մետր բնակելի տարածություն), իսկ յոթնամյակի
առաջին տարում 22 միլիոն ռուբլով կառուցվել է 29 բնակե-
լի շենք՝ 34 հազար քառակուսի մետր բնակելի տարածությամբ։
Յոթնամյակի տարիներին արագ թափ կատանա անհատական
բնակարանային շինարարությունը։ Պետության կողմից տըր-
վող վարկերի օգնությամբ բանվոր-ծառայողները 1959—1965
թվականներին կկառուցեն 1950 բնակարան՝ 78 հազար քառա-
կուսի մետր բնակելի տարածությամբ։ Մի խոսքով՝ յոթնամ-
յակի տարիներին Կիրովականում կկառուցվի ինչպես պետա-
կան, այնպես էլ անհատական այնքան բնակելի տարածու-
թյուն, որքան կար մինչև 1958 թվականը։ Մեկ շնչին հաս-

¹ Տվյալները վերցված են Կիրովականի դիտահետազոտական ինստի-
տուտների դիրեկցիաներից։

նող բնակիչի տարածությունը Կիրովականում 6 քառակուսի մետրից 1965 թվականին կհասնի 9 քառակուսի մետրի:

Յոթնամյա պլանով դպրոցական շինարարության վրա ծախսվելու է 30 միլիոն ուրբլի: Առողջապահության և կենցաղային օբյեկտների շինարարության համար նախատեսվում է 50 միլիոն ուրբլի¹: Յոթնամյակում կուտուր-լուսավորական հիմնարկների գծով «Գիմաց» թաղամասում կառուցվելու են կուտուրայի տուն, քաղաքի տարբեր մասերում՝ գրադարանային շենքեր, 500 տեղանոց ամառային թատրոն և այլն: Ընդարձակվելու են թատրոնի և երաժշտական դպրոցի շենքերը:

Առողջապահության գծով յոթնամյակում նախատեսվում է կառուցել 3 մանկամասեր, ծննդատուն՝ 100 մահճակալ տարողությամբ, 1961 թվականին շահագործման կհանձնվի 10 հազար տեղանոց սպորտային ստադիոնը:

Հասարակական սննդի և առևտրի գծով քաղաքում բացվելու են մի քանի նոր ճաշարաններ, մեկ ունիվերսալ խանութ և մասնագիտացված բազմաթիվ խանութներ, որոնց վրա ծախսվելու է մոտ 10 միլիոն ուրբլի:

Քաղաքի կոմունալ տնտեսության զարգացման համար յոթնամյակում հատկացված է 50 միլիոն ուրբլի, որը ներդրվելու է փողոցների բարեկարգման, նոր կամուրջների կառուցման, ջրմուղի-կոյուղու ցանցի ընդլայնման համար:

1959—1965 թվականներին քաղաքային Սովետի գործկոմի կոմունալ բաժնի գծով կառուցվելու է բազնիք-վաղքատուն, որի վրա ծախսվելու է 4,5 միլիոն ուրբլի: Կիրովի հրապարակի վրա կառուցվում է և 1960 թվականին շահագործման կհանձնվի հյուրանոցի գեղեցիկ շենքը, որի վրա ներդրվելու է հինգ միլիոն ուրբլի²:

ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի «Բնակչության կենցաղային սպասարկումը բարելավելու միջոցա-

¹ Տվյալները վերցված են Կիրովականի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի ֆինանսական բաժնից:

² Տվյալները վերցված են Կիրովականի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի պլանային բաժնից:

ուճմաների մասին» որոշումը կենսագործելու նպատակով, յոթնամյակում Կիրովականում լուրջ միջոցառումներ են ձեռնարկվելու քաղաքի բնակչության կենցաղային անընդհատ աճող պահանջները բավարարելու համար: Կառուցվելու են կենցաղային սպասարկման մի շարք տաղավարներ: Բացվելու են կահույքի, ժամացույցի, լվացքի մեքենաների, ռադիոընդունիչների և տնային այլ իրերի, վերնազգեստի, կոշիկեղենի վերանորոգման, քիմիական մաքրման արհեստանոցներ:

Վերջին տարիներս քաղաքի բնակչության աճման, արդյունաբերության դարգացման, կուլտուր-կենցաղային օբյեկտների դործարկման կապակցությամբ քաղաքում ավելացավ ջրի պահանջը: Կիրովական քաղաքի բնակչությանը ջրով ապահովելու նպատակով յոթնամյակում կառուցվելու է Կալինինո—Կիրովական 60 կիլոմետր հեռավորությամբ ջրատար մագիստրալը, որը տալու է 350—400 լիտրվայրկյան ջուր: Այդ կապակցությամբ նախնական աշխատանքներն սկսված են. կազմված են համապատասխան նախագծեր, որոնք կառավարության կողմից հավանության են արժանացել: Ջրատար այդ մագիստրալի վրա ծախսվելու է 22 միլիոն ռուբլի գումար:

Բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավմանը մեծ խթան կհանդիսանա Ղարադաղի բնական գազը: Գազամուղի շինարարությունն սկսվել է 1959 թվականին: 1961 թվականին Կիրովականը գազիֆիկացման կենթարկվի: Կրավարարվեն ինչպես արդյունաբերական ձեռնարկությունների, այնպես էլ բնակչության կոմունալ-կենցաղային պահանջները: Քաղաքը ավելորդ ծխից և մրից ազատելու համար յոթնամյակում նախատեսվում է Կիրովականում կառուցել ջերմաէլեկտրացենտրալ, որի նախագծային աշխատանքները սկսել և «Պրոմէներգոպրոեկտ» պետական ինստիտուտի Կիևի բաժանմունքը: Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհը հաստատեց ռեսպուբլիկայի նրկորդ ջերմաէլեկտրացենտրալի նախագծային առաջադրանքը, որի կառուցմանը հատկացվելու է մի քանի տասնյակ միլիոն ռուբլի:

1961 թվականին հյուրանոցի կողքին սկսվելու է կապի տան կառուցումը: Կապի տան ավարտումով յոթնամյակում շահագործման կհանձնվի շորս հազարանոց ավտոմատ հեռախոսային կայանը: Նորմալ և սիստեմատիկ կապ կստեղծվի Սովետական Միության քաղաքների հետ: Յոթնամյակում Կիրովականն ունենալու է հեռուստատեսային կայան, որի միջոցով հաղորդումներ կընդունի Երևանից, Թբիլիսիից և այլ քաղաքներից:

Այսպիսով, յոթնամյակում ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների մոտ 10 տոկոսը, որը կազմում է մեկ միլիարդ ռուբլուց ավելի գումար, հատկացված է Կիրովականին: Դրա 70—75 տոկոսը հատկացված է նորակառույց արդյունաբերական ձեռնարկությունների, ինչպես նաև գործող գործարանների ու ֆաբրիկաների ընդարձակմանը: Դրա շնորհիվ Կիրովականում արդյունաբերությունը կդարձանա գրեթե երկու անգամ ավելի արագ տեմպերով, քան ռեսպուբլիկայի արդյունաբերությունն ամբողջությամբ վերցրած:

Յոթնամյակի վերջում Կիրովականը կդառնա Հայկական ՍՍՌ արդյունաբերական խոշոր կենտրոններից՝ սոցիալիստական բարեկարգ քաղաքներից մեկը:

* *

*

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Շինարարության և ճարտարապետության գործերի կոմիտեին կից Հայքնակ-քաղնախագծային ինստիտուտը կազմում է Կիրովականի 1959—1965 թվականների կուլտուր-լուսավորական, բնակարանային և արդյունաբերական շինարարության (ճարտարապետներ՝ Ռ. Գրիգորյան և Պ. Թումանյան) տեղադրման սխեման: Սրան զուգընթաց մշակվում է նաև Կիրովական քաղաքի 1960—1985 թվականների հատակագիծը: Նախ ճշտվելու է

նախկին հատակագիծը, ելնելով ՍՄԿՊ XXI համագումարի գիրեկտիվներից:

1960 թվականի հունիսին Մոսկվայում կայացած քաղաքաշինությանը նվիրված համամիութինական խորհրդակցությունում ՍՍՌՄ Շինարարության և ճարտարապետության ահադեմիայի իսկական անդամ Ն. Վ. Բարանովը ասաց, որ սովետական քաղաքաշինության նպատակը այնպիսի քաղաքների ստեղծումն է, որոնք բնակչությանը առավել նպատակահարմար պայմաններ տալին աշխատանքի, կենցաղի, կրթության ու հանգստյան համար: Ելնելով այս պահանջից, նախագծվելու է Կիրովական քաղաքի 25-ամյա հատակագիծը:

Հստ գլխավոր հատակագծի, Կիրովականում կառուցվելու են արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններ, ինչպես նաև վերակառուցվելու և ընդարձակվելու են քաղաքում հղած բազմաթիվ գործարաններն ու ֆաբրիկաները: Ավելի մեծ ուշադրություն է դարձվելու գործող ձեռնարկությունների արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացման և ավտոմատացման հարցերին, իսկ նոր կառուցվող ձեռնարկությունները կհամապատասխանեն դիտություն ու տեխնիկայի ժամանակակից պահանջներին:

Քաղաքի նոր հատակագծով Կիրովականում կկառուցվեն պետական և անհատական բնակելի շենքեր, կուլտուր-կենցաղային հիմնարկներ: Կրացվեն նոր փողոցներ, պողոտաներ, հրապարակներ: կստեղծվեն զբոսայգիներ, կանաչատունկ ծառուղիներ: Քաղաքի փողոցներն ու հրապարակները կդարձարվեն զեղեցիկ պուրակներով, դադոններով և բազմաթիվ դեկորատիվ ծառերով:

Քիմիական կոմբինատի տերիտորիայում կստեղծվի հանգստի ու կուլտուրայի նոր պարկ: Ստալինի պողոտան քաղաքի կենտրոնական մասը կամբջի միջոցով կմիացնի «Իմաց» թաղամասի հետ: Կամբջից հետո կըստեղծվի նոր հրապարակ, որի կենտրոնում կդրվի Վ. Ի. Լենինի հուշարձանը: Կիրովականին կմիանան Խնձորուտ, Մեղրուտ և Ժդանով գյուղերը:

Աստ գլխավոր հատակագծի, քաղաքի բնակչությունը 1985 թվականին հասնելու է մոտ 130 հազարի: Կառուցվելու են բնակելի շենքեր, սանգոծվելու են նոր թաղամասեր (միկրո-ոռայոնների սկզբունքով): Այդ նոր թաղամասերը, որոնք կբըռնեն 10—12 հեկտար տարածություն, հեռու կլինեն քաղաքի գլխավոր մագիստրալներից, իրենց շրջապատում կունենան մսուր, մանկապարտեզ, դպրոց, խանութներ, պուրակ, կինոթատրոն, հրապարակ և այլն: Այդ նոր թաղամասերը կնմանվեն քաղաք-այգու:

Քաղաքի ճարտարապետական անսամբլը լրացնելու նըպատակով քաղաքի գլխավոր փողոցներում երկհարկանի բուրք շենքերի վրա կավելացվեն 3-րդ և 4-րդ հարկերը:

Արդեն դադիֆիկացիայի ենթարկված կլինեն ինչպես արդյունաբերական ձևնարկությունները, այնպես էլ կոմունալ սպասարկման հիմնարկները: Կբերվեն ջրային նոր մագիստրալներ, կմեծացվի ինչպես կոյուղու, այնպես էլ ջրմուղի փողոցային միադիմ երկարությունը: Օրեցօր բարգավաճող քաղաքի աշխատավորությանը սպասարկելու համար անցկացվելու է տրոսիչբուսի գիծ, ընդարձակվելու է ավտոբուսային երթևեկությունը, լայնանալու է տաքսամոտորային պարկը: Քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն, սահմանված տարիներին Կիրովականը երկաթուղով միանալու է Դիլիջանի հետ: Երկաթուղային նոր ուղիով կապ կստեղծվի Երևանի, Կիրովաբադի և Բաքվի հետ: Այգայիսով, Կիրովականը կդառնա է՛լ ավելի բարեկարգ, է՛լ ավելի գեղեցիկ քաղաք, որը կունենա ժամանակակից տեխնիկայով հագեցված արդյունաբերություն և նրան սպասարկող տեխնիկական բարձր կուլտուրայով բանվորներ ու ինժեներա-տեխնիկական աշխատողներ:

Կիրովականի աշխատավորները քաղաքի արդյունաբերական ձևնարկություններում և տրանսպորտում սոցիալիստական լայն մրցույթյուն են ծավալել Հայաստանում Մովեստական Իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական

պարտիայի կազմակերպման 40-ամյակն արժանավայել դիմավորելու, մեր սոցիալիստական Հայրենիքում կոմունիստական ժավալուն շինարարությանը ակտիվ մասնակցություն ունենալու համար:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Գլուխ առաջին

Կիրովականի սլաոմական անդայից 5

Գլուխ երկրորդ

Արդյունաբերության զարգացումը Կիրովականում Սովետական
խշխանության տարիներին

1. Նախապատերազմյան տարիներին (1920—1940)	62
2. Կիրովականի աշխատավորները Հայրենական Մեծ սլա- տերազմի տարիներին (1941—1945)	88
3. Կիրովականը Հետպատերազմյան տարիներին (1945—1960)	115
Քիմիական արդյունաբերություն	121
Մեքենաշինական և սարքաշինական արդյունաբերություն	140
Շինանյութերի արդյունաբերություն	151
Թեթև և սննդի արդյունաբերություն	157
Տեղական արդյունաբերություն	179
Անտառային տնտեսություն	184
Երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտ	188
Նգրայրական մրցությունը և պայրար կոմունիստական աշ- խատանքի բրիգադայի կոչման համար	199
Կիրովականը տեխնիկական առաջադիմության բաղաբ	211

Գլուխ երրորդ


Կուլտուրական շինարարությունը Կիրովականում (1920—1960) 222

Գլուխ չորրորդ

Աշխատավորների կյանական բարեկեցության աճը և բաղաբի բար-
գավաճումը (1920—1960) 253

Գլուխ հինգերորդ

Կիրովականը յոթնամյակում (1959—1965) 280



ԿՈՉՄՈ ՍՆՆՆՔՆՐԻՄԻ ԿՈՉՄՈՅԱՆ
Կ Ի Ր Ո Վ, Ա. Կ Ա. Ն

Հրատ. խմբագիր՝ Բ. Խ. ՄԱՆՈՅԱՆ
Նկարչական ձևավորումը՝ Կ. Բ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ Պ. Ա. ՍԱՐՈՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎՋ 05457 ԽՀԽ 652 Հրատ. 1887 Պատվեր 696 Տիրամ 3000

Հանձնված է արտատրության 20/VIII 1960 թ.:

Ստորագրված է տպագրության 25/X 1960 թ.:

Թուղթ՝ $84 \times 1081/32$, տպադր. 18,5 մամուլ \pm 29

Ներդիր, հրատ. 12,75 մամուլ:

Գինը կազմով 6 ա. 20 կ.

Նոր գինը առ 1/1 60 թ. 62 կ.

ՀԱՍՏ Կույտուրայի մինիստրության Հրատարակչությունների և
պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության
N 5 սպարան, Կիրովական, Մյասնիկյան 62:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0022851

ЦЕНА

11

5590